

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄԷ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ 20-ԱՄՅԱԿԻՆ**

**Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2016**

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67.4
Ե 813

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Ս. Ղազինյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Մ. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Կ.Ա. Գևորգյան

Խմբագրակազմ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբրույան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ, 2016, – 416 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2015թ. դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ՀՀ սահմանադրությունը ընդունելու 20-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խոր վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ աեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբաններին, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ISBN 978-5-8084-2083-0

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67.4
© ԵՊՀ հրատ., 2016
© Հեղ. խումբ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇԱՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ6

ՎԻԿՏՈՐԻԱ ՕՉԱՆՑԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ..... 18

TARON SIMONYAN

LEGAL DYNAMICS IN SOCIAL SYSTEMS OUT OF EQUILIBRIUM: THE
PROBLEM OF RANDOM INTERVENTIONS33

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 43

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇԱՆ, ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՓՈՓՈԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ (ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)53

ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵԱՏՄ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ68

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼԴՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ..... 89

ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 110

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱՂՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՈՐՊԵՍ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐ 124

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 135

ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵՋՅԱՆ

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵԼԻԿՏԱՅԻՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 148

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԵՐՔԱՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀՍԱԿԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ
ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ .. 167

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՎԱԾ ՄԻՋԱՆԿՅԱԼ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 186

ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆԻ ԽԱԽՏՈՒՄՈՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ԽՆԴԻ ՇՈՒՐՋ 201

ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՄՅԱՆ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐՈՒՄ 212

ՎԱՐԴՈՒՇ ԵՍԱՅԱՆ

ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԿԶՐՈՒՆՔԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 232

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 244

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 266

ՄԵՐԳԵՑ ԱՌԱՔԵԼՑԱՆ

ՊԱՏԺԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐՕՐԵՆՍԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ	281
---	-----

ԱՐԹՈՒՐ ՂԱԶԻՆՑԱՆ

ՎԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	294
---	-----

КНАРИК ВАРДАНЯН

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЗАЩИТЫ БЕЖЕНЦЕВ И УБЕЖИЩА В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА	308
---	-----

ԴԱՎԻԹ ՄԵԼՔՈՆՑԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԸՍՏ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ	329
--	-----

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՎ ԲԱՑԱՌԻԿ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	337
--	-----

ՄԵՐԳԵՑ ՄԱՐԱՐՅԱՆ

ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԻՄ	337
--	-----

ԱՐԹՈՒՐ ԶԱԽՈՑԱՆ, ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՃԱՆԱԶՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	398
--	-----

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արթուր Վաղարշյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Իրավագիտական կրթությունն իր բոլոր բաղադրատարրերով արդի ժամանակաշրջանում շարունակում է կրել խորը փոփոխություններ՝ պայմանավորված 20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին աշխարհում և մեր հանրապետությունում տեղի ունեցած արմատական փոփոխություններով: Հասարակական վերակառուցումը պայմանավորեց իրավաբանական կրթության բարեփոխման անհրաժեշտությունը: Սակայն, մյուս կողմից՝ իրավագիտական կրթության բարեփոխումն անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հասարակության մեջ իրավաբանի սոցիալական դերի փոփոխությամբ: Արդյունքում բարեփոխումներն իրենց հերթին ընկան կախվածության մեջ իրավագիտական կրթություն ստացած կադրերի որակից: Համոզված կերպով կարող ենք ասել, որ բոլոր տեսակի բարեփոխումների հաջողությունը (այն նպաստող պայմանների և պատճառների հետ միասին) մեծամասամբ կախված է արդի պահանջներին համապատասխանող իրավական կրթությունից, որը հասարակական պետական գործունեության բոլոր ոլորտներին «մատակարարում» է իրավագետ կադրերով: Կադրերի որակից է կախված բոլոր բարեփոխումների ճակատագիրը:

Հետևաբար, արդի հասարակական իրողությունները նոր հրամայական պահանջներ են ներկայացնում իրավաբանի մասնագիտությանը, ուստի՝ հանրապետության իրավական կրթության համակարգին, այդ թվում նաև բուհական: Եվ որպեսզի իրավագիտական կրթությունը լուծի իր առջև դրված խնդիրները, անհրաժեշտ է հետազայում ևս կատարելագործել ու ձևափոխել այն: Այս կապակ-

ցությամբ առաջանում է հարց այն մասին, թե որ ուղղությամբ պետք է տանել բարեփոխումները:

Ակնհայտ է, որ ցանկացած բարեփոխման համար մեթոդաբանական նշանակության աղբյուրներից մեկն էլ արտասահմանյան փորձի հետազոտությունն ու վերլուծությունն է, ինչը հնարավորություն է տալիս փոխառել լավագույնը, դրականը: Երբ մենք դիմում ենք համաշխարհային փորձին, ապա նկատում ենք, որ իրավագիտական կրթությունը գրեթե բոլոր երկրների կրթական համակարգերում գրավում է առաջնային տեղերից մեկը: Սակայն արդի աշխարհում ընդհանրապես կրթության, այդ թվում իրավական, զարգացման հիմնական միտումներից, գծերից մեկը **բազմազանությունն է**: Աշխարհում իրավաբանական կրթության մեջ ճանաչված է բազմազանությունը (այլ ոչ թե միօրինակությունը)՝ զուգակցված որոշակի ինտեգրացիոն կամ մերձեցման միտումներով: Այդպիսով, աշխարհում չկա իրավական կրթության միանշանակ ընդունվող կամ հանրաճանաչ մոդել, որին կարելի է կլինել տուրք տալ, կամ որը կդառնար մեզ համար ընօրինակման նմուշ: Նշանակում է՝ մեր իրավագիտական կրթության համակարգը բարեփոխելիս նախ պետք է վեր հանենք աշխարհի իրավակրթական դպրոցների տիպերը, մեր տեղը դրանցում, ամեն մի տիպին բնորոշ առավելությունները և թերությունները և դրանից հետո միայն նոր կառուցենք մեր հետագա գործողությունները:

Արդի աշխարհի բարձրագույն կրթական համակարգերը, ներառյալ իրավագիտականը, ըստ իրենց մանկավարժական համակարգերի կարելի է բաժանել երեք հիմնական տեսակների՝ ա) «կլանքի բարձրագույն դպրոց», բ) «աշխատանքի բարձրագույն դպրոց», գ) «իմացության բարձրագույն դպրոց»:

«Կլանքի բարձրագույն դպրոցի»՝ եությունը կարելի է արտահայտել հետևյալ թևավոր խոսքերով. *«փորձի ունցիան ավելին է, քան տեսության տոննան»*: Այսպիսի դպրոցի ինդիրն անհատականությ-

¹ Տարածված է ԱՄՆ-ում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում:

յան ազատ զարգացումն է, անհատի, որին հատուկ է պատասխանատու գիտակցությունը, և որը դժվարություններով լի կյանքում ընդունակ է ինքնարտահայտման և ինքնահաստատման: Այդ նպատակին համապատասխան իրավաբանական կրթության ուսումնական մեթոդիկան կառուցված է համագործակցության մանկավարժության հայեցակարգի վրա: Կրթության մեջ այստեղ շեշտադրվում է ինքնուրույն աշխատանքը, խորհրդատվությունը, անհատական աշխատանքը, ռեֆերատները, գիտաուսումնական հետազոտությունները և այլն: Մեր տեսանկյունից՝ «կյանքի դպրոցում» պարապմունքները նման են ապակազմակերպվածության: Այս ծայրահեղությունն ունի հատուկ մանկավարժական նպատակ. սովորեցնել ինքնուրույնություն և ընտրության պատասխանատվություն:

Մեր կրթական համակարգի հետ համեմատած՝ կարելի է նշել «կյանքի դպրոցի» հետևյալ թերությունները. շրջանավարտների ընդհանուր կրթվածության ցածր մակարդակը, գիտականության թերագնահատումը, որի հետևանքը մասնագիտական գործունեության ընթացքում ավելի շատ հակումն է փորձերի և սխալների մեթոդով գործողությունը և այլն: Սակայն կյանքի դպրոցը մեր համեմատ ունի առավելություններ. գլխավոր խնդիրն ուժեղ անհատականության ձևավորումն ու զարգացումն է, տաղանդավոր ուսանողների հատուկ հովանավորությունը, ժողովրդավարական մշակույթի արմատավորումը, ճկուն կրթական ծրագրերը, որոնք հարմարեցված են անհատական-տարբերակված ուսումնառությանը:

«Աշխատանքի կամ հմտության բարձրագույն դպրոցի»¹ առաքելությունը, ընդհանուր կրթվածության հետ միասին, ուղղված է մասնագիտական աշխատանքը սովորեցնելուն, այսինքն՝ կրթության ընթացքում հատուկ ուշադրություն է դրաձվում սովորողի գործնական պատրաստվածությանը, որի համար ստեղծվում են հատուկ պայմաններ, խոշոր և ճյուղավորված իրավաբանական կլինիկաներ և այլ ձևեր: Պատկերավոր ասած՝ *«կարևորն այն չէ, թե դու ինչ գիտես, այլ այն, թե դու ինչ ես կարողանում անել»*: Եթե համեմատենք մեր բարձ-

¹ Տարածված է Ֆրանսիայում, Հոլանդիայում, Բելգիայում և այլուր:

բազում դպրոցի հետ, ապա կոտեսենք, որ մեր դպրոցում կան «հմտության դպրոցի» շատ տարրեր: Սակայն, այդուհանդերձ, մեզ մոտ չեն շեշտադրված հումանիտար պատրաստվածությունը, մասնագիտական աշխատանքային դաստիարակությունը: Մեր դպրոցում թույլ են գործնական պատրաստվածությունը և մասնակցությունն իրավաբանական մասնագիտական գործնական աշխատանքին, բացակայում են դրա համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան և կազմակերպական ձևերը:

«Իմացության դպրոցում»¹ հարուստ, բազմակողմանի, ամուր գիտելիքները մանկավարժական ողջ համակարգի հիմքն են: Մյուս բնութագրական գծերից են կրթամանկավարժական գործընթացի հստակ կարգավորվածությունը, կազմակերպվածությունը, կարգուկանոնը, կառուցման կենտրոնացվածությունը, պահանջների միասնականությունը, մշտական վերահսկողությունը և պահանջկոտությունը: Այս կրթական համակարգը խարսխված է թվարկված երկրների ժողովուրդների հոգեմտակերպի վրա: Մեր համակարգն իր հիմնական գծերով, եթե, իհարկե, հաշվի չառնենք վերջին տարիների բարեփոխումները, որոնք որոշակիորեն մերձեցում են մեզ «հմտության դպրոցին», «իմացության դպրոց» է:

«Իմացության դպրոցի» առավելություններից են՝ ձգտումը հիմնարար կրթության, հստակությունը կազմակերպման և մեթոդիկայի հարցերում, կառավարելիությունը և բարձր մակարդակի հասնող կարգուկանոնը, սովորողներին հաղորդվող գիտելիքների և ունակությունների անհամեմատ ավելի շատ հարստությունը: Բացի այդ «իմացության դպրոցը» որոշակի հաջողություններ ունի սովորողների անհատականության զարգացման գործում (լայն աշխարհայացք, համառ համակարգված և բարեխիղճ աշխատանքին հարմարվել-սովորելը): Սակայն «իմացության դպրոցն» ունի նաև էական թերություններ, որոնցից կարելի է նշել՝ կրթությունը կարծես թե վերածվում է միակողմանի հոսքի՝ դասախոսից դեպի սովորողը, ինչը ստեղծում

¹ Տարածված է Գերմանիայում, Ավստրիայում, Չեխիայում, Դանիայում, Արևելյան Եվրոպայի շատ երկրներում և հետխորհրդային տարածքում:

է վտանգավոր նախադրյալ վերածվելու «անգիր անելու դպրոցի»․ անտեսվում է անհատական աշխատանքը սովորողների հետ, միջակացնում է սովորողների պատրաստվածությունը, գրեթե չի իրացնում անհատական մոտեցումը, արդյունքում չի խթանում տաղանդների զարգացումը:

Այսպիսով, իրավաբանական կրթական դպրոցների նկարագրությունից ելնելով՝ կարող ենք պնդել, որ ճիշտը ոչ թե այս կամ այն դպրոցին միանշանակ տուրք տալն է, այլ մեր դպրոցի հիմքերը պահպանելով՝ բարեփոխելն է, ինչը կոչված է հաղթահարելու նրա թերությունները, այն մոտեցնելու հմտությանը և կյանքի բարձրագույն դպրոցներին: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում վերջին տարիներին շատ բան է արվել «իմացության դպրոցում» նորարարություններ ներմուծելու համար: 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում լուրջ քայլեր ձեռնարկվեցին մի քանի ուղղություններով իրավագիտության զարգացման համար: Դրանց շնորհիվ այսօր էլ ՀՀ-ում իրավագիտության հիմնական կենտրոնը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն է, որտեղ իրավագիտության զարգացման համար լուրջ քայլեր են ձեռնարկվել նախադրյալներ են ստեղծվել միջազգային և եվրոպական իրավունքի գիտության զարգացման համար, հատուկ ուշադրություն է դարձվում ֆակուլտետի երիտասարդ գիտական կադրերի պատրաստմանը, հիմնադրվել է գիտական երկու հանդես՝ «Իրավագիտության հիմնահարցեր» (1996-ից, այժմ՝ «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»), «Պետություն և իրավունք» (1997-ից), ֆակուլտետի նախաձեռնությամբ հանրակրթական դպրոցի առարկաները համալրվել են իրավական մի շարք դասընթացներով: Արդի փուլում հայ իրավագիտությունը զգալի հաջողությունների է հասել հատկապես դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, հայ իրավունքի պատմության ու տեսության առանձին հիմնախնդիրների մշակման բնագավառներում: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը կազմել և հրատարակել է 20-ից ավելի բուհական դասագրքեր զանազան իրավական դասընթացների վերաբերյալ: ՀՀ անկախացումից հետո զարգա-

ցել են իրավագիտության մի շարք ճյուղեր:

Բարեփոխումների ընթացքում պետք է նկատի ունենալ, որ իրավագետի մասնագիտությունն ունի սոցիալ-հանրային, այլ ոչ թե մասնավոր բնույթ: Այդ առանձնահատկությունը պայմանավորում է իրավաբանի մասնագիտական նկարագրի բազմատարրությունը, որը կարելի է արտահայտել *«Իմանալ, կարողանալ, լինել»* կարգախոսով: Այս կարգախոսից բխում է, որ իրավաբանի մասնագիտության համար խիստ անհրաժեշտ են, նախ՝ իմացությունը՝ իրավական գիտելիքները, այնուհետև՝ իրավաբանական աշխատանքի գործնական հմտությունները, և վերջապես, մասնագետի անձնական որակները, բարոյաարժեքային կողմնորոշումները:

Գիտելիքները, գործնական հմտությունները, անձնական որակներն իրավաբանի մասնագիտական նկարագրի հավասարաթեք բաղադրատարրերն են: Դրանցից մեկի գերազնահատումը կամ թերազնահատումը միշտ հանգեցնում է մասնագիտական նկարագրի խեղաթյուրմանը: Գրոշի արժեք չունեն բուռնում սովորելու տարիներին ստացած իրավական գիտելիքները, եթե շրջանավարտը չունի դրանք գործնականում կիրառելու հմտություններ, չի տիրապետում տարբեր ոլորտներում դրանց իրացման եղանակներին: Ի վերջո, առաջին երկու բաղադրատարրերը, չնայած իրենց առկայությանը, կարող են չեզոքացվել, եթե մասնագետի բարոյաէթիկական որակները պատշաճ բարձրության վրա չեն, եթե նրա անձնական որակները, ընդհանուր դիրքորոշումը չեն կողմնորոշված դեպի իրավական բարձրագույն արժեքները, արդարությունը, չեն համապատասխանում մասնագիտական էթիկայի կանոններին:

Իրավաբանի նման մասնագիտական նկարագրից ելնելով էլ կառուցվել են բուռնական ուսումնական պլանները և ուսումնական գործընթացը: Սակայն բավարարվել արվածով չի կարելի: Անհրաժեշտ է շարունակել բարենորոգիչ աշխատանքը հասարակական ներքին և արտաքին մարտահրավերներին համապատասխան: *«Ի՞նչ անել»*, *այսինքն՝* բարեփոխումների հետագա ուղղության ընտրության համար մենք առաջարկում ենք երկու չափանիշ:

Առաջին, բարեփոխումներն անպայման պետք է կապել Հայաստանի տեղական առանձնահատկությունների հետ, որոնք, իհարկե, բազմաթիվ են, բայց մենք կառաջարկեինք դրանցից հատկապես ուշադրություն դարձնել այն հում նյութի վրա, որի հետ գործ ունի մեր բուհական համակարգը: Խոսքը բուհ մոտք գործող հայաստանյան ուսանողի մասին է՝ իր հոգեմտակերպային բոլոր առանձնահատկություններով: Մեր կարծիքով, սա շատ կարևոր հանգամանք է կրթության համակարգում բարեփոխումների վեկտորը որոշելու համար:

Երկրորդ, իրավաբանական կրթությունը բարեփոխել ոչ թե ինչոր դպրոց միանշանակ ընդօրինակելի նմուշ դարձնելով, այլ բարեփոխումներն իրականացնել ընդհանրապես համաշխարհային մասշտաբով կրթության զարգացման միտումների հաշվառմամբ՝ չջարդելով մեր համակարգը հիմնովին: Պատմական որոշակի ժամանակաշրջանում իրեն արդարացրած համակարգը հիմնովին ջարդելը ճիշտ չէ, այլ խոսքը կարող է գնալ ընդամենը մոդեռնիզացիայի մասին՝ կրթության զարգացման արդի միտումների հաշվառմամբ: Իսկ որո՞նք են կրթության զարգացման համաշխարհային միտումները. ա) **ինտեգրացիոն գործընթացները**, բ) **ազգային ավանդականությունը**՝ զուգակցված ինտեգրացիոն գործընթացների հետ. գ) **փոփոխություններ և բարեփոխիչ ոգի:**

Նայելով աշխարհի կրթական քարտեզին՝ մենք տեսնում ենք, որ երկրները չեն շտապում հրաժարվել իրենց կրթամանկավարժական համակարգերի հատկապես իրավագիտական ավանդականությունից՝ համարելով այն ոչ թե հետամնացություն, այլ՝ ընդհակառակը, ուժեղ կրթություն, որը համապատասխանում է երկրի յուրահատկություններին, պատմությանը, ապրելակերպին և փորձին: Բայց դա չի նշանակում, որ մենք պետք է հրաժարվենք փոփոխություններից և բարեփոխիչ ոգուց: Նվաճումների նկատմամբ քննադատական վերաբերմունքը դրդում է համարձակ քայլեր ձեռնարկել իրավաբանական կրթական համակարգը կատարելագործելու ուղղությամբ, այդ թվում՝ ինտեգրացիոն գործընթացները նկատի ունենալով:

Մենք առաջարկում ենք այդ բարեփոխումների հետևյալ ուղ-
ղությունները.

ա) հասարակության մեջ իրավական համուսուցման և իրավա-
բանական կրթության հեղինակության, նրա առաջնայնության բարձ-
րացում, որը պետք է ապահովվի հանրային և պետական ահռելի բա-
րոյական, իրավակարգավորիչ, ֆինանսական հովանավորությամբ:
Կրթական համակարգն իր բոլոր բաղադրատարրերով պետք է են-
թարկվի մոնիտորինգի իրավական դաստիարակության և իրավա-
բանական կրթության դիրքերից.

բ) իրավաբանական կրթության (նաև պետական ծառայության
կադրերի պատրաստման) վրա կատարվող ծախսերի ավելացում:
Զարգացած երկրներում ծախսերը մեկ սովորողի վրա մոտ 10 անգամ
գերազանցում են զարգացող երկրների ծախսերին, ինչը ազդում է
մասնագետների որակի վրա, իսկ սա էլ իր հերթին ուժեղացնում է
այդ երկրների միջև խզվածքը: Այս ուղղությամբ առաջարկվում է
անվճար տեղերի ավելացում բուհական համակարգում, ինչը կխթա-
նի օժտվածների, այլ ոչ թե վճարունակների մուտքը բուհ,

գ) իրավաբանական կրթության անընդհատության, շարու-
նակականության, մատչելիության ապահովում: Այստեղ հիմ-
նախնդիրն այն է, որ իրավական կրթությունը հանրակրթական մա-
կարդակում չունի, այնինչ պետք է ունենար իր բովանդակային կա-
յուն և հիմնարար նախադրյալները: Շատ կարևոր է իրավաբանական
կրթության զուգահեռականության (այսինքն՝ երկու կրթություններ
ստանալը) ապահովումը,

դ) բուհական իրավաբանական կրթության անհատականացու-
մը և տարբերակումը, սեփական շահերի իրացման համար սովորո-
ղին ավելի լայն հնարավորություններ տալը՝ անհատական ուսում-
նական պլաններ, սովորելու ընթացիկ տեմպեր սահմանելու և կի-
րառելու միջոցով,

ե) մինչբուհական մակարդակում համընդհանուր համակարգ-
չային գրագիտության ապահովումը, ինչը հնարավորություն կտա
կատարել նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում իրա-

վարանական կրթական համակարգ,

զ) բուհերից դուրս մղել հանրակրթության բովանդակային որոշ տարրերը: Հենց հանրակրթության մակարդակում ուշադրությունը կենտրոնացնել սովորողների հաղորդակցային հմտությունների, ունակությունների ձևավորման, հատկապես օտար լեզուների ուսուցման վրա, ինչը բուհերին հնարավորություն կտա կենտրոնանալ մասնագիտական կրթության վրա: Մակայն միաժամանակ բուհական իրավաբանական կրթությունը պետք ուժեղացնի անձի ձևավորման, էթիկական, հումանիտար, ժողովրդավարական, էկոլոգիական դաստիարակությունը, առողջ ապրելակերպ արմատավորելը,

ե) իրավաբանական կրթության նոր հիմնախնդիրներից է պետական և ոչ պետական իրավաբանական կրթության հարաբերակցության հիմնահարցի լուծումը: Մասնավոր բուհերի քանակի աճը, որոնց մեծ մասն ունեն իրավաբանական ֆակուլտետներ, նպաստում է անգրագետ դիպլոմավորների քանակի աճին: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի այնպիսի բաղադրատարրը, ինչպիսին են բուհերը, որպես իրավունքի սուբյեկտ հանդես են գալիս երկու կազմակերպական-իրավական ձևերով՝ պետական բուհեր և մասնավոր բուհեր, որոնք ունեն առևտրային իրավաբանական անձանց ինչ-որ ձևի կարգավիճակ: Հայաստանյան օրենսդրական կարգավորումը բուհերի կազմակերպական իրավական ձևի հարցում հակասում է համաշխարհային կորպորատիվ շինարարության փորձին և պետք է շտկվի օրենսդրական կարգով¹,

ը) ներկայումս գոյություն ունեցող բուհական և հետբուհական լրացուցիչ մասնագիտական կրթության համակարգը ևս վերանայման կարիք ունի, քանի որ այն ծնում է զուգահեռականություն և կրկնություն: Փոքրիկ հանրապետության պայմաններում գերատեսչական կրթության անընդհատ զարգացումը չի կարելի համարել

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Գ. Վաղարշյան, Բուհերի իրավական կարգավիճակի պատմական զարգացումը և արդի հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտաժողովի զեկուցումների ժողովածու: ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 36-46:

օրինաչափ: Այդ առանձնացվածությունը հաղթահարել հնարավոր է մեկ նախադրյալի դեպքում, երբ բարձրագույն իրավաբանական կրթությունը, ներառյալ հետբուհական հիմնականն և լրացուցիչը՝ կենտրոնացվում են մեկ ուսումնական հաստատությունում: Մեր պայմաններում գերատեսչական ոչ մի ուսումնական հաստատություն չի կարող ինքնուրույն ստեղծել լիարժեք ուսումնամեթոդական և կադրային բազա, որը կապահովի իրավաբան կադրեր պատրաստելու և վերապատրաստելու ժամանակակից մակարդակը: Այսպիսով, հետբուհական հիմնական և լրացուցիչ իրավաբանական մասնագիտական կրթությունը պետք է իրականացվի արդյունավետորեն, այսինքն՝ բացառվեն կազմակերպական ձևերի, ուսումնական դասընթացների զուգահեռականությունը և կրկնությունը: Առողջ տրամաբանությունը հուշում է, որ երևի ժամանակն է նաև մտածելու միասնական իրավագիտական համալսարան ունենալու մասին, որում կկենտրոնացվեին բարձրագույն և հետբուհական իրավական կրթության բոլոր տեսակներն ու ձևերը:

Կրթության համակարգը, այդ թվում՝ իրավական, իրենից ներկայացնում է կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող կրթական ծրագրերի (հանրակրթական և մասնագիտական), ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման փոխկապակցված ամբողջություն: Հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը լինում են նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական: Միայն այս համակարգի նկարագրությունից բխում է, որ զուտ բուհական մակարդակի ջանքերով իրավաբանական կրթության բոլոր հիմնախնդիրների լուծումն անհնարին է, որովհետև դրանք մասամբ դուրս են բուհական համակարգից կամ բուհերի իրավասությունից: Այս հանգամանքը և այն հիմնախնդիրները, որոնք պետք է լուծվեն և որոնցից մի քանիսի մասին ասվեց վերևում, հուշում են, որ բարձագույն իրավաբանական կրթության բարեփոխումները պետք է զուգատեղվեն պետական համակարգային իրավակրթական բարեփոխումներով՝ ներառելով իրավական կրթության բոլոր բաղադրատարրերը: Առանց իրավական

համաուսուցման և իրավաբանական կրթության զարգացման պետական հայեցակարգի՝ լոկալ բուհական և ֆակուլտետային բարեփոխումները դասապարտված են անհաջողության:

Եթե, օրինակ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, պայմանների, ձևերի, մեթոդների կատարելագործումը, դասավանդողի և սովորողի համագործակցության ապահովումը, ուսումնական պարապմունքների հուզականության ուժեղացումը և ձանձրույթի վերացումը, սովորելու բազմակողմանի շարժառիթավորման, սովորողի ընդգրկվածության, բարեխղճության, ինքնակրթության ուժեղացումը բուհի մակարդակով լուծվող խնդիր է, ապա բարձրագույն իրավաբանական կրթության, հետբուհական կրթության կազմակերպման և կառավարման կատարելագործումը, ապակենտրոնացվածության և առանձնացվածության ծայրահեղությունների հաղթահարումը կառավարական իրավասությունն է:

Այսպիսով, փոփոխություններն ու բարեփոխումներն անհրաժեշտ են: Բարեփոխումները պետք է լինեն ա) խորապես մտածված և համակարգված, բ) ամբողջական և համալիր, գ) համաշխարհային փորձի և հայաստանյան իրողությունների հաշվառմամբ, դ) էժան և ֆինանսապես ապահովված, ե) փորձարկված և արդյունավետ: Պետք է հաշվարկված ընտրել բարեփոխման իրականացման արդյունավետ ուղիներ, հայեցակարգ, ծրագիր, այսինքն՝ հետևողականորեն կենսագործվող միջոցառումների համակարգ՝ ուղղված իրավական համաուսուցման և կրթության նպատակների, խնդիրների, կազմակերպական ձևերի, բովանդակության և կառավարման հիմնահարցերի լուծմանը, նրա մակարդակների և ձևերի ներդաշնակեցմանը, կրթության մեթոդաբանության և իրավագետ-մասնագետի պատրաստման մեթոդիկայի կատարելագործմանը:

ПЕДАГОГИЧЕСКИЕ ШКОЛЫ СОВРЕМЕННОГО МИРА И ПРОБЛЕМЫ ЮРИДИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ

Артур Вагаршян

*Заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ,
доктор юридических наук, профессор*

В системе юридического образования необходимы изменения и реформы. Однако они должны быть глубоко обдуманные и систематизированные, комплексные, учитывающие мировой опыт и армянскую действительность, недорогостоящие и финансово обеспеченные. Необходимо последовательно осуществлять систему мероприятий, направленных на решение проблем, целей, задач организационных форм, содержания, управления юридического образования, гармонизацию его форм, совершенствование методологии образования и методики подготовки юриста-специалиста.

PEDAGOGICAL SYSTEMS OF THE CONTEMPORARY WORLD AND THE ISSUES OF LEGAL EDUCATION IN ARMENIA

Arthur Vagharshyan

*Head of the YSU Chair of Theory and History of State and Law,
Doctor of Legal Sciences, Professor*

Changes and improvements should be done in legal education system. However, they should be thoroughly considered and coordinated, complete and complex, taking into account the international experience and domestic realities, cheap and financially well-fixed, tested and effective. A system of measures aimed at achievement of legal education goals, solution of issues relating to organizational forms, content and management, harmonization of the levels and forms of legal education, improvement of methodology of education and methods of training a lawyer-specialist, must be calculated and consistently implemented.

Բանալի բառեր – կյանքի դպրոց, աշխատանքի դպրոց, հմացության դպրոց, ինտեգրացիա, ազգային ավանդականություն, բարեփոխում, գիտելիք, կարողություն, հմտություն, էթիկական դաստիարակություն, ծրագիր:

Ключевые слова: школа жизни, школа труда, школа знания, интеграция, национальный традиционализм, реформа, знание, умение, навыки, этическое воспитание, программа.

Key Words: school of life, school of work, school of knowledge, integration, national traditionalism, reform, knowledge, ability, skill, ethical upbringing, program.

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ

Վիկտորիա Օհանյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի ասիստենտ, իդրավ. գիտ. թեկնածու*

*Քաղաքացիական հասարակությունում յուրաքանչյուրն
իր համար նպատակ է, մյուսները նրա համար՝ ոչինչ,
սակայն առանց այդ մյուսների նա չի կարող հասնել
իր նպատակների իրականացմանը: Յուրաքանչյուրի
հատուկ նպատակը այլոց նպատակների հետ համադրության
մեջ ստանում է համընդհանուրի ձև և ինքնաբավարարվելով՝
բավարարում է նաև այլոց ձգտումն առ բարիք:*

Հեղեղ

Ավանդաբար քաղաքացիական հասարակությունը պետության և իրավունքի տեսության շրջանակներում ուսումնասիրվել է մեկ այլ իրավական կատեգորիայի՝ իրավական պետության հետ սերտ փոխկապակցվածության մեջ: Քաղաքացիական հասարակության կառուցվածքային տարրերի խորը բովանդակային ուսումնասիրությունն առաջին հայացքից սոցիոլոգիայի, այլ ոչ թե իրավագիտության դաշտում է: Սակայն քաղաքացիական հասարակության՝ որպես ժամանակակից պետության սոցիալական հիմքի կառավարման գործընթացում դրա մասնակցության և ժողովրդավարության կայացման գործում ունեցած դերի մասին լիարժեք պատկերացում կազմելն այլևս անհնար է զուտ պետության և իրավունքի տեսության կամ որևէ այլ հասարակական գիտության շրջանակներում: Մեր օրերում, երբ գործնական շատ ու շատ խնդիրներ ստանում են պրագմատիկ լուծում, գիտությունը կարող է այլընտրանքային, գիտականորեն հիմնավորված լուծումների աղբյուր դառնալ միայն այն դեպքում,

երբ հնարավորինս ճկուն է, ժամանակի հետ արագ զարգացող և ժամանակակից գլոբալ աշխարհի պահանջները հաշվի առնող: Նման իրողությունների պայմաններում երբեմն իրավական վերլուծության են ենթարկվում առաջին հայացքից ոչ իրավաբանական երևույթներ, հասարակական կյանքի տարբեր առումների ուսումնասիրության ժամանակ գնալով ավելի լայն կիրառություն է ստանում միջճյուղային մոտեցումը:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում ուսումնասիրել պետության և իրավունքի տեսության ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող «քաղաքացիական հասարակությունը» ավանդաբար քաղաքագիտական, սոցիոլոգիական կատեգորիա հանդիսացող «քաղաքացիական մասնակցության» հետ կապի մեջ, դիտարկել այն ազդեցությունը, որը քաղաքացիական հասարակությունը կարող է ունենալ ժողովրդավարության կայացման գործընթացում: Նշված խնդիրը լուծելու համար պետք է ուսումնասիրենք վերոհիշյալ երևույթները միջճյուղային գիտական հարթության մեջ՝ հաշվի առնելով իրավագիտության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, քաղաքական անթրոպոլոգիայի, հանրային կառավարման տեսության գործիքակազմը և եզրահանգումները:

Ինքնագործունեություն, ինքնակառավարում, ինքնակազմակերպում. այս եզրույթներով է պետության և իրավունքի տեսության մեջ հիմնականում բնութագրվում այնպիսի հիմնարար կատեգորիան, ինչպիսին է քաղաքացիական հասարակությունը: Հարկ է նշել, որ թեև «քաղաքացի» եզրույթը բնութագրում է անձին որպես քաղաքական հանրույթի անդամ, «քաղաքացիական հասարակություն» եզրույթը, իր ծագումնաբանական հիմքերն ունենալով հոռմեական իրավունքում, կոչված է բնութագրելու մարդկանց կյանքի մասնավոր, ոչ քաղաքական ոլորտը՝ մասնավոր շահերով, պահանջմունքներով, ինքնուրույնությամբ: Սա այն ոլորտն է, որը պատմության ընթացքում աստիճանաբար դուրս է եկել պետության ազդեցության դաշտից: Ժամանակակից քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է որպես իրավական, լիբերալ-ժողովրդավարական, պլյու-

րալիստական, բաց հասարակություն, որի հիմնական սուբյեկտն ազատ անհատն է, որն իրականացնում է իր շահերը բոլորի համար միասնական օրենքի և ընդհանուր իրավակարգի շրջանակներում¹: Որպես քաղաքացիական հասարակության անդամ՝ անձը լիիրավ է և միաժամանակ պատասխանատու. կատարում է իր պարտականությունները և պաշտպանում այլոց իրավունքները:

Քաղաքացիական հասարակության կառուցվածքը քննարկելիս իրավագետներն առանձնացնում են հետևյալ հիմնական տարրերը՝ հումանիտար, սոցիալական, տնտեսական, հոգևոր, տեղեկատվական, տարածքային-կառավարչական և կազմակերպական: Ընդ որում տարածքային-կառավարչական տարրի տակ հասկացվում է տեղական ինքնակառավարումը²:

Քաղաքացիական հասարակության էությունը հասկանալը սերտորեն կապվում է նաև ժողովրդաիշխանության գաղափարի հետ: Քաղաքական անթրոպոլոգիայի տեսանկյունից ժողովրդաիշխանությունը՝ որպես ժողովրդավարության կեցություններից մեկը, քաղաքացիական հասարակության հիմնասյունն է: Ժողովրդաիշխանությունը ենթադրում է հասարակության մշտական ազդեցություն իշխանության վրա, իշխանություն իրականացնողների նկատմամբ վերահսկողություն ընտրությունների միջոցով, կարևորագույն որոշումների ընդունում հանրաքվեների միջոցով և այլն³: Պետք է նշել սակայն, որ «ժողովրդաիշխանություն» եզրույթը ժամանակակից հասկացողությամբ չի կարող մեկնաբանվել տառացի: Արդի ժողովրդավարական պետությունում որպես այդպիսին գոյություն ունի ոչ թե ժողովրդի անմիջական իշխանությունը, այլ ժողովրդավարական

¹ Տե՛ս **Нерсисянц В.С.**, Общая теория права и государства. - М.: ИНФРА-М, 1999, էջ 285

² Տե՛ս **Нерсисянц В.С.**, նշված աշխատությունը; Матузов, Н.И., Малько, А.В. Теория государства и права. Учебник. М.: Юрист, 2004 և այլ աշխատություններ:

³ Տե՛ս **Шипилов А.Г.**, Идея народовластия в политической культуре современной России, Вестник Ленинградского государственного университета им. А.С. Пушкина, № 4 / том 1 / 2009, էջ 221:

սկզբունքների հիման վրա կազմակերպված պետական իշխանություն: Մեր հայրենակից մեծ իրավագետ Ներսեսյանցի պնդմամբ՝ «Ժողովրդաիշխանությունը», «Ժողովրդական ինքնիշխանությունը», «Ժողովրդի անմիջական իշխանությունը» ֆիկցիա է, որը կոչված է լեզիտիմացնելու քաղաքական էլիտաների իրական իշխանությունը: Պետական իշխանությունը միշտ ուղղված է համընդհանուր շահերն արտահայտելուն: Ժողովրդավարական իշխանությունն ուղղված է ժողովրդի կամքն արտահայտելուն: Այլ կերպ ասած՝ ժողովրդաիշխանության գաղափարը այլախեղում է պետական իշխանության իմաստը, ստեղծում ժողովրդի իշխանության և պետական իշխանության դուալիզմի տպավորություն¹: Ամեն դեպքում, եթե պետության և պետական իշխանության պարագայում նման տեսական խնդրի քննարկումը թերևս իմաստ ունի, ակնհայտ է, որ տեղական ինքնակառավարման հարթությունում ժողովրդի անմիջական իշխանությունը ոչ միայն գոյություն ունի, այլև գնալով ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում՝ ի դեմս քաղաքացիական մասնակցության արդի հայեցակարգի:

Ի տարբերություն քաղաքացիական հասարակության՝ քաղաքացիական մասնակցությունը քաղաքական երևույթ է: Քաղաքացիական մասնակցությունը բնութագրվում է իբրև գործընթաց, որին անհատները, առանձին կամ խմբերով, պարտադիր կամ կամավոր հիմունքներով, մասնակցում են՝ նպատակ ունենալով ազդել այն որոշումների վրա, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ իրենց համայնքի վրա²: Լայն առումով քաղաքացիական մասնակցությունն իր մեջ ներառում է ինչպես այն դեպքերը, երբ մասնակցությունը տեղի է ունենում որևէ իրավական ինստիտուցիոնալացված ձևի շրջանակներում, այնպես էլ այն դեպքերը, երբ որոշումների վրա նե-

¹ Sk 'u Проблемы общей теории права и государства: учеб. для вузов / под общ. ред. В.С. Нерсисянца. М.: Норма, 2004, էջ 614:

² Sk 'u **Andre, P.** with the collaboration of P. Martin and G. Lanmafankpotin (2012). "Citizen Participation," in L. Côté and J.-F. Savard (eds.), *Encyclopedic Dictionary of Public Administration*, www.dictionnaire.enap.ca

րագդելու գործընթացը տեղի է ունենում օրենքի շրջանակներում կազմակերպված մեկանգամյա միջոցառումների (երթեր, ցույցեր) միջոցով: Բացի այդ, քաղաքացիական մասնակցության հայեցակարգը ենթադրում է ինչպես քաղաքացիական հասարակության կողմից նախաձեռնված, այնպես էլ պետության կողմից կազմակերպված մասնակցություն (հանրաքվեներ, հանձնաժողովներ և այլն): Մույն հոդվածի շրջանակներում քննարկման ենթակա է քաղաքացիական մասնակցությունը նեղ իմաստով՝ որպես տեղական մակարդակում որոշումներ կայացնելու ինստիտուցիոնալացված գործընթաց, մեթոդաբանություն և հայեցակարգ:

Հասկանալու համար, թե ինչպես և ինչու քաղաքացիական մասնակցությունը՝ որպես համեմատաբար նոր կատեգորիա, սկսեց ակտիվորեն քննարկվել արդի իրավական պետության և քաղաքացիական հասարակության գործառման լույսի ներքո, պետք է անդրադարձ կատարենք հանրային կառավարման երկու հայեցակարգերին, որոնք առաջ են քաշվել անցյալ դարի վերջին տասնամյակներում և լայն տարածում են ստացել արևմտյան մի շարք պետությունների պրակտիկայում՝ որպես հետևանք նաև իրենց ամրագրումը գտնելով մի շարք միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում:

Դրանցից առաջինը այսպես կոչված «նոր հանրային կառավարման» (New Public Management) հայեցակարգն է (NPM): Կառավարման այս մոդելը 1990-ական թվականներին լայն տարածում ստացավ Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Գերմանիայում, Սկանդինավիայի պետություններում: Դրա գիտական հիմնավորումը տվեցին Օսթրոնը և Գեբլերը¹: Այս մոտեցումը տարածելն ու զարգացնելը պայմանավորված էր քաղաքացիական հասարակության աճող պահանջմունքներով և հետաքրքրվածությամբ քաղաքականության և կառավարչական որոշումների, ինչպես նաև պետական և տեղական մակարդակում մատուցվող ծառայությունների նկատմամբ: Հանրային կառավարման գործընթացում քաղաքացիական

¹ St 'u Osborne D., Gaebler T., Reinventing Government. How the Entrepreneurial Spirit is Transforming the Public Sector. N.Y.: A Plume Book, 1992:

հասարակության անդամները ակնկալում են կառավարման նույն ուժեր, ինչ մասնավոր սեկտորում: NPM հայեցակարգում կառավարման հիմնական տարրերն են ծրագրային-նպատակային պլանավորումը, բարձր արդյունքին ուղղված բյուջետավորումը, պետություն-մասնավոր սեկտոր ակտիվ համագործակցությունը, երկխոսությունը քաղաքացիների հետ, լոբբինգը, հաշվետվողականությունը, պետական ապարատի վրա ծախսվող միջոցների նվազեցումը, այլ կերպ ասած՝ մասնավոր կառավարչական սկզբունքների և մեթոդների կիրառումը հանրային կառավարման ոլորտում¹:

Երկրորդը «պատշաճ կառավարման» (good governance) հայեցակարգն է, որը թեև հստակ մշակված չէ տեսության շրջանակներում, միջազգային փաստաթղթերում լայնորեն կիրառվող հասկացություն է. այն տարբեր համատեքստերում ստանալով տարբեր նշանակություն՝ ի վերջո հանգում է հանրային կառավարման հետևյալ սկզբունքային բնութագրերին՝ մասնակցային, իրավունքի գերակայությունն ապահովող, արդյունավետ, հաշվետվողական, թափանցիկ, արձագանքող, ներառող, նորարար և կայուն²: Այս երկու հայեցակարգերի հիմքի վրա ձևավորվեց քաղաքացիական մասնակցության՝ որպես ինստիտուցիոնալ գործընթացի արդի հայեցակարգը, որն իր ամրագրումը գտավ տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող հիմնարար եվրոպական փաստաթղթերում:

Քաղաքացիական մասնակցության միջազգային իրավական հիմքերը սահմանվել են դեռևս 1985թ. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից չի բացառում քաղաքացիների՝ ժողովների, հանրաքվեների կամ քաղաքացիների

¹ Տե՛ս **Охотский Е.В.**, Государственное управление: на пути к современной модели государственного менеджмента, Вестник МГИМО, М., 2014, էջ 122:

² «Պատշաճ կառավարման» հայեցակարգին անդրադարձ են կատարել ՄԱԿ-ը, Համաշխարհային բանկը, Եվրոպայի խորհուրդը: Վերջինս առանձնացրել է տեղական ինքնակառավարման ոլորտում «պատշաճ կառավարման» 12 սկզբունքները, տե՛ս www.coe.int/t/dgap/localdemocracy:

ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելն այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով: Մակայն հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության դերի արժևորումը տեղական ինքնակառավարման համատեքստում և քաղաքացիական մասնակցության հայեցակարգի զարգացումը բերեցին նրան, որ 2009թ. նոյեմբերի 16-ին Ուտրեխտում ստորագրվեց Խարտիայի Լրացուցիչ արձանագրությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ: Ուտրեխտի արձանագրությունը յուրահատուկ էր նրանով, որ ի տարբերություն խարտիայի, որն ամրագրում էր տեղական ինքնակառավարման հիմունքներն ու սկզբունքները հատկապես պետական միջամտությունից զերծ լինելու, ինքնուրույնության և անկախության ապահովման տեսանկյունից, արձանագրությունն առաջին անգամ տեղական ինքնակառավարման մարմինների համար նախատեսեց պարտավորություններ՝ համայնքի բնակիչների՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը երաշխավորելու առումով: Կարևոր է այն հանգամանքը, որ արձանագրության նախաբանում պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը հիշատակվում է որպես ժողովրդավարական կարևորագույն սկզբունք, և ճանաչվում է այս սկզբունքի կենսագործման անհրաժեշտությունը տեղական ինքնակառավարման ոլորտում:

Ըստ Արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կետի՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների իրականացման ժամանակ որոշում կայացնելու կամ ներագդելու իրավունքի առկայությունը:

Ուտրեխտի արձանագրության հիմնական շեշտադրումը հետևյալն է. տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ոչ թե պարզապես երաշխավորեն մասնակցելու իրավունքի իրականացումը, այլև *ակտիվ միջոցներ ձեռնարկեն առ այն, որ համայնքի բնակչության կողմից մասնակցելու իրավունքի իրականացման արդ-*

յունքում բարձրանա համայնքային գործերի կառավարման արդյունավետությունն ու ընդունվող որոշումների հիմնավորվածությունը, նպատակայնությունն ու որակը: Այդ մասին են վկայում թե՛ խորհրդատվական գործընթացների, հանրաքվեների ու հանրագրերի վերաբերյալ դրույթները, թե՛ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը՝ ուղղված մասնակցելու իրավունքը իրականացնելը սատարելու:

Փաստորեն, քաղաքացիական հասարակության մասնակցությունը համայնքային գործերի կառավարմանը դադարում է լինել սոսկ իրավունք և վեր է ածվում մունիցիպալ կառավարման նոր մեթոդաբանության և հայեցակարգի. մի գործընթաց, որն անխուսափելիորեն բերում է քաղաքացիական հասարակությանը քաղաքականությունների մշակման և իրականացման ոլորտ:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական մասնակցության սահմանադրաիրավական հիմքն է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Բացի այդ, 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների մեջ առաջին անգամ երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը (հոդված 9): Սահմանադրությամբ նախատեսվում է անձանց՝ հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք (հոդված 53):

Դարձյալ առաջին անգամ ՀՀ Սահմանադրությունը տեղական հանրաքվեի հետ մեկտեղ վկայակոչում է համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցելու այլ եղանակներ, որոնք ենթակա են սահմանման օրենքով (հոդված 183):

Ինչ վերաբերում է քաղաքացիական մասնակցության հարցերը կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետությունը

Ուտրեխտի արձանագրությունը վավերացրած առաջին պետություններից մեկն էր¹, և արձանագրության վավերացումը զուգորդվեց քաղաքացիական մասնակցության խթանմանն ուղղված օրենսդրական փոփոխություններով: Մասնավորապես, 2013թ. հունիսի 19-ին ՀՀ ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենք, որով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը լրացվեց «Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը» վերտառությամբ 10.1 հոդվածով, ըստ որի համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Համայնքում տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ: Բացի այդ, օրենքի 12-րդ հոդվածում կատարվեց փոփոխություն, որը հնարավորություն է տալիս համայնքի բնակիչների որոշակի տոկոսին, կախված տվյալ համայնքի բնակչության թվից, հանդես գալ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ: Նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դա ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նաև այլ երաշխիքներ համայնքի գործերի կառավարմանը քաղաքացիական մասնակցությունը հնարավոր և իրական դարձնելու համար՝ սահմանելով համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում: Այդ լիազորությունները ներառում են իրազեկ լինելու և մասնակցելու համար *բավարար* պայմանների

¹ Հայաստանի համար Ուտրեխտի արձանագրությունը ուժի մեջ մտավ 2013 թ. սեպտեմբերի 1-ին:

ստեղծում, մատչելի և հարմար վայրերի ապահովում, տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հաստակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լուումների կամ քննարկումների կազմակերպում, համայնքի բնակիչներին համայնքում իրականացվող ուսուցման կամ վերապատրաստման ծրագրերում ներառելը և այլն¹: Համայնքի ղեկավարը նշված գործառույթներն իրականացնելիս պետք է օգտվի տեղեկատվական տեխնոլոգիաների վերապահած հնարավորություններից՝ կայքեր, հեռահաղորդակցության միջոցներ, սոցիալական մեդիա, առցանց ռեժիմով հեռարձակումներ և այլն²:

Այդուհանդերձ, օրենսդրական հնարավորության առկայությունը դեռ չի վկայում իրական քաղաքացիական մասնակցության մասին: Եթե ուսումնասիրենք Հայաստանի Հանրապետության հա-

¹ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» 2002թ. մայիսի 7-ի ՀՀ օրենքը, ՀՕ-337, հոդված 33.1:

² Պետք է նշել, որ հիշյալ միջոցները լայնորեն կիրառվում են թե՛ եվրոպական երկրներում, թե Ռուսաստանում: Քաղաքացիական մասնակցության խթանման հետաքրքիր օրինակ կարելի է համարել «Российская общественная инициатива» (РОИ) ինստերնետային ռեսուրսը (www.roi.ru), որը ստեղծվել է ՌԴ նախագահի 2013թ. մարտի 4-ի հրամանագրի հիման վրա և հարթակ է տրամադրում այն բոլոր քաղաքացիական նախաձեռնություններին, որոնք վերաբերում են պետության սոցիալական և տնտեսական քաղաքականության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման կատարելագործման հարցերին: Կայքը տալիս է քվեարկության հնարավորություն և բնակչության որոշակի տոկոսի ձայները հավաքելու դեպքում նախաձեռնությունը դառնում է այդ նպատակով ստեղծված իրավասու հանձնաժողովների քննարկման և հետագա քայլերի պլանավորման առարկա: Հայաստանում որոշ համայնքներ ակտիվորեն օգտագործում են Ֆեյսբուքը՝ բնակիչներին որոշումների կայացմանը ներգրավելու համար (օրինակ՝ Աշտարակի քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջը):

մայնքների փորձը, պարզ կդառնա, որ քաղաքացիական նախաձեռնության կարգով ավագանու նիստի օրակարգ հարց ներառելու պրակտիկան չի ստացել տարածում: Նույնը կարելի է ընդհանուր առմամբ փաստել քաղաքացիական հասարակության մասնակցության այլ ձևերի մասին (տեղական հանրաքվե, հանրային լուսմներ և քննարկումներ), թեև որոշ համայնքներում արձանագրվել են նաև դրական նորամուծություններ, օրինակ՝ կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով համայնքային որոշումների կայացմանը մասնակցելու մեխանիզմը¹: Նման պասիվությունն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Թերևս, քաղաքացիական ակտիվության վրա ազդող բոլոր գործոնների համապարփակ վերլուծությունը առանձին ընդգրկուն գիտական հետազոտություն պահանջող թեմա է և դուրս է այս հոդվածի շրջանակներից: Հարկ է նշել սակայն, որ այդ պատճառների շարքում կարևորագույն դեր է խաղում համայնքում ակտիվ, հստակ դիրքորոշում ունեցող քաղաքացիական հասարակության բացակայությունը, ինչն էլ իր հերթին պայմանավորված է թե՛ իրավական մշակույթի ցածր մակարդակով, թե՛ բնակչության

¹ Այս մեխանիզմը ՄԱԿ Ջարգացման ծրագրի աջակցությամբ փորձարկվել է Արեւի, Գորիս, Թումանյան, Նոր Երզնկա և Ջանֆիդա համայնքներում: Հինգ նշված համայնքներից ընդհանուր առմամբ 612 բնակիչ արձագանքել է հարցմանը: Տեղական ինքնակառավարման մարմինները հարցման արդյունքները հաշվի են առել հաջորդ տարվա պլանավորման և բյուջեի հասկացման ժամանակ: Կարճ հաղորդագրությամբ՝ համայնքի բնակիչներին ուղղվում է համայնքին հուզող մեկ հարց և պատասխանի տարբերակներ: Բնակիչը հնարավորություն ունի 24 ժամվա ընթացքում արձագանքել հարցմանը ուղարկելով պատասխան հաղորդագրություն և նշելով նախընտրած տարբերակը: Պատասխանները հավաքագրվում են, վերլուծության են ենթարկվում, և արդյունքները ներկայացվում են հանրությանը: Միկրոհարցումն անանուն է, և համակարգը թույլ չի տալիս հետևել, թե որ բնակիչն ինչ պատասխան է տվել: Հարցումն իրականացվում է միայն համայնքային զարգացման հիմնախնդիրների շուրջ, և բացառում են քաղաքական բնույթի հարցեր: Մասնակցությունը հարցմանը կամավոր է. բնակիչը համաձայնում է մասնակցել՝ տրամադրելով տեղական ինքնակառավարման մարմնին իր բջջային համարը և նշելով տարիքը և սեռը (աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, <http://www.mta.gov.am/hy/sms/>):

համար ծանր սոցիալ-տնտեսական պայմաններով, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության պակասով: Ակնհայտ է, որ նշված ծանրակշիռ գործոնների ազդեցությունը օրենսդրական կարգավորման միջոցով շտկվող երևույթ չէ և կարող է չեզոքացվել միայն այն դեպքում, երբ իրավագիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումները, իրազեկումը, կրթումը գույժորդվեն համայնքների տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացմամբ և, ամենակարևորը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, հիմնավորվածության ապացուցմամբ, ցուցադրմամբ ու բացատրմամբ, ինչը կկոտրի անվստահության մթնոլորտը և կբարձրացնի քաղաքացիական հետաքրքրությունը, հետևաբար՝ և մասնակցությունը համայնքի գործերին:

Այսպիսով, պետության և քաղաքացիական հասարակության, քաղաքականի և ոչ-քաղաքականի սահմանազատումն ու հակադրումն անհրաժեշտ է, սակայն, մեծ հաշվով, պայմանական: Դեռևս Կ. Պոպերը, նկարագրելով իր «բաց հասարակության» սկզբունքները, ընդգծում է այն միտքը, որ մարդիկ պատասխանատվություն են կրում իրենց արարքների համար, ակտիվորեն քննարկում են տարբեր հասարակական խնդիրներ և փնտրում են դրանց լուծման ռացիոնալ ուղիներ¹: Քաղաքացիական հասարակությունը, լինելով անձի ազատ, ինքնավար ակտիվության դրսևորման ոլորտ, մասնավոր շահերի բավարարման և մասնավոր նպատակների իրագործման դաշտ, դադարում է լինել զուտ ոչ-քաղաքական, երբ այդ նպատակների և շահերի իրագործումը պահանջում է քաղաքական որոշումների ընդունում: Այս դատողությունն առավել հիմնավորված է դառնում այն պարագայում, երբ դիտարկում ենք քաղաքացիական հասարակության տարածքային-կառավարչական տարրը՝ տեղական ինքնակառավարումը: Դժվար է չհամաձայնել որոշ գիտնականների կողմից արտահայտված այն կարծիքին, որ տեղական ինքնակառավարումը մարդկության պատմության մեջ ժողովրդաիշխանության իրակա-

¹ См. у **Поппер, К.Р.**, Открытое общество и его враги, Т. 1. – М.: Феникс; 1992, էջ 228:

նացման կարևորագույն ինստիտուտներից մեկն է¹ և ժողովրդավարության առանցքային հիմնասյունը:

Վերջին տասնամյակի զարգացումները զարգացած պետություններում տեղական ինքնակառավարման ոլորտում ցույց են տալիս, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը համայնքային գործերին դառնում է ոչ միայն տեղական ինքնակառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, այլև, ինչը շատ կարևոր է, դրա *արդյունավետության բարձրացման* կարևորագույն գործոն: Փաստորեն, ի հեճուկս *քաղաքացիականի* և *քաղաքականի* ավանդական հակադրմանն ու առանձնացմանը քաղաքացիական հասարակության հասկացության և դերի գիտական իմաստավորման գործընթացում՝ *ժամանակակից քաղաքացիական հասարակությունը կոչված է անմիջական դերակատարում ունենալու քաղաքականության մշակման գործընթացում*: Այլ կերպ ասած՝ անմիջական ժողովրդավարությունը կրկին առաջին պլան է մղվում տեղերում, քանի որ քաղաքացիական հասարակությունը ինստիտուցիոնալացված հնարավորություն է ձեռք բերում ազդելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների վրա, *մասնակցելու իշխանության իրականացմանը*: Այս համատեքստում աղոտ է դառնում այն նուրբ սահմանագիծը, որը բաժանում է քաղաքական ոլորտը քաղաքացիական հասարակության ինքնագործունեության և ինքնակազմակերպման ոլորտից²:

¹ St 'u **Гуревич, В.А., Галеев, З.Г.**, Конституционный принцип народовластия и участие граждан в правотворческом процессе, Вестник экономики, права и социологии, 2013, № 4, էջ 144:

² Ժամանակակից զարգացումների պայմաններում պետության և քաղաքականության վերաբերյալ սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների հայացքները իրենց հավելյալ հիմնավորումն են ստանում: Այսպես, քաղաքականությունը բնորոշվում է որպես ձգտում մասնակցելու իշխանության իրականացմանը կամ ազդելու իշխանության բաշխման գործընթացի վրա, անկախ այն հանգամանքից թե՛ դա իրականացվում է պետությունների մակարդակում, թե պետության ներսում՝ մարդկանց տարբեր խմբերի միջև (սե 'u Бебер, М. Политика как призвание и как профессия, http://www.nir.ru/socio/articles/weber_politika.htm):

ГРАЖДАНСКОЕ ОБЩЕСТВО И ГРАЖДАНСКОЕ УЧАСТИЕ КАК ОСНОВЫ ДЕМОКРАТИИ

Виктория Оганян

*Ассистент кафедры теории и истории государства
и права ЕГУ, кандидат юридических наук*

Данная статья посвящена рассмотрению вопроса о роли гражданского общества в местном самоуправлении в свете новой концепции институционализированного участия граждан в местном самоуправлении. В статье понятия “гражданское общество”, “гражданское участие”, “народовластие” рассматриваются в междотраслевом срезе (юридический, политический, управленческий, социологический), что позволяет проследить и осмыслить предпосылки институционализации гражданского участия, рассмотреть правовые основы гражданского участия как метода принятия решений в сфере местного самоуправления, а также выявить политическую составляющую функционирования гражданского общества в условиях новой концепции гражданского участия, где стирается тонкая грань между политическим и не политическим.

CIVIL SOCIETY AND CITIZEN PARTICIPATION AS CORNERSTONES OF DEMOCRACY

Victoria Ohanyan

*Assistant at the YSU Chair of Theory and History of
State and Law, Candidate of Legal Sciences*

The article refers to the issue of the role of civil society in local self-government in the light of new concept of institutionalized citizen participation in local affairs. The notions of civil society, citizen participation and democracy are examined through the prism of law, political science, public management, sociology, which allows to look into the history of institutionalization of citizen participation, to review the legislative basis of citizen participation as the method of decision-making at local level, as well as to examine the policy aspect of functioning of the civil society in terms of conceptually new idea of citizen participation, where political and non-political sides are merged.

Բանալի բառեր՝ քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական մասնակցություն, տեղական ինքնակառավարում, ժողովրդաիշխանություն, ժողովրդավարություն:

Ключевые слова: гражданское общество, участие граждан, местное самоуправление, демократия, народовластие.

Key words: civil society, citizen participation, democracy, local self-government.

LEGAL DYNAMICS IN SOCIAL SYSTEMS OUT OF EQUILIBRIUM: THE PROBLEM OF RANDOM INTERVENTIONS

Taron Simonyan

*Asistent at the YSU Chair of Theory and History of
State and Law, Candidate of Legal Sciences*

Societies and their statehoods must be considered as holistic and complex systems-structures, especially when they step into the phase of instability. The phase of instability is large itself, when the system is in transitional period, namely turning period from one structural organization (social, economic, financial, legal, value, etc.) to another one.

In these realms social behaviour and relations are regulated by different factors, rules most of which have normative character. The determination of these factors is the most important problem a legislator faces when trying to bring an order in social expressed instability, which sometimes can be seen as social chaos. The last one, in its turn, can be either a basis for social innovations and accelerating progress, or just a fall – the end of the social structures.

This is why the following issues are so important to get answers: how to supervise, organize the legal dynamics in social systems out of equilibrium; when, where and how to intervene in these dynamics.

Systems Theory argues that “*internal activities, such as leadership, technology, social behaviour, motivation and task structure, are more the products of external than internal factors. Social expectations, laws, raw materials, society’s technical sophistication, the behaviours of other systems, fiscal policies, competition, and buyers all shape, constrain, and dictate internal behaviour. ... Systems do not act in a vacuum, they do not control their own destinies. They are products of their environments*”¹.

For filling the mentioned vacuum, political powers, authorities use one of the main pillars for the regulations of social relations – the law. This

¹ Russ Marion, *The Edge of Organization. Chaos and Complexity Theories of Formal Social Systems*, Sage Publications, Inc., 1999, p. 64.

brings to a situation that these societies face mostly artificial accelerating changes in legal regulations in transitional periods, along with almost all system changes. Moreover, the XXI century can be characterised also by the fact that the quantity of legal rules and norms, trying to regulate all the above-mentioned relations and behaviour, have being increased, sometimes - in geometric progress.

Thus, the way of perception of socio-political and state-legal reality must be appropriate to the changes that the very society faces. In other words, extraordinary changes require extraordinary solutions and mechanism to deal with those changes, non-liner dynamics require the methodology of non-linearity to deal with, holistic and complex systems require complexity management to measure it, because “*if you cannot measure it, you cannot manage it*”¹, etc. As it was formulated by an English economist J. M. Keynes, “[t]here is nothing more disastrous than a rational policy in an irrational world”.

Taking into account the mentioned, we need to understand that the process of law-creation or law-formation and acceptance of the legal regulations (from small regulations to the constitution) must be duly realized, evaluated and valued. We need to understand why, when, how the society needs the very regulations, changes in the regulations, etc...

If we fail to answer the raised questions properly, the new legal regulations will bring more chaos to the vulnerable structures of social system. And the resolution, “*Complexity x Uncertainty = Fragility*”, will apply.

When speaking about the complexity of the structures, I mean the complexity of the social changes, interconnectivity of different social factors (even those that have not been connected previously), etc.

Here, the uncertainty comes to the light, when the political, economic, financial powers or other authorities try to regulate the relations in the society through legal or other normative norms while not duly realizing and evaluating the environment, not evaluating the very

¹ Ontonix S.r.l.: Quantative Complexity Management – www.ontonix.com

regulations, accepting legal regulations not in appropriate time, not accepting legal regulations in appropriate time, accepting not appropriate legal regulations in time of their necessity, etc.

As a result, the whole social system, along with the state system, goes deep into instability and fragility. For refraining from more instability and fragility, we need to evaluate, measure and, as a result, manage (if possible, or as much as possible) the environment, in which the socio-state system behaves, as well as the flexible and changing nature of structures of the very socio-state system. This can be considered as the first important step while dealing with the legal dynamics and artificial interventions in legal reality of the changing society.

The second step is to realize the whole spectrum of changes, processes within and out of the system and to determine the very targets, where and when the normative regulations will or must apply. The mentioned changes bring also normative change, under which one can understand “the emergence, replacement or modification of components of the normative structure: norms, values, roles, institutions, institutional complexes”¹. When speaking about the change of norms, the complex of normative clusters is considered to be applied.

The failure to solve these steps will bring the social, political, legal authority to the equation with two unknown points, and, as a result, to the Don Quixote phenomena.

The things get worst when dealing with the systems of complex interconnectivity, which can be defined as interactive, cybernetic and holistic. Here “[h]olism means that a system’s capacity for action exceeds the individual or summed capacity of its parts. The system, as a whole comprehends more about its environment, can process vastly more information, has a broader repertoire of symbolic languages, has more advanced reproductive capabilities, possesses a more effective survival potential, and exerts greater control over its environment than do its parts.

¹ Piotr Sztompka, *The Sociology of Social Change*, Cambridge, Massachusetts 02142, 1993, p. 251.

... They adjust using feedback.

The primary forces motivating the system are environmental; the environment is its source of energy, the medium that determines internal structure and organizational functioning and dictates change. Indeed a system that is not in one-to-one sync with environmental demands is not optimally fit. The feedback mechanisms enable homeostasis in that they provide information needed to adjust to environmental changes¹

Holism is very much applicable in transitional social systems, because the transitional phase brings more activity, energy to the system as a whole; the synergy becomes an important feature of the system, so its parts get more freedom of behavior and, sometimes, negative or positive creativity (entropy or synergy).

In reality, it is hard to understand the regularities of processes as a whole, when you are in the level and the system of those processes, but it is possible to notice some gravitation concentrations and “crystals” inside of the amorphous, effusing and transforming phenomenon (as a result of an act of a look), which can be considered as factors, sometimes – landmarks, determining the dynamic of the processes².

That’s why I suggest viewing the raised issues not only from classic methodology of legal science, but also the interdisciplinary methodology, taking into account the achievements of the Complexity and System Theory³.

¹ Russ Marion, *The Edge of Organization. Chaos and Complexity Theories of Formal Social Systems*, Sage Publications, Inc., 1999, p. 64-65.

² Taron V. Simonyan, *The complexity of law determination and some discernible patterns within it in transitional and unstable societies*, “The complexity of law determination and some discernible patterns within it in transitional and unstable societies”, *Articles of the annual conference of the Faculty of Law (YSU)*, 2015, p. 64.

³ Տարոն Վ. Սիմոնյան, Սիներգետիկան՝ որպես հետդասական գիտությունների միջառարկայական ուղղություն, Պետություն և իրավունք, ՀՀ Իրավաբանների միություն, N 1 (47), Երևան, 2011թ, էջ 81-91, (Taron V. Simonyan, “Synergetics as an interdisciplinary path of postclassical science” – “State and Law”, 2010, *The Bar Association of RA*, N 1 (47), pp. 81-91.):

For overcoming the problem of uncertainty in the law-determination process while trying to regulate relations between sovereign actors, the legislators can use the rule of the Nash equilibrium used in different disciplines, and, recently, in legal sciences¹. The use of this rule cannot be realized as active intervention into the relations of such actors and trying to regulate them by rules from above. *Vice-a-versa*, these relations can be regulated effectively only by the rules derived from the essence of relations of such actors, to which is dedicated the Game theory and Nash Equilibrium.

In this regard I offer to view the reality of relations between the sovereign actors (states or other actor, for ex.: contracting parties in civil law relations) from another point of view. When it is unclear where the rules of law can be derived from, there is no apparent evidence of the existence of customary law, only the concept or principle of efficiency cannot give the answer to arisen questions. It is the equilibrium of Dr. Nash that can contain in itself the path of law-creation and law-development acceptable by all actors in a given relationship, if these actors, of course, are rational, and ready to act rationally, which means that they want to earn the most benefits from the system of relations and not just to do harm to other actors, even if they get less from that relations. This means that Nash equilibrium already contains in itself the most favorable efficiency for the actors and the system as a whole. We should look at the set of social or international relations from above, from the point of view the most favorable efficiency for that particular time, which in its case, can be found only in Nash equilibrium.

Thus, Nash equilibrium is the driving force for development of international and social relations of rational actors, covering and

¹ Jeans David Ohlin, Nash Equilibrium and International Law, Cornell Legal Studies Research Paper No. 11-20, Cornell Law Review, Vol. 96, 2011, pp. 869-900; Taron V. Simonyan, "Nash Equilibrium as a mean for the determination of rules of law (for sovereign actors)", 2013, Journal of Scientific Articles dedicated to the 80th anniversary of the Faculty of Law (YSU), pp. 17-25.

regulating system of law either international, or domestic. From this vision one can make an inference that a subject of law, an actor, while getting the highest level of satisfaction of its interests and making the minimum inconvenience for other subjects/actors, harmonizes its private interests with common interests and makes a ground for relatively equilibrium of the system, and the center, foundation of that equilibrium becomes the focal point and source of rules for common behaviour, thus, rules of law of that particular period of time¹.

But rules of law are not the only source for creating order from disorder. One of the main pillars for the essence of law is morality. David Gauthier's *Morals By Agreement* novel interprets the social contract theory that harnessed the power of game theory to explain why rational actors would agree to a system that constrained their behaviour². The relationship between reason and morality has a long pedigree, going back as Plato's *The Republic* and, more explicitly, Kant's work on the categorical imperative and the wave on contractarian theories following Rawls. But for Gauthier, only game theory provided the necessary tools to explain how individual rationality and moral constraints might be consistent with each other³.

However, regardless to the results and inferences, we may say that these rules works for the relations between sovereign actors, and cannot be used for subordinated relations as effective as for the first ones. For this reason, a legislator dealing with accepting the right legal regulations and trying to do it in the right time must have clearer view and perception of the environment, where the rules must apply. S/he must be in the very level of the consciousness of the system synergy itself, so s/he can see the

¹ Taron V. Simonyan, "Nash Equilibrium as a mean for the determination of rules of law (for sovereign actors)", 2013, Journal of Scientific Articles dedicated to the 80th anniversary of the Faculty of Law (YSU), pp. 23-24.

² David Gauthier, *Morals By Agreement*, 1986.

³ David Gauthier, *Morals By Agreement*, p.9, 1986, see in Jeans David Ohlin, *Nash Equilibrium and International Law*, Cornell Legal Studies Research Paper No. 11-20, Cornell Law Review, Vol. 96, pp. 869-900, 2011, p. 882.

attractors that are attracting the dynamics of social and state reality, realize the important (dangerous and useful) points of bifurcations, which can be used for targeted regulatory interventions, and etc.

In an environment, which is far from equilibrium in the point of view political, economic, social fluctuations, it is another complex problem to try to intervene in and change existing fragile order. Such interventions may be targeted and random. Targeted interventions may have different aims. They can be used for the general purpose of creating the order fitting the environment it tries to regulate. They can be used for satisfying of private interests regardless the social interests. This last one is one of the main reasons of destabilization of the system and pushing it into the fragility canyon of the system.

The reasons of random interventions into the legal dynamics of social order can be various. They can have good or “not enough” good will. Only a very small percentage of such actions may have effective influence on the emergence of the sufficient order. And the huge negative influence, they can bring, lays upon the shoulders of the society, as accelerator of uncertainty, thus – increasing the fragility of the whole system it tries to regulate. Even if it has a mid-term objective with a good foundation, its feedback on the complexity of the socio-political and state-legal structure may create a set of “sovereign acting” centers with more bifurcations out of control than their absence would have.

There can be rare situations, when the random interventions in legal dynamics and creation of legal acts just for their creation and not for regulating existing relations (in other words: creating legal regulations for showing someone that you are working) bring unexpected good results for effective regulations of social relations. But these, by no means, can be considered as a rule. They are accidental cases that get in line with the complex dynamics of the environment and behave as an adaptive mechanism within the system. They are exceptions and not rules. So, it is unreasonable to rely on these accidental cases and use the policy of random interventions in legal dynamics to regulate the social relations,

bring equilibrium to the system and create legal order, when the system itself behaves in the different dimension, with different synergetic interactions and with an uncertain attractor and bifurcation points.

The acceptance of different legal regulations in the transitional societies can be considered as an example of random interventions in social system out of equilibrium, which use the approximation of own legal acts to the legislation other, more developed states. That is why the process of approximation of legal acts needs to be under a very well prepared methodology, especially when we are talking about a transitional stage of a society and statehood. This practice is seen very well in the legal relations between the European Union and neighboring or associating countries, which try to take the best legal practice from the EU and implement it in their legislation. But sometimes this policy is not corresponds the reality we see. Some states try to benefit from different factors and do randomly accept a set of legal regulations, which have no connections with the dynamics of their social environment. As a result most of the legal regulations do not correspond to the reality or do it not in the way they have been dedicated to.

The problem is more dangerous when a legislator (whoever it is) tries to change a legal pillar on which some, even not crystalized and matured legal order has already been formed. Sometimes political authorities in transitional states try to change constitutional legal acts (constitutions) based on private or short-term interests. The practice shows that the main changes are done in the structure of governance of the states, having in mind to create adaptive constructions for their private political will, so they can control the political environment more effectively. This is not a targeted intervention into the legal dynamics but a very random one, because it cannot have any connection with the attractor of the system dynamics, but a very controversial deviation from it. Because the very processes, which are the material from which the rules of social behavior are derived, demand the legal regulations to be the mirror and crystalized expression of them and not the will of changing political powers. The system dynamics require from the actions and actors in them

correspondence with their frequency, and the legal dynamics are the same. They require from the legislator to create legal regulations in line with the attractor that has already been chosen by the system dynamics themselves.

Acting against such logic will bring unexpected consequences not only for the actors in the system, but for the whole social-state structures.

Thus, the very fact of random interventions into the legal dynamics of social systems out of equilibrium is dangerous, gives no effective benefit, but conduces to increasing the risk of failure in regulations and brings the system to more fragile situation.

ԻՐԱՎԱԿԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆԻՑ ՂՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ. ՊԱՏԱՀԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Տարոն Միմոնյան

***ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու***

Հասարակություններն ու դրանց պետականությունները պետք է դիտարկվեն հոլիստիկ և համալիր կառուցվածքներ, հատապես երբ դրանք գտնվում են անկայունության փուլում: Այն բնորոշ է գրեթե բոլոր անցումային համակարգերին, որոնք էլ հենց հավասարակշռությունից դուրս գտնվող համակարգերն են: Իսկ դրանցում սոցիալական կարգի և իրավակարգի ձևավորման գործընթացը հնարավոր կարող է դառնալ, երբ սոցիալ-պետական համակարգի արտաքին և ներքին գործընթացներն առավելապես գիտակցելի, ճանաչելի, չափելի ու կառավարելի լինեն:

Հոդվածում բարձրացվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպես վերահսկել, կազմակերպել իրավական շարժընթացը հավասարակշռությունից դուրս գտնվող սոցիալական համակարգերում, երբ, որտեղ և ինչպես միջամտել այդ շարժընթացին՝ սահմանելով իրավական նորմեր կամ ձեռնպահ մնալով որևէ միջամտությունից, որոնք են թիրախային և պատահական միջամտությունները, որոնք են վերջինիս բացասական հետևանքները և այլն:

ПРАВОВАЯ ДИНАМИКА В СОЦИАЛЬНЫХ СИСТЕМАХ, НАХОДЯЩИХСЯ ВНЕ РАВНОВЕСИЯ: ПРОБЛЕМА СЛУЧАЙНЫХ ВМЕШАТЕЛЬСТВ

Тарон Симонян

*Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

Общества и их государственности следует рассматривать как сложные и холистические структуры. Это присуще почти всем переходным системам, которые находятся вне равновесия. А процесс формирования социального и правового порядка в них станет возможным, когда внутренние и внешние процессы социогосударственной системы станут более осознанными, познаваемыми, измеримыми и управляемыми.

В статье были подняты следующие проблемы: как контролировать, организовать правовую динамику в социальных системах, которые находятся вне равновесия; когда, где и как вмешаться в эту динамику, устанавливая правовые нормы или воздерживаясь от любого вмешательства; какие есть случайные и целенаправленные вмешательства; какие есть негативные последствия от последнего и т.д.

Key words: *complexity management, holism, legal dynamics, random and targeted interventions, instability, Nash equilibrium, transitional state, social change.*

Բալանի բաներ– համալիրության կառավարում, հոլիզմ, իրավական շարժընթաց, պատահական և թիրախային միջամտություններ, անկայունություն, Նեշի հավասարակշռություն, անցումային պետություն, սոցիալական փոփոխություն:

Ключевые слова: *управление сложностью, холизм, правовая динамика, случайные и целенаправленные вмешательства, нестабильность, равновесие Нэша, переходное состояние, социальные перемены.*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայկ Մարտիրոսյան
*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Սոցիալական նորմերը հանդիսանում են հասարակական կյանքը կանոնավորող և կարգավորող կարևորագույն գործոն, մարդկանց կենսագործունեության վրա նպատակամղված ներազդելու արդյունավետ միջոց: Իրավունքը՝ որպես կարևորագույն սոցիալական և նորմատիվ կարգավորիչ, ձևավորվում է մարդու ստեղծագործական (մտավոր) գործունեության արդյունքում: Համաշխարհային պատմությունը բազմաթիվ անգամ ապացուցել է, որ իրավաստեղծ գործունեությունը, այնուամենայնիվ, պահանջում է պետական կամքի դրսևորում: Իրավաստեղծ գործունեությունը, անկախ գոյության ձևից, հանդիսանում է հասարակության ղեկավարման պետական ձև¹, իրավասու մարմինների և կազմակերպությունների՝ օրենքի հիման վրա իրականացվող գործունեություն՝ ուղղված նորմատիվ իրավական ակտի ստեղծմանը²: Իրավաստեղծ գործունեությունն իրենից ներկայացնում է բարդ գործընթաց, ուր պետք է հաշվառվեն անհատական, խմբային, հասարակական և պետական շահերը, նրանց պահանջմունքները: Դրա վրա ազդում են նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններ:

Իրավական ակտի արդյունավետ կիրառումը մեծապես կախված է դրա նկատմամբ ունեցած մարդկանց վերաբերմունքից: Հասարակության կողմից հավանության են արժանանում միայն այն իրա-

¹ Стн Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под. Ред. В. С. Нерсисянца, М. 1999г. էջ 307:

² Стн Лазарева В.В.. Общая теория государства и права. М. 2005, էջ 70:Корабейников В.С. Пирамида мнений. М., 1981, էջեր 8-9: Стн «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 03.04.2002թ., Գլուխ 3, Պաշտոնական տեղեկագիր, Երևան 2006թ.:

վական ակտերը, որոնք իրենց բովանդակությամբ չեն հակասում սոցիալական արդարության, հավասարության, ազատության պահանջներին:

Ժողովրդավարական պետություններում պետական մարմինների կողմից որոշումներ ընդունելիս կարևոր նշանակություն է տրվում հասարակական կարծիքին:

Քննարկվող հարցը կարևոր նշանակություն ունի նաև այն առումով, որ իրավաստեղծման բնագավառում հասարակական կարծիքն անտեսելը կարող է հանգեցնել նաև իշխանության և ժողովրդի բեռացմանը, ժողովրդի մեջ իշխանությունների նկատմամբ անվստահության մթնոլորտի ձևավորմանը: Պետական իշխանության մարմինները պետք է հաշվի առնեն նաև հասարակության վերաբերմունքը իրենց կողմից ընդունվող որոշումների վերաբերյալ, այլապես հասարակական կարծիքը կարող է ճնշում գործադրել իշխանության մարմինների կողմից որոշումներ ընդունելիս: Օրինակ՝ ՀՀ 2007թ. պետական բյուջեի նախագծով ամրագրված պետական բարձրագույն պաշտոնատար անձանց աշխատավարձերը 40%-ով բարձրացնելու հանգամանքը բացասաբար ընդունվեց հասարակության մեծ մասի կողմից, ինչից էլևելով էլ գործադիր իշխանությունը այդ մասով փոփոխություն կատարեց նախագծում: «Որպեսզի օրենքը կարողանա կարգավորել հասարակական կյանքի կարևորագույն հարաբերությունները, անհրաժեշտ է, որ այն համապատասխանի համընդհանուր նորմերին, արտացոլի տիրող փաստացի վիճակը, գոյություն ունեցող իրավական խնդիրները, իրավաբանորեն հիմնավորի հասարակության բոլոր ձեռքբերումները և ամրագրի պետության մեջ կատարվող և կայանալիք փոփոխությունները՝ որպես վկայություն այն բանի, որ իրավական օրենքն օրենսդրի ինքնակամություն չի հանդուրժում»¹:

Հասարակական կարծիքը սոցիալական կառավարման ոլորտում ժողովրդավարության զարգացման կարևորագույն երաշխիք է:

¹ Տես Ապիյան Ն.Ա., Պետրոսյան Ա. Հ.. «Իրավական պետություն և օրինականություն», Երևան, 1999, էջ 70:

ժողովրդավարության հետ սերտորեն առնչվող հրապարակայնությունը՝ որպես իրավաստեղծ գործունեության կարևոր սկզբունք, ենթադրում է ոչ միայն հասարակության լայն զանգվածների մասնակցություն իրավաստեղծ որոշումներ կայացնելու գործընթացին, այլ նաև դրանց հրապարակում հասարակությանը հասանելի եղանակներով: Ընդ որում, հասարակական կարծիքը իրավական ակտում ամրագրելու համար կարևոր նշանակություն ունի ոչ միայն իրավական ակտի, այլ նաև նրա նախագծի հրապարակման գործունը: Ընդհանուր առմամբ, հասարակական կարծիքի հետազոտությունը և հաշվառումը առանձնահատուկ տեղ ունի իրավաստեղծ գործունեության համալիր սոցիոլոգիական ապահովման համակարգում¹:

Իրավաստեղծ գործունեության հրապարակայնության և ժողովրդավարության սկզբունքները պահանջում են հասարակության ակտիվ մասնակցություն, մասնավորապես՝ իր տեսակետների և կարծիքների արտահայտում նախապատրաստվող և ընդունվելիք իրավական ակտերի վերաբերյալ: Հասարակական կարծիքը կարող է ունենալ մեծ ազդեցություն իրավաստեղծ գործունեության նկատմամբ: Այն հանդիսանում է բազմաշերտ երևույթ և կարող է քննարկվել հետևյալ մոտեցումներով. ըստ առարկայի և ըստ արտահայտման միջոցների (իմացաբանական տեսանկյունից), ըստ հասարակական կյանքում ունեցած դերի, այսինքն՝ սոցիոլոգիական ասպեկտով²:

Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 6 հոդվածի՝ «Օրենքները ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո»: Իրավական ակտերի նախագծերի հրապարակման հարցը իրավական կարգավորում է ստացել «Իրավական ակտերի մասին» Հա-

¹ Ску Лапаева В.В. Социологическое обеспечение законотворчества. Советское государство и право, 1989г., N 10., Общественное мнение и законодательство. Соц. Исследования. 1997г., N 19.

² Ску Ասիլյան Ն.Ա., Սաֆարյան Գ.Հ., Հակոբյան Ջ.Հ., Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Երևան, 2001, էջ 226. Коробейников В. С. Пирамида мнений. М., 1981. էջեր 8-9:

յաստանի Հանրապետության օրենքում¹:

Նորմատիվ ակտի ստեղծման գործընթացը իրենից ներկայացնում է առանձին փուլերի միասնություն, այդ թվում նաև՝ դրա պատրաստումը: Մինչև նախագծի մշակումը անհրաժեշտ է պարզել համապատասխան բնագավառի հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման հասարակական անհրաժեշտությունը: Այդ գործընթացում առաջնայնորեն պետք է հստակ պարզել, թե ինչպիսի փաստական վիճակ է տիրում հասարակական կենսագործունեության այն ոլորտում (սոցիալական, տնտեսական, քաղաքական), որին առնչվում է առաջարկվող ակտը, ինչպես նաև իրավական կարգավորման իմաստն ու նշանակությունը: Վերջին հաշվով, կարևոր է նաև ճիշտ հաշվարկել այն հարցը, թե տվյալ իրավական ակտը կարո՞ղ է կարգավորել խնդիրը:

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտերը նախապատրաստվում են ինչպես պրակտիկայի վերլուծությունից բացահայտվող և իրավական կարգավորում պահանջող նոր հարցերի լուծման համար, այնպես էլ տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ առկա բացերը լրացնելու, հակասությունները հարթելու և վերացնելու նպատակով:

Նախապատրաստվող նախագծի հետ առնչվող օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու հետևյալ հարցը. հնարավո՞ր է արդյոք հարցը կարգավորել արդեն իսկ ընդունված ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելով, թե անհրաժեշտ է պատրաստել նոր ակտի նախագիծ²:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը (այսուհետ՝ իրավաստեղծ աշխատանքներ) նախապատրաստվում են ընթացիկ ծրագրերի համաձայն, որոնք, որպես կանոն, կազմվում են 1-2 տարի

¹ Տես «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 03.04.2002թ., Գլուխ 3, Պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2006:

² Տես Головистикова АН., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права. М. 2005, էջ 464:

ժամկետով: Իրավաստեղծ աշխատանքների երկարաժամկետ ծրագրերը, որպես կանոն, կազմվում են 3 և ավելի տարի ժամկետով: Այդ ծրագրերը հաստատում են դրանք ընդունող մարմինները, իսկ ՀՀ կառավարությունը հաստատում է նաև օրենսդրական նախաձեռնության կարգով ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը իր կողմից ներկայացվելիք ՀՀ օրենքների և ՀՀ Ազգային ժողովի որոշումների նախագծերի նախապատրաստման ծրագրերը:

Փաստորեն, օրենսդրությունը, վերոնշյալ ժամկետներն ամրագրելով, իրավական առումով ստեղծել է հնարավորություն այդ ժամկետների ընթացքում հասարակական կարծիքն ուսումնասիրելու և, հետևաբար, այն իրավական ակտերում հաշվի առնելու համար: Այլ հարց է, որ իրականում շատ դեպքերում նման գործընթաց տեղի չի ունենում:

Իրավաստեղծ գործունեության մեջ ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել երկու կողմ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Իրավաստեղծման օբյեկտիվ կողմը ենթադրում է ստեղծվող իրավունքի նորմերի բովանդակային հատվածում այդ գործընթացում ձևավորվող օբյեկտիվ գործոնների, երևույթների ազդեցություն: Իրավաստեղծման սուբյեկտիվ կողմը ներառում է հասարակական իրավագիտակցության և կամքի արտահայտումը և դրա վերարտադրումը պետական կամքի կամ իրավունքի ձևով: Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ իրավունքի կազմավորումը պայմանավորված է հասարակական զարգացումների թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ գործոններով:

Քննարկելով հասարակական կարծիքի դերը իրավաստեղծ գործունեության մեջ՝ կարևոր է նաև պատկերացում կազմել այն հարցի վերաբերյալ, թե մասնավորապես ինչպես է ձևավորվում հասարակական կարծիքը և թե ինչպիսի աշխատանք պետք է տանել, որպեսզի նախապատրաստվող ակտի վերաբերյալ ձևավորվի և արտահայտվի հասարակական կարծիք: Ինչպես ասել է Հեգելը, հասարակական կարծիքում ամեն բան կեղծ է և ճշմարիտ, իսկ դրանում

ճշմարիտը փնտրելը վերապահված է միայն հանճարեղ մարդկանց¹:

Այս համատեքստում պետք է նշենք, որ կարևոր նշանակություն ունի նաև նախապատրաստվող ակտի վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով տեղեկատվություն տրամադրելը: Հայաստանի Հանրապետությունում այս առումով իրականացվող աշխատանքները, մեղմ ասած, անբավարար են, չնայած այն հանգամանքին, որ պետությունը ունի բոլոր անհրաժեշտ միջոցները իրավաստեղծման գործընթացը հրապարակայնության սկզբունքին համապատասխան կազմակերպելու համար: Դեռ ավելին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ասվում է, որ ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված օրենքների և ՀՀ Ազգային ժողովի որոշումների նախագծերը *կարող են* հրապարակվել մամուլով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև *կարող են* դառնալ համաժողովրդական քննարկման առարկա՝ ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով և ՀՀ օրենքով սահմանված կարգով: ՀՀ կառավարության կողմից ՀՀ Աժ քննարկմանը ներկայացվելիք օրենքների նախագծերը ՀՀ նախագահի հրամանագրով կամ ՀՀ կառավարության որոշմամբ *կարող են* հրապարակվել մամուլով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև *կարող են* դառնալ համաժողովրդական քննարկման առարկա: Իրավական այլ ակտերի նախագծերը *կարող են* հրապարակվել ակտը մշակողների կամ իրավական ակտն ընդունող մարմնի որոշմամբ²:

Օրենքը, փաստորեն, իրավական ակտերի նախագծերի հրապարակումը չի համարել պարտադիր՝ անկախ դրանց կարգավորման առարկայից: Մեր կարծիքով, որոշ իրավական ակտերի նախագծերի հրապարակումը կամ դրանք համաժողովրդական քննարկման առարկա դարձնելու հանգամանքին օրենքում պարտադիր բնույթ հաղորդելը կլինե՛ր արդյունավետ լուծում՝ իրավաստեղծ գործունեության բնագավառում հասարակական կարծիքի դերակա-

¹ Ст у Гегель, Философия права. Л., 1934, էջեր 338-339:

² Стк «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 03.04.2002, Պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2006, հոդված 29:

տարումը բարձրացնելու առումով:

Դրանով էլ պայմանավորված՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատանքները յուրաքանչյուր շաբաթ լուսաբանող «Խորհրդարանական ժամ» պաշտոնական հաղորդաշարով շատ դեպքերում ներկայացվում են միայն օրինագծերի անվանումները և այն մշակած պատգամավորի (կուսակցության) անունը: Օրինագծի բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն գրեթե չի ներկայացվում: Ընդ որում, պետք է նշել, որ կարևոր նշանակություն ունի նաև տեղեկատվության մատուցման ձևը և եղանակը՝ դրա նկատմամբ հասարակության ուշադրությունը բևեռելու առումով:

Կարևորելով պետության դերը հրապարակայնության սկզբունքը կյանքի կոչելու գործում՝ հարկ է նշել, որ այդ հարցում պակաս դերակատարում չեն կարող ունենալ նաև հասարակական կազմակերպությունները և կուսակցությունները: Թերևս, կուսակցությունների պարագայում հանրությանը ակտիվ ամբողջական անաչառ ներկայացնելը, քաղաքական մոտեցումներից ելնելով, դժվար է պատկերացնել, ինչը չի կարելի ասել հասարակական կազմակերպությունների մասին: Մեր հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունները (այդ թվում և իրավապաշտպան) բավականին պասիվ են այս առումով՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց առաքելությունը հենց հանրության շահերը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ներկայացնելը և պաշտպանելն է: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը: Այդ փաստաթղթի մասին հանրությունը տեղյակ է դարձել միայն օրենսդիր մարմնում իրականացվող գործողություններին հետևելով: Ակտի նախապատրաստման ընթացքում չեն կազմակերպվել հասարակական լուսմներ՝ դրա բովանդակությունը իրավական տեսանկյունից ներկայացնելու, ինչպես նաև դրա վերաբերյալ հասարակական կարծիքը ձևակերպելու համար: Դեռ ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականացված քաղաքաշինական ծրագրերի շրջանակներում

այդ հարցին իր պատասխանն էր ներկայացրել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ ծրագրերի իրականացման համար ընդունված կառավարության որոշումները համապատասխան մասով ճանաչելով հակասահմանադրական, պետական իշխանության մարմինները պետք է ձեռնարկեին բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հասարակությանը տեղեկացնելու ընդունվելիք օրենքի նախագծի բովանդակությանը:

Նախապատրաստվող իրավական ակտի գործունակությունը և դրա վերաբերյալ հասարակական տեսակետներն ու դիրքորոշումը բացահայտելու կարևորագույն եղանակ է իրավական փորձարարության կիրառումը: Փորձարարությունը ենթադրում է օբյեկտի (տվյալ պարագայում հասարակական հարաբերությունների) նկատմամբ նպատակային ազդեցություն՝ ապագա իրավական կարգավորման դրական և բացասական հետևանքները պարզելու համար: Հարցի հետ կապված իր տեսակետը շարադրել է Վ. Լապանան, ըստ որի՝ փորձարարության (թե՛ իրավական և թե՛ սոցիոլոգիական) գործընթացում ամենակարևոր գործոնը վերջինիս մաքրությունը, հրապարակայնությունը կամ ներկայացուցականությունն է¹:

Ընդհանուր առմամբ, հասարակության տարբեր սոցիալական խմբերի առանձնահատուկ շահերով են պայմանավորված հասարակական կյանքի տարբեր երևույթների գնահատման և արժեքավորման գործընթացները, որոնք էլ արտահայտում են հասարակական կարծիքի բազմաշերտությունը: Սոցիալիստական հասարակարգի պայմաններում իրավաստեղծմանը տրված բնորոշումը յուրահատուկ վերաբերմունք էր բացահայտում նաև հասարակական կարծիքի նկատմամբ, այն է՝ իրավաստեղծ գործունեությունը իրենից ներկայացնում է իրավական ակտերում դասակարգի (ժողովրդի) կամքի արտահայտման և ամրագրման ձևավորված և զարգացող ընթացակարգ²: Այս բնու-

¹ Տե՛ս Никитинский В. И., Самощенко И. С. Правовой эксперимент и совершенствование законодательства. М. 1998, 15-20 էջեր:

² Տե՛ս Ковачев Д. А. Механизм правотворчества в социалистическом государстве. М. 1977г., Правотворчество в СССР М. 1974, էջ 54:

րոշումը, բնականաբար, պետության և իրավունքի նկատմամբ մարք-սիստական դասակարգային մոտեցման արդյունք էր:

Պետք է նկատի ունենալ, որ միաժամանակ հասարակական կարծիքի դերին բացարձակ բնույթ հաղորդելը մի շարք դեպքերում կարող է հանգեցնել հետևանքների առումով ոչ ճիշտ գնահատակա-նի: «Գիտությանը հայտնի է, որ ոչ բոլոր դեպքերում է հասարակա-կան կարծիքը իրավասու ճիշտ և համարժեք գնահատել, արժեքավո-րել, դատել հասարակական կյանքի բարդ հիմնահարցերի մասին (օ-րինակ սահմանադրությունը հանրաքվեով ընդունելը և, պատահա-կան չէ, որ այդ ճանապարհով ընդունվել են նաև մի շարք ավտորի-տար քաղաքական ռեժիմների սահմանադրություններ)»¹:

Անշուշտ, մի շարք հայեցակարգային բնույթի հարցերի վերա-բերյալ հասարակական կարծիքը ուղղակիորեն չի կարող պատաս-խաններ տալ: Օրինակ՝ պետական կառավարման ձևի, դատախա-զության համակարգի կառուցման և մի շարք այլ հարցերի վերաբեր-յալ հիմնավորված և գիտական պատասխաններ կարելի է ակնկալել մասնագետներից, իսկ որ ավելի ճիշտ է՝ գիտության և պրակտիկայի համադրումից կատարված եզրահանգումներից: Սակայն, նորմա-տիվ իրավական ակտում ընդհանուրի շահերը պատշաճ մակարդա-կով արտահայտելու համար գիտականորեն մշակված համակարգե-րի և հասարակական կարծիքի փոխզիջման միջև անհրաժեշտ է գալ համաձայնության:

¹ Տես Ապիյան Ն.Ա., Սաֆարյան Գ.Հ., նշված աշխատությունը, էջ 226:

РОЛЬ ОБЩЕСТВЕННОГО МНЕНИЯ В СФЕРЕ ПРАВОТВОРЧЕСТВА

Гайк Мартиросян

*Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

Данная статья посвящена одному из самых важных средств проявления демократии: роли общественного мнения в сфере правотворчества. Положительная роль общественного мнения приводит к использованию норм права, так как общество высказывает положительное мнение о вопросе. Общественное мнение особенно важно в процессе вступления в силу основного закона государства, так как основные принципы формирования государства зафиксированы в нем.

THE ROLE OF PUBLIC OPINION IN THE PROCESS OF LAW MAKING

Hayk Martirosyan

*Docent at the YSU Chair of Theory and History of
State and Law, Candidate of Legal Sciences*

The article refers to one of the most important means of manifestation of democracy: the role of public opinion in the sphere of law making. The positive role of public opinion brings to the use of the rules of law, as the society will already say its positive opinion about the question. Public opinion is especially important in the process of enactment of the main law of the state, as the main principles of state formation are fixed in it

Բանալի բառեր - ժողովրդավարություն, հասարակական կարծիք, իրավաստեղծում, նորմ, օրենքի ընդունում, պետություն, պետության կազմավորում:

Ключевые слова: демократия, общественное мнение, правотворчество, нормы права, принятие закона, государство, государственное образование.

Key words: democracy, public opinion, law making, rule of law, enactment of a law, state, state formation.

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՓՈՓՈԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
(ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Արթուր Վաղարշյան
*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*
Նարինե Դավթյան
*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Արդի ժամանակաշրջանում դատական համակարգի կազմակերպման և գործունեության հիմնարար սկզբունքներից է դատավորների անկախությունը: Անկախության սկզբունքի երաշխիքներ են՝ դատավորների անփոփոխելիությունը, դատավորների լիազորությունների կասեցման հատուկ պայմանները, դատավորների անձեռնմխելիությունը, դատավորների անվտանգության ապահովումը, սոցիալական երաշխիքները և այլն: Անփոփոխելիությունը դատավորին տալիս է իրական անկախություն գործադիր իշխանությունից և համարվում իշխանությունների տարանջատման սկզբունքի բաղկացուցիչ: Այդ սկզբունքը կապում էր օրենսդիր և գործադիր մարմինների ձեռքերն «անցանկալի» դատավորների դեմ պայքարում, զրկում է դատավորների վրա անմիջականորեն ազդելու հնարավորությունից:

Դատավորների անփոփոխելիությունը, լինելով դատարանների անկախության սկզբունքի կարևորագույն երաշխիքներից մեկը, տարբեր իրավական համակարգերում իրագործվել և իրագործվում է յուրովի: Փորձենք դիտարկել անփոփոխելիության սկզբունքը պատմահամեմատական մեթոդի օգտագործմամբ՝ համադրելով այդ վերլուծության արդյունքները Հայաստանում 2015 թ. սահմանադրական բարեփոխումներով ներմուծված իրավակարգավորումների հետ:

Անգլիայում 1688 թ. հեղափոխությունից հետո սկսվել էր շարժում թագավորի կողմից բարձրագույն դատարանների անդամների նշանակման կարգի *during our pleasure* (քանի դեռ դուր են գալիս) սկզբունքի դեմ: Այն ավարտվեց գահաժառանգության ակտի ընդունմամբ (1701 թ.), ըստ որի՝ դատավորները մնում էին իրենց պաշտոնում և պահպանում իրենց նպաստները՝ *during good behaviour* (մինչև որ իրենց լավ են պահում), այսինքն՝ նորմալ պայմաններում՝ ցմահ:

Անգլիայի օրինակով Միացյալ Նահանգների դաշնային Սահմանադրության հայրերը 1787 թ. կոնվենտում ընդունում են դաշնային դատավորների անփոփոխելիության սկզբունքը: Մոնտեսքիոյի իշխանությունների բաժանման ուսմունքի ազդեցությամբ նրանք մտահոգված էին նրանով, թե ինչպես ստեղծել այնպիսի դատարան, որն ի վիճակի լինի որոշումներ կայացնել նաև ընդդեմ Նախահագի և Կոնգրեսի: Որպես արդյունք դաշնային դատավորների համար սահմանվեց ցմահ նշանակում (*during good behaviour*): Բոլոր ատյանների դաշնային դատավորների համար գոյություն ունի անփոփոխելիության երաշխիք այն դեպքում, երբ Անգլիայում դատավորները մինչ օրս նշանակվում են «մինչև թագուհուն դուր է գալիս» սկզբունքով:

Ֆրանսիայում դատավորների անփոփոխելիության սկիզբը ֆրանսիական հեղինակները համարում են XIV դարը, երբ Լյուդովիկոս XI (1467 թ.) իր հրովարտակով խոստացավ դատավորներին և պաշտոնյաներին ընդհանրապես ցմահ թողնել պաշտոններում: Սակայն այս հանգամանաքը չէր կանգնեցնում թագավորներին վտարել և բանտարկել իրենց ոչ ձեռնտու դատավորներին և հիմնել հատուկ դատարաններ այն գործերով, որոնցով ցանկալի էր ունենալ հատուկ ու թագավորի համար ընդունելի որոշակի լուծում: Հին իմաստով դատավորների անփոփոխելիությանը, ինչպես և մյուս արտոնություններին, ֆրանսիական հեղափոխությունը շտապեց վերջ տալ, քանի որ այս հասկացությունները զանգվածային գիտակցության մեջ դարեր շարունակ սերտորեն կապվում էին պաշտոնների առուվաճառքի ու ժառանգականության հետ: Հեղափոխականները գտնում էին, որ ցմահ դատավորը վտանգավոր է, քանի

որ անփոփոխելիությունը դատավորին դարձնում է արդարադատության սեփականատեր, և որ պետք է ժամանակ առ ժամանակ թարմացնել դատական կորպուսը, դատական լիազորություններով օժտելը ընձեռել այն քաղաքացիներին, ովքեր ցանկանում են ունենալ լավ դատավոր: Հարկ է նշել, որ դատավորների ընտրական համակարգը պահպանվեց տաս տարի, սակայն իրականում այդ ընթացքում դա անընդհատ խախտվում էր: Այդ ընթացքում հասարակական կարծիքում տեղի ունեցավ կտրուկ շրջադարձ ընդդեմ ընտրովի դատավորների: Հանրության մեծ մասը գտնում էր, որ ամբոխը չի կարողանում ընտրել լավ դատավորներ, որ հատկապես կարճ ժամկետներով ընտրված դատավորների վրա՝ ճնշում են գործադրում քաղաքական կրքերը, հասարակության տրամադրությունը, դրանով իսկ խարխլվում են դատական որոշումների անկողմնակալությունը, հետևողականությունը և շարունակականությունը:

Ֆրանսիական հեղափոխության VIII տարվա Սահմանադրությունը դատավորների նշանակման լիազորությունը փոխանցեց առաջին հյուպատոսին, բայց նշանակվողները պետք է ընդգրկված լինեին համայնքների և վարչությունների կողմից ընտրվածների ցուցակներում: Դատավորները նշանակվում էին ցմահ և ունեին անփոփոխելիության իրավունք, քանի դեռ չէին կատարել հանցագործություն կամ հեռացվել ցուցակից: 1883 թ. օրենքը պահպանեց դատավորների նշանակման համակարգը, բայց քանի որ բարեփոխումները ենթադրում էին հաստիքների կրճատումներ նաև պրակտիկայում, թեև դա չգտավ ամրագրում 1875 թ. Սահմանադրության մեջ: Այդուհանդերձ, ֆրանսիացիներն անփոփոխելիությունը համարում են կարևոր և հիմնական սկզբունք»:

Պրուսիայում դատավորների անփոփոխելիությունն ընդունվել էր դեռևս 1794 թ.: Այն վերահաստատվեց 1808 թ., սակայն 1844 թ. վերացվեց: Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II անընդհատ հայտարարում էր, որ դատավորները պետք է անկախ լինեն իրենց որոշումներում, սակայն գործնականում երբեմն կոպիտ կերպով միջամտում էր

արդարադատության ընթացքին: 1848 թ. հեղափոխական շարժման արդյունքներից էր դատավորների անփոփոխելիության վերականգնումը: Մինչ այժմ ամբողջ Գերմանիայում դատավորների անփոփոխելիությունը դատական համակարգի հիմնական սկզբունքներից մեկն է, որը չի կարող փոփոխվել հողային իշխանությունների կողմից:

XIX դարի ընթացքում դատավորների անփոփոխելիությունը իրավաբանորեն ճանաչվեց նաև մնացած եվրոպական երկրներում կա՛մ սահմանադրական, կա՛մ էլ դատարանակազմական օրենքների մակարդակով: Ռուսաստանում դատավորների անփոփոխելիության օրենսդրական դրույթն առաջ է եկել 1864 թ. Բարեփոխումների արդյունքում:

Ալեքսանդր Երկրորդի դատական կանոնադրությունները, որոնք Հայաստանի առաջին հանրապետության դատարանակազմության և դատավարության նորմատիվային հիմքն էին, ամրագրում էին դատավորների անկախության և անփոփոխելիության հիմնարար սկզբունքները: Արդարադատության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և գործելակերպը բնութագրող «Բարեփոխումներից» մեկն էլ դատավորների անփոփոխելիության սկզբունքն էր և դրա վերացումը: Դատավորների անփոփոխելիության իրավունքը սահմանված էր «Դատական հաստատությունների կանոնադրության» 243-րդ հոդով: Համաձայն այդ հոդվածի՝ դատավորները, առանց իրենց համաձայնության, չէին կարող արձակվել և ոչ էլ տեղափոխվել մեկ վայրից մյուսը: Նրանց ժամանակավոր հեռացումը պաշտոնից հնարավոր էր միայն դատի տրվելու դեպքում, իսկ վերջնական հեռացման նրանք ենթարկվում էին ոչ այլ կերպ, քան քրեական դատարանի դատավճիռներով: Անփոփոխելիության սկզբունքը տարածվում էր սենատի վճռաբեկ դեպարտամենտների անդամների և նախագահի, շրջանային դատարանի անդամների և նախագահի, դատական քննիչների վրա, ինչպես նաև հաշտարար դատավորների վրա այն ժամանակի ընթացքում, որի համար վերջիններս նշանակ-

վել էին (երեք տարի): Դատական քննիչների նկատմամբ անփոփոխելիության սկզբունքը գործում էր ոչ լրիվ, այսինքն՝ նրանց կարող էին տեղափոխել մեկ վայրից մյուսը՝ առանց նրանց համաձայնության: Անփոփոխելիությունը չէր տարածվում դատախազների վրա:

Սակայն այդ ժողովրդավարական իրավական ինստիտուտը, որով սկզբնական շրջանում պարծենում էին Առաջին հանրապետության պետական գործիչները, ժամանակի ընթացքում դարձավ անցանկալի իշխանությունների, կառավարող կուսակցության համար: Նման «մետամորֆոզի» իսկական պատճառներն ակնհայտորեն պարզել հնարավոր չէ: Այդ մասին առաջին անգամ ուղղակի խոսակցություններ և գործնական քայլեր արել է Հայ հեղափոխական դաշնակցության Կենտրոնական կոմիտեի բյուրոյի անդամ, Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Հ. Օհանջանյանը, որը 1919 թ. դեկտեմբերի 22-ին խորհրդարանին առաջարկեց օրինագիծ՝ «Դատաստանական պաշտոնյաների արձակման իրավունքի փոփոխման մասին»: Օրինագծով առաջարկվում էր 1920 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը վերացնել «Դատական հաստատությունների կանոնադրության» 243 հոդվ. և արդարադատության նախարարին այդ ընթացքում իրավունք տալ արձակելու պաշտոնից բոլոր անձանց, ովքեր օժտված են անփոփոխելիության իրավունքով: Նման դիրքորոշման դրդապատճառներն այնքան էլ պարզ չեն, իսկ օրինագծին կից համառոտ բացատրագիրը հետևյալ բովանդակությունն ունի. «Ի նկատի ունենալով այն երևույթը, որ դատաստանական պաշտոնյաների մեջ մնացել են՝ որպես ժառանգություն ցարական ռեժիմից, մի շարք ոչ ցանկալի տարրեր մեր ռամկավար հանրապետության օրենքները կիրառելու տեսակետից, որ ռուսական օրենքները իրավունք չեն տալիս նրանց արձակել պաշտոնից, առանց նրանց համաձայնության (բացի հանցագործության դեպքերից) առաջարկվում է այս օրինագիծը Հայաստանի խորհրդարանին ի քննություն, որպես ժամանակավոր միջոց մեր դատարանները անցանկալի տարրերից ազատելու համար»: Եթե խոսքը միայն ցարական ռեժիմից մնացած պաշ-

տոնյաների մասին էր, ապա դրանք կային հիմնականում միայն Երևանի շրջանային դատարանում և այնքան էլ շատ չէին: Հաշտարար դատավորների և քննիչների բացարձակ մեծամասնությունը նշանակվել էին հանրապետության օրոք: Դատական պալատի և սենատի բոլոր անդամները և նախագահները ևս նշանակվել էին հանրապետության օրոք:

«Դատաստանական պաշտոնյաների արձակման իրավունքի փոփոխման մասին» օրինագիծը խորհրդարանում հաստատում չի ստացել: Սակայն 1920 թ. մայիսին, երբ ինքը՝ Հ. Օհանջանյանը, վարչապետ էր, արդարադատության նախարար Ա. Գյուլիանդարյանը մայիսի 13-ին Նախարարների խորհրդին է ներկայացրել նույն բովանդակության մի նոր օրինագիծ, որի բացատրագիրը ընդամենը մեկ նախադասություն է. «Ի նկատի ունենալով երկրի ներկա արտակարգ վիճակը և այդ վիճակից բխող հրամայական պահանջները, նախարարությունս անհրաժեշտ է համարում մինչև Պառլամենտի վերաբացումը, ժամանակավորապես դադարեցնել «Դատական հաստատությունների կանոնադրության» այն հոդվածների գործողությունը, որոնց գործությամբ դատական պաշտոնյաներին տրված է անխախտության իրավունք», այսինքն՝ անփոփոխելիության իրավունք: Մայիսի 30-ին Նախարարների խորհուրդն ընդունել է այդ օրենքը:

Ո՞րոնք էին այս օրենքի ընդունման իրական նպատակները: Եթե այդ «անցանկալի տարրերը» կաշառակերներ էին և այլև, ապա իշխանությունները կարող էին նրանց նկատմամբ հարուցել քրեական հետապնդում և դրանով իսկ գրկել դատավորի կոչումից: Ուրեմն ամենայն հավանականությամբ օրենքը հետապնդում էր քաղաքական ինչ-ինչ նպատակներ, այսինքն՝ պաշտոնից հեռացնելու իշխանությունների նկատմամբ ոչ բարեհաճ վերաբերմունք ունեցող անձանց, և եթե հաշվի առնենք, որ դատավորների մեծ մասը նշանակվել էին Հայ ժողովրդական կուսակցության անդամ Ս. Հարությունյանի՝ արդարադատության նախարար լինելու ընթացքում և նրա ներկայացմամբ, ապա կարծում ենք՝ ամեն ինչ պարզ կդառնա: Այսպիսի քաղաքականություն ակնհայտորեն իրականացվում էր պետական կա-

ռավարման մնացած ոլորտներում, և դրա դեմ իրենց բողոքն էին արտահայտում ընդդիմության ներկայացուցիչները. «Վարչական կազմը լցված է միմիայն դաշնակցականներով, նշանակված դաշնակցական նախարարություններից, որոնք գործում են կամայականորեն, անհամապատասխան իրենց կոչմանը և վարում են հին ռեժիմի գործելակերպը»: Սա Ալեքսանդրապոլի ընդդիմադիր կուսակցությունների համատեղ բողոքն է՝ ուղղված Կառավարությանը¹: Որ իրականում պետական ապարատը կազմվում էր կուսակցական պատկանելությունից ելնելով, խոստովանում էին նաև կառավարող կուսակցության անդամները: Ներքին գործերի նախարարի օգնական Ս. Թորոսյանը 1920 թ. հուլիսի 2-ին նախարարին և վարչապետին ուղղված գեկուցագրով Կառավարությունից պահանջում էր. «Ինքնավարությունների, ադմինիստրացիայի և միլիցիայի պաշտոնները հանձնել պետականորեն աշխատող մարդկանց, առանց կուսակցական խտրության»²:

Այսպիսով, եթե պետական կառավարման մյուս ոլորտներում հեշտությամբ տարվում էր կուսակցականացված կադրային քաղաքականություն, ապա դատարաններում անփոփոխելիության սկզբունքի ուժով դժվար էր դրա իրականացումը, և կառավարությունը, ոտնակոխ անելով իրավական հիմնարար, ժողովրդավարական սկզբունքները, կամայականորեն կարող էր վերացնել դրանք և դրանով իսկ օրենքին տալ ապօրինության, ոչ իրավական բնույթ:

Այդ քայլին դիմում էր այն կուսակցության «բյուրո կառավարությունը», որը 1919 թ. իր «Զանգ» պաշտոնաթերթում Հայ ժողովրդական կուսակցության հետ մի դատավորի՝ կապեր ունենալու առիթով աղմուկ էր բարձրացրել. «Երբ կուսակցությունը մտնում է դատարան, այդ նշանակում է, որ պետական հիմնարկությունների համակարգի մեջ առաջացել է այնպիսի ճեղքվածք, որը սպառնում է խորտակել ամբողջ իրավակարգը: Դատարանը պետք է քաղաքականությունից զերծ լինի, դատարանը պետք է դուրս լինի քաղաքակա-

¹ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 96, թ. 1:

² Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 287, թ. 6:

նությունից, հակառակ պարագային հարգանքը դեպի նա կրնակի, դրա հետ մեկտեղ կչքանա իրավակարգի սկզբունքը և կհաղթանակի անձնական հայեցողությունն ու ինքնադատաստանը, որը իր հերթին կբերի քառս և անիշխանություն»¹:

Դատավորների անկախության սկզբունքը ապահովված էր նաև նյութական երաշխիքներով: Առաջին, դատավորների համար սահմանված էին զանազան գույքային ցենզեր: Երկրորդ, նրանց առաքինի և նյութապես բավարար ապոհովածության համար սահմանվում էին բարձր աշխատավարձեր: Հայաստանի առաջին հանրապետությունում, որն իր կառավարման ձևով խորհրդարանական էր և հռչակված նաև ժողովրդավարական հանրապետություն, գույքային ցենզերը վերացված էին: Ինչ վերաբերում է բարձր աշխատավարձին, ապա հանրապետության համար այդ հարցը ձեռք էր բերում ևս մի նոր ուրակ. բավականին բարձր աշխատավարձի միջոցով հրապուրել իրավաբաններին՝ գալու Հայաստան և աշխատանքի անցնելու դատական ու դատախազական մարմիններում: Ամբողջ երկու և կես տարիների ընթացքում արդարադատության նախարարությունը անընդհատ բարձրացնում էր այս հարցը օրենսդիր մարմինների և կառավարության առջև:

Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 24-ի «Դատավորի, դատախազի, դատական քննիչի և ավագ նոտարի պաշտոն վարողների ռոճիկի մասին» օրենքով թվարկված պաշտոնյաները առանձնացվեցին պետական մյուս ծառայողներից իբրև առաջին կատեգորիա, և նրանց համար սահմանվեցին ավելի բարձր աշխատավարձեր²: Հետաքրքիրն այն է, որ որոշ պատգամավորներ՝ Հ. Օհանջանյանը և Վ. Խորենին, ընդհանրապես դեմ էին այս օրենքի ընդունմանը: «Բոլոր աշխատավորները հավասար են ու պիտի ստանան հավասար գոյապրուստ: Այս պարզ հասկացողությունը ոտնահարվեց առաջին օրինագծով. երկրորդ օրինագիծը եկավ ավելի մեծ հար-

¹ Տե՛ս Զանգ, թերթ, 1919, թիվ 4:

² Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու, Եր., 1919, թիվ 9, էջ 68:

ված հասցնելու՝ ստեղծելով աշխատավորության մեջ կաստայական դրություն»¹:

Չնայած ձեռնարկվող միջոցառումներին, իհարկե, պետական բյուջեի պակասորդը և արժեզրկումը ի չիք էին դարձնում դատավորների անկախության սկզբունքի նշված երաշխիքը: Իսկ 1920 թ. գարնանը, երբ Հ. Օհանջանյանը արդեն օրենսդրական լիազորություններով օժտված կառավարության վարչապետն էր, իր վերոբերյալ դիրքորոշմամբ, 1920 թ. մայիսին կատարելով աշխատավարձերի նոր հավելումներ, վերացրեց աշխատավարձերի գումարային տարբերությունը, մի կողմից՝ դատական, դատախազական, քննչական, և մյուս կողմից այլ պաշտոնյաների միջև: Այդ քայլը դժգոհություն առաջ բերեց համակարգի ծառայողների շրջանում, որոնք այդ առթիվ դիմեցին նախարարին: Արդարադատության նախարարը 1920 թ. հուլիսի 21-ին գեկուցեց այդ մասին կառավարությանը, սակայն Նախարարների խորհրդի որոշումը անփոփոխ էր. «Գոհացնել ընդհանուր կարգով՝ համաձայն ռոճիկների նոր հավելումների օրինագծի»: Ի պատասխան այդ քայլի՝ արդարադատության նախարարը (Ա. Չիլինգարյան) 1920 թ. օգոստոսի 9-ին նորից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ Նախարարների խորհրդում՝ այս անգամ արդեն ոչ թե խնդրանքով, այլ սպառնալիքով. «Եթե չլինի փոփոխություն նրանց նյութական վիճակի մեջ, դատական պաշտոնյաները կհեռանան, ու դատարանը կքայքայվի (մի բան, որ արդեն սկսվել է)»: Այս անգամ արդեն կառավարությունը ավելի խոհեմ գտնվեց և վերադարձավ Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 24-ի՝ վերը նշված օրենքների հիմունքներին:

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր պետական մարմինները հանրապետության հռչակման պահից իրենց առաջնակարգ խնդիրներից մեկը համարեցին հիմնել հանրապետական կառավարման ձև և հաստատել ժողովրդավարական վարչաձև: Հանրապետության օրենսդիր մարմինները, կառավա-

¹ Տե՛ս Յառաջ, թերթ, Երևան, 1919, թիվ 77:

րությունը սկզբնական շրջանում, ինչպես ամբողջ պետական կառավարման, այնպես էլ արդարադատության ոլորտում կենսագործում էին այդ խնդիրը՝ ջանալով նորաստեղծ հանրապետությունում դատական համակարգը դնել իրավական, ժողովրդավարական հիմքերի վրա: Առաջին Հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացությունը, պատերազմները, հակապետական խռովություններն ու հանցավորության բարձր մակարդակը, «պատշաճ» դատական համակարգի անարդյունավետ գործունեությունը ստիպում էին իշխանություններին փոխելու իրենց սկզբնական ժողովրդավարական դիրքորոշումները, խախտելու, վերանայելու կամ վերացնելու արդարադատության հիմնարար սկզբունքները: Այդպիսի գործելակերպը հաճախ ուներ նաև քաղաքական պատճառներ, պայմանավորված էր կառավարող կուսակցության մենատիրական, բյուրոկրատական ձգտումներով, հետևանք էր նաև իրավագիտակցության, իրավական մշակույթի ցածր մակարդակի: Նման ուղղվածություն ունեցող օրենսդրական նախաձեռնություններ արվում էին հանրապետության գոյության ողջ ժամանակաընթացքում, սակայն Հայաստանի խորհրդի և խորհրդարանի ողջամիտ դիրքորոշման շնորհիվ հետագա ընթացք չէին ստանում: Այլ էր վիճակը այն ժամանակաշրջաններում, երբ օրենսդրական լիազորությունները պատկանում էին կառավարությանը, հատկապես՝ «բյուրո կառավարությանը», երբ նշված օրենսդրական նախաձեռնություններն անարգել իրազործվում էին: Արդարադատության սկզբունքների բոլոր վերանայումները, արտակարգ դատարանների հիմնադրումը արվել են այս ժամանակահատվածներում: Այդպիսի օրենսդրական վերանայումների ընթացքում խախտվել են դատական համակարգի միասնականության, արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից, դատական մարմինների և դատավորների անկախության սկզբունքները, ինչպես նաև լիովին վերացվել է դատավորների անփոփոխելիության սկզբունքը:

Խորհրդային արդարադատությանը Հայաստանի օրինակով բնութագրական էին դատավարության մեջ սոցիալ-քաղաքական

շարժառիթների ներմուծումը, արդարադատության դասակարգային բնույթի ճանաչումը, դատավորների ընտրությունն ըստ դասակարգային շահերի, նրանց փոփոխելիությունը, դատական պրոֆեսիոնալիզմի դերի նվազեցումը, դատական և իշխանակառավարչական գործունեության տեսակների մերձեցումը, արտակարգ արդարադատության անհրաժեշտության ճանաչումը և այլն: Վերլուծության խնդրի տեսանկյունից խորհրդային փորձն անընդունելի է, հետևաբար այն չենք դարձնի հատուկ քննարկման առարկա:

1995 թ. Սահմանադրության 96 հոդվածն ամրագրեց, որ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը անփոփոխելի են: Դատավորը պաշտոնավարում է մինչև իր 65 տարին, իսկ սահմանադրական դատարանի անդամը՝ 70 տարին լրանալը: Նրանց լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Սահմանադրական նման կարգավորումը դիտարկվում էր որպես դատական իշխանության անկախության ապահովման կարևոր երաշխիքներից մեկը: 2005 թ. իրականացված սահմանադրական բարեփոխումների հետևանքով վերոնշյալ հոդվածի հիմնական դրույթները պահպանվեցին, սակայն սահմանադրական դատարանի անդամների համար ևս պաշտոնավարման ժամկետ սահմանվեց մինչև 65 տարին լրանալը:

2015 թ. Սահմանադրության նոր խմբագրությունը փորձել է լուծել դատավորի և դատական իշխանության անկախության մի շարք հիմնահարցեր: Այսպես, արտաքին անկախության երաշխավորման համար առաջնահերթ նշանակություն ունի դատավորների նշանակման և նրանց լիազորությունների դադարեցման ընթացակարգը: Նախկին Սահմանադրության 55-րդ և 95-րդ հոդվածները Հանրապետության նախագահին էին վերապահում բոլոր ատյանների դատավորների, դատարանների նախագահների նշանակման և նրանց լիազորությունների դադարեցման վերջնական իրավասությունը: Մինչդեռ միջազգային փաստաթղթերում խիստ կարևորվում է պետության գլխի սահմանափակ դերակատարումը դատավորների նշանակման և լիազորությունների դադարեցման գործընթացում՝ վերջինիս

դերը մոտեցնելով արարողակարգային¹: Այդ պահանջին համապատասխան՝ նոր Սահմանադրությունը ապահովել է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռված մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին: Նախ՝ հստակեցրել և սահմանափակել է դատավորների նշանակման գործընթացում Հանրապետության նախագահի դերակատարումը՝ այն դարձնելով արարողակարգային: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի ներկայացմամբ: Հաշվի առնելով դատական համակարգում Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ տեղը՝ սահմանադրությունը նախատեսել է Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության մրցութային կարգ: Բարձրագույն դատական խորհուրդը մրցույթի արդյունքներով Ազգային ժողովին է ներկայացնում յուրաքանչյուր տեղի համար Վճռաբեկ դատարանի դատավորների երեք թեկնածու: Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Հանրապետության նախագահը:

Դատավորի արտաքին անկախությանն առնչվող մեկ այլ կարևոր հարց է նրա լիազորությունների դադարեցման իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը: Նախկին սահմանադրական կարգավորումը Հանրապետության նախագահին էր վերապահում ոչ

¹ Միջազգային փաստաթղթերի համաձայն դատավորների նշանակման գործընթացում այդ իրավասությունը չպետք է կենտրոնանա բացառապես դատական իշխանության ձեռքում, քանի որ կհանգեցնի ֆավորիտիզմի ու պահպանողականության վտանգների, մյուս կողմից գործընթացին օրենսդիր և գործադիր իշխանությունների մասնակցությունը չպետք է վերջիններիս տրամադրի դատական իշխանության վրա ազդեցության լծակներ: Վենետիկի հանձնաժողովը դատավորների նշանակման գործընթացին պետության գլխի ձևական մասնակցությունը դիտարկում էր դասական նախագահական լիազորություն: Սակայն նախագահի այս իրավունքը, ըստ այդ հանձնաժողովի, պետք է սահմանափակված լինի նրանով, որ նախագահը կարող է դատավոր նշանակել միայն դատական ինքնակառավարման մարմնի առաջարկած թեկնածուների թվից:

միայն դատավորի լիազորությունների դադարեցման, այլև նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու հարցերում վերջնական որոշման լիազորությունը: Նոր խմբագրությամբ Սահմանադրությունը այս հարցերը վերապահել է միայն Բարձրագույն դատական խորհրդի իրավասությանը, իսկ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում՝ Սահմանադրական դատարանին: Դատավորների ներքին անկախության երաշխիքներից են դատարանների նախագահների նշանակման նոր իրավական կարգավորումները¹:

Դատավորների անփոփոխելիության սկզբունքի հարցում Սահմանադրության նոր խմբագրության կարգավորումները վերադարձ են կատարել 1995 թ. սահմանադրական կարգավորմանը՝ տարբերակելով դատավորի և սահմանադրական դատարանի անդամի պաշտոնավարման ժամկետները՝ առաջին՝ մինչև 65 տարին լրանալը, երկրորդը՝ մինչև 70 տարին լրանալը: Սակայն սահմանադրական դատարանի անդամների համար սահմանվել է պաշտոնավարման ժամկետ, այն է՝ 12 տարի: Բացի այդ՝ նոր խմբագրությունը հրաժարվել է «անփոփոխելիություն» եզրույթից, ինչն իրավաբանական տեսանկյունից նշանակություն չունեցող փաստ է:

¹ Նոր խմբագրությամբ Սահմանադրությունում ամրագրվել է այն ելակետային մոտեցումը, որ դատարանների նախագահներն առաջին հերթին դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, միայն այն տարբերությամբ, որ նրանց, ի հավելումն դատավորի բուն գործառույթների, վերապահված են հավելյալ կազմակերպչական գործառույթներ: Դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի սահմանափակումներ ներդնելու անհրաժեշտությունը բխում է նաև դատավորների միջև առողջ մրցակցություն ապահովելու անհրաժեշտությունից: Դատարանների նախագահների անժամկետ նշանակման պարագայում նույն դատարանում առաջնադասման հնարավորությունն էականորեն սահմանափակվում է կամ նույնիսկ անհնարին է դառնում, քանի որ գործնականում դատարանների նախագահները պաշտոնավարում են բավականին երկար ժամանակ, որպես կանոն, մինչև որպես դատավոր իրենց առավելագույն տարիքը լրանալը, որի արդյունքում գրեթե բացառվում է այդ պաշտոնում թափուր տեղի առաջացման հնարավորությունը: Այնինչ դատավորների համար առաջնադասման հնարավորության ապահովումը դատական համակարգի արդյունավետ գործունեության էական նախադրյալներից մեկն է:

Այսպիսով, պատմահամեմատական մեթոդի օգտագործմամբ հետազոտելով դատարանների անկախության սկզբունքի կարևորագույն երաշխիքներից մեկի՝ դատավորների անփոփոխելիության, տարբեր իրավական համակարգերում (եվրոպական հիմնական երկրներ, ռուսական կայսրություն, Հայաստանի երեք հանրապետություններ) ամրագրման և կենսագործման փորձը, համադրելով այդ վերլուծության արդյունքները Հայաստանում 2015 թ. սահմանադրական բարեփոխումներով ներմուծված իրավակարգավորումների հետ՝ կարելի է եզրակացնել, որ դատավորների արտաքին և ներքին անկախության ապահովման տեսանկյունից ՀՀ Սահմանադրությունը կատարել է էական առաջընթաց քայլեր: Այդ քայլերը կոչված են ապահովելու դատավորների և դատարանների անկախությունը և վերջիններիս կողմից պատշաճ արդարադատության իրականացումը:

ФОРМИРОВАНИЕ ПРИНЦИПА НЕСМЕНЯЕМОСТИ СУДЕЙ И СОВРЕМЕННОЕ КОНСТИТУЦИОННО- ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ (ИСТОРИКО-СРАВНИТЕЛЬНЫЙ ПРАВОВОЙ АНАЛИЗ)

Артур Вагаршян

*Заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ,
доктор юридических наук, профессор*

Наринэ Давтян

*Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

Посредством историко-сравнительного метода в статье исследуется одна из важнейших гарантий принципа независимости судей – несменяемость. Изучая опыт закрепления и реализации института несменяемости в разных правовых системах (основные европейские страны, российская империя, три армянские республики) и сопоставляя этот анализ с конституционными нововведениями в Армении 2015 года, авторы приходят к выводу о том, что с точки зрения обеспечения внутренней и внешней независимости судей Конституция Армении достигла существенного прогресса. Конституционные нововведения призваны обеспечить независимость судов и судей, а также надлежащего осуществления ими правосудия.

FORMATION OF CONSTITUTIONAL PRINCIPLE OF IRREMOVABILITY OF JUDGES AND CONTEMPORARY LEGAL REGULATIONS (HISTORICAL-COMPARATIVE LEGAL ANALYSIS)

Artur Vagharshyan

*Head of the YSU Chair of Theory and History of State and Law,
Doctor of Legal Sciences, Professor*

Narine Davtyan

*Assistent at the YSU Chair of Theory and History of
State and Law, Candidate of Legal Sciences*

By using the historical-comparative method, the article studies one of the most significant guarantees of the principle of judicial independence in the practice of establishment and implementation of irremovability of judges in various legal systems (main European countries, Russian empire, three republics of Armenia) by comparing the results of the analysis of Armenia of 2015 with the legal regulations introduced by the constitutional amendments, the authors conclude that, from the perspective of ensuring the external and internal independence of the judges, the RA Constitution has made significant step forward.

These steps are called to ensure the independence of the judges and courts and implementation of proper justice.

Բանալի բաներ – անկախություն, անփոփոխելիություն, բյուրո կառավարություն, գույքային ցենզ, կրթական երաշխիք, դատավորների կուսակցականացում, ոչ իրավական օրենք, սահմանադրական անաջրկթաց:

Ключевые слова: независимость, несменяемость, бюро правительства, имущественный ценз, материальная гарантия, партийность судей, неправовой закон, конституционный прогресс.

Key words: independence, irremovability, a bureau government, property requirements financial guarantees, party membership, illegitimate law, constitutional progress.

ԵԱՏՄ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գևորգ Դանիելյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի
վարիչ, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

Միջազգային իրավունքի աղբյուրների կիրառմանն առնչվող հարցադրումները ներկայումս առավել խնդրահարույց են դարձել հասկապես միջազգային կազմակերպությունների մարմինների որոշումների առնչությամբ: Նշված հարցադրումը հասկապես վերջին շրջանում ձեռք է բերել աննախադեպ արդիականություն, քանի որ նկատվում է հիշյալ մարմինների կողմից՝ կատարման համար պարտադիր իրավական ակտերի ընդունման գործընթացի աննախադեպ ակտիվացում¹: Ընդ որում, հայրենական իրավական համակարգի պայմաններում հիշյալ խնդրի արդիականությանն ու հրատապությանը նոր լիցք հաղորդվեց՝ կապված ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության հետ, քանզի այս միջազգային կազմակերպության մարմիններին վերապահված են որոշումներ կայացնելու աննախադեպ լայն լիազորություններ:

Ինչպես հայտնի է, Սահմանադրական դատարանն այս խնդրին հնարավորինս հանգամանալից անդրադարձել է իր՝ 2014թ. նոյեմբերի 14-ի «2014թ. հոկտեմբերի 14-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական Տնտեսական Միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը

¹ Stéu, օրինակ, Ануфриева Л. П., Об источниках международного частного права (некоторые вопросы теории) // Московский журнал международного права. 1994. № 4., Лукашук И. И., Источники международного права. Киев, 1996, Тарасова Л. Н., Проблемы правомерности в правотворчестве международных организаций // Проблемы правомерности в правотворчестве международных организаций. 2013. № 12-1 (38) և այլն:

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՄԴՈ-1175 որոշմամբ¹, սակայն հետագա իրավակիրառ պրակտիկան ցույց տվեց, որ այն, այնուամենայնիվ, չէր կարող բավարար լինել գործնականում ԵԱՏՄ-ի մարմինների որոշումների իրավական արժեքի, դրանց կիրառմանն առնչվող ընթացակարգերն սպառիչ ընկալելու ու ըստ այդմ էլ իրավակարգավորման հիշյալ ասպեկտներով բնականոն համագործակցություն երաշխավորելու տեսանկյունից: Ինչևէ, հիշյալ հարցերի առնչությամբ դեռևս առկա են էական անորոշություններ, որոնց համար համարժեք ու ողջամիտ պատասխաններ մշակելու տեսանկյունից պարզապես հնարավոր չէ սահմանափակվել Սահմանադրական դատարանի հայտնի որոշման դրույթներով. հասկանալի պատճառներով դրանք այդ որոշման մեջ չէին կարող արտացոլվել, քանզի սահմանադրական արդարադատության առարկա չեն:

Ըստ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման (10-րդ կետ)՝ մոտ երկու տասնյակի հասնող օրենքներում հարկ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որպեսզի միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների ակտերի կիրառմանն առնչվող հարաբերություններն ստանան սպառիչ կարգավորում: Միաժամանակ, հարկ է նկատել, որ սույն հոդվածում մենք խնդիրը նաև այլ ասպեկտներով ենք քննարկել և գտնում ենք, որ համալիր լուծումը չի կարող սահմանափակվել միայն օրենսդրության բացերի վերացմամբ, անհրաժեշտ են առանցքային վերանայումներ, մասնավորապես անհրաժեշտ է վերափմաստավորել ավանդական նշանակություն ձեռք բերած մի շարք էական եզրույթների բովանդակությունն ու իրավական արժեքը: Բացի այդ, միայն ներպետական օրենսդրությամբ պարզապես հնարավոր չէ համալիր լուծել այդ ոլորտում կուտակված խնդիրները, հարկ է որոշակի չափանիշներով վերանայել նաև ոլորտին առնչվող միջազգա-

¹ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2014/index.htm> էլեկտրոնային կայքում:

յին պայմանագրերը:

Նկատենք, որ սույն հոդվածում արտացոլված եզրահանգումները հավասարապես առնչվում են զուտ ազգային օրենսդրության նորմերի իրավակիրառ քաղաքականության գործընթացում ծագող հիմնահարցերին (անկախ նրանից, թե վերջիններս ինչպիսի հարաբերակցության մեջ են միջազգային իրավունքի նորմերի հետ) և կարող են այս կամ այն չափով գիտագործնական նշանակություն ունենալ նաև այդ կտրվածքով:

Այս հարցադրումները ձեռք են բերել աննախադեպ հրատապություն, իսկ դրանց առնչությամբ համալիր հետազոտական նյութի բացակայությունը գործնականում հանգեցրել է մի իրավիճակի, երբ լուծումներ ակնկալվում են այն հարթությամբ և այնպիսի եղանակներով, որոնք խոսում են ոչ այնքան խնդրի լուծումը համակարգված պատկերացնելու, որքան սոսկ իրավիճակային տարբերակներ առաջադրելուն նախապատվություն տալու մասին: Նկատենք, որ այս խնդրի առնչությամբ հնարավորինս անհրաժեշտ իրավական որոշակիություն երաշխավորելու տեսանկյունից հարցը հնչեցվել է նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովում, այլ կերպ ասած՝ ակնկալվում էր, որ առնվազն Հիմնական օրենքում ևս հարկ կլինի ներառել խնդրի իրավական կարգավորմանը նվիրված համարժեք հիմնադրույթներ¹: Այն, որ ներկայումս գործնականում հիշյալ հարցերը դեռևս լայն հնչեղություն ձեռք չեն բերել, և դեռևս իրավիճակային լուծումներով հնարավոր է լինում *սոսկ մասնակի* հարթել հիմնախնդրի «սուր անկյունները», բնավ չի նշանակում, որ այդ լուծումները կարող են ունենալ այնպիսի հիմնարար արժեք, որ այլևս երբեք ի ցույց չեն դնի բոլոր հնարավոր բացասական դրսևորումները: Կարծում ենք՝ պետք է գիտագործնական հարթությամբ պատրաստ լինենք զարգացումներին և ունենանք հնարա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի 2015թ. օգոստոսյան նիստերի արխիվային արձանագրությունները:

վորինս համալիր մշակված հայեցակարգային մոտեցումներ և կոնկրետ լուծումների վերաբերյալ հստակ տեսլական, մանավանդ որ ազգային օրենսդրության կիրառման տեսանկյունից ևս առկա են նույնաբնույթ հիմնախնդիրներ:

Ինչևէ, ընտրված հիմնահարցերին անդրադառնաք ինչպես միջազգային-իրավական, այնպես էլ ներպետական իրավական համակարգի փոխհարաբերության հարթությամբ, ինչին առնչվող հարցադրումները որոշակի արտացոլում են գտել նաև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրությունում:

Ինչպես արդեն նկատեցինք, միջազգային կազմակերպությունների մարմինների որոշումների կատարման խնդիրն առանձնակի հրատապություն ունի ԵԱՀԿ-ի պարագայում, սակայն հավելենք, որ սույն հետազոտությունում արված դատողությունները, որոշ վերապահումներով հանդերձ, վերաբերելի են նաև այլ միջազգային կազմակերպությունների մարմինների որոշումների կիրառմանը, ընդ որում, հնարավորինս ամփոփ կանոդադառնանք նաև այդ կտրվածքով առանձնահատկություններին:

Նախ նկատենք, որ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների որոշումների կատարմանն առնչվող իրավական հարաբերությունները կարգավորված են ոչ միայն մի շարք միջազգային պայմանագրերով, այլև ներպետական օրենսդրական ակտերով, սակայն դրանցում սպառիչ ու հստակ արտացոլված չեն վերը նշված հարցերի պատասխանները: Խնդիրն էլ ավելի խրթին է դառնում, երբ ի հայտ են գալիս իրարամերձ իրավական կարգավարումներ: Իսկ այդ իրավիճակը վկայում է այն մասին, որ քննարկվող հարցադրումը դեռևս չի դարձել միասնական չափանիշներով կարգավորման առարկա: Ինչևէ, անհրաժեշտ համալիր հետազոտություն ապահովելու տեսանկյունից հարկ է առնվազն ուսումնասիրել հետևյալ հարցադրումները՝

1) որքանով են հայրենական իրավական համակարգում «իրավական ակտի ընդունում», «իրավական ուժ», «կիրառման մեջ դնել»

եզրույթներին տրված բնորոշումները համահունչ միջազգային փորձին, արդյո՞ք դրանք «իրավաստեղծ ու իրավակիրառ պրակտիկայում» տրված բնորոշմամբ անհարկի խնդրահարույց չեն, արդյո՞ք ապահովված է անհրաժեշտ միասնական իրավական դիրքորոշում,

2) ի՞նչ իրավական նշանակություն ու իրավաբանական ուժ ունեն միջազգային կազմակերպությունների մարմինների իրավական ակտերը, արդյո՞ք դրանց իրավաբանական ուժի մեջ մտնելու կանոնները կարող են նույնական լինել ներպետական իրավական ակտերի՝ իրավաբանական ուժ ձեռք բերելու հիմքերի ու ընթացակարգի հետ,

3) Սահմանադրության նորմերն ի՞նչ չափով ու սահմաններում են անդրադարձել միջազգային կազմակերպությունների մարմինների իրավական ակտերի իրավաբանական ուժին և հայրենական իրավական նորմերի աստիճանակարգության համակարգում դրանց ունեցած դերին, ինչպե՞ս պետք է ընկալվեն ու կիրառվեն հիշյալ հիմնադրույթները՝ անհարկի բարդություններից խուսափելու նկատառումով,

4) ինչպե՞ս են միջազգային կազմակերպությունների մարմինների իրավական ակտերը փոխհարաբերվում ներպետական օրենսդրական ակտերի հետ:

Բնականաբար, այս հարցադրումների լուծումները չեն կարող հակասել Սահմանադրության հիմնադրույթներին, հատկապես պետք է համահունչ լինեն պետության ինքնիշխանության սահմանադրական հիմունքներին, ուստի ստորև մեր դատողությունների հիմքում նկատի ենք ունենալու այն միանշանակ մոտեցումը, որ ծագած հիմնախնդրի լուծման եղանակները պետք է ներդաշնակ լինեն Սահմանադրությանը: Պարզապես հարկ կլինի վերանայել Սահմանադրության՝ խնդրին առնչվող նորմերի վերաբերյալ ձևավորված որոշ պատկերացումներ:

1. Հայրենական իրավական համակարգում «իրավական ակտի ընդունում», «իրավական ուժ», «կիրառման մեջ դնել» եզրույթներին

տրված բնորոշումները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց առնչությամբ պատկերացումները, մեր կարծիքով, խոցելի են և անհարկի շփոթի տեղիք են տալիս: Ձևավորված իրավական մշակույթի համաձայն՝ «իրավական ուժի մեջ» մտնելը, որպես կանոն, ընկալվում է այն կտրվածքով, ըստ որի՝ տվյալ իրավական ակտն արդեն այդ պահից ենթակա է կիրառման, և բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է ծագում հետաձգելու իրավական ակտի կիրառումը, թերևս ընդունելի միջոց է համարվում իրավական ակտի կամ դրա առանձին նորմերի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ սահմանելը: Այլ կերպ ասած՝ հայրենական իրավական համակարգում, ըստ էության, նույնացվել են «իրավական ուժի մեջ մտնելու» և «իրավական ակտը կիրառման մեջ դնելու» հիմքերը: Միաժամանակ, այս հարցում չկա հստակ իրավական դիրքորոշում (մասնավորապես, մինևույն իրավական ակտում կարելի է հանդիպել ինչպես առանձին նորմը ավելի ուշ ուժի մեջ մտնելու, այնպես էլ արդեն ուժի մեջ մտած իրավական նորմն ավելի ուշ կիրառելու պայման), ինչը խոսում է այն մասին, որ տվյալ խնդիրը նաև իրավագիտության հարթությամբ դեռևս չի դարձել հստակ ու սպառիչ հետազոտության նյութ, դրա առնչությամբ չկան միասնական մոտեցումներ:

Այսպես, 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 116-րդ հոդվածի համաձայն. «Սահմանադրության փոփոխությունների 55-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության՝ վերահսկիչ պալատի նախագահին եւ գլխավոր դատախազին վերաբերող դրույթները, 74.1-րդ հոդվածի առաջին մասը, 83.4-րդ հոդվածով սահմանված դրույթը, 86-րդ հոդվածը, 88.1-րդ հոդվածի առաջին մասն ուժի մեջ են մտնում (ընդգծումը մերն է) Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից»: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված է հետևյալ նորմը. «63-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված *դրույթը կիրառվում է* (ընդգծումը մերն է) Ազգային ժողովի հաջորդ գումարումների համար»:

Նույն բնույթի իրավակարգավորումներ կան նաև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրությունում: Այսպես, վերջինիս 209-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Սահմանադրության 89-րդ հոդվածը, ինչպես նաև Սահմանադրության 11-րդ գլուխն *ուժի մեջ են մտնում* (ընդգծումը մերն է) 2016 թվականի հունիսի 1-ից», իսկ 217-րդ հոդվածի համաձայն. «Մինչև Սահմանադրության 9-րդ գլխի ուժի մեջ մտնելը ընտրված համայնքի ավագանու անդամները և համայնքի ղեկավարը շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ սահմանված դրույթը *կիրառվում է* (ընդգծումը մերն է) Տեղական ինքնակառավարման մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո»:

Վերը նշված ոչ հետևողական, անգամ իրարամերժ իրավական դիրքորոշումն իր արտացոլումն է ստացել նաև Սահմանադրական դատարանի որոշումների առնչությամբ. «Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ» (2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մաս, 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս դեպքում թերևս դարձյալ այն մտայնությունն է հիմք ընդունվել, որ հակասահմանադրական ճանաչված նորմատիվ իրավական ակտի ուժը կորցրած ճանաչելու դեպքում հնարավոր չէ սահմանել, որ այն դեռ կարող է մի որոշ ժամանակ կիրառվել նաև դրանից հետո: Միաժամանակ, բոլորովին այլ մոտեցում է ամրագրված նույն 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 117-րդ հոդվածի 8-րդ մասով. «Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Ազգային ժողովի հա-

շորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից հետո՝ հինգ ամսվա ընթացքում: *Մինչ այդ վերահսկիչ պալատը շարունակում է մինչև Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելը սահմանված լիազորությունների իրականացումը (ընդգծումը մերն է)»:*

Ընդգծենք, որ բարձրացված խնդիրը բնավ չի սահմանափակվում զուտ տեսական ասպեկտներով, այն իրավակիրառ պրակտիկայում տեղիք է տալիս լրջագույն շեղումների իրավական որոշակիության սկզբունքից. բնորոշ է այն, որ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչած նորմատիվ իրավական ակտերի պարագայում Հանրապետության վճռաբեկ դատարանը նոր հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոքները վարույթ էր ընդունում միայն Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված այն ժամկետը լրանալուց հետո, որը նախատեսված էր վիճարկվող նորմատիվ ակտի ուժը կորցնելու համար: Սակայն այս դեպքում երբեմն լրացած է լինում բողոքարկման համար սահմանված ժամկետը:

Չանդրադառնալով հիմնահարցի մյուս ասպեկտներին՝ պարզապես նկատենք, որ գիտագործնական չափանիշներով չեն ծագի վերը նշված անհարկի տարաձայնությունները, ի հայտ չեն գա իրավակիրառ այլ բարդություններ, եթե մեկնակետ ընդունենք այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ *իրավական ակտի ընդունմամբ և սահմանված կարգով հրապարակմամբ իրավական ակտն ամբողջովին մտնում է իրավական ուժի մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում անցումային դրույթներում կարող են սահմանվել այս կամ այն նորմի անմիջական կիրառման ավելի ուշ ժամկետներ:* Այս եզրահանգումը ներկայումս խիստ արդիականություն ունի հատկապես միջազգային մարմինների, մասնավորապես ԵԱՀԿ-ի մարմինների իրավական ակտերի առնչությամբ: Նկատի ունենք այն, որ այդ մարմինների ակտերը կարող են իրավական ուժ ստանալ ավելի վաղ ժամկետում, սակայն դրանից բնավ չի բխում, որ այդ ժամկետը միաժամանակ

նշված իրավական ակտի անմիջական կիրառմանն է վերաբերում: Այդ բնույթի իրավական ակտերի անմիջական կիրառման համար, որպես կանոն, պետք են կառուցակարգային և ընթացակարգային լրացուցիչ երաշխիքներ, որոնք կյանքի կոչելու համար անհրաժեշտ են ողջամիտ ժամկետներ: Այլ կերպ ասած՝ հարկ է սահմանազատել «կիրառում» և «անմիջական կիրառում» եզրույթները, ընդ որում, առաջին դեպքում նկատի ունենք այն, որ իրավական ակտի նորմի հենքով ձեռնարկվում են դրա անմիջական կիրառման համար կազմակերպահրավական միջոցներ, իսկ երկրորդ դեպքում՝ պարզապես նորմը կիրառվում է որևէ իրավաբանական փաստի ուժով ծագած կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորելու կտրվածքով: Այլ կերպ ասած՝ հիմնախնդրի քննարկման տեսանկյունից կարելի է խոսել նորմի կիրառման առնվազն *երկու աստիճանների* մասին, որոնցից առաջինը, թերևս, նախապատրաստական բնույթ ունի:

Հավելենք, որ իրավական ակտի կիրառման համար բավարար հիմք կարող է լինել նաև այլ երկրի իրավասու մարմնի կողմից ընդունվելը և այդ երկրի տարածքում իրավական ուժ ունենալը: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Դատարանն օրենքին կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան կարող է կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր»: Բնական է, որ այլ պետության իրավունքի նորմը չի համարվում մեր պետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, սակայն այն կարող է օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերով կիրառվել, ինչից բխում է, որ դասական իմաստով իրավական ուժ ունենալու միակ հիմքը տվյալ պետության իրավասու մարմինների կամ միջազգային պայմանագրերի վրա հիմնված մարմինների կողմից ընդունված լինելը չէ:

2. *Միջազգային կազմակերպությունների մարմինների իրավական ակտերի իրավական նշանակությունն ու իրավաբանական ուժը:* Այս հարցադրման առնչությամբ մասամբ առկա է օրենսդրական

կարգավորում՝ մասնավորապես «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի¹ 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Միջազգային կազմակերպության մարմնի որոշումը միջազգային պայմանագիր չի համարվում և Հայաստանի Հանրապետության կողմից կատարվում է այնքանով, որքանով տվյալ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով դա օժտված է համապատասխան իրավաբանական ուժով»: Այսպիսով, ներպետական օրենսդրությամբ ամրագրված է միայն այն դրույթը, ըստ որի՝ քննարկման առարկա իրավական ակտերը միջազգային պայմանագրեր չեն համարվում: Իսկ այն, որ դրանք կատարվում են այնքանով, որքանով տվյալ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով օժտված են համապատասխան իրավաբանական ուժով, ըստ էության ոչ միայն հստակ չի կանխորոշում այդ ակտերի իրավաբանական ուժը, այլև մեծ հարցականի տակ է դնում այն, թե, այնուամենայնիվ, կոնկրետ ինչպիսի՞ իրավական ուժ ունեն և ի՞նչ ընթացակարգով դրանք պետք է կատարվեն: Վերջին հաշվով, իրավական ակտերի աստիճանակարգությունը սահմանված է Սահմանադրությամբ, որում սակայն «շրջանցված են» միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթով նախատեսված կարգով ու դեպքերում իր մարմինների կողմից ընդունված ակտերի իրավաբանական ուժին և ներպետական կոնկրետ իրավական ակտերի համակարգում ունեցած դերին առնչվող հարցերը: Լավագույն դեպքում այդ փաստաթղթերով կարող են ընդհանուր գծերով ամրագրվել դրանց կատարման ընթացակարգերն ու ժամկետները, ինչն անվերապահորեն չի առնչվում դրանց իրավաբանական ուժի ճշգրիտ բնորոշման խնդրին և սպառնիչ չի բացահայտում արդեն ազգային օրենսդրության առարկայով պայմանավորված ընթացակարգային մանրամասները:

Սահմանադրական բարեփոխումների առնչությամբ հայեցակարգի և փոփոխությունների նախագծի մշակման փուլում հաճախ էր շոշափվում այն հարցը, թե նախագծում անհրաժեշտ է անդրա-

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2007/19(543), 11.04.07, հոդ. 452:

դառնալ նաև միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների իրավական ակտերին, մասնավորապես, դրանք ևս համարել հայրենական իրավական համակարգի բաղադրիչ, սակայն մնում ենք այն կարծիքին, որ դրա անհրաժեշտությունը չկա, որ որևէ այդպիսի իրավական ակտ չի կարող ճանաչվել որպես հայրենական իրավական համակարգի անմիջական կիրառման ենթակա բաղադրիչ, այլ այն սոսկ կարող է հիմք լինել համապատասխան ներազգային իրավական ակտեր ընդունելու համար: Ընդ որում, մի դեպքում կարող է ընդունվել նորմատիվ, մեկ այլ դեպքում՝ անհատական իրավական ակտ:

Նկատենք, որ «իրավաբանական ուժ» եզրույթը հիշյալ դեպքում խիստ պայմանականորեն, սահմանափակ իմաստով է կիրառվում, մասնավորապես, նշված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում անդրադարձ կա բացառապես հետևյալ հարցադրմանը՝ տվյալ մարմնի կողմից ընդունված իրավական ակտը պարտադիր է կիրառման մասնակիցների համար, թե՞ այն սոսկ պարտադիր է կիրառման ենթակա իրավական ակտեր ընդունելու համար:

Անդրադառնալով վերը նշված իրավակարգավորման իրավաչափությանը՝ նշենք միայն, որ այն սկզբունքորեն խոցելի չէ, սակայն թերի է այն իմաստով, որ դարձյալ չի հստակեցնում դրանց փոխհարաբերությունը ազգային իրավական համակարգի հետ, բացահայտում այդ որոշումների կիրառման կարգին ու ժամկետներին առնչվող մանրամասները:

Ընդ որում, իրավական ուժի և կիրառման միջև անմիջական կապ «տեսնելը» թերևս բնորոշ է խորհրդային իրավամտածողությանը, որն ինտեգրացվել է գործում է նաև ներկայումս: Խնդիրն այն է, որ մեկուսացված խորհրդային իրավական համակարգում անթույլատրելի էր համարվում որևէ միջազգային իրավունքի աղբյուրի կամ այլ պետության իրավունքի նորմի անմիջական գործողությունը, և, որպեսզի այդ դիրքորոշումը հիմնավորված տեսք ունենար, կիրառման

նախապայման էր համարվում միայն այն, որ իրավական ակտն ընդունվել և իրավական ուժ ստանալը խորհրդային պետության իրավասու մարմինների կողմից:

Կարծում ենք՝ հարկ է ձեռքագատվել հիշյալ ավանդական մոտեցումներից և իրավակիրառ պրակտիկայում հետայսու առաջնորդվել հետևյալ իրավական դիրքորոշմամբ. միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային մարմինների իրավական ակտերը իրավական ուժ են ստանում միջազգային պայմանագրերով նախատեսված կանոններով, սակայն դրանք կիրառվում են ինչպես միջազգային պայմանագրերով, այնպես էլ ազգային օրենսդրությամբ նախատեսված կանոններով: Ասվածից բխում է, որ այդ իրավական ակտերը իրավական ուժ ձեռք բերելով, ինքնըստինքյան չեն կարող անհապաղ կիրառվալ՝ առանց ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի:

Հարկավոր է խնդիրը քննարկել նաև դրանց կիրառման երաշխավորվածության տեսանկյունից: Վերջին հաշվով, անվերապահորեն ուժի մեջ մտնելը որպես անհապաղ կիրառման սպառիչ հիմք ընկալելու պարագայում անտեսվում են նշված նորմերի կիրառման առնչությամբ բազմաթիվ հարցեր, օրինակ՝ կոնկրետ ո՞ր մարմինը կամ մարմինները պետք է պատասխանատու լինեն այդ որոշման կատարման համար, ի՞նչ ֆինանսատնտեսական միջոցներ, մարդկային ներուժ է անհրաժեշտ դրա կատարման համար և այլն: Բնական է, որ միջազգային կազմակերպությունը չի կարող և երբեմն չի էլ անդրադառնում հիշյալ հարցերին, սակայն դրանք կարևոր են այնքանով, որքանով երաշխավորում են հիշյալ իրավական ակտերի բնականոն կատարման գործընթացը: Որպես կանոն, նշված իրավական ակտերում կատարող է համարվում այս կամ այն գործառույթի իրականացման համար ազգային օրենսդրությամբ լիազորված մարմինը, այինսնքն՝ հղում է արվում ազգային օրենսդրության վրա:

3. *Միջազգային կազմակերպությունների ո՞ր մարմինների իրավական ակտերի իրավաբանական ուժի և հայրենական իրավական*

նորմերի աստիճանակարգության համակարգում դրանց ունեցած դերի սահմանադրական հիմքերը: Այս հարցադրմանը համարժեք անդրադառնալու համար հարկ է հստակ տարանջատել «իրավա- նորմի վավերականություն» կամ «իրավաբանական ուժ», «պարտա- դիր ուժ» և «կիրառելիություն» եզրույթները¹, որոնց մի մասի առան- ձին ասպեկտներ արդեն ներկայացված են վերևում: Մեր դատողույթ- յունները լրացնենք հետևյալ ասպեկտով. առանձին դեպքերում իրա- վական ակտը զուտ գործադրման նկատառումով՝ իրավական ուժ է ձեռք բերում ոչ ավանդական եղանակով, այսինքն այն չի ընդունվում կամ վավերացվում տվյալ պետության տարածքում իրավասու մարմնի կողմից, սակայն դրան վերապահվում է կիրառման պար- տադիր ուժ: Մասնավորապես, միջազգային մասնավոր իրավունքին բնորոշ է տվյալ պետության իրավական համակարգին չպատկանող իրավական ակտերի կիրառման պրակտիկան:

Այլ պետությունների իրավական ակտերի կիրառման հիմքերը նախատեսված են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, պարզա- պես այս դեպքում սահմանված է, որ դրանց կիրառումը պետք է լինի «օրենքին կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմա- նագրին համապատասխան» (10-րդ հոդվածի 4-րդ մաս): Այլ կերպ ա- սած՝ իրավական ակտի գործադրման համար պետության իրավա-

¹ Տե՛ս, օրինակ՝ Kelsen, H. Pure theory of law. 1st ed. Berkeley: University of California Press. 1967. 11-15 էջեր, Ross. A. Validity and the Conflict between Legal Positivism and Natural Law. *Revista Juridica de Buenos Aires* Vol. 46. 1961. 46-88 էջեր, (reprinted in Paulson, S. and Paulson, B. Normativity and norms. 1st ed. Oxford: Clarendon Press. 1998. 147-165 էջեր), Guastini, R. Normativism or the Normative Theory of Legal Science: Some Epistemological Problems // in Paulson, S. and Paulson, B. Normativity and norms. 1st ed. Oxford: Clarendon Press. 1998. 318-319 էջեր, Moreso, José Juan, Navarro, E. Pablo. The reception of norms, and open legal systems// in Paulson, S. and Paulson, B. Normativity and norms. 1st ed. Oxford: Clarendon Press. 1998. էջ 280, Navarro, P., Moreso, J. and Moreso, J. Applicability and Effectiveness of Legal Norms. *Law and Philosophy*, 1997. էջ 203, The identity of legal systems// in Raz J. The authority of law. 1st ed. Oxford: Clarendon Press. 1979. 87-88 էջեր.

կան համակարգին պատկանելը, դրա բաղկացուցիչ մաս լինելը և իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված լինելը պարտադիր պայման չէ: Ասվածը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ տվյալ պետության տարածքում դասական եղանակով իրավական ուժ ձեռք չբերած իրավական ակտը ևս կարող է գործադրվել և առաջացնել իրավական հետևանքներ: Տվյալ պետության տարածքում իրավաբանական ուժ չունեցող նորմերի կիրառման օրինակների կարելի է հանդիպել նաև այլ երկրներում: Այսպես, Ֆրանսիայի 1958թ. Սահմանադրությունը նախատեսում է 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի կիրառելիությունը, սակայն այդ իրավական ակտի նորմերը չեն պատկանում 1958թ. Սահմանադրության ընդունմամբ ստեղծված իրավական համակարգին:

Նկատենք, որ տվյալ պետության իրավական համակարգի մաս չկազմող իրավական ակտի իրավական ուժի առնչությամբ գործում է ինչպես «հայեցողության» (երբ կողմերն իրենք են որոշում տվյալ իրավական ակտի՝ օրենքի կամ միջազգային պայմանագրով թույլատրված շրջանակներում ու կարգով կիրառելու հնարավորությունը), այնպես էլ «պարտադիր իրավական ուժի» սկզբունքը (երբ նշված իրավական ակտի կիրառումը համարվում է պարտադիր)¹:

Ինչևէ, միջազգային մարմինների որոշումների կիրառման առնչությամբ ևս չենք կարող ակնկալել հատուկ իրավական, մասնավորապես, սահմանադրաիրավական հիմքեր. դրանք կիրառման մեջ դնելու հնարավորությունը և ընթացակարգերը պետք է սահմանված լինեն իրավական համակարգի բացկացուցիչ հանդիսացող իրավական ակտերով, ինչը բխում է Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջներից:

Այսպիսով, չի բացառվում, որ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային մարմինների որոշումները դասական

¹ Տե՛ս, օրինակ, *Ross. A. Validity and the Conflict between Legal Positivism and Natural Law. Revista Juridica de Buenos Aires* Vol. 46. 1961. 46-88 էջեր:

իմաստով չհանդիսանան հայրենական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, օժտված չլինեն իրավական ուժով, սակայն դրանց կիրառումը համարվի պարտադիր՝ օրենքի կամ միջազգային պայմանագրով նախատեսված կարգով ու ժամկետներում: Սակայն այս մոտեցումը համարել ընդհանուր կանոն և միաժամանակ կիրառելի բոլոր դեպքերի համար, իրավաչափ չէ: Ավելին, հիշյալ կանոնը բացառություն է և կարող է վերաբերել միայն այնպիսի հանրաճանաչ իրավական ակտերի, որոնք բովանդակում են միջազգային իրավունքի սկզբունքներ կամ այլ հանրաճանաչ նորմեր:

4. *Միջազգային կազմակերպությունների մարմինների որոշումների և ներպետական օրենսդրական ակտերի փոխհարաբերության հիմնահարցերը:* Այս հարցադրումը որոշակի ասպեկտներով արտացոլված է Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման մեջ, որի հիմնադրույթները ամփոփ տեսքով հանգում են հետևյալին՝ ա) պետական, ժողովրդական և ազգային ինքնիշխանության երաշխավորումը, բ) միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը, գ) մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին և դ) Հայաստանի համար վերապետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում¹:

Մեր կարծիքով, վերը նշված իրավական դիրքորոշումն անվերապահորեն իրավաչափ կհամարվեր, եթե քննարկման առարկա միջազգային պայմանագրում առնվազն պահպանված լինեին այն պայմանագրային դրույթները, որոնք ամրագրված էին 2000թ. հոկտեմբերի 10-ին կնքված «Եվրասիական տնտեսական համագործակցությո-

¹ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2014/index.htm> էլեկտրոնային կայքում:

յան հիմնադրման մասին» պայմանագրում¹: Այդ պայմանագրի 14-րդ հոդվածում գոնե մասնակի կանխորոշված էին միջազգային վերաբերական մարմինների և ազգային իրավասու մարմինների իրավական ակտերի փոխհարաբերության հարցադրումները. «Եվրասիական տնտեսական համագործակցության մարմինների որոշումները Պայմանավորվող Կողմերը կատարում են ազգային օրենսդրությանը համաձայն անհրաժեշտ ազգային նորմատիվ իրավական ակտեր ընդունելու միջոցով»: Այս դրույթից բխում էր, որ միայն միջազգային պայմանագրով չէր կարող ամբողջությամբ կարգավորվել տվյալ միջազգային կազմակերպության մարմնի որոշումների կատարման գործընթացը, որ հարկ եղած դեպքում դրա համար անհրաժեշտ էր ընդունել համապատասխան ազգային նորմատիվ իրավական ակտ:

Նկատենք, որ այս մոտեցումը միայն մասամբ էր համապատասխանում միջազգային փորձին, որի առանձին տարրեր ամրագրված են «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածում: Այսպես, նշված հոդվածի 3-րդ մասն ամրագրում է.

«Եթե միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով սահմանված է, որ դրա մարմնի ընդունած որոշումները պարտադիր են կազմակերպության մասնակից պետությունների համար, կամ վերջիններս պարտավորություն են ստանձնել կատարելու այդ որոշումները, ապա պատասխանատու գերատեսչությունը ապահովում է դրանց կատարումը, անհրաժեշտության դեպքում՝

1) ընդունելով համապատասխան նորմատիվ գերատեսչական կամ այլ իրավական ակտ.

2) մշակելով Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի (կարգադրության), կառավարության կամ վարչապետի որոշման նախագիծ և սահմանված կարգով ներկայացնելով կառավարության քննարկմանը:

Եթե միջազգային կազմակերպության մարմնի՝ նորմատիվ ի-

¹ Տե՛ս http://www.base.spininform.ru/show_doc.fwx?rgn=3864 էլեկտրոնային կայքում:

քավական ակտի ընդունում պարունակող որոշման հիման վրա կատարված ուսումնասիրությունից հետևում է, որ համապատասխան հարցերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորված են, ապա պատասխանատու գերատեսչությունը պատճառաբանված տեղեկանք է ներկայացնում կառավարություն՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման անհրաժեշտության բացակայության մասին»:

Նշված հոդվածով անդրադարձ է արված նաև այն հարցադրմանը, թե ինչպես պետք է վարվել, եթե «միջազգային կազմակերպության որոշումը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հետ համադրումից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է ընդունի նոր օրենք կամ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարի գործող օրենքում» մասնավորապես նախատեսված է.

«... իրավասու գերատեսչությունը պարտավոր է սահմանված կարգով ձեռնամուխ լինել համապատասխան օրենքի նախագծի մշակմանը և կառավարության քննարկմանը ներկայացնելու ընթացակարգերի իրականացմանը: Համապատասխան ընթացակարգերը պետք է իրականացվեն միջազգային կազմակերպության մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով վարչապետի կամ կառավարության որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված ժամկետում:

Մինչև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքում անհրաժեշտ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելը չեն կիրառվում միջազգային կազմակերպության մարմնի որոշման այն դրույթները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքին» (նշված հոդվածի 4-րդ մաս):

Ամբողջ խնդիրն այն է, որ մեր կողմից քննարկման առարկա 2014թ. մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին»

պայմանագրում¹ ոչ միայն չպահպանվեց արդեն իսկ նախկինում շրջանառության մեջ դրված և որոշակիորեն արդարացված կանոնը, այլև ընդհանրապես անտեսվեց խնդրին առնչվող հարաբերություններն սպառիչ ու հստակ կարգավորելու անհրաժեշտությունը:

5. *Միջազգային կազմակերպությունների մարմինների որոշումների կատարման գործընթացում առկա խութերը հաղթահարելու համար անհրաժեշտ կառուցակարգային և իրավական բարեփոխումների հիմնական ուղղությունները*: Այս խնդրին մենք հաստատաբար անդրադարձանք վերը նշված յուրաքանչյուր հարցադրման շրջանակներում կոնկրետ վերլուծություններ կատարելիս: Սակայն հետազոտության արդյունքները հնարավորինս ամփոփ ներկայացնելու նկատառումով ստորև շարադրենք մեր եզրահանգումները՝

Նպատակահարմար է ԵԱՏՄ-ի շրջանակներում միջազգային պայմանագրի հավելվածի տեսքով կարգավորել նշված մարմնի որոշումների կատարմանն առնչվող հարաբերությունները այնքանով, որքանով դրանք հակասության մեջ չեն լինի Սահմանադրության հետ գործնականում հնարավորություն կտան առանձնացնելու կարգավորման տեսանկյունից առավել համընդհանուր ասպեկտները: Այնուհետև, նշված միջազգային իրավական փաստաթղթի հիման վրա հարկ կլինի ընդունել համապատասխան իրավական ակտեր, որոնցում սպառիչ անդրադարձ կարվի այնպիսի հարցադրումների, ինչպիսիք են՝ ԵԱՏՄ-ի որոշումների թարգմանությունը, կիրառման մեջ դնելու կոնկրետ պայմաններն ու հիմքերը, կիրառման համար պատասխանատու հանրային իշխանության մարմինը և այլն:

Բոլոր դեպքերում, միջազգային կազմակերպությունների մարմինների իրավական ակտերի կիրառման գործընթացը կարող է համալիր ու երաշխավորված համարվել, եթե հստակ սահմանվի, որ յուրաքանչյուր դեպքում ընդունվում է համապատասխան ներազգային իրավական ակտ:

¹ Տե՛ս <http://economy.gov.ru/minec/about/struc./depSNG/agreem.-eurasian-economic-union> էլեկտրոնային կայքում:

ПРАВОВАЯ ЦЕННОСТЬ РЕШЕНИЙ ОРГАНОВ ЕАЭС ВО ВНУТРИГОСУДАРСТВЕННОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ

Геворг Даниелян

*Заведующий кафедрой конституционного права ЕГУ,
доктор юридических наук, профессор*

В научной статье исследованы вопросы правовой ценности правовых актов соответствующих органов, действующих на основе международных договоров, в частности, органов ЕАЭС; вступление в силу этих правовых актов и их применение. В статье подчеркивается, что в отношении данного вопроса еще не сформированы комплексные и единообразные подходы, а в законодательной и правоприменительной практике пока дают о себе знать ограниченные представления, характерные советской правовой системе и культуре.

По поводу вышеназванной проблемы автором выдвинуты такие решения комплексного характера, в результате которых возникнет необходимость пересмотра не только национального законодательства и некоторых положений международных договоров, относящихся к указанным проблемам, но и выдвижения новых заключений о приобретении юридической силы и применении названных правовых актов. Так, автор полагает, что правовой акт полностью вступает в юридическую силу с момента опубликования в установленном порядке. Это вовсе не означает, что все нормы последнего в тот же момент подлежат непосредственному применению.

В отношении правовых актов органов ЕАЭС в статье выражена позиция, согласно которой, с точки зрения гарантированности суверенитета государства и соблюдения требований, предъявляемых к правовой системе, обеспечение закономерного процесса применения указанных правовых актов возможно лишь в тех исключительных случаях, когда уполномоченный национальный орган принимает соответствующий нормативный или индивидуальный правовой акт. При этом необходимость принятия индивидуального правового акта возникает во всех случаях, когда из правового акта международных органов вытекает, что необходимо четко установить тот государственный орган, который должен нести ответственность за выполнение, определять необходимые материальные и человеческие ресурсы, способы выполнения и т.д.

LEGAL VALUE OF THE DECISIONS OF THE AUTHORITIES

OF EURASIAN ECONOMIC UNION IN THE DOMESTIC LEGAL SYSTEM

Gevorg Danielyan

*Head of the YSU Chair of Constitutional Law,
Doctor of Legal Sciences, Professor*

In the article the questions of the authorities existing on the basis of international treaties, and generally those, relating the enforcement and acquisition of legal force and legal value of the decisions of Eurasian Economic Union, have become a subject of the research.

It is underlined in the article, that complex and joint approaches have not been formulated yet round these problems, and there are still limited notions typical to the Soviet legal system and culture in the law-developing and law-enforcing practice, in the result of these it isn't yet possible to initiate breakthrough reviews in the developments proceeding under one's momentum.

In the connection of the above-mentioned issue, the author puts forward such complex and complete solutions, in the result of which it will be necessary to review not only some provisions of the treaties relating national legislation and issues, but also quite new deductions in regard to the entering into force and enforcing of the legal act.

Particularly, the author comes to a conclusion that the legal act completely enters into force upon publicizing it according to the established order, which never means, that all the norms of the latter are subject to direct enforcement.

Reverting to the legal acts of Eurasian Economic Union, in the article a view-point is seen, according to which from the point of safeguarding essential requirements, submitted to the legal system and state sovereignty, it is possible to provide the natural process of the enforcement of the mentioned acts only if in each concrete case relevant regulatory or individual legal act is adopted by the national competent authorities.

Moreover, the necessity of adopting individual legal act arises in all those cases when it follows from the nature of the given decision, that it is necessary to define clearly the body of public authority, which is responsible for the implementation of the given decision, necessary material and human potential, ways of implementation, etc.

Բառայի բառեր – Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումներ, միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմիններ, միջազգային պայմանագիր, իրավական ակտի ուժի մեջ մտնելը, իրավական ակտի կիրառում և անմիջական կիրառում, իրավական համակարգ:

Ключевые слова: Решения Евразийского Экономического Союза, органы, действующие на основе международных договоров, международный договор, вступление в силу правового акта, применение и непосредственное применение правового акта, правовая система.

Key words: Decisions of the Authorities of Eurasian Economic Union, authorities acting on the basis of international treaties, international treaty, entering into force of the legal acts, enforcement of legal acts, direct enforcement, legal system.

**ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Անահիտ Մանասյան

***ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդական,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
խրախրականական գիտությունների թեկնածու***

Կայունությունը Սահմանադրության կարևորագույն հատկանիշներից է, որը հանդես է գալիս որպես սահմանադրականության ամրապնդման ու զարգացման կարևորագույն գրավական: Դա պատահական չէ, քանզի վերջին հարյուրամյակների ընթացքում **համակարգային կայունության** երաշխավորի դերը գերազանցապես վերապահվել է պետության Հիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությամբ: Պատճառն այն է, որ հենց վերջինս է հանդիսանում «**կենսագոյի հիմնական կանոնների** շուրջ հասարակական համաձայնություն»¹ և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին ու կազմում են **վերջինիս շրջանակներում առաջացող հարաբերությունների «միջուկը», էությունը**, որպիսի հանգամանքը ենթադրում է հիշյալ կարգավորումների կայունության անհրաժեշտություն:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի «Սահմանադրության կայունություն» հասկացության առնչությամբ, և կարելի է հանդիպել վերջինիս բազմապիսի բնորոշումների: Հեղինակների մի մասի կարծիքով, Սահմանադրության կայունությունը սահմանադրական կարգավորումների անփոփոխելիությունն է², Սահմանադրության բովանդակության կայունությունը, ինչպես նաև ընթացիկ օրենքների

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

² Տե՛ս Михалева Н. А. Конституционное право зарубежных стран. СНГ. М. 1999, http://pravo.xpcc.ru/book_z1019_page_23.html:

համեմատությամբ սահմանադրական նորմերի փոփոխման առավել բարդացված կարգը¹։ Մեկ այլ տեսակետի համաձայն՝ վերջինս Սահմանադրության հիմնական դրույթների անփոփոխելիությունն է հասարակության անփոփոխ սոցիալ-քաղաքական միջավայրի պայմաններում²։ Իրավաբանական գրականության մեջ Հիմնական օրենքի հիշյալ հատկանիշը բնորոշվում է նաև որպես Սահմանադրության սկզբնական տեքստի՝ իրավական առումով երկարակեցություն³, ժամանակի ընթացքում սահմանադրական կարգավորումների կենսունակություն⁴։ Որոշ հեղինակներ էլ կարծում են, որ կայունությունը Սահմանադրության երկարատև գործողությունն է՝ առանց վերջինիս շրջանակներում էական փոփոխություններ կատարելու⁵։ Հետաքրքիր է Հիմնական օրենքի կայունության առնչությամբ ներկայացված և այն տեսակետը, համաձայն որի՝ վերջինս երկրի հիմնական համակարգերի կայունությունն է, ինչը հանդիսանում է քաղաքական տևական կայունության նախապայմանը⁶։ Հետևաբար, քննարկվող հատկանիշն իր արտահայտությունն է գտնում սահմանադրական կարգավորումների անփոփոխելիության, կայունության բարձր մակարդակի պահպանման և իշխանության եկող փոփոխվող

¹ Stetsko H. N. Стабильность конституционных норм и обеспечение их соответствия складывающимся общественно-политическим отношениям // Вестник Челябинского государственного университета, 2009, № 15 (153), էջ 16, www.lib.csu.ru/vch/153/003.pdf։

² Stetsko B. Конституционное право России. М., 2004, <http://pravoznavec.com.ua/books/97/5891/24/>։

³ Stetsko G. L. The Durability of Constitutions in Changing Environments: A Study on Constitutional Stability in Latin America, <http://verfassungswandel.files.wordpress.com/2008/10/14-negretto-paper.pdf>։

⁴ Stetsko L. Van den Hauwe Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics. Brussels, Belgium, Copyright 1999 Ludwig Van den Hauwe, չջ 632, encyclo.findlaw.com/0610book.pdf։

⁵ Stetsko S. A. Конституционное право России. Том 1. М., 2010, չջ 189։

⁶ Stetsko Advance with the Times // 10th National People's Congress and Chinese People's Political Consultative Conference, <http://www.china.org.cn/english/10th/88511.htm>։

քաղաքական ուժերի ազդեցությանը ենթակա չլինելու մեջ¹: Իսկ ՌԴ Պետական դումայի նախկին նախագահ Բորիս Գրիգորովի խոսքերով՝ «Սահմանադրության կայունությունը սոցիալական կյանքի կայունությունն է, ո՞ր ներդրումային գրավչությունն է, իրավական համակարգի թափանցիկությունը»²:

Վերը շարադրված բնորոշումների բազմազանությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի Սահմանադրության քննարկվող հասկանիչի բովանդակության առնչությամբ, որպիսի հանգամանքի վերլուծությանը հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ հոդվածի շրջանակներում:

Առաջին հերթին նշենք, որ սոցիոլոգիայում հասարակության կայունության առնչությամբ ընկալումների զարգացումը պայմանականորեն բաժանվում է երեք փուլերի: Առաջին փուլին բնորոշ է կայունության և փոփոխելիության փոխբացառումը: Այս փուլում համակարգի հիշյալ երկու չափանիշների հարաբերակցությունը դիտարկվում է որպես խիստ սիմետրիկ, իսկ առավելությունը տրվում է **ստատիկ կայունությանը**: Երկրորդ փուլում սկսում է քննարկվել **դինամիկ կայունության** գաղափարը: Չնայած «կայունություն» և «հավասարակշռություն» հասկացությունների առնչությամբ առկա խառնաշփոթին՝ առաջինն արդեն չի բացառում փոփոխությունների հնարավորությունը, և առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում դինամիկ, այլ ոչ ստատիկ կայունության գաղափարը: Երրորդ փուլում արդեն կայունությունը սկսում է ընկալվել որպես համակարգի պահպանման և նրա փոփոխելիության միասնություն: Կայունությունը և շարժունակությունը այլևս չեն դիտարկվում որպես անհաշտելի հակադրություններ, անհամատեղելի երևույթներ³:

¹ St 'u Правоведение: Учебник / под ред. Мальцева Г. М., 2003, http://lawtoday.ru/razdel/biblio/pravoved/DOC_064.php:

² St 'u Грызлов Б. Конституция останется неизменной, <http://gryzlov.ru/index.php?page=smi&id=223>:

³ St 'u Гуд А. Глобальная этносоциология: Учебное пособие. Омск, 1997, <http://www.univer.omsk.su/MEP/ch7st.win.htm>:

Ժամանակակից գիտության մեջ կայունությունը դիտարկվում է որպես համակարգի պարամետրերի պահպանում և հարկադրված շեղումների դեպքում վերադարձ դեպի այդ պարամետրերը, ինչպես նաև միաժամանակյա փոփոխության, «կանոնակարգված ու կազմակերպված փոփոխության» գործընթաց¹: Այն արտահայտում է համակարգի հնարավորությունը՝ երկարատև ժամանակահատվածում պահպանելու **դինամիկ հավասարակշռություն**² և ժամանակի մեջ մնալու անփոփոխ **սահմանված կամ ողջամտորեն ակնկալվող պայմաններում**³:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ Սահմանադրության տեսանկյունից նույնպես «կայունությունն» ու «փոփոխելիությունը» կամ «գարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն: Կայունության էության հիմքում ընկած է ոչ թե համակարգը այլ համակարգերից մեկուսացնելու ու տեղի ունեցող փոփոխություններից պաշտպանելու, այլ այդ փոփոխությունները կանոնակարգված ձևով հաշվի առնելու համար հնարավորություններ ստեղծելու կարողությունը⁴: Իսկ դա նշանակում է, որ եթե նույնիսկ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Политология: энциклопедический словарь / общ. ред. и сост. Аверьянов Ю.И. М., 1993, էջ 281:

³ Տե՛ս <http://www.businessdictionary.com/definition/stability.html>:

⁴ Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ մարդկային հասարակությանը հատուկ է ինքնապահպանման ձգտումը, որն իրացվում է ոչ թե գոյություն ունեցող հարաբերություններն անփոփոխ վիճակում պահպանելու, այլ դրանց զարգացման, հասարակական հարաբերությունների և ինստիտուտների փոփոխման միջոցով (տե՛ս Пряхина Т. Конституционная доктрина РФ. М., 2006, էջ 302): Հետևաբար, Սահմանադրությունը նույնպես չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին՝ դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Սահմանադրությունը չի կարող սահմանադրական փակուղիների հանգեցնել, այն քաղաքացիական հասարակության զարգացման ամենագործուն խթանը պետք է լինի: Ձևախեղված քաղաքացիական հասարակության առկայությունը պայմանավորվում է նաև նրանով, որ սահմանադրական ոչ լիարժեք լուծումները դրա համար պարարտ հող են ստեղծում (տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էջ 67, 96):

կայունությունը ենթադրում է անփոփոխելիություն, ապա միայն չփոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Մինչդեռ նույնը չի կարելի ասել հակառակ իրավիճակի մասին, որպիսի պայմաններում համակարգը, տվյալ պարագայում Սահմանադրությունը պետք է ունենա տեղի ունեցող փոփոխությունների արձագանքելու ու դրանք հաշվի առնելու ունակություն, ինչն իր հերթին պահանջում է, որ քննարկվող հատկանիշը ենթադրի նաև փոփոխությունների հնարավորություն¹: Հակառակ պարագայում Հիմնական օրենքը կվերածվի «մեռած իրավական ակտի», փաստացի հարաբերություններից անկախ գործող սոսկ փաստաթղթային մի լուծումի, որն իրականում ի վիճակի չէ իրականացնելու իր գործառույթները և կարգավորելու հասարակական հարաբերությունները, ինչը, բնականաբար, կհանգեցնի համակարգի լճացման: Հետևաբար, Սահմանադրության կայունության առնչությամբ առաջին կարևոր եզրահանգումն այն է, որ վերջինս չպետք է դիտարկվի որպես Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների անփոփոխելիություն²:

¹ Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ հաջողության են հասնում այն սահմանադրական համակարգերը, որոնցում համադրված են ընթացակարգային կայունությունն ու նյութական ձկուկությունը, այսինքն՝ այն համակարգերը, որոնցում քաղաքական գործընթացների ընդհանուր կանոնները փոխանցվում են սերնդեսերունդ՝ միևնույն ժամանակ հարմարեցվելով ներքին ու արտաքին տնտեսական, սոցիալական, մշակութային և իշխանական հարաբերությունների փոփոխվող պայմաններին (տե՛ս Encyclopaedia Britannica, Vol. 5, 1977; pp. 84-88, 93-98, Constitutional Law, http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207_Public_Law_1/Readings/la207_encybrit_constitutional_law.html):

² Վերջին տարիներին իրավաբանական գրականության մեջ նույնպես գերակշռող է դառնում այն տեսակետը, որ կայունությունը չի նշանակում օրենսդրության (ևսև Սահմանադրության) անփոփոխելիություն, ինչն այն կարող է դարձնել կարծրացած, իրականությանը չհամապատասխանող (տե՛ս Кашанина Т. Юридическая техника. М., 2011, էջ 156, Negretto G. L., նշված աշխատությունը): Ավելին, սահմանադրություններն ընկալվում ու գրվում են եթե ոչ ընդմիշտ, ապա առնվազն ապագայի անորոշ ժամանակահատվածի ընթացքում գոյատևելու նպատակով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C. Oxford and Portland, Oregon, 2011, էջ 172):

Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել այն, որ քննարկվող հանգամանքը չի ենթադրում համակարգի «միջուկը», էությունը հիմնավորապես փոփոխելու հնարավորություն: Պատճառն այն է, որ ցանկացած ամբողջական համակարգ ունի մի ինտեգրատիվ որակ, որի հիմքի վրա էլ ձևավորվում է հիշյալ ամբողջ համակարգը և այն ելակետային վիճակը, որից կատարվում են անցումները նոր վիճակների: Հետևաբար, այդ որակական առանձնահատկության բացակայության պայմաններում օբյեկտը դադարում է քննարկվող կոնկրետ համակարգը լինելուց, որպիսի պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ խոսել նաև վերջինիս կայունության ու զարգացման մասին: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Սահմանադրության կայունություն» հասկացությունը ենթադրում է փոփոխությունների հնարավորություն, սակայն այնպիսի փոփոխությունների, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ կայուն է ոչ թե այն Սահմանադրությունը, որը չի ենթարկվում փոփոխությունների, այլ այն, որում կատարվող փոփոխությունները չեն խաբխլում Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներն ու արժեքները: Հետևաբար, Սահմանադրության հիշյալ հատկանիշի հիմքում ընկած է դինամիկ, այլ ոչ ստատիկ կայունության գաղափարը, և կայունության հատկանիշը ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է Հիմնական օրենքի զարգացում, որպիսի պայմաններում միայն Սահմանադրությունը կարող է հանդես գալ որպես «կենդանի փաստաթուղթ» և լինել հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ կայունությունը կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնությունն հանդիսացող Սահմանադրության այն հատկանիշն է, որը ենթադրում է վերջինիս կենսունակություն և անփոփոխելիություն չփոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում՝ հաշվի առնելով այն, որ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար

փոփոխությունների չի ենթարկվում Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Սահմանադրությունն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին՝ հանդիսանալով դրանց ելակետային կարգավորիչը:

Ակնհայտ է, որ հիշյալ նպատակն իրականացնելու ու կայունության հաստանիշը ձևավորելը պահանջում են սահմանադրական նորմերի ամրագրման ու իրացման համար անհրաժեշտ որոշակի կառուցակարգերի առկայություն, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Ամերիկացի հայտնի սոցիոլոգ Պարսոնսը, անդրադառնալով այն հիմնախնդրին, թե ինչպես է համակարգը պահպանում իր կառուցվածքի կայունությունը, հանգում է այն եզրակացության, որ դա իրականացվում է «այն մեխանիզմների շնորհիվ, որոնք ապահովում են համակարգի միտումը դեպի կարգավորվածություն»: Սոցիոլոգը դրանք անվանում է կառուցվածքի պահպանման հիմնական գործառույթներ, որոնք պետք է իրականացվեն կայուն մնացող յուրաքանչյուր սոցիալական համակարգում: Դրանք են 1. ադապտացիան (սոցիալական համակարգերը պետք է հարմարեցվեն շրջակա միջավայրին, այդ թվում՝ դրա ակտիվ փոփոխություններին), 2. նպատակաուղղվածությունը (սոցիալական համակարգերը պետք է ունակ լինեն առաջ քաշելու կոնկրետ նպատակներ), 3. ինտեգրացիան (սոցիալական համակարգերը պետք է ապահովեն իրենց տարրերի համախմբվածությունը (ինտեգրացիան), ինչը ենթադրում է համերաշխության որոշակի նվազագույն չափ), 4. լատենտ կառուցվածքի պահպանումը (սոցիալական համակարգերը պետք է ունենան ամբողջական ներքին պահուստներ և դիմակայեն նույնիսկ մասնակիցների միջև լարված հարաբերություններին, ինչն ապահովվում է սոցիալական ինստիտուտների միջոցով, որոնք պահպանում են հասարակական հարաբերությունների կայուն լատենտ կառուցվածքը)¹:

Կարծում ենք, որ ներկայացված կառուցակարգերի վերլուծությո-

¹ St'eu Абельс Х. Проблема социального порядка в социологии Талкотта Парсонса, 2002, Перевод Минакова А. / под ред. Головина Н. А., http://sbiblio.com/biblio/archive/abels_social_order_problem/:

յունն արդյունավետ է նաև Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող չափանիշների տեսանկյունից, հետևաբար այդ չափանիշներին հարկ ենք համարում անդրադառնալ դրանց համատեքստում:

Արդեն ներկայացրել ենք մեր այն տեսակետը, որ Սահմանադրության «կայունությունն» ու «զարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն, և Հիմնական օրենքի կայունությունը պետք է ենթադրի զարգացող հասարակական հարաբերություններին արձագանքելու ու դրանց պայմաններին հարմարվելու ունակություն: Հետևաբար, Սահմանադրության կայունության տեսանկյունից նույնպես կարևորվում է համակարգի պահպանման՝ վերը նշված առաջին գործառնության անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է համակարգի կայունությունն ապահովող այլ կառուցակարգերին, արդեն նշեցինք, որ հիշյալ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է, որ համակարգն ունենա ամրության ներքին պահուստներ և կարողանա դիմակայել իր տարրերի միջև առաջացող հակասություններին ու դրանց հետևանքներին: Սահմանադրության պարագայում նույնպես կարևոր է, որ վերջինս օժտված լինի հիշյալ առանձնահատկությամբ, ինչը, մեր կարծիքով, ենթադրում է, որ կայուն լինելու համար Սահմանադրությունը պետք է ինքնաբավ լինի: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ ինքնաբավ սահմանադրությունները կայունություն են պահպանում երկար ժամանակահատվածի ընթացքում՝ ստեղծելով, այսպես կոչված, «հարմարվողական արդյունավետություն», այսինքն՝ առաջացող ցնցումային իրավիճակներում սահմանադրական կարգի ընձեռած հնարավորություններին համապատասխան հարմարվելու և փոփոխված իրականության պայմաններում արդյունավետորեն գործելու համար կառուցակարգեր ձևավորելու ունակություն¹:

¹ St'u Mittal S. Constitutional Stability in a Changing World, էջ 1, http://politicalscience.stanford.edu/cooperationcolloqpapers/Mittal_cooperationmemo.pdf:

Քննարկվող հատկանիշի տեսանկյունից կարևոր է, որ Սահմանադրության իրացման ու պահպանության, ինչպես նաև հասարակական հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ կառուցակարգերը ընդգրկված լինեն հենց Սահմանադրության շրջանակներում՝ հնարավորություն ստեղծելով սահմանադրական նորմերի հիման վրա լուծելու առաջացող տարատեսակ հիմնախնդիրները: Հակառակ պարագայում՝ առաջացող յուրաքանչյուր հիմնախնդրի պայմաններում Սահմանադրությունը ենթակա կլինի անընդհատ փոփոխությունների կամ թղթի վրա կմնա անփոփոխ՝ վերածվելով ձևական փաստաթղթի ու հետ մնալով զարգացող հասարակական հարաբերություններից¹: Իսկ նմանատիպ իրավիճակներում կրացակայեն Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող վերը նշված կարևորագույն հանգամանքները, այն է՝ Սահմանադրությունը չի լինի կենսունակ կամ ի վիճակի չի լինի հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին ու հանդես գալու որպես դրանց էլակետային կարգավորիչ: Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել և այն, որ հիշատակված հատկանիշի էությունն այն է, որ Սահմանադրությամբ ամրագրված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման բոլոր մանրամասնությունները, այլ այն, որ Հիմնական օրենքն ընձեռի քննարկվող բնագավառում առաջացող տարատեսակ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ կարգավորումներ

¹ Այդ է պատճառը, որ հեղինակների մեծ մասի կարծիքով, ինքնաբավ Սահմանադրությունը կայունություն է ապահովում այն հանգամանքի շնորհիվ, որ ամրագրում է իր նորացման համար անհրաժեշտ կառուցակարգեր հասարակական զարգացման խոչընդոտ չդառնալու նպատակով (տե՛ս Пряхина Т., նշված աշխատությունը, էջ 320): Միևնույն ժամանակ, փոփոխություններն անխուսափելի են անգամ այն պայմաններում, երբ Սահմանադրությունը չի նախատեսում նմանատիպ կառուցակարգեր: Սակայն այդ իրավիճակում դրանք ընթանում են անկանխատեսելի և սահմանադրական համաձայնության հիմքում ընկած հիմնարար արժեքներին հակասող եղանակով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 432-433):

գտնելու հնարավորություն¹, այլ կերպ ասած՝ ունենա ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար համակարգ²:

Ինքնաբավությունը ենթադրում է նաև, որ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները կարգավորելուց բացի Սահմանադրությունը պետք է առաջ քաշի դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը: Հիշյալ նորմ-նպատակներն ապահովում են կոնկրետ սոցիալական հանրության շրջանակներում ձևավորվող հարաբերությունների զարգացումը, ինչի բացակայության պայմաններում կայուն չի կարող լինել հասարակությունը, հետևաբար՝ նաև **համակարգային կայունության** երաշխավորի դերը ստանձնած Սահմանադրությունը, քանզի այն չի կարողանա ապահովել **դինամիկ** հավասարակշռություն և հասարակական հարաբերությունները կարտացոլի քարացած վիճակում:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է և այն, որ կայուն լինելու համար սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն: Այն դեպքում, երբ Սահմանադրությունն ամրագրի նորմեր, որոնք, թեկուզ առանձին վերցրած, նախատեսեն արդյունավետ կարգավորում, սակայն, միասին վերցրած, որպես ամբողջություն չկարողանան պատշաճ մակարդակով կարգավորել հասարակական հարաբերությունները, Հիմնական օրենքն ի վիճակի չի լինի իրականացնելու իր գործառույթները, հետևաբար նաև՝ լինելու կայուն: Օրինակ՝ ՀՀ Սահմա-

¹ Օրինակ՝ սահմանադրությունները, որպես կանոն, ուղղակիորեն չեն սահմանում, թե ինչպես է անհրաժեշտ ընկալել սահմանադրական այս կամ այն նորմը: Սակայն նրանք նախատեսում են Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն իրականացնող մարմնի ձևավորման պահանջ կամ ամրագրում են դրույթներ, որոնք անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել հիշյալ նորմերի մեկնաբանության ընթացքում՝ հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում լուծելու առաջացող կոնկրետ հիմնախնդիրները:

² Այդ մասին տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էջ 96:

նադրության 2-րդ հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ակնհայտ է, որ հիշյալ նորմը հանդիսանում է ժողովրդավարական պետության ձևավորման ու կայացման հիմնաքարային արժեքը և այդ առումով ունի բացառիկ կարևորություն: Մակայն, եթե սահմանադրական մյուս նորմերը չերաշխավորեն, օրինակ, ազատ ընտրությունների, հանրաքվեների հնարավորություն, կիմաստազրկվի նաև այդ դրույթի առկայությունը՝ փոխելով համապատասխան հասարակական հարաբերությունների էությունն ու դրանց զարգացման միտումները: Միևնույն ժամանակ, անկախ սահմանադրական նորմերի **ամրագրմանն** առնչվող վերը շարադրված տեխնիկայի կարևորությունից, դրանց **իրացման** ընթացքում որպես ելակետ պետք է ընդունել այն տրամաբանությունը, որ սահմանադրական կարգավորումների միջև չկան և չեն կարող լինել հակասություններ: Այլ կերպ ասած՝ վերջիններս անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե միմյանցից մեկուսացված ու միմյանց հակասող եղանակով, այլ դրանց միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա՝ Սահմանադրությունը դիտարկելով որպես միասնական, ամբողջական փաստաթուղթ¹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ հիշատակված ա-

¹ Այդ առումով հետաքրքիր է Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Սահմանադրությունը չի կարող ունենալ և չունի բացեր (տե՛ս Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>): Հունգարիայի սահմանադրական դոկտրինի շրջանակներում նույնպես տարածված է այն տեսակետը, որ Սահմանադրության միասնականությունն, ամբողջականությունը եկթադրում են, որ Սահմանադրության շրջանակներում չկան իրավական բացեր, իսկ Սահմանադրության հոդվածների միջև չեն կարող լինել հակասություններ (տե՛ս The Basic Law of Hungary (A First Commentary) / edited by Csink L., Schanda B., Varga ZS. A. Dublin: Clarus Press, 2012, էջ 160):

ռանձնահատկությունների առկայությունը հանգեցնում է հասարակական հարաբերությունների կարգավորման կանխատեսելիության, ինչն իր հերթին հանդիսանում է վերջիններիս կարգավորմանը նպատակաուղղված նորմերի կենսունակության, հետևաբար՝ նաև կայունության գրավականը:

Միևնույն ժամանակ, չնայած Սահմանադրության կայունության տեսանկյունից հիշյալ ներսահմանադրական լուծումներն ունեն բացառիկ կարևորություն, սակայն միայն դրանք չեն, որ պայմանավորում են Հիմնական օրենքի քննարկվող հատկանիշի առկայությունը: Պատճառն այն է, որ սահմանադրական կարգավորումներն իմաստագուրկ կլինեն, ուստի Սահմանադրությունը կենսունակ ու կայուն չի լինի այն բոլոր դեպքերում, երբ ի վիճակի չլինի իրականացնելու իր գործառույթները, քանզի տվյալ պարագայում վերջինս հանդես չի գա **համակարգային կայունության** երաշխավորի դերում՝ վերածվելով սոսկ ձևական փաստաթղթի ու չհանդիսանալով զարգացող հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ: Ուստի, կայուն լինելու համար Սահմանադրությունը, այլ հանգամանքների թվում, պետք է ի վիճակի լինի իրականացնելու իր գործառույթները, ինչը պայմանավորված է ոչ միայն վերը նշված ներսահմանադրական անհրաժեշտ լուծումների առկայությամբ, այլ նաև մի շարք արտաքին գործոններով:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն հեղինակների տեսակետին, որոնք Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորում են քաղաքական համակարգի առանձնահատկություններով:

Քաղաքագիտության բնագավառում ավանդաբար ընդունված է այն տեսակետը, որ պաշտոնական ինստիտուտները ձևավորվում և զարգանում են որպես քաղաքական ու սոցիալական փոփոխությունների կողմնակի արդյունք: Այդ տեսանկյունից քաղաքական գործիչները պահպանում են Սահմանադրության հավասարակշռությունը միայն այնքան ժամանակ, քանի դեռ դրա հիմքում ընկած և հավասարակշռությունն ապահովող շահերի ու լիազորությունների պատ-

կերը կայուն է: Երբ փոխվում են հիշյալ գործիչների շահերն ու նրանց ունեցած ռեսուրսները, փոխվում է նաև գոյություն ունեցող սահմանադրական կարգը¹: Ավելին, լայն տարածում է ստացել այն տեսակետը, որ սահմանադրությունները ենթակա են քաղաքական գործիչներին ու իրադարձություններին և գոյատևում են այնքան ժամանակ, քանի դեռ քաղաքական առումով նպատակահարմար են, և ոչ ավելի²: Հետևաբար, քաղաքական ու սոցիալական կյանքում տեղի ունեցող կարևոր փոփոխությունները մեծացնում են նաև Սահմանադրության փոփոխության վտանգը³:

Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ ժամանակակից սահմանադրությունների կայունությունը մեծապես պայմանավորված է հենց քաղաքական կայունությամբ⁴, և որ զինված հեղաշրջումների, քաղաքացիական խռովությունների կամ հեղափոխությունների արդյունքում պետական իշխանության հավասարակշռության ընդհատումը ամենամեծ ազդեցությունն է ունենում Սահմանադրության կենսունակությունը կրճատելու վրա: Հիշյալ իրադարձությունների տարիներին է փոփոխվել օրինակ, 1946-2000թթ. ընթացքում Լատինական Ամերիկայի երկրներում գործողությունը դադարեցրած սահմանադրությունների 66%-ը⁵: Մեր կարծիքով նույնպես, ուսումնասիրվող հիմնախնդրի տեսանկյունից քաղաքականությունը հանդիսանում է կարևորագույն գործոն, քանզի

¹ Տե՛ս Negretto G. L., նշված աշխատությունը:

² Տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 115:

³ Պատահական չէ գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության նշանակությունն այն է, որ ... վերջինս հանդիսանում է քաղաքական պայքարի իրական մրցակակը (տե՛ս Calvert R. Coordination and Constitutional Change. Washington University in St. Louis, էջ 11, <http://calvert.wustl.edu/downloads/CoordConstChg.MPSA.pdf>):

⁴ Պատահական չէ, որ ԱՄՆ Սահմանադրության երկարակեցության պատճառներից մեկն այն է, որ ամերիկյան քաղաքական կյանքը զարգանում է վերջինիս շուրջ և հարմարվում է Սահմանադրության ծայրահեղ առանձնահատուկ կարգավորումներին (տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

⁵ Տե՛ս Negretto G. L., նշված աշխատությունը:

քաղաքական միջավայրն անհերքելի ազդեցություն է ունենում, իսկ ավելի կոնկրետ ասած՝ հենց այն է մեծապես պայմանավորում սահմանադրական լուծումների ընտրությունն ու դրանց փաստացի իրացումը¹: Սակայն քննարկվող համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հիշյալ ազդեցությունը միակողմանի չէ, քանզի Սահմանադրությունն իր հերթին սահմանում է այն կանոնները, որոնց շրջանակներում պետք է գործի պետական, հետևաբար նաև քաղաքական իշխանությունը: Այդ առումով հետաքրքիր են ֆրանսիացի հայտնի իրավագետ Պյեր Սանդեվուարի խոսքերն այն մասին, որ «Հենց քաղաքականությունն է ձևավորում իրավունքը, սակայն միևնույն ժամանակ, իրավունքն իր հերթին արձագանքում է քաղաքականությանը՝ նրանում ներդնելով կարգավորող տարր և քաղաքական գործիչներին ստիպելով գործել բաց, արդար և պատասխանատու եղանակով»²: Հետևաբար, Սահմանադրության կայունությունը պայմանավորված է ոչ թե սոսկ քաղաքական ուժերի հարաբերակցության այս կամ այն փոփոխություններով, այլ ընդհանրապես հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի հա-

¹ Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրությունն ունի խաղը՝ քաղաքական-իրավական բնույթ, և քաղաքականն ու իրավականը Սահմանադրությունում սերտորեն փոխկապված են (տե՛ս Кравец И. А. Российский конституционализм: проблемы становления, развития и осуществления. СПб., 2005, էջ 148, How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 242): Ավելին, առանձին հեղինակների կարծիքով, սահմանադրականությունը Սահմանադրության բովանդակության մեջ արտահայտություն գտած **քաղաքականությունը** փաստացի կյանքի կոչելն է (տե՛ս Витрук Н. Конституционное правосудие. М., 2005, էջ 144): Պատահական չէ, որ գրականության մեջ Սահմանադրության էության առանցքային տարրերը ձևակերպվում են հետևյալ հարցադրումների տեսքով՝ 1. ո՞ր քաղաքական ուժերի կամքն է ամրագրվել սահմանադրական նորմերում, 2. հասարակական ո՞ր շերտերի շահերն են արտահայտված սահմանադրական դրույթներում և պաշտպանվում նրանց կողմից ... (տե՛ս Кравец И. А., նշված աշխատությունը, էջ 154-155):

² Տե՛ս Сандеуар П. Введение в право / Пер. с франц. М., 1994, էջ 61-64:

մապատասխան մակարդակով¹: Վերջինս է կանխորոշում ինչպես սահմանադրական ներքին լուծումների բնույթը, այնպես էլ դրանց ամրագրման ու կենսունակության վրա ազդեցություն ունեցող արտաքին գործոններն ու վերջիններիս արձագանքելու մեթոդները: Պատահական չէ, որ գրականության մեջ հենց մշակույթի ու քաղաքականության ազդեցությամբ է պայմանավորվում այն հանգամանքը, որ երկրների մի մասում նույնիսկ կոշտ սահմանադրությունների պայմաններում տեղի են ունենում Հիմնական օրենքի բազմաթիվ տեքստային փոփոխություններ, ինչպես, օրինակ, Գերմանիայում, Չեխիայում, Հնդկաստանում, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում: Մինչդեռ այլ երկրների մշակույթն ու քաղաքականությունը Սահմանադրության տեքստային փոփոխությունները դարձնում են չափազանց բարդ կամ նույնիսկ անհնար, օրինակ, Իտալիայում և Իսպանիայում²: Հետևաբար, կարծում ենք, որ Սահմանադրության կայունության հատկանիշի առկայության համար հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթն ունի առանցքային նշանակություն: Մինևույն ժամանակ, հիշյալ համատեքստում անհրաժեշտ է առաջնորդվել այն տրամաբանությամբ, որ Սահմանադրությունը քաղաքականության համար պետք է ոչ թե գործիք, այլ սահման լինի, իսկ սահմանադրական զարգացումները պետք է արտահայտեն ոչ թե ընթացիկ քաղաքական նախապատվություններն ու շահերը, այլ վեր կանգնած լինեն դրանցից և հիմնարար իրավական շրջանակներ սահմանեն քաղաքական գործիչների ու իրադար-

¹ Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության իրացումն ու կայունությունը կախված են այն հանգամանքից, թե որքանով է այն ընդունվում ու պահպանվում պետական իշխանության և, որ ամենակարևորն է, հասարակության տարբեր խմբերի կողմից (տե՛ս Inquiry to Review New Zealand's Existing Constitutional Arrangements // Report of the Constitutional Arrangements Committee, Presented to the House of Representatives, Forty-seventh Parliament (Hon Peter Dunne, Chairperson), August 2005, http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH_SCR_3229_2302.pdf, էջ 7):

² Տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 396-397:

ձույթունների համար¹:

Վերը շարադրված հանգամանքների համատեքստում առաջանում է ևս մի կարևոր հիմնախնդրի, այն է՝ Սահմանադրության կայունության և ժամանակի միջև կապի վերլուծության անհրաժեշտություն: Հատկանշական է, որ կան հեղինակներ, որոնց կարծիքով, հենց վերջինս է հանդիսանում Սահմանադրության քննարկվող հատկանիշի առկայությունը պայմանավորող ելակետային չափանիշը: Նրանք գտնում են, որ Հիմնական օրենքի կայունությունը պայմանավորված է ժամանակի մեջ նրա գործողության երկարատևությամբ, այսինքն՝ այն հանգամանքով, թե որքան երկար է այն մնում ուժի մեջ: Հիշյալ հեղինակների կարծիքով, երբ քաղաքական գործիչները նախատեսում են որոշակի սահմանադրական կարգավորում, նրանց շահերից չի բխում դրանից հրաժարվելը՝ նորից համաձայնության գալու համար անհրաժեշտ հավաքական գործողությունների ու դրա համար պահանջվող ներքին ծախսերի պատճառով: Քննարկվող տեսությունը ենթադրում է Հիմնական օրենքի կենսունակության դրական կախվածություն ժամանակից, ինչը նշանակում է, որ երբ Սահմանադրության հեղինակները համաձայնության են գալիս որոշակի կարգավորման առնչությամբ, դրա փոփոխման հավանականությունը ժամանակի մեջ փոքրանում է²: Հետևաբար, հիշյալ տեսակետի կողմնակիցները, այլ հանգամանքների թվում, Սահմանադրության կայունությունը պայմանավորում են ժամանակային գործոնով կամ վերջինիս գործողության ժամանակահատվածով:

Անդրադառնալով ներկայացված մոտեցմանը՝ նշենք, որ, մեր կարծիքով, Սահմանադրության՝ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործողությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն այն հանգամանքով, որ վերջինս հանդիսանում է կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ հասարակական համաձայնություն և ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ

¹ Այդ մասին տե՛ս նաև CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը, Papuashvili G. Problems of the Constitutional Stability in Georgia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии), Ереван, 2009, էջ 48:

² St'e'u Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 6-7:

փուլին, այլև մի շարք քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործոններով: Օրինակ՝ Կոլումբիայի 1886թ. Սահմանադրությունը փոփոխվեց միայն 1991թ.¹ ուժի մեջ մնալով 105 տարի, սակայն դրա հիմնական պատճառը ոչ թե Սահմանադրության հեղինակությունն էր, այլ սահմանադիր ժողով հրավիրելու անհաջող փորձերը, որոնք միևնույն ժամանակ ուղեկցվում էին Սահմանադրության հիմնական գաղափարների առնչությամբ գոյություն ունեցող սուր քննադատությամբ: Իսպանիայի Սահմանադրությունը նույնպես իր գործողության 30 տարիների ընթացքում կրել է ընդամենը մեկ տեքստային փոփոխություն: Դրա պատճառը, սակայն, քաղաքական համաձայնության բացակայությունն է, և ոչ այն, որ Սահմանադրությունը չունի զարգացման անհրաժեշտություն¹: Հետևաբար, մեր կարծիքով, ժամանակային գործոնը ոչ թե վկայում է այն մասին, որ Սահմանադրությունը կայուն է, այլ այլ անհրաժեշտ հանգամանքների պայմաններում պարզապես հանդես է գալիս որպես հիշյալ հատկանիշի առկայության արտահայտություն: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությունը կայուն է ոչ թե այն պատճառով, որ այն չի փոփոխվում երկար ժամանակահատվածի ընթացքում, այլ վերջինս չի ենթարկվում հաճախակի փոփոխությունների, քանի որ ամրագրում է սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ իրավական հիմնարար արժեքներն ու սկզբունքները, այնպիսի կառուցակարգային լուծումներ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան վերակազմակերպելու, ինչպես նաև սահմանադրական նորմերն ու սկզբունքները զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխանեցնելու համար, ինչն էլ հանգեցնում է վերջինիս կենսունակության: Հետևաբար, կարծում ենք, որ ոչ թե գործողության երկարատև ժամանակահատվածն է վկայում Սահմանադրության կայունության մասին, այլ հիշյալ հատկանիշի ու դրան բնորոշ առանձնահատկությունների առկայությունն է նպաստում Սահմանադրության երկարակեցությանն ու կենսունակությանը:

¹ Քանզի այն զարգանում է տեքստային փոփոխություններից տարբերվող այլ եղանակներով, օրինակ՝ մեկնաբանության միջոցով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 282-283):

Քննարկվող համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, թե կա արդյոք որոշակի ժամանակահատված, որի ընթացքում Սահմանադրությունը պետք է մնա ուժի մեջ, որպեսզի համարվի կայուն: Գրականության մեջ այդ առնչությամբ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Ջեֆերսոնը, օրինակ, հակված էր օրենքների, այդ թվում՝ Սահմանադրության ուժը մեխանիկորեն կորցնելու գաղափարին՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ այսօրվա մեծամասնությունը կարող է սահմանափակել իրեն և այսօրվա փոքրամասնությանը, բայց այն չի կարող սահմանափակել ապագա մեծամասնությանը կամ փոքրամասնությանը: Նրա կարծիքով, սահմանադրությունների համար գործողության օպտիմալ ժամանակահատվածը տասնինը տարի է՝ հիմք ընդունելով այդ տարիներին Եվրոպայում կյանքի միջին տևողությունն ու մեծահասակների ակտիվ կյանքի միջին ժամկետը¹:

Հաշվի առնելով Սահմանադրության կայունության ու ժամանակի միջև կապի առնչությամբ ներկայացված մեր մոտեցումը՝ կարծում ենք, որ նպատակահարմար չէ մատնանշել կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում ուժի մեջ մնալու պարագայում Սահմանադրությունը կարող է համարվել կայուն: Բնականաբար, երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության գործողությունը, երբ այն միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման միտումներին, վկայում է Սահմանադրության կենսունակության, հետևաբար՝ նաև կայունության մասին: Սակայն այդ հանգամանքը տեսականորեն չի բացառում այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ, գործելով նույնիսկ չափազանց կարճ ժամանակահատվածի ընթացքում, Հիմնական օրենքին բնորոշ լինի քննարկվող հատկանիշը: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այն դեպքում, երբ վերը նշված առանձնահատկու-

¹ St'u Thomas Jefferson to James Madison, September 6, 1789; Letter to Samuel Kercheval, July 12, 1816, <http://etext.virginia.edu/etcbin/toccer-new2?id=JefLett.sgm&images=images/modeng&data=/texts/english/modeng/parsed&tag=public&part=244&division=div1>, Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը:

յուններով օժտված Սահմանադրության փոփոխության հիմնական պատճառը լինի պետական իշխանության ներկայացուցիչների փոփոխությունը, ինչն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ հիշյալ հիմնախնդրի տեսանկյունից նույնպես առանցքային նշանակություն ունի հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթը: Ուստի, կարծում ենք, որ քննարկվող համատեքստում ելակետային պետք է լինի այն, որ նպատակահարմար չէ խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը, սակայն, բնականաբար, առավել ընդունելի են այն իրավիճակները, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման ընթացքին, որպիսի պայմաններում Սահմանադրությունը դառնում է կենսունակ, հետևաբար նաև՝ կայուն¹:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ կայունությունը Սահմանադրության այն հատկանիշն է, որը ենթադրում է վերջինիս կենսունակությունն վերափոխվող հասարակական հարա-

¹ Վերը շարադրվածի առումով հարկ է նկատել, որ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ընդհանուր առմամբ սահմանադրությունները երկար չեն գործում: Աշխարհում դրանց գործողության միջին տևողությունը, սկսած 1789 թվականից, 17 տարի է: Սահմանադրությունների կեսը սովորաբար գործում է 18 տարի, և միայն 19%-ն է գործում մինչև 50 տարի: Բավական շատ են գործողության կարճատև ժամանակահատված ունեցող սահմանադրությունները. մոտավորապես 7%-ը նույնիսկ չի գործում մինչև երկրորդ տարին: Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրներում գործողության միջին տևողությունը համապատասխանաբար 12.4 և 10.2 տարի է, և դա այն պայմաններում, երբ հիշյալ տարածաշրջանների սահմանադրությունների մոտավորապես 15%-ը ուժը կորցնում է գործողության առաջին տարվա ընթացքում: Արևմտյան Եվրոպայի և Ասիայի սահմանադրությունները գործում են համապատասխանաբար 32 և 19 տարի: Հարկ է նկատել նաև, որ սահմանադրությունների գործողության միջին տևողությունը վերջին 200 տարվա ընթացքում չի մեծացել, ընդհակառակը՝ կրճատվել է: Մինչև առաջին համաշխարհային պատերազմն այն 21 տարի էր, մինչդեռ այդ ժամանակահատվածից հետո դարձել է 12 տարի (տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

բերությունների պայմաններում: Ընդ որում՝ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն հանդիսացող Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Հիմնական օրենքն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին, դառնալու դրանց զարգացման խթանը, ինչը ենթադրում է, որ վերջինս պետք է լինի ինքնաբավ, սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն, կարգավորեն ոչ միայն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, այլև առաջ քաշեն դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը, իսկ Սահմանադրությունն արդյունքում պետք է ի վիճակի լինի իրականացնելու իր գործառնությունը:

СТАБИЛЬНОСТЬ И РАЗВИТИЕ КОНСТИТУЦИИ КАК ГАРАНТИИ КОНСТИТУЦИОНАЛИЗМА

Анант Манасян

*Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук*

В статье рассматривается понятие “стабильность Конституции”, раскрывается содержание последнего. Автор обосновывает, что “стабильность” и “изменяемость” или “развитие” Основного закона не являются взаимоисключающими понятиями, и что обсуждаемое свойство не должно рассматриваться как неизменяемость конституционных регулирований. При этом подчеркивается, что в данном контексте речь не о статической, а о динамической стабильности, когда фундаментальным изменениям не подвергается “ядро”, суть Основного закона, однако Конституция сама в состоянии адаптироваться к развивающимся общественным отношениям, быть стимулом их развития. Автор также обосновывает, что официальное толкование является одним из важнейших способов развития Конституции, а также представляет критерии разграничения случаев, когда развитие Основного закона должно осуществляться путем внесения изменений в ее текст, и ситуациями, когда достижение обсуждаемой цели возможно посредством толкования.

STABILITY AND DEVELOPMENT OF THE CONSTITUTION AS GUARANTEES FOR CONSTITUTIONALISM

Anahit Manasyan

*Docent of the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences*

The article considers the concept of “stability of the Constitution”, reveals the content of the latter. The Author substantiates that “stability” and “changeability” or “development” of the Basic Law aren’t mutually excluding notions and that the mentioned feature shouldn’t be considered as unchangeability of constitutional regulations. Moreover, it is emphasized that in this context the discussed concept concerns not static, but dynamic stability when the “core”, the essence of the Constitution aren’t subject to fundamental changes, but the Constitution itself is able to adapt to developing social relations, be a stimulus for their development. The Author also substantiates that the official interpretation is one of the most important ways of the development of the Constitution, as well as presents the criteria for differentiating between the cases when the development of the Basic law must be performed by making changes to its text and the situations when the achievement of the discussed goal is possible through interpretation.

Բառալի բառեր – Սահմանադրության կայունություն, Սահմանադրության զարգացում, դինամիկ կայունություն, Սահմանադրության ինքնաբերականություն, քաղաքականություն:

Ключевые слова: стабильность Конституции, развитие Конституции, динамическая стабильность, самодостаточность Конституции, политика.

Keywords: *stability of the Constitution, development of the Constitution, dynamic stability, self-enforcing Constitution, politics.*

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարդան Այվազյան

*ԵՊՀ տահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Նորագույն պատմության վերջին ժամանակահատվածը կարելի է բնութագրել նրանով, որ Երկիր մոլորակը աշխարհակարգի կառուցվածքի առումով մտել է ծայրահեղ հակամարտության մեջ:

Հակամարտության կանխարգելման և լուծման կառուցակարգի բացակայությունը առաջացնում է ոչ միայն խրոնիկ լարվածություն, այլև բախումների մեծ հավանականություն՝ տեղափոխելով այդ հակամարտությունը ավելի խորը և համապատասխանաբար ծայրահեղ մակարդակ, որը ամբողջովին ձևափոխում է միջազգային հարաբերությունների համակարգի իրավական բնույթն ու հյուսվածքները:

Անտարակույս, միջազգային հարաբերությունների իրավական կարգավորման շրջանակներում որպես հակամարտության կանխարգելման և լուծման օպերացիոն մեխանիզմ պետք է հանդես գա միջազգային իրավունքը, որը պետք է գործառնավորի բացառապես Իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա:

Վերոշարադրյալի ապացույցն ու ցուցադրական օրինակը համարվում է այն, որ միջազգային հարաբերությունների կարգավորման ամբողջական համակարգը անունակ է ոչ միայն պահպանելու հավասարակշռությունը ներպետական և մերձավոր արևելքի տարածաշրջանային մակարդակներում (հակամարտության կանխարգելման և լուծման հստակ գործառնավորող կառուցակարգով), այլև թույլ չտալու անլեզալ պետականության ստեղծումը (ԲԼԲՊ), որը գլոբալ պատաներազմ է հայտարարել (տարածքի զավթմամբ) ինչպես աշխարհի պետություններին, այնպես էլ, ըստ էության, ամբողջ համաշխարհային հանրությանը:

Ավելին, հակաահաբեկչական օպերացիայի շրջանակներում ՌԴ ռազմական ինքնաթիռի խոցման հետ կապված վերջին միջադե-

պը ցույց տվեց միջազգային հարաբերությունների կարգավորման համակարգի անունակ լինելը, ինչը հնարավորություն կընձեռներ միանշանակ իրավական գնահատական տալ ինչպես հայտարարված հակաահաբեկչական կռալիցիային, այնպես էլ միջազգային իրավունքի շրջանակներում որակավորել վերջինիս գործողությունների իրավաչափությունը միասնական կոորդինացիոն համատեքստում:

Օրստօրե առավել ծայրահեղ է դառնում միջազգային իրավունքի ինստիտուտի կայացման անկատարության և անավարտության հիմնախնդիրը, որի հետևանքով միջազգային հակամարտությունների և բախումների լուծման (իրավական) հարցում ոչ միայն խախտվում է իրավունքի գերակայության սկզբունքը, այլև իր բոլոր դրսևորումներում և իրավունքի էության միանշանակ ընկալման բացակայության պայմաններում այն սկզբունքորեն չի կարող կիրառվել, որի արդյունքում փոխակերպվում է միանգամայն այլ՝ ոչ իրավունքի սուբստանցի: Արդյունքում գործադրվում է «ուժի իրավունքի» ռեցիդիվը, որի պայմաններում իրավունքի հիմնական խնդիրը դառնում է ուժի լեգիտիմացումն ու հիմնավորումը:

Այս հանգամանքն իր մեջ լուրջ վտանգ է պարունակում, քանի որ իրավունքի էության ուժային ընկալման ուղղությամբ ընթացող շեղումը կհանգեցնի քաղաքակրթության կարգավիճակով հանդես եկող իրավական մարդկության կայացման պատմության կուտակված բաղադրիչի ժխտմանը, և համապատասխանաբար կարող են վերացվել իրավագիտության և պրակտիկ իրավաբանության համալիրի ձեռքբերումները որպես քաղաքակրթության ձևաչափով հասարակության կառուցվածքի բազային գործիքակազմ: Այս պարագայում անխուսափելի է դառնում հակվածությունը դեպի «իրավաբանական պոզիտիվիզմ, որը բացառում է ցանկացած իրավունք, բացի պոզիտիվից»՝ հնարավորություն ընձեռելով վերաձևավորել և դեֆորմացնել բազային իրավական կատեգորիաները, այդ թվում՝ ժողովրդավարությունը, «ուժային սցենարի» տակ, վերափոխելով համաշխարհային կարգի ողջ իրավական սուբստանցիոնալ հյուսվածքները ըն-

թացիկ քաղաքական ուժային դասավորության իրավիճակային իրադրությամբ:

Պրակտիկ մակարդակում այս ամենը արտացոլվում է ՄԱԿ-ի օրինակով, ժամանակակից պատմության մարտահրավերներով, որոնք վերաբերում են ՄԱԿ-ի գործունեության և ժառանգության պահպանման գնահատականին, համաշխարհային հանրության գլոբալ ինտեգրման պայմաններում դինամիկ փոփոխվող աշխարհի գործառնական առաքելությանը և դերին, ինչպես նաև միջազգային իրավունքի համակարգի իրավագոյացման և կայացման գործընթացում դրա կարգավիճակին:

Գլոբալիզմի ինտեգրացիոն գործընթացների պայմաններում համամարդկային նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է մարդկանց համակեցություն և բարեկեցիկ հասարակական վիճակ համաշխարհային հանրության մաշտաբով և ձևաչափում:

Այս պարագայում, անհրաժեշտ է նշել, որ իրավագիտության հիմնական պոստուլատներից մեկն արտահայտվում է նրանում, որ ազատության արտաքին գործադրումը, որն անհրաժեշտ է բոլոր մարդկանց իրանց նպատակներին հասնելու համար, ընդհանրապես անհնար կլինեի և մարդկանց բարեկեցիկ համակեցությունը գոյություն չէր ունենա, եթե յուրաքանչյուրն առանձին վերցրած ունենար իշխանություն և ցանկություն գործադրելու իր արտաքին ազատությունը անսահմանափակ կամայականությամբ: Ուստի արտաքին և ներքին ազատության հավասարակշռության ապահովումը գիտական իմաստով համարվում է ցանկացած իրավունքի հիմնավորումը և վերջնական նպատակը, թեպետ այն սահմանում է հենց մարդկանց արտաքին ազատության չափը նրանց փոխադարձ շփումներում, արտաքին հարաբերություններում և համակեցության կառուցվածքում:

Անտարակույս, այս սկզբունքն ընկած է իրավագոյացման ցանկացած գործընթացի հիմքում, ինչպես առանձին պետականության (պետության կամ պետությունների կոնգլոմերացիայի) և ազգային իրավունքի շրջանակներում, այնպես էլ միջազգային իրավունքի, որի

սուբստանցիոնալ հիմքը ենթադրում է իրավահարաբերությունների վերազգային կարգավորում: Այս պարագայում ազգային ինքնիշխանության շրջանակներում հանդես եկող ներպետական օրինաստեղծագործության և իրավակիրառման իրավական կարգավորման բնույթն ու կարգավիճակը և վերազգային իրավագոյացումը **նույնը չեն** և իրենց գործառնական դրսևորման կտրվածքով համարվում են միանգամայն տարբեր իրավական օբյեկտներ, հատկապես երբ վերաբերում են ազգային ինքնիշխանության և վերազգային մակարդակների կոնստիտուցիոնալիզմի սկզբունքներին, որոնք ենթադրում են արդեն համակեցության և հասարակական կառուցվածքի կոլեկտիվ ագրեզացման տարբեր մակարդակներ:

փորձարկումների ու սխալների մեթոդի վրա խարսխված էվոլյուցիոն մոտեցումը Հիմնախնդրի լուծումը տեղափոխում է տեխնիկական հարթություն և իր մեջ ոչ միայն կրում է անխուսափելի և ճակատագրական կորուստների և ցնցումների (ընդհուպ մինչև գլոբալ ճգնաժամերը և մարդասիրական աղետները) վտանգը, այլև բացառում է կոնստիտուցիոնալիզմի սխտեմատեխնիկական համալիրի կիրառման հնարավորությունը:

Հայեցակարգային մակարդակում սահմանադրաիրավական կարգավորման այնպիսի օբյեկտների իրավական էության անորոշությունը, ինչպիսիք են պետությունը, ինքնիշխանությունը, միջազգային իրավունքը, միջազգային իրավունքի կոնստիտուցիոնալիզմը, աշխարհակարգի գլոբալ համակարգի իրավագոյացումը և այլն, ձևավորում է իրավական ամբիվալենտություն, որը թույլ չի տալիս մինչևանակ որոշելու իրավական կշռի չափանիշները, իրավունքի օբյեկտների աստիճանակարգի համակարգը, որի արդյունքում ձևավորվում և գործառնավորվում է երկակի ստանդարտների պրակտիկայի ֆեկտմենը ինչպես ազգային օրենսդրության, այնպես էլ միջազգային իրավունքի համակարգում:

Մասնավորապես, հենց միջազգային իրավունքի առումով ցուցադրական է համարվում հետևյալ դիլեման- Ո՞ր սկզբունքն ունի առավելություն և ավելի մեծ իրավական կշիռ՝ ազգերի ինքորոշման ի-

րավունքի սկզբունքը, թե գործող պետության տարածքային ամբողջականության սկզբունքը:

Ինչպես գրել է իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչ Գեորգ Ֆրդրիխ Պոլստան. «Դրական իրավագիտությունը զբաղվում է արդեն գոյություն ունեցող իրավունքով, իսկ փիլիսոփայականը՝ նրանով, թե ինչպիսին պետք է այն լինի»¹:

Հարց է ծագում. ի՞նչ ձևաչափով է հանդես գալիս իրավագիտությունը որպես գիտություն, որը սահմանում է իրավունքի և իրավական կարգավորման համակարգի միջոցով դրա պրակտիկ կիրառման վերաբերյալ գիտելիքների համակարգը, որի հիման վրա պետք է սահմանվի և փաստացի ձևավորվի միջազգային հանրության իրավագոյացումն ամբողջությամբ:

Մեր կողմից ներկայացված գիտական հոդվածը հիմնախնդիրը նկարագրում է իրավագիտության և հակամարտաբանության սինթեզի մեթոդաբանական գործիքակազմի միջոցով:

Առաջին հերթին շեշտը դրվում է իրավական համակարգի ներկայացման մեթոդաբանական ձևաչափի վրա՝ իրավական հակամարտաբանության պարադիգմայի միջոցով:

Այս տեսակետից, մեր կողմից իրավական համակարգը դիտարկվում է որպես համապատասխան ոլորտի իրավահարաբերություններում հակամարտությունների կանխման և չթուղատրման, ինչպես նաև դրանց լուծման համակարգ:

Իրավունքի՝ Որպես ֆունկցիոնալի հանդես գալու փաստացի ատունակությունը պրակտիկայում ծնում է ավելի բարդ հակամարտածնություն՝ բախումների կոնֆլիկտային իրավիճակ, որի պարագայում գործ ենք ունենում արդեն միաժամանակ իրար հաջորդող երկու հակամարտությունների հետ:

Այս պարագայում նախևառաջ անհրաժեշտ է վերացնել իրավական կարգավորման համակարգի հակամարտությունը (1), որն էլ իր հերթին պետք է գործառնապես ունակ լինի վերացնել իրավական

¹ Стен Пухта Г.Ф. Энциклопедия права. О науке права // История философии права. СПб., 1998. С. 377.

համակարգի շրջանակներում (2) իրավահարաբերությունների սուբյեկտների միջև առաջացած հակամարտությունները իրավակիրառման օպերացիոն մակարդակում: Այսինքն՝ թիվ 2 հակամարտությունը չի կարող լուծվել, եթե համակարգը, որը պետք է դա անի, ինքն է հակամարտության մեջ (1):

Նմանատիպ պրիզմայով իրավունքի գործողության դիտարկումը հնարավորություն է տալիս բացահայտել և բնութագրել իրավունքի գործողությունը իր դրսևորման բոլոր էտապներով՝ առանձնացնելով պատճառական հանգամանքները, որոնք հանգեցնում են համակարգային մակարդակում ամբողջականության խաթարման՝ առանձնացնելով համակարգային հակամարտությունների առանձին դասեր:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել բազային համակարգային հակամարտությունը, որը ձևավորվում է իրավունքի ծագումնաբանության նկարագրման սկզբնական մակարդակում (իրավագենեզ), երբ իրավունքը, որպես հասկացության, ֆունկցիոնալի և իրավակիրառման միասնական ամբողջականության օբյեկտ, իր դրսևորման հաջորդական շղթայում չի դիտարկվում:

Արդյունքում անհնար է դառնում ըստ էության առանձնացնել իրավունքի ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերն ու մեթոդական գործիքները վերը նշված երեք բաղադրիչների միասնության բովանդակային համատեքստում:

Համակարգային հակամարտությաննների ծագումնաբանության նման պարադիգմայի հիման վրա միջազգային իրավունքի իրավական կարգավորման համակարգը կազմավորվում և բաշխվում է ներքոհիշյալ բոլկներով՝ իրենց համակարգային հակամարտությունների տիպաբանական հատկանիշներով, որոնք ներառում են այդ ասպեկտները որպես տվյալ դասի համակարգային հակամարտության գեներատորներ:

Ա) Հայեցակարգային հակամարտություններ (Համակարգային հակամարտություն 1):

Սրանք այն հիմնախնդիրների խումբն են, որոնք գուցակցվում են իրավունքի՝ որպես բովանդակային ունիվերսումի միանշանա-

կության հետ ձևավորելով նորմաստեղծագործության տրամաբանական հիմքը:

- Առաջին հերթին դրանք իրավագիտության՝ որպես ամբողջությամբ վերցրած իրավունքի մասին գիտության և միջազգային իրավունքի իրավական կարգավորման համակարգի, որպես գիտության ենթաբաժնի՝ ագրեգացիոն ունակության մեթոդաբանական բնույթի հիմնախնդիրներն են, որոնք պետք է գտնել «Գլոբալիզմը և Համաշխարհային կարգը» որպես իրավական կատեգորիաներ, որոնք հնարավորություն կընձեռեն Միջազգային իրավունքը մեկնաբանական բնույթի (որը հենվում է գոյություն ունեցող նորմերի վրա այն դեպքում, երբ դրանք պետք է մշակվեն) սահմանափակ պրակտիկ իրավաբանությունից տեղափոխել գիտական հիմքերի վրա, որը կբացահայտի տվյալ ոլորտի բոլոր երևույթների էությունը «Համաշխարհային հանրության իրավունքի» գիտական դիսցիպլինի շրջանակներում, որը պետք է հանդես գա որպես իրավագիտության և համարտաբանության սինթեզ:

- Այս դասի համակարգային հակամարտության բացառումը համարվում է առաջնահերթ և հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի իրավագոյացման գործիքակազմի և սիստեմատիզմի կատարման տրամաբանության կարգավորման առանցքային պայման և իրավագոյացման գենետիկական մակարդակում իրավունքի անկատարության կանխարգելում: Այս պարագայում հակամարտածինությունը որպես վերլուծական զինանոցի գործիք ծառայում է ծագման փուլում հակամարտության բացառմանը:

- Միջազգային իրավունքի սահմանադրական բնույթը որպես վերագգային իրավունքի կրող:

- Գիտական վերլուծության հնարավորություն՝ միջազգային իրավունքի բնույթի փոփոխությանը պրակտիկ արձագանքելու մեթոդական կառուցակարգով՝ արդեն պոստ ֆակտում գոյություն ունեցող գլոբալիզմով, որը պահանջում է անհապաղ իրավական ամրագրում տալ (համաշխարհային հանրության գլոբալ իրավունք) միջազգային հարաբերություններին, որոնք գտնվում են աննախադեպ

մակարդակի վրա: Մասնավորապես խոսքը վերաբերում է՝

- Միջազգային հարաբերությունների համակարգում կառուցվածքային փոփոխությունների դինամիկությանը:

- Համաշխարհային հանրության սուբյեկտների և մասնակիցների փոխինտեգրվածությանը:

- Ազգային, վերազգային և համաշխարհային մաշտաբի բոլոր գործընթացների փոխկապվածությանը:

- Միջազգային հարաբերությունների կարգավորման համակարգի և միջազգային իրավունքի կարգավորման համակարգի մասով գործառնական սուրոգատների մշակման անթույլատրելիությամբ, որը կհանգեցնի՝

Բ) Ֆունկցիոնալ հակամարտությունների (Համակարգային հակամարտություններ 2): Տվյալ հիմնախնդրային խումբը ներառում է ֆունկցիոնալ մակարդակի իրավունքի դրսևորման հակամարտությունների ծագումնաբանությունը իրավաբանական հակամարտության շրջանակներում, որը ենթադրում է արդեն առկա նորմերի աստիճանական համակարգ, որը հանդես է գալիս որպես իրավունքի գործառնավորման առարկա, որը նախապես մշակվել է հայեցակարգային մակարդակում (այսինքն՝ համակարգային հակամարտություն 1-ը հաղթահարված է): Համակարգային հակամարտություն 1-ի առկայության հետևանքով գործի է դրվում համակարգային հակամարտություն 2-ի գենեզը, որի արդյունքում դիտարկվում է՝

- Միջազգային իրավունքի օբյեկտների սահմանադրաիրավական միանշանակության բացակայություն, որի հետևանքով առաջանում է Համաշխարհային հանրություն օբյեկտի ֆունկցիոնալ մոդելի իրավական ռեգլամենտի բացակայություն կամ ալգորիթմի անկատարություն:

- Աշխարհակարգի մոդելի՝ որպես իրավական կարգավորման առարկայի (միբևեռ, երկբևեռ, բազմաբևեռ) ոչ միանշանակություն կամ բացակայություն:

- Կոլեկտիվ անվտանգության մոդելի բացակայություն

- Ինքնիշխանության հիմնախնդիրը, ֆունկցիոնալների ձևա-

վորման սկզբունքները և համապատասխան երկրների կոլեկտիվ անվտանգությունն իրականացնող տարբեր ֆունկցիոնալների միջև փոխգործակցության հիմնախնդիրները:

Գ) Օպերացիոն հակամարտություններ (Համակարգային հակամարտություն 3): Այս հիմնախնդրային խումբը ներառում է՝

- իրավունքի դրսևորման օպերացիոն մակարդակի հակամարտությունների գեները օպերացիոն իրավակիրառման և միջազգային արդարադատության շրջանակներում:

- Իրավական կարգավորման և իրավակիրառման համակարգի Համապարտադիր նորմատիվային բազայի Բացակայությունը կամ անկատարությունը միջպետական հակամարտությունների և բախումների համաշխարհային օպերացիոն գործընթացում:

- Միջազգային իրավունքի դատավարության և իրավակիրառման ինստիտուտների բացակայությունը կամ ոչ միանշանակությունը:

Այսպիսով, գործիքային մակարդակում հնարավոր է դառնում նկարագրել իրավական կարգավորման համակարգի համակարգային հավասարակշռությունն ու համակարգային ամբողջականությունը, ինչպես նաև դրա խախտումը ըստ համակարգային հակամարտություն 1, համակարգային հակամարտություն 2, համակարգային հակամարտություն 3-ի կոնֆիգուրացիայի դրության:

Իրավական կարգավորման համակարգում իդեալական է այն վիճակը, երբ բացակայում են համակարգային հակամարտություն 1, համակարգային հակամարտություն 2, և համակարգային հակամարտություն 3-ը և, ընդհակառակը, դրանցից գեթ մեկի առկայությունը նկարագրում է խախտումը համապատասխան չափանիշով և պատճառական համակարգային ամբողջականությամբ:

Ամենառեցիդիվայինը համարվում է այն իրավիճակը, երբ իրավական կարգավորման համակարգը չի դիտարկվում որպես համակարգ և ընկալվում է որպես ի վերուստ տրված օպերացիոն իրողություն՝ գոյություն ունեցող կառավարման համակարգի շրջանակներում (օրինակ՝ ազգային կամ վերազգային ֆեդերատիվ պետական իշխանությունը), որը պետք է օգտագործել որպես պրակտիկ անհա-

տական նպատակներին հասնելու գործիք, որի պարամետրերից պետք է անվանապես ձեռնպահ մնալ: Այս պարագայում որպես բարձրագույն առաջնահերթություն հանդես է գալիս համակարգային հակամարտություն 3-ը, և բոլոր ջանքերը ուղղորդվում են դրա լուծմանը համակարգային հակամարտություն 2-ի և համակարգային հակամարտություն 1-ի միջնորդավորված կարևորությամբ: Արդյունքում գործի է դրվում հիմնախնդրի լուծման տրամաբանական անախրոնիզմ. «վերացնելով հետևանքները, թողնելով պատճառները, դատապարտված լինելով սխալի կրկնությանը»: Միջազգային իրավունքի հետագա դիտարկումն ու գիտական եզրահանգումը մեր կողմից կքննարկվի համակարգային հակամարտության պարադիգմայի հիման վրա:

Միջազգային իրավունքում համակարգային հակամարտություն 1-ի առկայության կենտրոնական և առանցքային գործոնը համարվում է միջազգային իրավունքի իրավական ճարտարապետության բազային և հիմնարար մեթոդաբանության բացակայությունը, ուստի միջազգային իրավունքի առարկան և դրա իրավական էությունը հենվում է պայմանագրային դրվածքի վրա և հատկապես մնում է դոկտրինալ հարթության մեջ գտնվող կոնվենցիոնալ իրավական ամրագրման պայմանական միջանցքում (առանց հիմնարար տեսական մակարդակ տեղափոխվելու հնարավորության): Այս պարագայում նորմի իրավագոյացումը ձեռք է բերում պայմանական բնույթ (այսինքն՝ նորմը ոչ թե դուրս է բերվում կարգավորման առարկայի իրավական բովանդակությունից, այլ որոշվում է պայմանագրի պայմաններից): Նորմաստեղծագործությունը առանց այլընտրանքի ձևավորվում է նախադեպերի՝ որպես լեգիտիմության (պայմանագրային-կոնվենցիոնալ) հիմնավորման գործիքի կուտակված համադրմամբ: Արդյունքում խախտվում է «լեգիտիմություն» հասկացության սահմանադրականությունը, ուստի բազային սահմանումները, որոնք ենթադրում են բովանդակային սահմանման միանշանակություն, չեն կարող լինել պայմանագրային. դրանք պետք է ունենան ճշմարտության հիմնարար ստատիկա: Այս հանգամանքով էլ պայմանավոր-

ված՝ անհրաժեշտություն է առաջանում միջազգային իրավունքի համակարգ սահմանադրականության ներմուծումը:

Միջազգային իրավունքի առումով, անշուշտ, առանցքային է համարվում մյուս հարցը. Որքանո՞վ սահմանադրական պետք է լինեն հետևյալ օբյեկտները՝ աշխարհակարգը և որոշումների կոլեկտիվ ընդունման համակարգը պետությունների կողմից գլոբալ համակարգը կառավարելու համար, համաաշխարհային հանրությունը և քաղաքական, մշակութային և տնտեսական ինտեգրման սկզբունքները միասնական քաղաքակրթական ձևաչափում, որը կանխորոշում է հավասարակշռված և ներդաշնակ փոխհարաբերությունը ազգային մակարդակի սահմանադրականության հետ: Արդյոք հնարավոր է հասնել այդ խնդրի լուծմանը, եթե կոնստիտուցիոնալիզմն ընդհանրապես և միջազգային իրավունքի կոնստիտուցիոնալիզմը որպես կատեգորիա միանշանակ չեն ընկալվում: Արդյոք թույլատրելի են համակարգային հակամարտությունները միջազգային իրավունքի համակարգում կամ թույլատրվո՞ւմ է արդյոք դրանց «համակարգային առկայությունը»՝ որպես թույլատրելի կամ նույնիսկ պարտադիր երևույթ: Ցավոք, պետք է արձանագրել, որ այս հարցադրումների պատասխանները ենթադրում են համաաշխարհային իրավական մտածողության պատասխանատվությունը մոլորակային մակարդակով և իրավագիտության գործիքային զինանոցի կոնսոլիդացիան քաղաքացիական իրավասության մակարդակում: Ընդ որում դա պետք է լինի ոչ միայն առանձին պետության շրջանակներում, այլև աշխարհի քաղաքացու՝ համաաշխարհային հանրության անդամի կարգավիճակում: Հակառակ պարագայում՝ այդ պատասխանատվությունը կարող է վերաձևավորվել առանձին առաջատար տերությունների շահերի աշխարհաքաղաքական դասավորության շրջանակներում:

Միջազգային իրավունքում համակարգային հակամարտությունների ռեցիդիվները գործի են դրել հակամարտությունների և միջազգային իրավունքի բոլոր արդիական հարցերի ուժային լուծման ամրագրման վտանգավոր միտում օպերացիոն կոալիցիոն շտաբի

միջոցով, որն ըստ էության հանդես է գալիս որպես միջազգային հարաբերությունների օպերացիոն արդարադատության բոլոր ինստիտուտների էմուլյանտ-փոխարինող՝ սկզբունքորեն բացառելով միջազգային իրավունքի սահմանադրականությունը: Միջազգային իրավունքի նման սուրոգատացումը, որը տեղի է ունենում կոալիցիոն իրավունքի շրջանակներում «արագակար իրավիճակային նորմատեղծագործությամբ», դրա իրավական համարժեքությունը մնում է գիտական հիմնարար տրամաբանական ոլորտից դուրս: Արդյունքում ջնջվում են իրավունքի և ոչ իրավունքի սահմանները: Այս պայմաններում տեղի է ունենում դասական բնական իրավունքի անհիլյացիա, որտեղ վերանում է իրավունքի բովանդակային համալրման սկզբունքը՝ փոխարինվելով ձևական-դոգմատիկ իրավաբանությամբ, որը թույլ է տալիս իրականացնել նորմաենթադրության լեգիտիմացում կոլաիցիոն շտաբի անդամների սուբյեկտիվ դիրքավորման հիման վրա:

Արդյունքում իրավունքի էությունը և գիտական բնույթի օբյեկտիվությունը ինքնաբերաբար դառնում են չպահանջված, իսկ իրավական ակադեմիական ինստիտուցիոնալությունը դիտարկվում է որպես պատմական արխաիկա:

СИСТЕМНЫЕ КОНФЛИКТЫ В СИСТЕМЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Вардан Айвазян

*Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук*

Последний период новейшей истории можно охарактеризовать как вступление мира в глобальный критический конфликт на предмет обустройства миропорядка. Отсутствие механизма предотвращения и разрешения конфликта не только создает хроническую напряженность и вероятность столкновений с переводом самого конфликта на более глубокий и соответственно критический уровень, но и изменяет правовую природу и ткань системы международных отношений.

Безусловно, как операционный механизм предотвращения и разрешения конфликта в рамках системы правового регулирования междуна-

родных отношений должно выступать международное право, функционирующее исключительно по принципу «верховенства права».

Несомненно данная проблема очень масштабная, многоплановая и имеет широчайший охват всех сопряженных причинных факторов, освещение которых требует целенаправленного комплексного всестороннего исследования международного права на основе много дисциплинарного феноменологического синтеза. В этом ключе данная статья представляет описание проблемы посредством методологического инструментария на основе синтеза правоведения и конфликтологии.

В основном акцент ставится на методологическом формате представления правовой системы посредством парадигмы правовой конфликтологии, основные положения которой представлены в статье.

SYSTEMIC CONFLICTS IN THE SYSTEM OF INTERNATIONAL LAW

Vardan Ayvazyan

*Docent of the YSU Chair of Constitutional Law,
Candidate of Legal Sciences*

The later period of the newest history can be as characterized as the world's entry into a global critical conflict concerning the construction of the world order. The absence of a mechanism of preventing and solving the conflict creates not only a chronic tension, but also a great probability of crushes transferring that conflict to a deeper and accordingly to a critical level, which completely changes the legal character and the texture of the system of international relations.

Undoubtedly, the international law should act as an oprational mechanism of preventing and solving the conflict within the boundaries of the legal regulatory system of international relations and it should function only on the principle of "supremacy of law".

Of course, the large-scale and multi-level problem in question embraces all the conjugate cause factors. Thus its treatment requires a purposeful, comprehensive and all-round study of international law on the basis of multidisciplinary phenomenological synthesis. In this vein the present article describes the problem through the methodological instruments of the synthesis of Jurisprudence and Conflictology.

The main emphasis is on the methodological format of presenting the legal system through the paradigm of legal conflictology, the main points of which are presented in the article.

Բաճալի բառեր – միջազգային իրավունք, համակարգային հակամարտություններ, աշխարհակարգ, գլոբալ կառավարման համակարգ, միջազգային հարաբերություններ, խորը ճգնաժամ, պատճառահետևանքային շղթա, կռաիցիոն իրավունք

Ключевые слова: международное право, системные конфликты, миропорядок, глобальная система управления, международные отношения, глубокий кризис, причинно-следственная цепочка, коалиционное право.

Key words: international law, systemic conflicts, world order, global governing system, international relations, deep crisis, cause-effect chain, coalitional law.

**ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ**

Սամվել Մուրադյան
*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի
դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Ժամանակակից տնտեսության կառավարման պայմաններում արդիական մեծ նշանակություն է ձեռք բերել պետության կողմից տնտեսվարվող սուբյեկտների լիցենզավորման (թույլտվության)՝ որպես պետական կառավարման մեթոդի համալիր բարելավման հիմնախնդիրը:

Լիցենզավորման՝ որպես պետական կառավարման մեթոդի անհրաժեշտությունը զուտ տեսականորեն հիմնավորելու տեսանկյունից հիմնական ուշադրությունը, թերևս, պետք է դարձնել նրա տարրերի փոխհարաբերության և յուրաքանչյուրի ինքնուրույն իրավական նշանակության վրա, ինչը հնարավորություն կտա լիարժեք բացահայտելու տնտեսական ոլորտում լիցենզավորման պետական կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը և գիտագործնական չափանիշներով կանխորոշել լիցենզավորման ոլորտին վերաբերող օրենսդրության բարելավման ուղիները:

Լիցենզավորումը բարդ, բազմաշերտ, սոցիալ-իրավական երևույթ է, այն, մեր կարծիքով, ունի երկակի նպատակաուղղվածություն, մի կողմից՝ լիցենզավորումը հնարավորություն է ընձեռնում տնտեսավարող սուբյեկտին զբաղվելու տվյալ տեսակի ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ մյուս կողմից՝ այն առաջացնում է համապատասխան պետական մարմինների կողմից թույլտվության և վերահսկողության իրականացման անհրաժեշտություն:

Իրավաբանական գրականությունում օգտագործվում է նաև «թույլատվական-լիցենզիավորման համակարգ» հասկացությունը, ո-

որը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ բովանդակային լայն և նեղ իմաստով: Լայն առումով թույլատվական-լիցենզավորման համակարգը բնորոշվում է որպես լիազորված պետական մարմինների կողմից կառավարման ներգործության օբյեկտ, որոշակի հասարակական հարաբերությունների համակցություն, որոնք առաջանում են հասարակությունում իրավական նորմերի իրականացման ընթացքում: Այդպիսի ըմբռման շրջանակներում իրավաբանական գրականությունում և օրենսդրությունում օգտագործում են «թույլտվություն» (օրինակ՝ զենք ձեռք բերելու և կրելու թույլտվությունը), «իրավունք» (օրինակ՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կամ վարորդական իրավունքը), «լիցենզիա» եզրույթները: Դրանցից յուրաքանչյուրը ձեռք է բերել ինքնուրույն իրավական նշանակություն, սակայն միասին կազմում են ամբողջական համակարգ, քանզի վերջիններիս այս կամ այն չափով միավորում է պետության կողմից իրավունքի մասնավոր սուբյեկտներին որոշակի գործունեությամբ (ընդ որում, առանձին դեպքերում նաև ոչ տնտեսական) զբաղվելու իրավունք վերապահելը: Այսպես, Ն.Բ.Բուդենկոն լայն առումով թույլատվական-լիցենզավորման համակարգի տակ հասկանում է իրավական նորմերով սահմանված կարգ, որը նախատեսում է ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ առանձին քաղաքացիների կողմից որոշակի գործողությունների կատարման կամ իրավագործությունների իրականացման համար պետական լիազոր մարմիններից թույլտվություններ (լիցենզիաներ) ստանալու պարտադիր պայման¹:

Ա. Բ. Գորմախի կարծիքով, թույլատվական-լիցենզավորման համակարգը նեղ առումով իր մեջ ներառում է պետական իշխանության մարմինների կողմից իրականացվող հասարակական հարաբերությունների որոշակի համակցություն, որոնք առաջանում են քաղաքացիների անձնական անվտանգության, հասարակական ապահովության և հասարակական կարգի պահպանության նպատակով

¹ St' u Oсуществление лицензионно-разрешительной системы. // Административная деятельность органов внутренних дел. М., 1997, էջ 112:

որոշակի առարկաների կամ նյութերի ձեռք բերման, փոխադրման, օգտագործման և իրացման, ինչպես նաև որոշակի ձեռնարկությունների, կազմակերպությունների հիմնադրման և գործառնության ժամանակ¹: Մեկ այլ հեղինակ՝ Կ.Ս. Վելսկին ենթադրում է, որ լիցենզավորման մեթոդը վերաբերում է պետական (տվյալ դեպքում՝ ոստիկանական) գործունեության թույլատվական համակարգի մեթոդներին, դասական թույլտվության, պետական գրանցման և անձնագրավորման հետ միասին²:

Ինչպես տեսնում ենք, լիցենզիայի գիտական և օրենսդրական բնորոշումները շատ դեպքերում համընկնում են, բայց դրանք չեն կարող դիտվել որպես ամբողջությամբ նույնական: Առանձին-առանձին դիտարկենք թույլատվական և լիցենզավարման համակարգերը:

Թույլտվական համակարգը իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների համակցություն է, որոնք առաջանում են վարչական իշխանության սուբյեկտների և քաղաքացիների (իրավաբանական անձանց) միջև որոշակի գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու առնչությամբ: Դրան ուղեկցում է թույլտվական գործունեության պայմանների և կանոնների պահպանման վրա վերահսկողությունը:

Թույլտվական գործունեության նպատակը պետության, հասարակության և քաղաքացիների անվտանգության ապահովումն է: Հանրորեն օգտակար որոշ գործունեության տեսակներ (փոխադրամիջոցներ վարելը, զենքի արտադրությունը և այլն), եթե դրանք իրականացվեն ոչ արհեստավածորեն, առանց մասնագիտական ոչ պատշաճ ունակությունների առկայության և անհրաժեշտ կանոնների պահպանմամբ կարող են մեծ վնաս պատճառել հանրությանը: Այդ իսկ նպատակով էլ գործունեության այդպիսի տեսակների հա-

¹ St' u Гормах А. Б. Правовые и организационные основы деятельности милиции общественной безопасности по осуществлению лицензионно-разрешительной работы: Дисс. канд. юрид. наук. М., 1998. էջ 56:

² St' u Вельский К. С., Елисеев В. П., Кутеров И. И. О системе специальных методов полицейской деятельности // Гос. и право. 2003. № 4. էջ 11:

մար սահմանվում է հարաբերական արգելք. դրանցով կարող են զբաղվել միայն նրանք, ովքեր ունեն իրավասու մարմինների համապասխան թույլտվությունը: Ընդ որում, տվյալ դեպքում թույլտվություն տալու նախապայմաններից մեկը համարվում է հենց իրավասու մարմինների կողմից արհեստավարժության և համապատասխան կանոններին պատշաճ իրազեկված լինելու հիմքերի ստուգումը: Այդ համակարգը կոչված է պաշտպանելու պետությանը, հասարակությանը և քաղաքացիներին այն հնարավոր վնասից, որը կարող է պատճառվել վերը թվարկված գործունեության ոճ պատշաճ իրականացմամբ:

Թույլատվական համակարգում կարելի է առանձնացնել չորս հիմնական ուղղություն՝

1) հարաբերական արգելքի առկայությունը: Այն կարող է ուղղակի կամ անուղղակի ամրագրվել իրավական նորմով: Հաճախ դա կատարվում է անուղղակի. սահմանվում է, որ որոշակի գործունեությանը կարելի է զբաղվել միայն դրա համար թույլտվության առկայության պայմաններում,

2) թույլտվության տրամադրաման գործունեություն, որն իրականացվում է գործադիր իշխանության, իսկ երբեմն էլ տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի կողմից կազմակերպական առումով նրանց հետ ենթակայական հարաբերությունների մեջ չգտնվող քաղաքացիների և կազմակերպությունների առնչությամբ: Ներկայումս թույլտվությունը հաճախ անվանում են լիցենզիա, սակայն, ինչպես արդեն նշվեց, օգտագործվում է նաև «վարելու իրավունք» (փոխադրամիջոցների դեպքում), «կրելու իրավունք» (գենքի առնչությամբ), «արտոնություն», «մուտքի արտոնություն», «հատկացում», «քվոտա» և այլ նույնաբնույթ եզրույթներ: Թույլտվությունը տրվում է իրավական ակտերով սահմանված կարգով դրա լիազորությունն ունեցող գործադիր իշխանության, իսկ երբեմն էլ տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի կողմից: Թույլտվության տրամադրումը համակարգի կենտրոնական տարրն է, դրա համար էլ այն կոչվում թույլտվական,

3) իշխանական և ոչ իշխանական սուբյեկտների միջև տնական հարաբերություններ, որի պարտադիր տարրն է լիցենզավորված կամ թույլտվություն ստացած այլ սուբյեկտի համապատասխան գործունեության իրականացման պայմանների ու կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը,

4) թույլտվական գործունեության կանոնների, պայմանների խախտման դադարեցման (կասեցման) համար հարկադրական միջոցների կիրառումը և իրավաբանական պատասխանատվության ենթարկելը¹:

Լիցենզավորումը, ըստ էության, հանդիսանում է տնտեսության վրա պետական կառավարման ներգործության ամենահզոր միջոցներից, այն տնտեսական գործունեության կառավարման և դրա նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու ձևերից է: Լիցենզավորումն իրականացվում է սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովելու «զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելու, ապրանքների և ծառայությունների որակը բարձրացնելու, անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Ըստ էության, այն կայանում է ձեռնարկատիրական գործունեության որոշ տեսակներով զբաղվելու սահմանափակման մեջ:

Շահագրգռված սուբյեկտին լիցենզիա տրամադրելու ընթացակարգը կանոնադրելիս ամրագրվում են պահպանման ենթակա որոշ պահանջներ կամ արգելքներ, որոնք անհրաժեշտ են լիցենզավորված գործունեություն իրականացնելիս: Իրավունքի տնտեսապես ազատ սուբյեկտները սահմանափակումներ են կրում իշխանական սուբյեկտների կողմից, որոնք պահանջում են պահպանել լիցենզավորման պայմանները, և, քանի որ, լիցենզավորման ենթակա գործու-

¹ Տե՛ս Դ. Н. Бахрах, Б.В. Россинский, Ю. Н. Старилов, Административное право, М., 2005, էջ 429:

ներությունը մեծ մասամբ առևտրային բնույթ ունի, ապա լիցենզավորումը, ամբողջությամբ վերցրած, կարելի է համարել իրականացվող տնտեսական գործունեության վրա ներգործելու միջոց:

Լիցենզավորումն իրենից ներկայացնում է տնտեսության պետական կարգավորման ամենահատկանշական վարչաիրավական մեթոդ: Պետությունը, հանձնա իր մարմինների, թույլտվություն է տալիս՝ կատարելու որոշակի գործողություններ, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության այս կամ այն տեսակով զբաղվելու համար:

Որոշ հեղինակներ լիցենզավորման անհրաժեշտության առնչությամբ հանդես են գալիս իրարամերժ, ծայրահեղ մոտեցումներով: Այսպես,

1) այն հակասում է շուկայական հարաբերություններին, հանգեցնում է բյուրոկրատիզմի և պետք է վերցվի: Այս առումով հիմնական փաստարկն այն է, որ լիցենզավորումը չափազանց բյուրոկրատացված է և ներառում է գործունեության տեսակների ծայրահեղ լայն և անորոշ շրջանակ, ինչի արդյունքում անհարկի սահմանված են ազատ տնտեսական գործունեության ոչ իրավաչափ խոչընդոտներ,

2) լիցենզավորումը շուկայական հարաբերությունների համար հակացուցված չէ, այն անհրաժեշտ ինստիտուտ է, և պետք է իրականացվի պետության ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Ենթադրվում է, որ վերջին տեսակետը ավելի մոտ է կյանքի իրական պահանջներին: Սակայն դրա կիրառման համար անհրաժեշտ է սահմանել այնպիսի հստակ կանոններ ու չափանիշներ, որոնք չեն խոչընդոտի գործարարության կառուցողական զարգացմանը: Լիցենզավորման պետք է ենթակա լինեն գործունեության միայն այն տեսակները, որոնց վերահսկողությունից դուրս մնալը կարող է վնաս պատճառել ազգային, պետական և հասարակական անվտանգությանը, ներառյալ բնապահպանական անվտանգությունը¹: Այլ

¹ Ст'ю А. П. Алехин, А. А. Кармолицкий, Ю. М. Козлов, Административное право РФ, М., 2005. էջ 405:

կերպ ասած՝ երբեք չի կարելի լիցենզավորումը դիտարկել որպես պետական բյուջեն անուղղակի եկամուտներով համալրելու միջոց (օրինակ՝ շահութաբեր ձեռնարկատիրական գործունեության լիցենզիաներ ստանալու համար պետական անհիմն բարձր տուրքեր սահմանելու միջոցով):

Լիցենզավորումը տնտեսության պետական կարգավորման վարչաիրավական մեթոդ է, որի միջոցով պատնեշվում է տնտեսության մեջ անորակ ապրանքների ներթափանցումը և կանոնակարգվում է վտանգավոր, բայց հասարակության համար կենսական նշանակություն ունեցող գործունեության իրականացումը:

Ամեն անգամ, երբ խոսքը գնում է պետական կառավարման այս կամ այն միջոցի մասին, հարց է ծագում, թե որո՞նք են այդ միջոցի կիրառման նպատակները: Հնարավոր չէ ընդգծել լիցենզավարման համապարփակ (ունիվերսալ) նպատակը, սակայն կարելի է փաստել, որ լիցենզավորման տարբեր տեսակներին համապատասխանում են տարբեր նպատակներ: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների օրինակելի ցանկի հիման վրա կարելի է սահմանել նրա խնդիրները: «Լիցենզավորման մասին» 2001 թ. մայիսի 30-ին ՀՀ օրենքի հոդված 5-ի համաձայն՝ գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակներն են՝

- 1) սպառողների իրավունքների պաշտպանությունը,
- 2) զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը,
- 3) ապրանքների եւ ծառայությունների որակի բարձրացումը,
- 4) անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը:

Գործունեության տեսակը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների խմբին դասելիս օրենսդիրն արտահայտում է տվյալ տեսակի նկատմամբ հանրային շահը: Այդ հետաքրքրությունը

կարող է հիմնավորվել հետևյալ նպատակներով.

1) գործունեությունը վտանգավոր է մարդկանց ոչ սահմանափակ շրջանակի համար, որոնք չեն մասնակցում դրա իրականացմանը (այդպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ՝ թափոններ թաղելը, աղտոտող նյութեր նետելը),

2) գործունեությունն իր շուրջը ներգրավում է մասնակիցների անսահմանափակ շրջանակ՝ արտադրության մեջ ներառելով նրանց գույքը (ներդրումային հիմնադրամներ, բանկային գործունեություն),

3) գործունեությունը բավական շահութաբեր է և այդ կապակցությամբ ենթակա է բարձր հարկման և լրացուցիչ վերահսկողության (օրինակ՝ ոգելից արտադրանքի արտադրության, պահպանման և մեծածախ վաճառքի բնագավառում գործունեությունը)¹:

«Լիցենզավորման մասին» 2001 թ. մայիսի 30-ին ՀՀ օրենքի համաձայն՝ լիցենզիան իրենից ներկայացնում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլատվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ, հետևաբար լիցենզիան իրենից ներկայացնում է թույլտվություն (իրավունք) լիցենզավորման ենթակա գործունեությունով զբաղվելու համար, որը տրվում է լիցենզավորող մարմնի կողմից իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով լիցենզավորման ենթակա են այն գործունեության տեսակները, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել քաղաքացիների առողջությանը, բարոյականությանը, իրավունքներին և օրինական շահերին, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, և որոնց կարգավորումն անհնար է առանց լիցենզավորման մեթոդի կիրառման: Գործունեության այն տեսակը, որի կատարումը տվյալ պետության տարածքում պահանջում է օրենքին համապատասխան լիցենզիայի տրամադրում, համարվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

¹ St' u O. Олейник, Правовые основы лицензирования хозяйственной деятельности // Закон, 1994, № 6.

Լիցենզավորման ինստիտուտը կարելի է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝

1) լիցենզավորումը որպես մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործընթացների կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտություն,

2) լիցենզավորումը որպես տնտեսության պետական կարգավորման համալիր մեթոդ, որն ապահովում է տնտեսության պետական կարգավորման անմիջական մեթոդների գործողությունը,

3) լիցենզավորումը որպես տնտեսական գործունեության ազատականության ապահովման միջոց,

4) լիցենզավորումը որպես պետական բյուջեի համալրման միջոց¹:

Գիտագործնական վերլուծության չափանիշներով անհրաժեշտություն է առաջանում որոշելու տնտեսական գործունեության լիցենզավորման սահմանները, որպեսզի մի կողմից այն ապահովի ազատ ձեռնարկատիրական գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ նպաստի մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործընթացների կարգավորմանը, լիցենզավորման հիմնական խնդիրների իրականացմանը: Լիցենզավորման միջոցով պետք է ապահովվի հանրային ու մասնավոր շահի զուգորդումը, դրանց համաչափ կիրառումը: Լիցենզավորման միջոցով հանրային շահի պաշտպանությունը պայմանավորված է նրանով, որ լիցենզավորման միջոցով վավերացվում է լիցենզավորվող կազմակերպությունների և գործունեության տեսակների հասարակական օգտակարությունը, որի միջոցով էլ իր հերթին որոշվում է դրանց արդյունավետությունը²:

Այսպիսով, ամփոփելով լիցենզավորման (թույլտվության) վարչաիրավական ինստիտուտի առնչությամբ մեր մոտեցումները՝ կարելի հանգել հետևյալ եզրահանգումներին՝

- թույլատվական-լիցենզիավորման համակարգ հասկացություն-

¹ Տե՛ս Ա. Սիրունյան, Լիցենզավորման ինստիտուտը Հայաստանի իրավական համակարգում, «Առեքտում»-ԱՆԻ, Երևան, 1998:

² Տե՛ս Ю. Тихомиров, Публичное право, М., изд-во Бек, 1995, էջ 76.

նը կարող է դիտարկվել բովանդակային լայն և նեղ առումով,

- թույլատվական գործունեության նպատակը պետության, հասարակության և քաղաքացիների անվտանգության ապահովումն է, այն չի կարող թելադրված լինել զուտ տնտեսական՝ ֆինանսական, բյուջետային համալրման նկատառումներով,

- լիցենզավորումը բարդ, բազմաշերտ, սոցիալական, իրավական երևույթ է, որն ունի երկակի նպատակառոտվածություն: Մի կողմից՝ լիցենզավորումը հնարավորություն է ընձեռում տնտեսավարող սուբյեկտին՝ զբաղվելու տվյալ գործունեությամբ, իսկ մյուս կողմից՝ այն առաջացնում է համապատասխան պետական մարմինների կողմից թույլտվական և վերահսկողական գործունեության իրականացման անհրաժեշտություն,

- լիցենզավորման՝ որպես պետական կառավարման մեթոդի տեսական հիմնավորման համար հիմնական ուշադրությունը պետք է դարձնել նրա տարրերի համակարգված փոխհարաբերության և յուրաքանչյուրի ինքնուրույնությունը երաշխավորելու վրա,

- լիցենզավորումը տնտեսության վրա պետական կառավարման ներգործության ամենահզոր միջոցներից է: Այն տնտեսական գործունեության կառավարման և դրա նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու ձևերից մեկն է, որի գլխավոր գործառույթը թույլատվական է:

РАЗРЕШЕНИЕ И ЛИЦЕНЗИРОВАНИЕ КАК ВАЖНЫЕ МЕТОДЫ ВОЗДЕЙСТВИЯ НА ЭКОНОМИКУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Самвел Мурадян

*Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук*

В современных экономических условиях актуальным является проблема лицензирования хозяйствующих субъектов, как метода государственного управления. Для теоретического обоснования лицензирования как метода государственного управления основное внимание надо обратить на отношения его элементов, связи между ними и их взаимоотношения. Следует раскрыть объективную необходимость государственного регулирования, сформированного в экономической сфере лицензирования на основе научно обоснованных положений улучшать законодательство, относящиеся к сфере лицензирования.

THE PERMISSION AND LICENCING AS THE IMPORTANT METHODS OF THE INFLUENCE ON ECONOMIC OF REPUBLIC OF ARMENIA

Samvel Muradyan

*Docent of the YSU Chair of Constitutional Law,
Candidate of Legal Sciences*

In present economic situation the problem of licencing of the subjects of economy is actual. For theoretic reasoning of licensing as the method of Government influence, the main accent must been drawn to the elements of licencing, to the mutual realations and connections of this elements. It is essesseutial to reveal objective necessity of Government influence on the sphere of licensing, grade up on the basis of the scientific applications legislation touch on the sphere of licensing.

Բանալի բառեր – թույլտվական-լիցենզիայի համակարգ, պետական կարգավորման մեթոդ, լիցենզավորման իրավական կարգավորում, վերահսկողություն:

Ключевые слова: Разрешительно-лицензионная система, метод государственного регулирования, правовое регулирование лицензирования, контроль.

Key words: Permission and licencing system, Government influence, legislation touch on the sphere of licensing, adiministrative control.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԸՆԴՀԱՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ**

Արմեն Հայկյանց
*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր*

Երբ քաղաքացիական գործին մասնակցող անձինք ունեն ՀՀ քաղաքացիություն կամ ՀՀ ազգային պատկանելություն, ապա այդ գործերով ընդդատությունը կարգավորվում է ՀՀ քաղ. դատ. օր. 12-րդ գլխի կանոններով (82-86-րդ հոդվածներ): Իսկ երբ քաղաքացիական գործին մասնակցում է օտարերկրյա անձ, ապա այդ գործերով ՀՀ դատարանն իրավասու է միայն առանձին կամ հատուկ դեպքերում, որը մենք կանվանենք միջազգային ընդդատություն: Միջազգային ընդդատությանն է նվիրված ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածը: Ճիշտ է, ՀՀ քաղ. դատ. օրենսգրքով «միջազգային ընդդատություն» եզրույթ չի հոլովվում, դրա փոխարեն ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության դատարանների իրավասությունը քաղաքացիական գործերով» արտահայտությունը, սակայն «միջազգային ընդդատություն» եզրույթն այստեղ ևս կիրառելի է, ուստի մենք հետագա շարադրանքում կհոլովենք հենց այս եզրույթը:

Վերլուծենք ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի դրույթները՝ համադրելով միջազգային ընդդատությունը կարգավորող ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի դրույթների հետ, և այդ արդյունքում առանձնացնենք այն բացերն ու խնդիրները, որոնք առկա են ՀՀ օրենսդրությամբ:

Հայտնի են միջազգային ընդդատության մի քանի տեսակներ՝ ***քնդհանուր և հատուկ, արտակարգ և բացառիկ***¹: Իհարկե, գիտություն-

¹ Տե՛ս Սիակ X. Международное гражданское процессуальное право. М. БЕК. 2001, էջ 90:

նը միայն հիշատակված տեսակներով չի սահմանափակվում, կարելի է նշել նաև միջազգային ընդդատության այլ տեսակներ, սակայն նշված չորս տեսակներն առավել լայն տարածում ունեն, և հենց միայն դրանք ներկայացնելը կարող է ամբողջական լույս սփռել միջազգային ընդդատության ինստիտուտի վրա:

Միջազգային ընդհանուր ընդդատությունն այն է, երբ ազգային դատարանն իրեն իրավասու է համարում օտարերկրյա անձանց մասնակցությամբ այն գործերով, որոնցով պատասխանողը մշտապես բնակվում կամ գտնվում է դատարանի վայրի պետությունում¹: Ընդդատության այս տեսակը հենվում է այն տրամաբանության վրա, որ որտեղ մշտապես բնակվում կամ գտնվում է հայցվորը, ուրեմն այնտեղ էլ գտնվում է նրա գույքը կամ գույքի հիմնական մասը, և այդ պետության դատարանի կողմից քաղաքացիական գործը լսելով և վճիռ կայացնելով՝ հետազայում խնդիրներ առաջ չեն գա վճիռն ի կատար ածելու հարցում:

Միջազգային հատուկ ընդդատությունն այն է, երբ սուվերենը բացառապես չի սահմանափակվում պատասխանողի մշտական բնակության վայրի կամ գտնվելու վայրի հանգամանքով (որպիսի հանգամանքն առկա էր միջազգային ընդհանուր ընդդատության դեպքում) և ազգային դատարանին իրավասու է համարում օտարերկրյա անձանց մասնակցությամբ այլ գործերով ևս, օրինակ, երբ պատասխանողը տվյալ պետությունում չունի մշտական բնակության կամ գտնվելու վայր, սակայն պատասխանողը տվյալ պետությունում կարող է ունենալ գույք, կարող է տվյալ պետությունում ունենալ առանձնացված ստորաբաժանումներ, լինել տվյալ պետության քաղաքացի և այլն: Միջազգային հատուկ ընդդատության այս տեսակի տրամաբանությունն այն է, որ հայցվորի համար մեծանում է հնարավորությունների շրջանակը՝ իր իրավունքների պաշտպանության հասնել տարբեր պետություններում: Միջազգային հատուկ ընդդատության հիմքերը հստակ պետք է նշված լինեն օրենսդրությամբ, այդ շրջանակը փակ է և լայն մեկնաբանության չի կարող ենթարկվել:

¹Տե՛ս նույն տեղում, էջ 91:

Միջազգային հատուկ ընդդատությունը հայցվորին (իսկ առանձին դեպքերում նաև՝ հայցվորին և պատասխանողին համատեղ) հնարավորություն է տալիս ընտրություն կատարել տարբեր պետությունների դատարանների միջև՝ ելնելով նրանից, թե հատկապես որտեղ կարելի է առավել արդյունավետություն ապահովել: Այդ ընտրությունը հայտնի է **Forum Shopping** անվամբ¹, ինչը նշանակում է՝ «**հարմար դատարանի ընտրություն**»²: Forum Shopping-ը պատահական հանգամանքների վրա չի հենվում, այստեղ կարող են դեր խաղալ տարբեր գործոններ: Այսպես, հայցվորը կարող է Forum Shopping-ով ընտրել այն պետության դատարանը, որ պետության լեզվին և օրենսդրությանն ավելի լավ է տիրապետում, որ պետության արդարադատությանն ավելի է վստահում: Forum Shopping-ը նաև հայցվորին հնարավորություն է տալիս հասնել իր համար ցանկալի իրավական համակարգի կիրառման, եթե նա լավ գիտի ընտրված դատարանի վայրի պետության կոլիզիոն-իրավական կարգավորումները: Հայցվորը երբ վստահ է, որ վճռի կատարման առանձնակի դժվարություններ չի ունենա, նա կարող է Forum Shopping-ի միջոցով իր համար լրացուցիչ հարմարավետություն կամ դիրքային առավելություններ ապահովել: Բայց երբ վճռի կատարումը կապված է լուրջ դժվարությունների հետ, ապա հայցվորին խորհուրդ չի տրվում գայթակղվել Forum Shopping-ով և ավելի շուտ կողմնորոշվել դեպի այն պետության դատարանը, որտեղ բնակվում է կամ գտնվում է պատասխանողը:

Հատուկ ցանկանում ենք նշել, որ միջազգային ընդհանուր ընդդատությունը և միջազգային հատուկ ընդդատությունը հարաբերականորեն միմյանցից անկախ են, և միայն հայցվորն է որոշում, թե դրանցից որ մեկին է ձեռնադրել:

¹Տե՛ս IIIak X., նույն տեղում, էջ 102:

²<https://translate.google.com/#en/ru/Forum%20shopping>

³Միայն պայմանագրային ընդդատության դեպքում է, երբ այդ ընտրությունը կատարում է ոչ թե հայցվորը միանձնյա, այլ հայցվորը և պատասխանողը փոխադարձ համաձայնությամբ:

Արտակարգ միջազգային ընդդատությունն այն է, երբ հայցվորին իրավունք է վերապահվում հայց հարուցել այն պետության դատարան, որտեղ գտնվում է պատասխանողն այդ պահին, և դատարանը հնարավորություն ունի ծանուցելու պատասխանողին¹։ Արտակարգ միջազգային ընդդատությունը հայցվորին օպերատիվ գործելու հնարավորություն է տալիս հատկապես այն դեպքերում, երբ հայցվորը, զանազան հանգամանքներից ելնելով, չի կարող օգտվել ընդհանուր կամ հատուկ միջազգային ընդդատությունից։ Սա առաջին հայացքից գրավիչ է թվում հայցվորին, սակայն որքանով կարող է հետագայում հավանական լինել դատարանի վայրում վճիռի կատարումը, մնում է հարցականի տակ։ Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, արտակարգ միջազգային ընդդատության դեպքում վճիռը հիմնականում կանգնում է օտարերկրյա պետությունում ճանաչվելու և կատարվելու խնդրի առջև։ Միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինայում մերժողական վերաբերմունք կա արտակարգ միջազգային ընդդատության նկատմամբ, և խորհուրդ է տրվում հնարավորինս հրաժարվել ընդդատության այս տեսակից՝ որպես անարդյունավետ տարբերակից²։

Բացառիկ միջազգային ընդդատությունն այն է, երբ սուվերենն օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով իրավասու է համարում ազգային դատարանին առանձին, խիստ որոշակի դեպքերում՝ ելնելով ազգային-պետական շահերից³։ Բացառիկ միջազգային ընդդատության դեպքում հայցվորը չի կարող ընտրություն կատարել, այստեղ «ընտրությունը կատարում է» բացառապես սուվերենը⁴։ Բացառիկ միջազգային ընդդատության բացառիկությունը կայանում է ոչ միան նրա հիմքերի առանձնահատկությունների մեջ, այլև ընդ-

¹St' u Международное частное право: Учебник./ отв.ред. Г.К.Дмитриева/. 2-е изд. перераб. и доп. М. Проспект. 2004. 592-593 էջ։

²St' u Шак X., նույն տեղում, էջ 92։

³St' u Шак X., նույն տեղում, էջ 93-94։

⁴St' u Ануфриева Л.П. Международное частное право: В 3-х т. Том 3. Трансграничные банкротства. Международный коммерческий арбитраж. Международный гражданский процесс. Учебник. М. БЕК. 2001. էջ 316-317։

դատության այս տեսակն անտեսելու դեպքում՝ նախատեսվող իրավական հետևանքների մեջ, երբ սովորաբար ուղղակի կիրառարվի ճանաչել և կատարել օտարերկրյա դատարանի վճիռը: Դա նշանակում է, որ հայցվորը (իսկ պայմանագրային ընդդատության կիրառման բոլոր դեպքերում՝ նաև հայցվորն ու պատասխանողը) բոլոր այն դեպքերում, երբ կցանկանա ընտրություն կատարել միջազգային ընդդատության մյուս տեսակների միջև, նախնառաջ պետք է հավաստիանա նրանում, թե արդյոք լիովին տիրապետում է բացառիկ ընդդատության հիմքերին և արդյոք չի խախտում կամ շրջանցում բացառիկ ընդդատությունը: Իհարկե, հայցվորը կարող է շրջանցել բացառիկ ընդդատությունը և հայց հարուցել մեկ այլ պետության դատարանում, նրա համար իրավական հետևանքներ վրա չեն հասնի, եթե տվյալ պետությունում նա նաև օտարերկրյա վճիռը ճանաչելու և կատարելու անհրաժեշտություն չի ունենա: Բայց քանի որ ոչ ոք չի կարող բացառել նման հավանականությունը, ուստի կրկին և կրկին անգամ խորհուրդ է տրվում խստագույնս հաշվի նստել բացառիկ միջազգային ընդդատության պահանջների հետ:

Միջազգային ընդդատության վերոնշյալ չորս տեսակների լույսի ներքո վերլուծենք ՀՀ օրենսդրության ներկա վիճակը:

ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է. **«Հայաստանի Հանրապետության դատարաններն օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերը քննում են, եթե պատասխանողն ունի բնակության վայր կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում»:** Ինչպես նկատում ենք, ՀՀ օրենսդիրը նախ նախատեսում է ընդհանուր միջազգային ընդդատության տեսակը: Մակայն այս ձևակերպման մեջ առկա են մի շարք թերություններ, ինչպես նաև կարող են ծագել որոշ խնդիրներ: Այսպես, այս ձևակերպման մեջ չի հստակեցվում, թե պատասխանողի **«բնակության վայրը»** և **«գտնվելու վայրը»** որ անձին է վերաբերում: Մովորաբար բնակության վայրը վերաբերում է ֆիզիկական անձ-պատասխանողին, իսկ գտնվելու վայրն էլ վերաբերում է իրավաբանական անձ-պատասխանողին: Եթե մենք կոնկրետ պատասխանողների

մասով չհստակեցնենք ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը, ապա «գտնվելու վայրը» բառակապակցությունը կարող է պրակտիկայում մեկնաբանվել նաև հոգուտ ֆիզիկական անձ-պատասխանողի՝ տեղի տալով արտակարգ միջազգային ընդդատության արմատավորման: Մինչդեռ վերևում մենք արդեն նշել ենք, որ միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինան մերժում է արտակարգ միջազգային ընդդատությունը, ուստի նման անցանկալի մեկնաբանություններից գերծ մնալու համար վերաձևակերպումն իսկապես անհրաժեշտություն է դառնում¹: Ի դեպ, իրերի նման դատավորություն պահանջում է նաև ՀՀ մասնակցությամբ՝ *Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին Քիշնևի կոնվենցիան (այսուհետ՝ Քիշնևի կոնվենցիա)*, որի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում նշվում է. « Պայմանավորվող կողմերից որևէ մեկի տարածքում ընակության վայր ունեցող անձանց դեմ հայցերը անկախ նրանց քաղաքացիությունից, ներկայացվում են այդ Պայմանավորվող կողմի դատարաններ, իսկ իրավաբանական անձանց դեմ հայցերը ներկայացվում են այն Պայմանավորվող կողմի դատարաններ, որի տարածքում գտնվում է իրավաբանական անձի կառավարման մարմինը, նրա ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը»²:

ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածը կարգավորում չունի այն դեպքի, երբ օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործով հայցվորները մեկից ավելի են և նրանցից միայն մեկն է բնակվում կամ գտնվում Հայաստանում: Արդյոք նման դեպքերում ՀՀ դատարանն իրավասու է լսել բոլոր հայցվորների մասնակցությամբ քաղաքացիական գործը: Ընդունում ենք, որ այս դեպքը շատ խնդրահարույց չէ, և ողջամիտ մեկնաբանություններն առավել քան համոզիչ կարող են լինել, սա-

¹Իրավական մոտեցումը և օրենսդրական ձևակերպումներն այս տրամաբանության վրա են հենված նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (ավելի մանրամասն տե՛ս՝ Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под ред. П.В.Крашенинникова. М. Статут. 2012, էջ 537):

²<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24598>

կայն նաև իրավական կարգավորման ամբողջականությունից ելնելով՝ կարելի է համապատասխան նորմ նախատեսել և հարցը չթողնել մեկնաբանություններին: Ջուտ համեմատական ճանաչողության համար մեջբերում ենք Քիշնևի կոնվենցիայի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության դրույթը. «Եթե

գործին մասնակցում են մի քանի պատասխանողներ, որոնք բնակության վայր (գտնվելու վայր) ունեն տարբեր Պայմանավորվող կողմերի տարածքներում, ապա

վեճը քննվում է ըստ ցանկացած պատասխանողի բնակության վայրի (գտնվելու վայրի)՝ հայցվորի ընտրությամբ»:

ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում է.

Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն նաև քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե՝

1) այդ մասին առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ իրավաբանական անձի և օտարերկրյա անձի միջև համաձայնություն.

2) պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք.

3) ապահարգանի վերաբերյալ գործով՝ ամուսիններից թեկուզև մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է.

4) առողջությանը, ինչպես նաև կերակրողի մահվամբ պատճառված վնասի վերաբերյալ գործով վնասը պատճառվել է Հայաստանի Հանրապետության տարածքում.

5) գույքին պատճառված վնասը հատուցելու գործով վնասի հատուցման պահանջը ներկայացնելու համար հիմք ծառայած գործողությունը կամ այլ հանգամանքը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում.

6) օտարերկրյա անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

7) հայցը բխում է պայմանագրից, որով կատարումը տեղի է ունեցել կամ պետք է տեղի ունենա Հայաստանի Հանրապետության

տարածքում.

8) հայցը բխում է Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած անհիմն հարստացումից:

Բոլոր այս դեպքերը ՀՀ օրենսդրությամբ ուրվագծում են հայցվորի՝ Forum Shopping-ի հնարավորությունները: Ընդհանուր առմամբ՝ սա ընդունված այն շրջանակն է, որը մենք սովորաբար հանդիպում ենք օտարերկրյա և միջազգային օրենսդրությամբ, սակայն ՀՀ օրենսդրությամբ որոշ մոտեցումներ կարիք ունեն ճշգրտման և լրացման:

ՀՀ Forum Shopping-ի տարբերակները չպետք է հնարավորություն ստեղծեն այս կամ այն հիմքի հետ չառնչվող հարաբերություններից ծագող վեճերով ծանրաբեռնել ՀՀ դատարաններին: Այսպես, ՀՀ գործող իրավակարգավորումից կարող է հետևել, որ ապահարգանի գործով, երբ պատասխանողը ՀՀ-ում չի բնակվում, ինչպես նաև ամուսիններից որևէ մեկը ՀՀ քաղաքացի չի հանդիսանում, սակայն ՀՀ դատարանն իրեն իրավասու պետք է համարի հենց միայն այն հիմքով, որ ապահարգանվող ամուսիններից պատասխանող կողմը գույք ունի Հայաստանում: Շատ ձևական և անհեթեթ է հնչում, երբ ոչ գույքային վեճերով ՀՀ դատարանը կարող է իրավասու լինել Հայաստանում՝ պատասխանողի գույքի առկայության հիմքով: Նման անտեղի ձևականություններից զերծ մնալու համար անհրաժեշտ է ուղղակի ՀՀ քաղ.դատ.օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-րդ ենթակետը ձևակերպել հետևյալ կերպ. **«գույքային վեճերով՝ պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք»:**

ՀՀ քաղ.դատ.օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասի 3)-րդ ենթակետում ՀՀ օրենսդիրն ազգային դատարանին իրավասու է համարել միայն այն ապահարգանի գործերով, երբ ամուսիններից թեկուզև մեկը ՀՀ քաղաքացի է: Օտարերկրյա փորձը ցույց է տալիս, որ օտարերկրյա անձանց մասնակցությամբ ապահարգանի վերաբերյալ գործերով հաշվի է առնվում ոչ միայն ամուսիններից որևէ մեկի պատկանելությունը տվյալ պետության քաղաքացիությանը, այլև տվյալ պետությունում հայցվոր-ամուսնու մշտական բնակության հանգաման-

քր¹: Հայցվոր-ամուսնու մշտական բնակության հանգամանքը վկայում է, որ նա իրեն կապված է համարում նաև տվյալ պետության հետ, որ մշտական բնակության բերումով՝ հայցվոր-ամուսինն առավել ինտեգրված է հենց այդ պետությունում, որ նրան առավել ծանոթ է հենց այդ պետության իրավական համակարգը, և հենց այդ պետությունում նա կարող է առավել արդյունավետորեն կազմակերպել իր իրավունքների պաշտպանությունը: Ելնելով իրերի նման դրությունից և միևնույն ժամանակ հաշվի առնելով օտարերկրյա իրավական փորձը՝ առաջարկվում է ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասի 3)-րդ ենթակետը վերաշարադրել հետևյալ կերպ՝ **«ապահարգանի վերաբերյալ գործով՝ հայցվորը մշտական բնակության վայր ունի Հայաստանի Հանրապետությունում, կամ ամուսիններից թեկուզև մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է»:**

Հիմք ընդունելով Քիշնևի կոնվենցիայի իրավակարգավորումները², որոնք միաժամանակ ՀՀ իրավակարգավորումների մասն են կազմում, և ելնելով դրանց ներդաշնակեցման հրամայականից, ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասի 7)-րդ ենթակետում անհրաժեշտ է կատարել լրացում և ներառել նաև այն դեպքերը, երբ պայմանագիրը ոչ միայն լրիվ, այլև մասնակիորեն կարող է կատարվել ՀՀ-ում: Այդ ենթակետը կարող է ունենալ հետևյալ ձևակերպումը. **«հայցը բխում է պայմանագրից, որով կատարումը լրիվ կամ մասնակիորեն՝ տեղի է ունեցել կամ պետք է տեղի ունենա Հայաստանի Հանրապետության տարածքում»³:**

ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասում դելիկտային հարաբերություններից բխող վեճերը վերաբերում են միայն գույքին և

¹St 'u Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под.ред.П.В.Крашенинникова. М. Статут. 2012. էջ 538:

²<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24598>

³Իրավական համեմատության համար ավելի մանրամասն տես նաև՝ Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под.ред.П.В.Крашенинникова. М. Статут. 2012. էջ 538:

անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը, սակայն հաշվի չի առնվել անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը: Կրկին հիմք ընդունելով Քիշնևի կոնվենցիայի իրավակարգավորումները¹՝ անհրաժեշտ է ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասով Forum Shopping-ը լրացնել նաև հետևյալ հիմքով. «**պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հայցով քաղաքացի հանդիսացող հայցվորն ունի մշտական բնակչության վայր կամ իրավաբանական անձ հանդիսացող հայցվորն ունի գտնվելու վայր Հայաստանի Հանրապետությունում**»:

ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին ենթակետում նախատեսվում է պայմանագրային ընդդատության ինստիտուտն առանց որևէ վերապահման կամ սահմանափակման: Այն խաբուսիկ տպավորությունն է ստեղծվում, իբրև կողմերը պայմանագրային պայմանավորվածությամբ Հայաստանի դատարանին կարող են իրավասու դարձնել՝ լսելու օտարերկրյա անձանց մասնակցությամբ ցանկացած քաղաքացիական գործ: Իրականում պայմանագրային ընդդատության հնարավորությունները բավական սահմանափակ են, և դա կապված է ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով նախատեսվող՝ միջազգային բացառիկ ընդդատության պահանջների հետ: Օրինակ, Քիշնևի կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է.

1. Պայմանավորվող կողմի դատարանները կարող են գործեր քննել նաև այլ դեպքերում, եթե առկա է վեճն այդ դատարաններին հանձնելու վերաբերյալ կողմերի գրավոր համաձայնությունը, որը ձեռք է բերվել մինչև գործն ըստ էության քննելը(ընդգծ. մերն է):²

Ընդ որում՝ սույն Կոնվենցիայի նորմերից, որոնք սահմանված

¹<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24598>

²Ընդգծված դրույթը ևս կարևոր հստակեցում է մտցնում իրավակարգավորումներում. ՀՀ քաղ. դատ օրենսդրությունը նման նորմ չի նախատեսում: Մեր համոզմամբ, անհրաժեշտություն է զգացվում այդպիսի հստակեցում ունենալ նաև միջազգային ընդդատությունը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ:

են սույն բաժնի I-V մասերով, ինչպես նաև համապատասխան Պայմանավորվող կողմի ներքին օրենսդրությունից բխող բացառիկ ընդդատությունը չի կարող փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

Ի դեպ, այս նորմերը նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, բայց փաստորեն հակադրություն է առաջ գալիս ՀՀ ներպետական-իրավական և ՀՀ միջազգային-իրավական մոտեցումների միջև: Միննույնն է, ներպետական-իրավական մոտեցումը չի կարող անտեսել միջազգային-իրավական մոտեցումը, հետևաբար նաև քաղաքացիական գործով կողմերը չեն կարող օգտվել ընձեռված «անսահմանափակ ազատությունից»: Այս պարագայում ընդամենն անհրաժեշտ է ներպետական աղբյուրի՝ ՀՀ քաղ. դատ. օր. 244-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին ենթակետը ևս լրացնել կանխարգելիչ դրույթով, ինչպես այդ արված է Քիշնևի կոնվենցիայում.

«1)այդ մասին առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ իրավաբանական անձի և օտարերկրյա անձի միջև համաձայնություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ իրավաբանական անձի և օտարերկրյա անձի միջև համաձայնությամբ չի կարող փոփոխվել ՀՀ օրենքով և միջազգային պայմանագրերով սահմանված բացառիկ ընդդատությունը»:

Ամփոփելով միջազգային ընդդատությունը կարգավորող ՀՀ ներպետական օրենսդրական կարգավորումները ՀՀ միջազգային-իրավական կարգավորումների հետ համեմատության տիրույթում՝ արձանագրում ենք, որ ՀՀ օրենսդրությունը խիստ կարիք ունի ինչպես առկա օրենսդրական բացերը լրացնելու, այնպես էլ քաղաքացիական շրջանառության նոր պահանջներին համահունչ՝ նոր զարգումներ ապահովելու:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕЖДУНАРОДНОЙ ПОДСУДНОСТИ ПО ГРАЖДАНСКИМ ДЕЛАМ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ АРМЕНИИ

Армен Айкянц

*Профессор кафедры гражданского права ЕГУ,
доктор юридических наук*

В процессе правового регулирования международных частно-правовых отношений исключительно важную роль играют вопросы международной подсудности. Международная подсудность не только создает комфортные условия для сторон при регулировании правовых споров между ними, но и в некоторых случаях оказывает влияние на исход дела.

Законодательство Республики Армения было проанализировано в контексте международно-правовых источников, были представлены основные виды международной подсудности (общая, специальная, чрезвычайная, исключительная) и их проявление в законодательстве Армении. В результате подробного исследования нынешнего состояния регулирования института международной подсудности в Армении были выявлены некоторые правовые проблемы и сделаны конкретные предложения по их решению.

Повышение степени правового регулирования международной подсудности создаст дополнительные условия для развития международного частного оборота в нашей республике.

SOME PROBLEMS OF INTERNATIONAL JURISDICTION IN CIVIL CASES IN THE LEGISLATION OF ARMENIA

Armen Haykyants

*Professor of the YSU Chair of Civil Law,
Doctor of Legal Sciences*

In the process of legal regulation of international private law relations, the question of the international jurisdiction plays an extremely important role. International jurisdiction creates not only favorable conditions for the parties in the direction of the regulation of legal disputes between them, but also in some cases, it affects the outcome of the case.

The legislation of the Republic of Armenia has been studied through cross analysis of international legal sources; the main types of international

jurisdiction were presented: common, special, extraordinary, exclusive, and their manifestation in the Armenian legislation. As a result of a detailed study of the current state of regulation of the institute of international jurisdiction in Armenia, we have identified certain legal problems and made concrete proposals to address them.

We have concluded that the increasing degree of legal regulation of international jurisdiction will create additional conditions for the development of private international relations in our country.

Բանալի բառեր – *ընդատություն, միջազգային, ընդհանուր, հատուկ, արտակարգ, բացառիկ, իրավատություն, դատարան, հայցվոր, պատասխանող, կողմեր:*

Ключевые слова: *подсудность, международный, общая, специальная, чрезвычайная, исключительная, компетенция, суд, истец, ответчик, стороны.*

Key words: *jurisdiction, international, common, special, extraordinary, exclusive, competence, court, claimant, defendant, sides.*

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵԼԻԿՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրիգոր Բեքմեյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու

Իրավաբանական գրականությունը որպես պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմք դիտում է հետևյալ չորս հանգամանքները՝ վնասի առկայությունը, վնաս պատճառողի գործողությունների հակաիրավական բնույթը, վնաս պատճառողի գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապը և վնաս պատճառողի մեղքի առկայությունը: Սրանցից առաջին երեքը ունեն օբյեկտիվ, իսկ վերջինը՝ սուբյեկտիվ բնույթ¹:

Վնասի համար պատասխանատվության առաջացման բոլոր վերը թվարկված պայմանները ունեն իրավական ուսումնասիրության անհրաժեշտություն, սակայն դրանց թվում, մեր կարծիքով, առանձնահատուկ ուսումնասիրության է արժանի վնաս պատճառողի գործողությունների հակաիրավությունը: Հակաիրավական է համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է իրավական ակտը, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը²:

Գործողությունը անձի նպատակադրված և կամային արարքն է, որի արդյունքում կարող է խախտվել սեփականության, ինչպես նաև կյանքի կամ առողջության իրավունքը: Կան գործողություններ, որոնք ունեն հակաիրավական հատկանիշներ, բայց պատասխանատվություն չեն առաջացնում: Օրինակ՝ գործողությունը պատասխանատվություն չի առաջացնի, եթե վնասը պատճառվել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում (ՀՀ Քաղ. օր., հ. 1060), եթե վնաս է

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երրորդ մաս, ԵՊՀ հատարակչություն, Երևան, 2010թ., էջ 13:

² Տե՛ս <http://www.bibliotekar.ru/kodex-grazhdanskiy/61.htm>, <http://stgkrf.ru/1064>.

պատճառովել տուժողի խնդրանքով (ՀՀ Քաղ. օր., հ. 1058, մաս 4): Սակայն պետք է նշել, որ եթե վնաս պատճառելու ժամանակ անձը անցել է անհրաժեշտ պաշտպանության սահմանները, ապա վնասի հատուցումը չի կարող մերժվել (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ):

Վնասը կարող է պատճառվել նաև անգործությամբ: Անգործությունը համարվում է հակաիրավական այն դեպքում, երբ գործողություն կատարելը եղել է անձի պարտականությունը, սակայն անձը չի կատարել այն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Անշուշտ, տարակարծությունների տեղիք չի տալիս այն հանգամանքը, երբ քաղաքացին պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով պատճառված վնասի համար, օրինակ՝ մեքենան վարելիս հարվածում է մեկ այլ մեքենայի: Սակայն, մեր կարծիքով, վիճելի է այն հարցը, թե արդյո՞ք քաղաքացին ենթակա է պատասխանատվության, երբ վնասը պատճառվել է վերջինիս անգործության արդյունքում՝ օրինակ, տեսնելով, որ անձը խեղդվում է լճում, ավում գտնվող քաղաքացին չի փորձում օգնել վերջինիս, չի կանչում օգնության, և խեղդվողը մահանում է: Արդյո՞ք մահացածի իրավահաջորդները իրավունք կունենան վնասի հատուցում պահանջելու այն անձից, ով, գտնվելով լճափին, կարող էր կատարել գործողություններ, որոնք կփրկեին խեղդվողին, սակայն չի կատարել: Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական գրականության մեջ առկա է կարծիք, ըստ որի «գործողություն» ասելով պետք է հասկանալ նաև անգործությունը, ուստի անհմաստ է լրացուցիչ ուսումնասիրել գործողության և անգործության տարբերությունը կամ անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցումը¹:

Խնդիրը ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու և արդ-

¹ St' u Peter Cane "The Anatomy of Tort Law" Hart Publishing, Oxford 1997, էջ 63:

յունավետ քննարկելու համար կցանկանայինք անգործության հետևանքով առաջացած վնասի համար պատասխանատվության հարցը քննարկելիս հատկապես ուշադրություն դարձնել այն անձանց, ովքեր, ի պաշտոնե կամ աշխատանքի բնույթից ելնելով պարտավոր են կատարել գործողություններ՝ ուղղված վնասը կանխելուն:

Քանի որ այս խմբի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը սերտորեն կապված է դրանցում ընդգրկված անձանց անգործության և առաջացած վնասի միջև պատճառական կապի առկայության կամ բացակայության հետ, կցանկանայինք անդրադառնալ պատճառական կապին՝ որպես անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության անհրաժեշտ պայմանի: Իրավաբանական գրականության մեջ անգործության հետևանքով առաջացած վնասի և անգործության ու վնասի միջև առկա պատճառական կապի վերաբերյալ արտահայտվել են տարատեսակ կարծիքներ: Հեղինակների մի մասի կարծիքով մեկի կողմից մյուսին չօգնելը ինքնին վնասի առաջացում է, առկա է պատճառական կապ, ուստի անգործության հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվության առանձնահատուկ ուսումնասիրության կարիք չկա, քանզի սա ուղղակի վնասի պատճառման ինքնուրույն տարատեսակ է: Իրավաբան գիտնականների մեկ այլ խմբի կարծիքով, անգործության հետևանքով առաջացած վնասը ինքնին չի ենթադրում, որ այն պատճառվել է անգործության հետևանքով, և նույնիսկ եթե անձի պարտականությունն է մեկ ուրիշին փրկելը, և նա ձախողում է դա, սա դեռ չի նշանակում, որ այդ անձը պետք է ենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության¹:

Ի լրումն վերոնշյալ երկու տեսակետների՝ գտնում ենք, որ ամեն դեպքում անգործության հետևանքով առաջացած վնասի համար

¹ Այս մասին մասնավորապես տե՛ս Michael D. Bayles and Bruce Charman "Justice, Rights and Tort Law" D. Reidel Publishing Company Dordrecht/Boston 1983, էջ 216-217, H.L.A.Hart and A.M. Honore, Causation in the Law (Oxford, Clarendon Press, 1959), էջ 61-62:

պատասխանատվության հարցը քննարկելիս անպայման պետք է ուշադրություն դարձնել հատկապես պատճառական կապին, քանզի, մեր կարծիքով, քննարկվող հարաբերությունների ժամանակ հենց պատճառական կապն է այն անհրաժեշտ պայմանը, որը կարող է պատասխանատվության հիմք հանդիսանալ անգործություն դրսևորած քաղաքացու համար: Նշված ենթատեքստում պատճառական կապի ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ անգործության և վնասի միջև պատճառական կապի հիմնավորումը ավելի մեծ դժվարություն է ներկայացնում, քան գործողության և վնասի միջև այդ կապի առկայության հիմնավորումը: Իսկ իրավաբանական գրականությունը և դատական պրակտիկան ընդունում են, որ վնասի և արարքի միջև պատճառական կապը պետք է լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող պատասխանատվության պայման դառնալ¹: Այսպիսով, ակնհայտ է, որ, որպեսզի անգործություն դրսևորած անձը ենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին վնասը պատճառված լինի անմիջապես վնաս պատճառողի անգործության հետևանքով²:

Հարկ ենք համարում նշել նաև, որ, մեր կարծիքով, միայն անգործության և պատճառական կապի անհրաժեշտ առկայության ուսումնասիրությունը բավարար չէ անգործության հետևանքով ծագած վնասի հատուցման պարտավորությունների առաջացման համար: Քննարկվող հարաբերություններում, ինչպես ցանկացած արտապայմանագրային պարտավորության առաջացման դեպքում, կարևորվում է նաև մեղքի առկայությունը: Այսինքն, որքանով է վնաս պատճառողը գիտակցել, որ իր անգործության հետևանքով դիմացինին կարող է վնաս պատճառվել: Եվ գիտակցելով հանդերձ՝ արդյո՞ք նա

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, ԵՊՀ հատարակչություն, Երևան, 2001թ., էջ 608, նաև՝ Гражданское право, обязательственное право, учебник, էջ 613:

² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin "Tort Law" Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջեր 163-192:

հնարավորություն է ունեցել իր գործողություններով կանխել վնաս պատճառելը:

Եվ այսպես, վերոնշյալ խումբ անձանց թվին կարելի է դասել մասնագիտական այնպիսի աշխատանք կատարողներին, ինչպիսիք են ոստիկանները, հրշեջները, փրկարարները, բժիշկները և այլք: Թվարկված անձանց աշխատանքը այն է, որ վերջիններս կոչված են իրենց գործողություններով պաշտպանել քաղաքացիների կյանքը և առողջությունը, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը: Ոստիկանական մարմինները, հրշեջ կամ փրկարար ծառայությունները ֆինանսավորվում են հարկատուների հաշվին, այսինքն՝ քաղաքացիները վճարում են վերջիններիս իրենց անվտանգ զգալու համար, այս մարմինների աշխատակիցները, ընդունվելով աշխատանքի, գիտակցում են դրա վտանգավորությունը, ուստի նրանց կողմից անգործությունը, այսինքն՝ իրենց առջև դրված պարտականությունները չկատարելը, անշուշտ, պետք է դիտել որպես վնաս առաջացնող գործոն և վնասը հատուցելու պարտականությունը դնել այդ մարմինների վրա: Հատկանշական է, որ նմանատիպ կարծիք արտահայտվել է նաև արևմտաեվրոպական իրավաբանական գրականության մեջ¹: ՀՀ Քաղ. օր.-ը նախատեսում է պատասխանատվություն պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար (հոդված 1063): Անշուշտ, ոստիկանությունը, հրշեջ մարմինները, համաձայն ՀՀ օրենսդրության, դասվում են պետական մարմինների թվին, ուստի հոդվածը կարգավորում է այս անձանց անգործության հետևանքով քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի պատասխանատվության հարցը, որը պետք է կրի Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Սակայն, մեր կարծիքով, բաց է մնում փրկարարների և բուժօգնականների պատասխանատվության հարցը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կան բազմաթիվ մասնա-

¹ St' u Michael D. Bayles and Bruce Charman, նշված աշխատությունը, էջ 214:

վոր բուժհիմնարկներ, իսկ նախկինում պետական համարվող բուժ-
հիմնարկները այժմ հանդիսանում են բաժնետիրական ընկերու-
թյուններ, ուստի և իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ: Անշուշտ,
կարելի է պնդել, որ Հայաստանի Հանրապետությունում փրկարա-
րական ծառայությունները նույնպես գտնվում են պետական համա-
կարգում, ուստի այս մարմինների աշխատակիցների անգործության
հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման Քաղ. օր.
1063 հոդվածի կանոններով: Սակայն չկարգավորված է մնում մաս-
նավոր փրկարարական կազմակերպությունների (որպես օրինակ
կարելի է նշել Սևանի ավազանում, Ջրաշխարհում և այլուր գործող
փրկարարներին) մարմինների անգործության հետևանքով պատ-
ճառված վնասի հատուցումը: Այս խումբ սուբյեկտների անգործու-
թյան հետևանքով պատճառված վնասի հատուցումը կարող է կա-
տարվել երկու տարբերակով.

ա) տուժողների և այս սուբյեկտների միջև առկա են պայմանագ-
րային հարաբերություններ, օրինակ, քաղաքացին, գնալով Ջրաշ-
խարհ և գնելով մուտքի տոմս, մտնում է Ջրաշխարհի հետ քաղաքա-
ցիաիրավական պայմանագրային հարաբերությունների մեջ, և ծա-
ռայություն մատուցող կազմակերպության պարտականությունն է ա-
պահովել քաղաքացու անվտանգությունը: Ուստի, եթե փրկարարի
անգործության պատճառով քաղաքացուն վնաս պատճառվի, կարող
են կիրառվել պայմանագիրը չկատարելու հետևանքով պատասխա-
նատվության քաղաքացիաիրավական նորմերը: Նույնը կարելի է ա-
սել նաև բուժհիմնարկների մասին, և՝

բ) գործի իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար ի-
րավաբանական անձի պատասխանատվության դրույթը՝ Քաղ. օր.,
հոդված 1062: Նույն մոտեցումը կարող է կիրառվել նաև բուժհիմ-
նարկների աշխատակիցների կողմից պատճառված վնասի դեպքում:

Խոսելով հակաօրինակական գործողության կամ անգործության
մասին՝ որպես պատասխանատվություն առաջացնող հիմքի,
անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև քաղաքացիաիրա-
վական պատասխանատվության քննարկմանը այն դեպքում, երբ

վնասը պատճառվել է օրինական գործողություններով, մասնավորապես ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

ՀՀ Քաղ. օր.-ի 1061 հոդվածը սահմանում է, որ ծայրահեղ անհրաժեշտության, այսինքն՝ վնաս պատճառողին կամ այլ անձանց սպառնացող վտանգը վերացնելու պայմաններում պատճառված վնասը, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարող վերացվել այլ միջոցներով, պետք է հատուցի վնաս պատճառած անձը: Այնուհետև հոդվածը ավելացնում է, որ հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները՝ դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա՝ ի շահ որի գործել է վնաս պատճառողը, կամ վնաս հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնասը պատճառողին:

Այսպիսով, հոդվածից ակնհայտ է դառնում, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի դեպքում քաղաքացիաիրավական հարաբերություններ են առաջանում վնաս պատճառողի և տուժողի կամ այն երրորդ անձի համար, ում շահերը պաշտպանվել են: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, ծայրահեղ անհրաժեշտության վիճակը իրենից ներկայացնում է կայուն և կրկնվող իրավաբանական հարաբերություն, որը առաջանում է որոշակի հատկանիշների ամբողջությամբ, որոնց թվում առկա է ոչ միայն մեծ վնաս պատճառելու ռիսկը, այլև տարբեր վնասներ պարտադիր պատճառելու հնարավորությունը¹: Ընդ որում, ինչպես նշում են հեղինակները, պատճառված վնասը պետք է ավելի նվազ լինի կանխվող վնասից: Քանի որ իրավական պրակտիկայում ծայրահեղ անհրաժեշտությամբ պատճառված վնասի դրույթը շատ քիչ է կիրառվում, ուստի դժվարանում է պրակտիկ օրինակներ բերելը: Սա դժվարացնում է նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչ կարգով պետք է որոշվի՝ արդյոք կոնկրետ անձը գործել է ծայրահեղ

¹ St' u նաև С.Е. Донцов, В.В. Глянец, Возмещение вреда по советскому законодательству, М, 1990, էջ 258:

անհրաժեշտության վիճակում, ո՞րն է պարտադիր ռիսկի աստիճանը¹:

Այս հարցին, կարծում ենք, կարող է պատասխանել կոնկրետ իրավական ակտը, որը կարգավորում է այս կամ այն աշխատողի, պաշտոնատար անձի գործունեությունը: Որպես օրինակ կարելի է նշել առողջապահության մասին, զինծառայության մասին, ոստիկանության մասին օրենսդրությունները և այլն: Այս նորմատիվ ակտերի հիման վրա տարբեր մասնագիտության ներկայացուցիչները պարտավորվում են իրականացնել որոշակի ռիսկի հետ կապված գործողություններ: Ինչպես նշում են իրավագետները. «Սա հնարավորություն կտար պնդելու, որ զինծառայողները, միլիցիայի, հակահրդեհային պաշտպանության և մի շարք այլ կատեգորիայի աշխատողները, որոնք իրենց վրա դրված կամ կամավոր ընդունած ծառայողական, հասարակական պարտականությունների կամ հասարակական օգտակար պարտավորությամբ չեն կարող խուսափել իրենց առողջությունը կամ կյանքը վտանգելուց՝ պաշտպանելու համար կարևորագույն հասարակական հարաբերությունները և շահերը, չեն կարող հղում կատարել ծայրահեղ անհրաժեշտությանը: Իրենց պարտականությունները կատարելուց խուսափելու դեպքում այս անձինք պետք է կրեն կարգապահական, հասարակական կամ քրեական պատասխանատվություն»²:

Այսպիսով, այն անձանց համար, ում աշխատանքում առկա է ռիսկի գործոնը, համաձայն վերոնշյալ տեսակետի, ծայրահեղ անհրաժեշտության վիճակ չի կարող առաջանալ աշխատանքային պարտականությունները իրականացնելիս: Օրինակ՝ հրեջեները չեն կարող գերծ մնալ կրակը մարելուց և դրանով իսկ փրկելուց որոշակի գույք՝ հղում կատարելով այն բանին, որ իրենք վտանգում են իրենց կյանքը: Վերոնշյալ տեսակետը վիճելի է: Ճիշտ է, այս կատեգորիայի աշխատողները պարտավոր են աշխատել իրենց կյանքի համար ռիսկային պայմաններում, բայց, կարծում ենք, անհրաժեշտ են կոնկ-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս С.Е. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 259:

րետ նորմատիվ ակտեր, որոնք կապահովեն նաև նրանց կյանքի և առողջության պաշտպանությունը, ինչպես նաև կտարանջատեն պահանջվող ռիսկի աստիճանները:

Եթե վնասը պատճառվում է առավել վտանգի աղբյուրի տիրոջ կողմից ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, ապա առաջանում է վիճելի մի իրավիճակ՝ սահմանել պատասխանատվություն և վնասի հատուցում Քաղ. օր. 1072 հոդվածով, ուստի և պատասխանատվություն՝ առանց մեղքի¹, թե՞ 1061 հոդվածի հիմքերով, որը թույլ է տալիս վնասը հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա, ում շահերից ելնելով՝ գործել է վնաս պատճառողը, կամ էլ լրիվ կամ մասնակիորեն ազատել վնաս հասցնողին և երրորդ անձին վնասը հատուցելու պարտականությունից: Դատական պրակտիկան այս հարցում կողմնորոշվում է հարցի լուծման հետևյալ երկու տարբերակներով.

ա) առավել վտանգի աղբյուրով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում հասցված վնասի դեպքում անհրաժեշտ է կիրառել Քաղ. օր.-ի այն հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար, քանի որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանող հոդվածը նկատի ունի իրավաչափ վնասը,

բ) առավել վտանգի աղբյուրով դիտավորյալ իրավաչափ վնաս հասցնելու ժամանակ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանող հոդվածը չի կարող կիրառվել, քանի որ դիտավորյալ վնաս պատճառելու հասկացությունը չի կարող համատեղվել առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության հետ²:

Առավել վտանգի աղբյուրի տիրոջ՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարած գործողությունների համար պատասխանատվությունը չպետք է արմատապես ազդի ծայրահեղ անհրաժեշ-

¹ Տե՛ս, С.Е. Донцов, М.Я. Маринина, Имущественная ответственность за вред причиненный личности. М., 1986г., էջ. 46:

տության պայմաններում կատարված իրավախախտման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի վրա: Առավել վտանգի աղբյուրի տերը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործում է իրավաչափ, և նրա այս կարգավիճակը չի տարբերվում մյուս վնաս պատճառողների կարգավիճակից: Այս պատճառով դատարանները կարիք չունեն պարզելու, թե արդյոք ծայրահեղ անհրաժեշտության վիճակի ծագումը հանդիսացել է կոնկրետ իրի վնասակար հատկությունների հետևանք, թե՞ բավարար է միայն հաստատել այն հանգամանքը, որ վնասը տուժողին պատճառվել է առավել վտանգի աղբյուրով և ոչ այլ օբյեկտով:

Առավել վտանգի աղբյուրի՝ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում գործող տիրոջ պատասխանատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունը պետք է արտահայտվի նրանում (ներառելով նաև պատասխանատվությունից լրիվ կամ մասնակիորեն ազատելու հնարավորությունը), որ դատարանը, նկատի ունենալով կամ տուժողի մեղքը (եթե վերջինս առկա է), կամ էլ այն անձի մեղքը, ում շահերից ելնելով՝ գործել է վնաս պատճառողը, իրավունք ունի հաշվի առնելու միայն այս անձանց կոպիտ անգուշությունը կամ դիտավորությունը: Ինչպես նշում են հեղինակները, անհաղթահարելի ուժը ինքնին բացառում է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակի առկայությունը, քանի որ անհաղթահարելի ուժի պայմաններում բացառվում է ցանկացած գիտակցված վնասի պատճառում¹: Թերևս կարելի է չհամաձայնվել հեղինակների վերոնշյալ կարծիքի հետ, քանի որ կյանքում հնարավոր են դեպքեր, երբ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում անհրաժեշտություն առաջանա վնաս հասցնելու մեկին կամ մի քանիսին՝ ավելի մեծ թվով անձանց կյանքը փրկելու համար: Օրինակ, եթե անտեսանելիության պայմաններում թույլատրվի ինքնաթիռի վայրէջքը մայրուղու վրա՝ դրանով իսկ վտանգելով մայրուղում երթևեկող ավտոմեքենաների ուղևորների առողջությունը:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության մասին՝ նշենք, որ ծայ-

¹ Ст'ю С.Е. Донцов, М.Я. Маринина, նույն տեղում:

րահեղ անհրաժեշտության վիճակում հասցված կարող է դիտվել միայն այն վնասը, որի պատճառամբ կանխվել է մեկ այլ շատ ավելի մեծ վնաս, օրինակ, մեկ անձի կյանքը կամ առողջությունը վնասելու շնորհիվ կանխվել է մի քանի անձանց կյանքին կամ առողջությանը հասցվելիք վնասը, կամ, որ ավելի հավանական է, գույքին վնաս պատճառվելով՝ կանխվել է առողջությանը պատճառվող վնասը: Շատ կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ պետք է ուշադրություն դարձնել, թե արդյոք հնարավոր է եղել վնասը կանխել այլ միջոցներով: Եթե այդպիսի հնարավորություն եղել է, ապա հասցված վնասը, կարծում ենք, չի կարող դիտվել որպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված:

Ինչպես նշվեց վերը, Քաղ. օր.-ը սահմանում է, որ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում պատճառված վնասը ենթակա է հատուցման վնաս պատճառած անձի կողմից: Օրենսգիրքը նաև նշում է, որ, հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները, դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա, ի շահ որի գործել է վնաս պատճառողը, կամ վնասը հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնաս պատճառողին:

Հոդվածը, ըստ էության, բավական լայն լիազորություններ է դրել դատարանների վրա՝ վերջիններիս տալով հնարավորություն՝ պարզելու, թե երբ պետք է պատասխանատվությունը դնել վնաս պատճառողի և երբ՝ երրորդ անձի վրա, ում շահերից ելնելով՝ գործել է վնաս պատճառողը:

Ենթադրվում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը նկատի ունի երրորդ անձի մոտ ծայրահեղ անհրաժեշտության վիճակի առաջացման համար մեղքի առկայությունը կամ բացակայությունը, իսկ եթե առկա է մեղքը, ապա՝ դրա աստիճանը: Կարծում ենք, այս սուբյեկտիվ հանգամանքների կողքին դեր պետք է ունենան նաև մի շարք օբյեկտիվ հանգամանքներ, ինչպիսիք են՝ կողմերի նյութական դրությունը, վնասի պատճառման ձևը և այլն:

Կցանկանայինք նշել մի կարևոր փաստ եւ. ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հասցված վնասի դեպքում վնաս է հասցվում ոչ թե վտանգավոր իրավիճակ ստեղծող անձին, այլ այն սուբյեկտներին, որոնք անմիջական կապ չունեն վտանգավոր իրավիճակի ստեղծման հետ: Եթե վնաս հասցվի վտանգավոր իրավիճակ ստեղծող սուբյեկտին, ապա մենք գործ կունենանք անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի հետ:

Անդրադառնալով ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի կիրառման միջազգային փորձին՝ կցանկանայինք նշել, որ, օրինակ, ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ ընդունվում է, որ ոչ քրեական և ոչ էլ քաղաքացիական իրավախախտում է հանդիսանում մեկ անձի վնաս հասցնող գործողությունը, որը միակ միջոցն է կանխելու ավելի մեծ վնասի ծագումը այն անձի համար, ով կատարել է այդ գործողությունը: Ընդհանուր սկզբունքից ելնելով՝ այս դեպքում դատական պրակտիկան խոսում է անհաղթահարելի ուժի մասին, սակայն իրականում, ինչպես գտնում է Լ. Շյուլիո դե լա Մորանդերը, այստեղ չկա անհաղթահարելի ուժ¹: Ընդհակառակը, գտնում է հեղինակը, ծայրահեղ անհրաժեշտությունը ենթադրում է երկու որոշումներից մեկի ազատ ընտրություն՝ վնաս պատճառելու ռիշիկն, թե՞ ենթարկվել անխուսափելի վտանգին: Այնուամենայնիվ, ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ նույնպես նշվում է, որ ուրիշին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության դեպքում պետք է հանդիսանա առավել մեծ վտանգից խուսափելու միակ միջոցը²:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի հատուցման մասին՝ կարևորում ենք այն հանգամանքների պարզաբանումը, որոնք կարող են պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ: 1061 հոդվածը նշում է, որ ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով՝ վնաս պատճառած անձը կարող է ա-

¹ Տե՛ս Լ. Жюлио Де Ла Морандьер, Гражданское право Франции, М., 1960г., էջ 421:

² Տե՛ս Լ. Жюлио Де Ла Морандьер, նույն տեղում:

գատվել պատասխանատվությունից, և դատարանի կողմից այն կարող է դրվել երրորդ անձի վրա, ի շահ որի գործել է վնաս պատճառողը: Միևնույն ժամանակ հողվածը ամրագրում է, որ դատարանը կարող է փոքրացնել նաև պատասխանատվության չափը ինչպես վնաս պատճառողի, այնպես էլ երրորդ անձի համար: Հողվածը կոնկրետ չի նշում, թե որոնք են այն հանգամանքները, որ ազատում են ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառած վնասի հատուցումից: Օրենսգիրքը խոսում է միայն նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքների մասին՝ առանց կոնկրետացնելու այդ հանգամանքները: Կարծում ենք՝ այս հանգամանքների տակ պետք է հասկանալ ինչպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակին նախորդող հանգամանքները, այն կողմի գործողությունները, որոնք վնաս պատճառողի գործողությունների պատճառ են հանդիսացել, այնպես էլ փրկվող արժեքը, այն անձանց և արժեքների շրջանակը, որոնց վնաս է հասցվել և այլն:

ՀՀ Քաղ. օր.-ի 1060 հողվածը սահմանում է, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները:

Անհրաժեշտ պաշտպանության պայմաններում պատճառած վնասը հատուցելուց ազատվելու կարևորագույն պայման է անհրաժեշտ պաշտպանության սահմանները պահպանելը: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ և ինչպես ամրագրված է քաղաքացիական օրենսդրությամբ, անհրաժեշտ պաշտպանության սահմանները անցնելով պատճառված վնասը ենթակա է հատուցման¹: Այսպիսով, պարզելու համար, թե որոնք են անհրաժեշտ պաշտպանության հատկանիշները և սահմանները, անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքին:

Ինչպես ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 42 հողվածում. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կա-

¹ См. Л.А. Майданик, Н.Ю. Сергеева, Материальная ответственность за повреждение здоровья. М., 1968г. էջ 86, ինչպես նաև ՀՀ քաղ. օր.-ի 1060 հողվածը:

տարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը»:

Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանության վիճակի պայմաններից մեկը հակաօրինական կամ հանցավոր այն արարքի կանխումն է, երբ անձի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև գույքին սպառնացող ռեալ վտանգ է առաջացել: Պրակտիկայում մեծ դժվարություն է առաջացնում անհրաժեշտ պաշտպանության սահմաններում գործած կոնկրետ անձին քաղաքացիաիրավական կամ քրեաիրավական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծումը, քանի որ արդեն ինքնին իրենից դժվարություն է ներկայացնում այն հանգամանքների լրիվ և բազմակողմանի բացահայտումը, որոնք կապացուցեն, որ տվյալ անձը գործել է անհրաժեշտ պաշտպանության պայմաններում: Դժբախտաբար, դատարանները հաճախ, գտնվելով տուժողների բարոյական ճնշման տակ, խուսափում են անհրաժեշտ պաշտպանության վիճակի ընդունումից և կիրառումից, որը հանգեցնում է նրան, որ հակաօրինական ոտնձգությունից իր կյանքը կամ առողջությունը պաշտպանող անձը, այդ ընթացքում վնաս պատճառելով ոտնձգողի առողջությանը, ստիպված է լինում փոխհատուցել այդ վնասները և նույնիսկ կրել նաև քրեական պատիժ: Մա, մեր կարծիքով, չի բխում արդարադատության շահերից և նպատակներից: Դատարանների կողմից հստակ պետք է բացահայտվի՝ արդյոք կոնկրետ անձը գործել է անհրաժեշտ պաշտպանությամբ՝ սահմաններում, թե՞ ոչ, և եթե՝ այո, ապա անձը անմիջա-

պես պետք է ազատվի քաղաքացիաիրավական և քրեաիրավական պատասխանատվությունից:

Մյուս կողմից էլ անձը կարող է գործել իր կարծիքով անհրաժեշտ պաշտպանության սահմաններում, սակայն իրականում նրա գործողությունները ոչ միայն գերազանցեն անհրաժեշտ պաշտպանության սահմանները, այլև ընդհանրապես դուրս լինեն անհրաժեշտ պաշտպանությունից: Այս կապակցությամբ հարկ ենք համարում մեկ անգամ ևս նշել, որ անհրաժեշտ պաշտպանության հարցը քննարկելիս պետք է մեծ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյոք կանխվելիք վնասը եղել է ռեալ կամ, ինչպես նշում են Ս.Ե. Դոնցովն ու Վ.Վ. Գլյանցը, այդ գործողությունները էական վնաս են հասցրել պաշտպանվողի իրավունքներին և շահերին կամ էլ այդպիսի վնասի վտանգ են ստեղծել¹: Դատական պրակտիկան և իրավունքի տեսությունը առանձնացնում են նաև անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության հարցը: Մա, ինչպես նշում են հեղինակները, բխում է ոտձգության հասարակական վտանգավորության բնույթից: Միևնույն ժամանակ Ս.Ե. Դոնցովն ու Վ.Վ. Գլյանցը իրավացիորեն եզրակացնում են, որ քաղաքացիական օրենսդրությունը չի տալիս անհրաժեշտ պաշտպանության վիճակի քաղաքացիաիրավական բնորոշումը, որը պետք է տարբերվեր քրեաիրավականից նրանով, որ քաղաքացիական իրավունքում ոտնձգողի գործողություններում հասարակական վտանգի առկայությունը պարտադիր չէ, և բավական է միայն այդ գործողությունների հակաիրավական բնույթը²:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ինչպես ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այնպես էլ անհրաժեշտ պաշտպանության դեպքում վնասը պետք է պատճառվի կանխելու համար ավելի մեծ վնասի առաջացումը: Սակայն ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության տարբերությունն այն է, (որը և բացատրում է առաջինի դեպքում վնասի հատուցման պարտականությունը այն

¹ Տե՛ս նաև Ս.Ե. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 243:

² Տե՛ս նույն տեղում:

պատճառողի վրա դնելը, իսկ երկրորդի դեպքում՝ ոչ), որ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վնաս է պատճառվում հակաիրավական արարքի հետ կապ չունեցող անձին, իսկ անհրաժեշտ պաշտպանության դեպքում՝ այն անձին, ով կատարում է հակաիրավական արարքը: Վերջին դեպքում շատ կարևոր է, որ վնաս պատճառվի միայն հարձակվողին և ոչ՝ շրջապատի անձանց: Փաստորեն, օրենքը պաշտպանվողին տալիս է իրավունք վնասելու հարձակվողին՝ պաշտպանվողի գործողությունները դարձնելով իրավաչափ:

Ինչպես նշվեց վերը, հատուցման է ենթակա այն վնասը, որը պատճառվել է անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով: Նման դեպքում պատասխանի կարիք ունեն հետևյալ հարցերը. ո՞վ պետք է հատուցի անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով պատճառված վնասը, ի՞նչ կարգով պետք է որոշվի հատուցման ենթակա վնասի հատուցման հարցը: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ ամեն դեպքում, չնայած վնաս է պատճառվել ոտնձգողին, սակայն այն պատճառվել է կանխելու համար մոտալուտ վտանգը, ուստի և պետք է տարանջատել և որոշել, թե վնասի որ մասն է ենթակա հատուցման, կամ արդյոք ենթակա՞ է հատուցման ողջ պատճառված վնասը: Լ.Ա. Մայդանիկի և Ն.Յու. Մերգենայի կարծիքով՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով պատճառված վնասի ծավալը պետք է նվազեցվի՝ հաշվի առնելով տուժողի մեղավորության աստիճանը, որը իր ագրեսիվ գործողություններով սաղրել է վնաս պատճառողին դիմելու պատասխան գործողությունների¹: Համաձայն ենք հեղինակների այս տեսակետի հետ և գտնում ենք, որ ճիշտ չի լինի, ինչպես նաև չի բխի արդարադատության շահերից, անհրաժեշտ պաշտպանության սահմաններից դուրս գալով, պատճառված վնասի հատուցումը ամբողջ ծավալով այն պատճառողի վրա դնելը: Այստեղ դատարանները պետք է ուշադրություն դարձնեն և վնասի հատուցման չափը որոշելիս հաշվի առնեն նաև հակաիրավական արարք գործող անձի գործողությունների բնույթը:

¹ Տե՛ս Լ.Ա. Майданик, Н.Ю. Сергеева, նշված աշխատությունը, էջ 86:

Ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության հետ միաժամանակ կարևոր է քննարկել նաև իրավունքի ինքնապաշտպանությունը՝ որպես վնասի հատուցումից ազատող, կամ վնասի հատուցումը սահմանափակող հանգամանք: ՀՀ Քաղ. օր. 14 հոդվածը սահմանում է նաև, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը իրականացվում է, ի թիվս այլոց, իրավունքի ինքնապաշտպանությամբ¹: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, իրավունքի ինքնապաշտպանությունը անձի ինքնուրույն գործողություններն են, որոնք ուղղված են բացառելու համար քաղաքացիական իրավունքների խախտումը և նվազեցնելու խախտման հետևանքները²: Կարևոր է ամրագրել, որ իրավունքի ինքնապաշտպանությամբ պատճառված վնասի դեպքում, որը որոշ դեպքերում կարող է և չունենալ անհրաժեշտ պաշտպանության հատկանիշներ, վնաս պատճառողը ևս պետք է հնարավորություն ունենա ազատվել պատճառված վնասի հատուցումից: Բնարկե, այս դեպքում կարևորվում է դատարանների դերը, որ պետք է ճիշտ գնահատեն վնաս պատճառողի գործողությունները՝ պարզելու, թե արդյո՞ք վնաս պատճառողը գործել է քաղաքացիական իրավունքների խախտմանն ուղղված գործողությանը համարժեք, թե ոչ:

Այն, որ վնաս պատճառողի գործողությունները հանդիսանում են արտապայմանագրային պարտավորությունների առաջացման հիմք, ենթադրվում է ՀՀ Քաղ. օր. 1058 հոդվածից, որտեղ սահմանված է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Մակայն հոդվածը միանշանակ չի բացահայտում, թե ինչ պայմաններ են անհրաժեշտ վնասի հատուցման առաջացման համար: Հոդվածը չի խոսում գործողութ-

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 14, կետ 8):

² https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B0%D0%BC%D0%BE%D0%B7%D0%B0%D1%89%D0%B8%D1%82%D0%B0_%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0, http://kruglaw.narod.ru/lit/civil_law/suhanov1/3_12_2.htm

յունների և դրանց հակաիրավականության մասին, սակայն դա ենթադրվում է հողվածի բովանդակությունից, տեսությունից և դատաիրավական պրակտիկայից: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս հարցում հողվածն ունի հստակեցման կարիք, ուստի առաջարկում ենք Օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն հակաիրավական արարքով և իր մեղքով պատճառած անձի կողմից»:

ОСОБЕННОСТИ ДЕЙСТВИЙ ЛИЦА, ПРИЧИНИВШЕГО ВРЕД, В ДЕЛИКТНЫХ ПРАВООТНОШЕНИЯХ

Григор Бекмезян

*Доцент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук*

В статье обсуждается понятие, особенности и проблемы применения противоправного деяния, как одного из условий возникновения внедоговорных отношений.

В работе особое внимание уделено «действию» и «бездействию» - как способу выражения видов противоправного деяния, обсуждаются вопросы ответственности различных субъектов – сотрудников полиции, медицинских учреждений, спасателей и т.д.

В статье сделана попытка анализа гражданско-правового регулирования противоправного деяния, уделено внимание тому обстоятельству, что ГК РА, регулируя возмещение причиненного вреда, по большому счету умалчивает о противоправном деянии, оставляя решение вопроса о его необходимости практике. И в этом плане предложено соответствующее изменение статьи 1058 ГК РА.

Обсуждены также проблемы возмещения вреда, причиненного в условиях крайней необходимости, необходимой обороны и самообороны прав.

FEATURES OF ACTIONS OF WRONGDOER IN DELICTUAL OBLIGATIONS

Grigor Bekmezyan

*Docent of the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences*

In the article the author discusses the concept, characteristics and problems of application of the wrongful act, as one of the conditions for delictual obligations.

The paper focuses on the "action" and "inaction" as a way of expression types of wrongful act, the author discusses the responsibilities of the various subjects such as - the police, medical institutions, rescue services, etc.

In the article the author attempts to analyze civil regulation of unlawful act, pays attention to the fact that the Civil Code of the Republic of Armenia, regulating compensation for the damage caused, says nothing about the illegal act, leaving the question to practice. In this respect, author proposes modifications to Article 1058 of the Civil Code of RA.

In the article also discussed compensation for damage caused by state of necessary defense, state of extreme necessity and self-protection are also discussed.

Բանալի բառեր – վնաս, հակաիրավական արարք, պատճառված վնասի հատուցում, ծայրահեղ անհրաժեշտություն, անհրաժեշտ պաշտպանություն, իրավունքների ինքնապաշտպանություն:

Ключевые слова: вред, противоправное деяние, возмещение причиненного вреда, крайняя необходимость, необходимая оборона и самооборона прав.

Key words: harm, wrongful act, compensation for damage, state of necessary defense, state of extreme necessity and self-protection of rights.

**ՎԵՐՔԱՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀՏԱԿԵՅՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԻ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վահե Հովհաննիսյան
*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր*

Սահմանադրության ընդունումն արժևորվեց ՀՀ իրավական համակարգում դատական իշխանության ինստիտուցիոնալ և գործառնության ինքնակառավարման փոփոխություններով, որոնց շարքում պետք է առանձնացնել նաև վերաքննիչ դատարանի սահմանադրավական կարգավիճակի հստակեցումը: ՀՀ իրավական պրակտիկայում բազմիցս կասկածի տակ է դրվել եռաստիճան դատական համակարգի գործառնության արդյունավետությունն այն առումով, որ անիմաստ է վերանայող երկու դատական աստիճանների միաժամանակյա գոյությունը, եթե գործառնության առումով դրանք չեն տարբերվում միմյանցից: Հետևաբար, յուրաքանչյուր պետական մարմնի, այդ թվում՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների գոյությունն առաջին հերթին պետք է արդարացված լինի վերջիններիս կոմից իրականացվող գործառնությունների անհրաժեշտության հիմնավորման և արդյունավետության տեսանկյունից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական աստիճանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (1-ին և 2-րդ մասեր): ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածը սահմանում

է, որ վերաքննիչ դատարաններն առաջին աստիճանի դատարաններին դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական աստիճանն են: Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում դատական վերանայման գործառույթ իրականացնող հիմնական դատական աստիճանը վերաքննիչ դատարանն է, քանի որ վճռաբեկ դատարան կարող են մուտք գործել ողջամտորեն սահմանափակ գործեր, ինչը բացառապես պայմանավորված է նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացման անհրաժեշտությամբ: Այստեղից էլ հարց է ծագում, թե որքանով քաղաքացիական դատավարությունում ներկայումս կիրառվող սահմանափակ վերաքննության տեսակը կարող է ապահովել մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարությունում 1998թ. սկսած գործել են և՛ լրիվ վերաքննության, և՛ սահմանափակ վերաքննության մոդելները: Մինչև 2007թ. ՀՀ դատական օրենսգրքի ընդունումը (գործողության մեջ է մտել 01.01.2008թ.) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրվել էր լրիվ վերաքննության մոդելը (ՔԴՕ հոդվ. 205 - 221), որը հանգում էր հետևյալին՝

- վերաքննիչ դատարանը կաշկանդված չէր վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով կրկնակի քննում էր գործը,

- վերաքննիչ դատարանն ընդունում էր գործին մասնակցող անձանց ներկայացրած լրացուցիչ ապացույցները, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում էր առաջին աստիճանի դատարանում այդ ապացույցները ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Ընդ որում, վերոնշյալ դրույթն առավելապես ապահովում էր հավասարության պայմաններում դատական պաշտպանության իրավունքի իրացումը, բացառում էր գործին մասնակցող անձանց կողմից առաջին աստիճանի դատարանում գործի քննության

ընթացքում ապացույցները չարամտորեն թաքցնելու և վերաքննիչ դատարան դրանք ներկայացնելու հնարավորությունը, և կողմերը (երրորդ անձինք) օգտվում էին իրավունքի դատական պաշտպանության ներպետական բոլոր աստյաններում իրենց դիրքորոշումը ներկայացնելու հնարավորությունից և մրցակցության սկզբունքի բովանդակությունից բխող դատավարական միջոցներից, ինչը նպաստում էր նաև առաջին աստյանի դատարանի հեղինակության պահպանմանը,

- վերաքննիչ դատարանում գործը քննվում էր առաջին աստյանի դատարանում գործի քննության կանոններով, բայց քանի որ վերաքննիչ դատարանը գործը *կրկնակի* քննող դատարան էր, ապա օրենսդրորեն ամրագրվել էին որոշակի սահմանափակումներ (ՔԴՕ հոդվ. 215), որոնք թույլ չէին տալիս, որ վերաքննիչ դատարանը դուրս գա առաջին աստյանի դատարանում գործի քննության սահմաններից: Մասնավորապես, վերաքննիչ դատարանում հնարավոր չէր վեճերը հանձնել միջնորդ դատարանի լուծմանը (հոդված 18), կատարել ոչ պատշաճ կողմի փոխարինում (հոդված 31), փոխել հայցի հիմքը կամ առարկան, փոփոխել հայցային պահանջների չափը, հրաժարվել հայցից (հոդված 32), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող կամ չներկայացնող երրորդ անձանց ներգրավել գործի քննությանը (հոդված 34-35), հակընդդեմ հայց հարուցել (հոդված 96): Վերաքննիչ դատարանում ոչ պատշաճ կողմի փոխարինումը, երրորդ անձանց գործի քննությանը ներգրավելն արգելված էր, քանի որ հակառակ պարագայում կփոխվեր գործի սուբյեկտային կազմը, հայցի հիմքի կամ առարկայի, հայցային պահանջների փոփոխության, ինչպես նաև հակընդդեմ հայց հարուցելու պարագայում փոխվում էր քաղաքացիական դատավարության օբյեկտը, իսկ հայցից հրաժարվելն անթույլատրելի էր այն պարզ պատճառով, որ ՀՀ ՔԴՕ 109-րդ հոդվածի 6-րդ կետի ուժով հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարձկնվելու դեպքում թույլ էր տրվում կրկին անգամ նույնական պահանջով դիմել դատարան,

- գործի կրկնակի քննության արդյունքներով վերաքննիչ դա-

տարանը կայացնում էր վճիռ, որտեղ նշվում էին նաև վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված էին վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում էր այս կամ այն ապացույցը, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դեկավարվել էր դատարանը վճիռ կայացնելիս: Վերաքննիչ դատարանի վճիռը պետք է դրույթներ պարունակեր կողմերի միջև դատական ծախսերի, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման մասին (հոդվ. 218):

2007թ. ՀՀ դատական օրենսգրքի ընդունումը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացումներն ու փոփոխությունները¹ Հայաստանի քաղաքացիական դատավարությունում հիմք դրեցին ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի գործողությանը: Ընդ որում, ՀՀ-ում լրիվ վերաքննության և ոչ լրիվ վերաքննության ինստիտուտների տարբերակումն առավել ցայտուն կերպով դրսևորվում է երեք հիմնական չափորոշիչների ուսումնասիրության արդյունքում, այն է՝ վերաքննության սահմանները, վերաքննիչ դատարանի լիազորությունները և վերաքննության արդյունքում կայացվող դատական ակտի բնույթը: Հարկ է նշել, որ դատավարագիտությունում լրիվ և ոչ լրիվ վերաքննությունների տարանջատման համար որպես բավարար պայման նշվում են վերաքննիչ դատարանի լիազորությունները², սակայն, մեր կարծիքով, միայն դատարանի լիազորությունների ուսումնասիրությունը բավարար չէ վերաքննության մոդելները բնութագրելու համար: Նման պարագայում բաց են մնում վերաքննության սահմանների և վերաքննության արդյունքում կայացվող դատական ակտերի իրավաբանական բնույթի հետ կապված մի շարք հարցեր, որոնք ևս առանձին պարզաբան-

¹ ՀՕ-179-Ն, ՀՀՊՏ N27(551), 30.05.07: ՀՕ-204-Ն, ՀՀՊՏ N 53(577), 31.10.07: ՀՕ-269-Ն, ՀՀՊՏ N64 (588), 19.12.07: ՀՕ-277-Ն, ՀՀՊՏ N66(590), 26.12.07:

² Տե՛ս *Կարաբեյա E.B.* նշվ. աշխ. էջ 23-28:

ման կարիք են զգում: Ընդ որում, վերաքննության սահմանների և վերաքննության արդյունքում կայացվող դատական ակտի իրավաբանական բնույթի վերլուծությունն ինքնըստինքյան պարզաբանում է նաև վերաքննիչ դատարանի լիազորությունները:

ՀՀ ՔՂՕ 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոնշյալ կանոնը կանխորոշում է վերաքննության կարգով դատական ակտի վերանայման օբյեկտային սահմանները՝ նախանշելով, որ վերաքննիչ դատարանը կարող է վերանայել միայն՝

- դատական ակտի բողոքարկված մասը,
- այն հիմքերի և հիմնավորումների շրջանակներում, որոնք ներկայացվել են վերաքննիչ բողոքում,
- այն պահանջների մասով, որոնք առաջին ատյանի դատարանում հանդիսացել են քննության առարկա, և որոնց վերաբերյալ դատարանը վճիռ է կայացրել:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՆԴ/2534/02/08 24.07.2009թ. որոշմամբ արձանագրել է, որ վերաքննիչ բողոքի սահմաններից դուրս գալը հիմք է դատական ակտը բեկանելու համար: Ընդ որում, նշված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը պարզաբանել է վերաքննիչ վերանայման օբյեկտային սահմանները, որի բովանդակությունից բխում է նաև, որ վերաքննիչ բողոքը կարող է ընդգրկել միայն ստորադաս ատյանում քննության առարկա դարձած պահանջների վերաբերյալ դատարանի եզրահանգումների օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու խնդիրը: Վճռաբեկ ատյանը գտել է, որ դատարանը պարտավոր է քաղաքացիական գործը հարուցել միայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա, քաղաքացիական գործը քննել միայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակներում (ՔՂՕ հոդվ. 3 և հոդվ. 131, մաս 1-ին, կետ 4): Վերաքննիչ դատարանը, վերանայելով դատական ակտը, վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում չի կարող դնել հանգամանք, որի վերաբերյալ բողոք բերողը պահանջ չի ներկայացրել առաջին

ատյանի դատարան և այդ կապակցությամբ գործի քննության ժամանակ չի հայտնել իր դիրքորոշումը, որոնք էլ իրենց հերթին չեն արտահայտվել վերաքննիչ բողոքում¹: Հետևաբար, հայցվորի կողմից դատարանում հայցի առարկան չփոխելու և դրա վերաբերյալ վերաքննիչ բողոքում դիրքորոշում չարտահայտելու կամ որևէ հիմք և հիմնավորում չներկայացնելու պայմաններում վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

Մեր կարծիքով, քաղաքացիական դատավարությունում վերաքննության սահմանները կանխորոշում են երկու հիմնական կանոն՝

- վերաքննիչ դատարանն իրավունք չունի դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներից,
- վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի շրջանակներում գործով պարզված և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը հետազոտելու և գնահատելու հարցին:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ԵՇՂ/0990/02/08 11.08.2009թ. որոշման մեջ նշել է, որ վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեղու համար պարտավոր է վերաքննիչ բողոքի շրջանակներում

¹ Վերաքննիչ դատարանը բողոքի բավարարման հիմքում դրել էր այն հանգամանքը, որ «հայցվորի» մոր ժառանգական զանգվածի ընդունման մատով պահանջը մերժելով՝ դատարանը հանգել է սխալ եզրակացության», մինչդեռ նշված գործով հայցադիմումի պահանջն էր ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելը և ժառանգական գույքի 1/3 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելը: Այսինքն՝ հայցվորը մոր ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ պահանջ դատարան չէր ներկայացրել և այդ կապակցությամբ գործի քննության ժամանակ չէր հայտնել իր դիրքորոշումը: Ավելին՝ հայցվորը մոր ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ վերաքննիչ բողոքում որևէ հիմք կամ հիմնավորում կամ դիրքորոշում չէր արտահայտել:

հետազոտել և գնահատել գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել վերաքննիչ բողոքը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Գտնում ենք, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը պետք է որոշի՝ հիմնվելով ինչպես վերաքննիչ բողոքի, այնպես էլ վերաքննիչ բողոքի պատասխանի (եթե այդպիսին ներկայացվել է) հիման վրա, ղեկավարվելով օրենքով: Բացի այդ, վերաքննության սահմանները կանխորոշող կանոնները ենթադրում են երկու իրավական նախադրյալ, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել բացասականի և դրականի: Բացասական նախադրյալը վերաքննության սահմանների պահպանումը կապում է վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքի շրջանակներից դուրս չգալու պարտականությամբ, այսինքն՝ պետք է առկա չլինեն դատական ակտի վերանայման օբյեկտային սահմաններից դուրս դատավարական գործողություններ, ինչպես նաև դրանցով պայմանավորված դատավարական ներգործության միջոցներ չկիրառվեն: Դրական նախադրյալը ենթադրում է, որ վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա վերաքննիչ բողոքի շրջանակներում ներկայացված և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերին, ներկայացված պահանջներին, որոնց վերաբերյալ բողոք բերողն արտահայտել է որոշակի դիրքորոշում:

Թե՛ տեսական և թե՛ գործնական առումով հատկապես կարևորվում է այն հարցը, թե արդյոք օրենքի որևէ դրույթի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքի բացակայության պայմաններում այդ դրույթին անդրադառնալու դեպքում վերաքննիչ դատարանը դուրս է գալիս վերաքննիչ բողոքի սահմաններից: Վերոնշյալ հարցի կապակցությամբ իրավական դիրքորոշում է պարունակում ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՏՂ/0019/02/08 27.05.2009թ. որոշումը, որի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի դատական ակ-

տի բեկանման հիմքում դնել վերաքննիչ բողոքի հիմքերում չնշված իրավունքի (օրենքի) խախտման փաստը: Այսպես՝ առաջին աստյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոքը բերվել էր ՀՀ ՔՂՕ 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, այն է՝ սահմանափակվել էր գործին մասնակցող անձի՝ ապացույցներ ներկայացնելու և ապացույցների հետազոտմանը մասնակցելու իրավունքը, ՀՀ ՔՂՕ 31-րդ հոդվածի (ոչ պատշաճ կողմի փոխարինման) դրույթների խախտման հիմքով, սակայն վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով բողոք բերած անձի կողմից մատնանշված դատավարական նորմերի խախտումների հիմնավորվածության հարցին, բեկանել էր դատական ակտը՝ բեկանման հիմքում դնելով ստորադաս դատարանի կողմից ՀՀ ՔՂՕ 53-րդ հոդվածի պահանջների խախտման փաստը: Վճռաբեկ դատարանը գտել էր, որ վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ դրանով իսկ խախտելով ՀՀ ՔՂՕ 219-րդ հոդվածի կանոնները:

Այս հանգամանքը կարելի է ոչ լրիվ վերաքննության թերություն համարել այն առումով, որ առաջին աստյանի դատարանում գործի քննության ժամանակ թույլ տրված խախտումը վերաքննիչ բողոքում չնշելը գրկում է վերաքննիչ դատարանին դրանց արձագանքելու հնարավորությունից, ինչի հետևանքով ոչ իրավաչափ արդարադատության արդյունքում կայացված դատական ակտը կարող է օրինական ուժի մեջ մնալ:

Քննարկվող օրինակը վերաբերում էր նյութական և դատավարական իրավունքի նորմերի այն խախտումներին, որոնք չէին վկայակոչվել վերաքննիչ բողոքի հիմնավորումներում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ դատավարության օրենքը դատական ակտի բեկանման հիմք է համարում ինչպես գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները (ՔՂՕ հոդվ. 226, մաս 1), այնպես էլ սահմանում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր, որոնք բոլոր դեպքերում հանգեցնում են դատական ակտի վերացման: Այսպես՝ ՀՀ ՔՂՕ 228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքում ենթակա է բե-

կանման, եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին և այլն: Բնականաբար հարց է առաջանում, թե ինչպես պետք է վարվի վերաքննիչ դատարանը, եթե առկա է դատական ակտի անվերապահ բեկանման որևէ հիմք, սակայն բողոքաբերը դրա մասին նշում չի կատարել վերաքննիչ բողոքում: Նախևառաջ, ՀՀ ՔՊՕ 228-րդ հոդվածի 2-րդ մասի «Վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման» արտահայտությունը տարամետ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Տառացի մեկնաբանման դեպքում մենք կարող ենք այն մեկնաբանել, որ դատական ակտը պետք է բոլոր դեպքերում բեկանվի՝ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Համակարգային մեկնաբանման դեպքում, երբ մենք վերլուծում ենք 228-րդ հոդվածի ընդհանուր բովանդակությունը, այն է՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման, և դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը միայն ձևական նկատառումներով բեկանվել չի կարող, ապա ակնհայտ է, որ «բոլոր դեպքերում» արտահայտությունը պետք է մեկնաբանել որպես օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատական ակտի բեկանման պարտադրանք՝ անկախ այն հանգամանքից, թե գործն ըստ էության ճիշտ է լուծվել, թե ոչ: ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայից (թիվ ՏՂ/0019/02/08 27.05.2009թ. որոշում, թիվ 08-1442 04.03.2011թ. որոշում) բխում է, որ նույնիսկ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության պարագայում վերաքննիչ դատարանն իրավունք չունի դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և բեկանել դատական ակտը:

Գտնում ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը միանշանակ ընկալել չի կարելի: Նախևառաջ, վճռաբեկ աստիճանը հաշվի չի առել երկու կարևորագույն հանգամանք, այն է՝ բողոքաբերը որքանով հնարավորություն ունի վկայակոչելու համա-

պատասխան դատավարական իրավունքի խախտումը կամ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքը, և երկրորդ՝ դրանք արդարադատության այնպիսի կոպիտ և հիմնարար խախտումներ են, որոնք միանշանակորեն հանգեցնում են դատարանի գործունեության անիրավաչափության՝ կասկածի տակ դնելով նաև ոչ իրավաչափ արդարադատության իրականացման արդյունքում կայացված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը: Հետևաբար հարց է առաջանում, թե որքանով է նպատակահարմար նման դատական ակտի գոյությունը և վերաքննիչ ատյանը այն բեկանելու հնարավորություն չընձեռելը: Օրինակ՝ ՔԴՕ 228-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն, ինչպես նաև, եթե վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ: Գործին մասնակցող անձը պարտավոր չէ ծանոթ լինել դատավորի ստորագրությանը կամ դատավարական հնարավորություն չունի հստակ պարզելու, թե կոնկրետ որ դատավորն է կայացրել վճիռը՝ այն ստորագրողը, թե ոչ, ուստի կարող է վերաքննիչ բողոքում չնշել այդ մասին: Կամ ինչպե՞ս պետք է վարվի վերաքննիչ ատյանը, երբ գործը ստանալով՝ պարզում է, որ այնտեղից բացակայում է դատական նիստի արձանագրությունը: Մի դեպքում գործին մասնակցող անձը սահմանափակված է դատավարական իրավունքի նորմի խախտումը բողոքում վկայակոչելու հարցում, իսկ մյուս դեպքում վերաքննիչ դատարանն ուղղակիորեն զրկված է ստորադաս դատական ատյանի գործողությունների օրինականությունը ստուգելու հնարավորությունից, քանի որ դրանք իրենց արտացոլումն են ստանում դատական նիստի արձանագրությունում (ՔԴՕ հոդվ. 146-149): Եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, ապա վճիռն ընդհանրապես արդարադատության ակտ համարել չի կարելի, քանի որ այն դառնում է ոչ իրավագոր մարմնի կողմից կայացված ակտ, խախտվում է արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր մասնակցությամբ գործի

քննության իրավունքը: Այսինքն՝ ինքնին դատական ակտը դառնում է անօրինական: Հետևաբար, դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ է բացառել արդարադատության ակնհայտ թերություններով և կոպիտ խախտումներով կայացված դատական ակտերի գոյությունը: Միայն այդ դեպքում մենք կարող ենք խոսել քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանության և քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունության մասին:

Բացի այդ, անհրաժեշտ է պարզել նաև, թե վերաքննիչ բողոքում իրավունքի խախտումն արձանագրող փաստական հանգամանքի նշումը, առանց կոնկրետ իրավական նորմի մատնանշմամբ, որքանո՞վ կարող է դատական ակտի բեկանման համար հիմք հանդիսանալ: Այսպես՝ բողոքաբերը վերաքննիչ բողոքի հիմքում դրել էր դատական նիստին մասնակցելու հնարավորություն չունենալու հանգամանքը, իսկ վերաքննիչ դատարանը բեկանել էր դատական ակտը՝ բեկանման հիմքում դնելով գործին մասնակցող անձի՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված չլինելու փաստը (ՀՀ վերաքննիչ դատարանի թիվ 08-1442 22.07.2010թ. որոշում): ՀՀ ՔԴՕ 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու դատավարության օրենքով նախատեսված մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքի հետ¹: Սակայն վճռաբեկ դատարանը գտել էր, որ վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ բողոք բերողը հստակ նշել է, որ հնա-

¹ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1867/Ա քաղաքացիական գործով 25.12.2007թ. որոշում (Վարդան Նավասարդյանն ըդդեմ ՀՀ ԿԱԿՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման):

րավորություն չի ունեցել մասնակցելու դատական նիստին և որևէ անդրադարձ չի կատարել դատական նիստի մասին ծանուցված չլինելու հարցին (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 08-1442 04.03.2011թ. որոշում): Սակայն չպետք է անտեսել նաև այլ հանգամանք՝ ՔԴՕ 220-րդ հոդվածի 2 մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը որոշման մեջ նշում է գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ օրենքը վերաքննիչ դատարանի վրա դրել է բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու պարտականություն, ուստի վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջը բավարարելու կամ մերժելու հարցը որոշելիս դատարանը պետք է կիրառի համապատասխան իրավական ակտերի դրույթները նաև այն դեպքերում, երբ բողոք բերողը վկայակոչել է միայն իրավունքը խախտվելու փաստերը, առանց կոնկրետ իրավունքի նորմերի վրա հղում կատարելու: Բացի այդ, վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ ԵՇԴ/0990/02/08 11.08.2009թ. որոշմամբ անդրադարձել է վերաքննիչ բողոքի շրջանակներում գործով պարզված և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը հետազոտելու և գնահատելու հարցին¹, սակայն, **մեր կարծիքով, բողոքի շրջանակներում գործով պարզված հանգամանքները ներառում են բողոքարկված դատական ակտի օբյեկտային սահմանները**: Վերաքննիչ դատարանը պետք է պարզի, թե դատական ակտը ո՞ր մասով է բողոքարկված, որից հետո անդրադառնա բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը հետազոտելու և գնահատելու հարցին: Հետևաբար, վերաքննիչ բողոքում ստորադաս առյանում գործի քննության ժամանակ թույլ տրված խախտումների

¹ Վերաքննիչ դատարանը բազմակողմակի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեցնում համար պարտավոր է վերաքննիչ բողոքի շրջանակներում հետազոտել և գնահատել գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել վերաքննիչ բողոքը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

փաստացի նշումը պետք է համարել բավարար:

Գտնում ենք, որ վճռաբեկ դատարանի՝ վերը ներկայացված դիրքորոշումները ենթակա են վերանայման, դրանք պետք է համապատասխանեցվեն անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին, այդ թվում՝ արդարադատության մատչելիության սկզբունքին, հատկապես, երբ ՀՀ սահմանադրական դատարանը, բացահայտելով ՔԴՕ 208-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունը, դատարանում իրավական դիրքորոշումը հայտնելու պարտականություն գործին մասնակցող անձանց համար չի նախատեսել:

Հարկ է նշել նաև, որ առանձին դեպքերում կարող է դատական ակտի բողոքարկված մասի օբյեկտային սահմաններից դուրս գալու անհրաժեշտություն առաջանա նաև այն դեպքում, երբ ստորադաս դատարանը, սխալ կարգավորելով վիճելի նյութական իրավահարաբերությունը, ճիշտ չի որոշել նաև դրա բովանդակությունը կազմող սուբյեկտիվ նյութական իրավունքների և պարտականությունների ծավալը: Այսպես, եթե ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի պարտավորությունների մասով հավասար բաժնեմասեր չունեցող սեփականատերերի նկատմամբ դատարանը կիրառել է համապարտ պատասխանատվություն և դատական ակտի դեմ սեփականատերերից մեկը վերաքննիչ բողոք է բերել, ապա վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է բեկանի ամբողջությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե գործին մասնակցող անձինք դատական ակտն իրենց մասով բողոքարկել են, թե ոչ: Վերոնշյալ մտնեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վիճելի նյութական իրավահարաբերության բովանդակությունը կազմող սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականություններն այս դեպքում սխալ են որոշվել ամբողջապես, և անհնար է գործին մասնակցող անձանցից մեկի իրավունքների և պարտականությունների շրջանակը ճիշտ որոշել, առանց մյուսներին անդրադառնալու:

Նշված տեսակետը կարող է քննադատելի թվալ տնօրինչականության սկզբունքի գործողության տեսանկյունից: Եթե առաջին ատ-

յանի դատարանը պարտավոր է քաղաքացիական գործը հարուցել հայցի կամ դիմումի հիման վրա և վճիռ կայացնել միայն հայցային պահանջների շրջանակներում, ապա վերաքննիչ վարույթում բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում դատական ակտի վերանայումը ևս բխում է տնօրինչականությունից: Գործին մասնակցող անձը կարող է ընդհանրապես չբողոքարկել դատական ակտը, անկախ դրա օրինականությունից և հիմնավորվածությունից, կամ կարող է դատական ակտը բողոքարկել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակիորեն, վիճարկել կամ չվիճարկել առաջին ատյանի դատարանի հաստատած փաստերն անկախ այն հանգամանքից՝ դրանք ճիշտ են հաստատվել, թե ոչ: Վերաքննիչ բողոքարկումը տնօրինչականության սահմաններում վերաքննիչ դատարան դիմելու իրավունքի իրականացումն է: Մասնագիտական գրականության մեջ ևս դատական ակտի բողոքարկումը դիտարկվում է տնօրինչականության սկզբունքի շրջանակներում¹, սակայն, մեր կարծիքով, պետք է նկատի ունենալ նաև այն, որ առաջին ատյանի դատարան հայց ներկայացնելը ենթադրում է դատարան դիմելու դատավարական իրավունքի իրացում և խախտված կամ վիճարկվող նյութական իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության նպատակ, իսկ ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ բողոք բերելը ենթադրում է վերադաս դատարան դիմելու և ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու պահանջի զուտ դատավարական իրավունքների իրականացում: Հետևաբար տրամաբանական է նաև այն դրույթը, որի համաձայն՝ վերաքննիչ դատարանը ամբողջությամբ բեկանում է դատական ակտը այն դեպքերում, երբ ստորադաս դատարանն ընդհանրապես սխալ է կարգավորել վիճելի նյութական իրավահարաբերությունը,

¹ St'u **Мойсеев С.В.** Принцип диспозитивности арбитражного процесса (понятие и отдельные распорядительные действия в суде первой инстанции). М., <Городец>, 2008, էջ 44-47: **Боннер А.Т.** Принцип диспозитивности советского гражданского процессуального права: Учеб. пособие. М. 1987, էջ 6: Тараненко В.Ф. Принципы арбитражного процесса, Учеб. пособие. М. 1988, էջ 14:

սխալ է որոշել բոլոր սուբյեկտների իրավունքների և պարտականությունների շրջանակը: Ընդ որում, որպես բեկանման գլխավոր նախադրյալ պետք է դիտարկել վերաքննիչ դատարանի կողմից բողոքաբերի նյութական իրավունքների և պարտականությունների շրջանակն առանց գործին մասնակցող մյուս անձանց իրավունքներին և պարտականություններին անդրադառնալու ճշգրտման հնարավորության բացակայությունը:

ՀՀ-ում վերաքննության տեսակը որոշելու հիմքում պետք է դնել ինչպես դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը, այնպես էլ դատարանակազմության և դատական համակարգի յուրաքանչյուր օղակի առջև դրված խնդիրների առանձնահատկությունը: Այսպես՝ եռաստիճան դատական համակարգի գործունեության պայմաններում անհրաժեշտ է պարզել, թե յուրաքանչյուր աստիճանի դատարան սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն ինչ կարգով է իրականացնում: Եթե մենք ընդունում ենք գործն ըստ էության քննող և լուծող երկու դատական աստիճանների (առաջին աստիճանի և վերաքննիչ աստիճանի դատարաններ) գոյությունը, ապա պետք է երաշխավորենք քաղաքացիական շրջանառության մասնակիցների երրորդ՝ վճռաբեկ աստիճանի գործելու անվերապահ իրավունքը: Այսինքն՝ լրիվ վերաքննությունը ենթադրում է նաև վճռաբեկ դատարանի դիմելու անվերապահ հնարավորություն: ՀՀ Սահմանադրության փոփոխություններով հստակեցվեց ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանի գործունեությունը, և վճռաբեկ դատարան մուտք գործելու իրավունքի իրականացումը պայմանավորվեցին այս աստիճանի սահմանադրական խնդիրներով, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարությունում լրիվ վերաքննության ինստիտուտի գործառնությունն այս պայմաններում աննպատակահարմար է: Վերաքննիչ վարույթի մասնակիցները զրկվում են վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայում պահանջելու անվերապահ իրավունքից, ինչի հետևանքով սահմանափակվում է նաև վերջիններիս դատական պաշտպանության իրավունքը, նվազում է արդարադատության արդ-

յունավետությունը, քանի որ լրիվ վերաքննության կանոններով դատական ակտի վերանայումը ենթադրում է գործն ամբողջ ծավալով կրկնակի քննություն, լրացուցիչ ապացույցների հետազոտում, ինչի հետևանքով գործին մասնակցող անձը սահմանափակվում է վերաքննիչ դատարանի ակտի, այդ թվում՝ փաստական հանգամանքների և իրավունքի կիրառման հարցում դատարանի եզրահանգումների օրինականության և հիմնավորվածության ստուգում պահանջելու հարցում:

Բացի այդ, իրավաբանական գրականության մեջ հաճախ ոչ լրիվ վերաքննությունը նույնացվում է վճռաբեկության հետ,¹ ուստի կարող է հարց առաջանալ նաև, թե որքանով է նպատակահարմար նույն կանոններով գործող և դատական ակտի վերանայման գործառույթ իրականացնող երկու դատական ատյանների միաժամանակյա գոյությունը: Թեև վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման քաղաքացիադատավարական ձևերը գործառույթային առումով միմյանցից էականորեն չեն տարբերվում, այդուհանդերձ ՀՀ քաղաքացիական դատավարությունում ոչ լրիվ վերաքննությունը և վճռաբեկությունը տարբեր իրավական ինստիտուտներ են: Բողոքների քննության և դատական ակտերի վերանայման քաղաքացիադատավարական ձևի նմանությունը դեռևս նույնություն չի ենթադրում, հատկապես որ վճռաբեկությունը ոչ լրիվ վերաքննությունից առաջին հերթին առանձնանում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական խնդիրներով:

ՀՀ դատական համակարգը քաղաքացիական դատավարությունում ենթադրում է գործն ըստ էության քննող և լուծող մեկ դատական ատյան, այն է՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ոչ լրիվ վերաքննության կարգով դատական վերանայման գործառույթ իրականացնող երկրորդ ատյան և վերաքննության կարգով դատական ակտերը բողոքարկելու լիարժեք իրավունք, ինչպես նաև բարձրագույն դատական ատյան՝ վճռաբեկ դատարան,

¹Տե՛ս *Борисова Е.А.*, նշվ. էջ 62-65:

որի գործունեությունը սահմանափակված է վերջինիս սահմանադրաիրավական խնդիրներով: Անձը, լիարժեք օգտվելով վերաքննիչ բողոքարկման իրավունքից, միանշանակորեն կարող է ապահովել ստորադաս դատական ատյանում իր արդար դատաքննության իրավունքի, դատական պաշտպանության իրավունքի իրացումը, իրականացնել ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու՝ օրենքով երաշխավորված պահանջը, մինչդեռ առկա է վճռաբեկ դատարան «մուտք գործելու» վճռաբեկության խնդիրներով սահմանափակված հնարավորություն:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЪЕКТИВНЫХ ГРАНИЦ МОДЕЛИ АПЕЛЛЯЦИИ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ваге Оганесян

*Доцент кафедры гражданского процесса ЕГУ,
доктор юридических наук*

В статье всесторонне изучены и проанализированы институциональные и функциональные особенности апелляционной модели, в настоящем применяемой в Армении по гражданским делам. Особое внимание уделено вопросу о том, какую сущность, границы и особенности должен иметь институт обжалования судебных актов в апелляционном порядке в условиях действия трехступенной судебной системы. Данный вопрос особенно важен в свете уточнения конституционно-правовых статусов Кассационного и Апелляционного судов РА в результате последних конституционных поправок. В основе статьи лежит концепция, согласно которой апелляционный суд является основной инстанцией судебного пересмотра, а кассационный суд должен пересматривать судебные акты только при наличии исключительных оснований, предусмотренных законом, исходя из необходимости осуществления поставленных перед ним задач. Следовательно, апелляционное обжалование считается основной формой обжалования, а пересмотр судебных актов в апелляционном порядке рассматривается в качестве основного средства судебной

защиты права на справедливое судебное разбирательство. В рамках данной статьи автор представил и проанализировал основные особенности полной и неполной апелляции, выделил преимущества и недостатки, в результате чего представил рекомендации по разработке новой модели неполной апелляции. В качестве отправной точки была представлена идея, согласно которой при наличии оснований, предусмотренных законом, апелляционный суд должен иметь возможность выходить за пределы основ и обоснований апелляционной жалобы. При этом были уточнены объемы применения полномочий апелляционного суда в отношении факта, установлены условия правомерности, а также было предложено предусматривать возможность частичной отмены и изменения судебного акта в случае установления нового факта или установления недоказанности факта. В итоге, автор пришел к заключению, что в условиях действующей трехступенной системы судебной иерархии возможно полностью обеспечивать осуществление прав судебной защиты и справедливого судебного разбирательства участников гражданского оборота, но с изменениями института апелляции, представленных в данной статье.

ISSUES OF THE APPEAL MODEL IN CIVIL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA

Vahe Hovhannisyan

Docent of the YSU Chair of Civil Procedure,

Doctor of Legal Sciences

Institutional and functional characteristics of the current appeal model applicable for civil cases in Armenia have been comprehensively examined and analyzed in this paper. The issue of nature, limits and characteristics of the institute of review of judicial acts in the condition of operation of three-tier judicial system has been granted a special attention. The importance of the subject matter is underlined in the light of clarification of the Cassation and Appeal courts' legal constitutional status in the result of recent constitutional amendments. This paper rests upon the conception that the court of appeal shall act as the main body of judicial review, and the cassation court shall review judicial acts only based on exceptional grounds prescribed by law and necessity of accomplishment of its tasks. Consequently, challenge through appeal has been considered as a main form of contesting judicial acts, and review of judicial acts through appeal procedure as a primary means of ensuring judicial protection of the right to fair trial.

The author has presented and analyzed fundamental characteristics of a full and partial review, highlighted advantages and drawbacks, in the result recommendations concerning elaboration of a new model of partial review have been made. The idea that in cases stipulated by law appeal court shall have the opportunity to go beyond the scope of grounds and justifications of an appeal complaint has served as a benchmark. Meanwhile, the scope of appeal court's powers regarding the issue of facts have been clarified, conditions of legality have been set forth, as well as it has been recommended to stipulate an opportunity to reverse and amend a judicial act partially by the appeal court in case if the latter establishes a fact or finds a fact not to be established.

In the result the author concluded that in the conditions of the current three-tier hierarchy of judicial system it is fully possible to ensure realization of rights to judicial protection and fair trial of the participants of civil relations, provided that amendments recommended in this paper are adopted.

Բանալի բառեր – վերաքննություն, բողոքարկում, վերանայում, վերաքննության սահմաններ, լիազորություններ, բողոքարկման հիմքեր, արդար դատաքննություն:

Ключевые слова: апелляция, обжалование, пересмотр, пределы рассмотрения дела в апелляционном порядке, полномочия, основы обжалования, справедливое судебное разбирательство.

Key words: appeal, challenge, review, scope of appeal, powers, grounds for challenge, fair trial.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՎԱԾ ՄԻՋԱՆԿՅԱԼ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ

Վահագն Գրիգորյան
***ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ապիստենտ,
իրավ. գիտ. թեկնածու***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹ 140¹-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի բողոքն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: ՔՂՕ-ի 207-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

ՔՂՕ-ի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի², Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի³ և ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-719 որոշմամբ ամրագրված անմիջական բողոքարկման ենթակա գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի ցանկի⁴ համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ անմիջական բողոքարկման կարգով վերաքննիչ դատարան կարող են բողոքարկվել գործն ըստ էության չլուծող հետևյալ դատական ակտերը՝ **1)** դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը (ՂՕ-ի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), **2)** դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փո-

¹ Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/20(53), 09.09.1998թ.: Այսուհետ՝ ՔՂՕ:

² Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/12(45), 15.06.1998թ.: Այսուհետ՝ ԴԱՀԿ օրենք

³ Ընդունվել է 21.02.2007թ., ուժի մեջ է մտել 18.05.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007/20(544) Հոդ. 489, 18.04.2007թ.: Այսուհետ՝ ԴՕ:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. նոյեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-719 որոշումը:

փոխելու մասին դիմումի քննության արդյունքում կայացված որոշում-
մը (ԴԱՀԿ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մաս), **3)** կատարողական թեր-
թը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը
հարգելի ճանաչելու և այն վերականգնելու մասին դիմումի քննու-
թյան արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օրենքի 24-րդ հոդվա-
ծի 4-րդ մաս), **4)** վճռի կատարման շրջադարձի մասին դիմումի
քննության արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օրենքի 27-րդ
հոդվածի 4-րդ մաս), **5)** կատարողական թերթը պարզաբանելու մա-
սին դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օ-
րենքի 35-րդ հոդվածի 4-րդ մաս), **6)** հայցադիմումի ընդունումը մեր-
ժելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), **7)** հայցա-
դիմումը վերադարձնելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 92-րդ հոդվածի 4-
րդ մաս), **8)** հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին
որոշումը (ՔԴՕ-ի 104-րդ հոդվածի 3-րդ մաս), **9)** գործի վարույթը կա-
սեցնելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 108-րդ հոդվածի 2-րդ մաս), **10)**
դատական տուգանք կիրառելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 115-րդ
հոդվածի 8-րդ մաս), **11)** լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին
որոշումը (ՔԴՕ-ի 142-րդ հոդվածի 5-րդ մաս), **12)** վճիռը պարզաբա-
նելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն
ուղղելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 4-րդ մաս):

Մյուս միջանկյալ դատական ակտերը չեն հանդիսանում անմի-
ջական բողոքարկման օբյեկտ, սակայն գործին մասնակցող անձինք
այդ ակտերը կարող են բողոքարկել դատարանի վճռի դեմ բերված
բողոքում դրանց վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու
միջոցով¹: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010թ. նոյեմբերի 2-ի
թիվ ՍԴՌ-922 որոշմամբ ամրագրել է, որ օրենսդիրը տարբերակում է
միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական
կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական
ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում»,
և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Սահմա-

¹ St 'u **Калмацкий В.С.** Полномочия кассационной инстанции в гражданском судопроизводстве. Уфа. 1984, էջ 65:

նադրական դատարանը շեշտել է, որ օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն, չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում¹: Պետք է նշել, որ այս հարցի կապակցությամբ հակառակ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը²:

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»: Նույն օրենսգրքի 221³-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Վերաքննիչ դատարանը, գործը քննելով, իրավունք ունի վերացնելու առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով բողոքարկման ենթակա գործն ըստ էության չլուծող դատական ակտերը»:

Պետք է նշել, որ միջանկյալ դատական ակտերում արտացոլվում է դատարանի կամքը՝ արդարադատության իրականացման և գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարման ընթացքում ծագող տարբեր հարցերի կապակցությամբ³: Ինչպես ցանկացած սուբյեկտիվ իրավունք, այնպես էլ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտի բողոքարկման իրավունքը կարող է իրականացվել միայն շահագրգռվածության առկայության պայմաններ-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. նոյեմբերի 2-ի թիվ ՍԴՌ-922 որոշումը:

² ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱԴԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով 28.11.2014թ. կայացված որոշմամբ նշել է, որ եթե դատավարության մասնակիցը չի իրացրել միջանկյալ դատական ակտն անմիջական բողոքարկման կարգով բողոքարկելու իր իրավունքը, ապա նա այլևս չի կարող տվյալ միջանկյալ դատական ակտը բողոքարկել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

³ Տե՛ս **Юдельсон К.С.** Советский гражданский процесс. - М., 1956, էջ 270:

րում¹: Դատական սխալի հայտնաբերման պարագայում միջանկյալ դատական ակտի բեկանումը (վերացումը) հանդիսանում է գործին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության միջոց, իրավավերականգնող սանկցիա²:

Միջանկյալ դատական ակտը վերադաս դատարանի կողմից կարող է վերացվել ամբողջությամբ կամ մասնակիորեն: Մինևույն ժամանակ, միջանկյալ դատական ակտի մասնակի վերացումը թեև տեսականորեն հնարավոր է, սակայն գործնականում հանդիպում է ծայրահեղ հազվադեպ³: Պետք է նշել, որ անհասկանալի է, թե ինչու է օրենսդիրը գործն ըստ էության չլուծող դատական ակտը վերացնելու իրավագործությունը նախատեսել զուտ դատավարական գործողություն կատարելու իրավունքի ձևով՝ ընդգրկելով այն դատական հայեցողության ոլորտ⁴: Մինչդեռ դատարանի լիազորություններն իրենցից ներկայացնում են և իրենց բնույթով հանդիսանում են ոչ միայն իրավունքներ, այլև՝ պարտականություններ⁵:

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի կայացնել նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Ենթադրվում է, որ «նոր դատական ակտը» պետք է փոխարինի

¹ St 'u **Гусев В.Г.** Гражданская процессуальная правоспособность и юридическая заинтересованность // Проблемы гражданского процессуального права. Саратов. 1994, էջ 14:

² St 'u **Ткачев Н.И.** Некоторые аспекты гражданской процессуальной ответственности // Проблемы реформы гражданского процессуального права и практики его применения. Свердловск. 1990, էջ 22:

³ St 'u **Катукова С.Ю.** Частное обжалование и пересмотр определений суда первой инстанции. Дисс. ... к.ю.н. - Саратов, 1998, էջ 121:

⁴ St 'u **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 326:

⁵ St 'u **Каз С.Ю.** Судебный надзор в гражданском судопроизводстве. - М. 1980, էջ 187:

բողոքարկված միջանկյալ դատական ակտին և պարունակի քննարկվող հարցի կապակցությամբ բողոքարկված միջանկյալ դատական ակտին հակառակ եզրահանգումներ:

Գտնում ենք, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը պետք է կիրառվի բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու լիազորության (ՔՀՕ-ի 221³-րդ հոդվածի 3-րդ մաս) հետ մեկտեղ: Այսինքն՝ նոր դատական ակտ կայացնելու լիազորությունն առանձին վերցրած որևէ դեպքում կիրառման ենթակա չէ:

Վերը նշվածի համատեքստում գտնում ենք, որ **միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում** վերաքննիչ դատարանը, ներկայիս իրավակարգավորման համաձայն, իրավունք ունի.

- վերացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը,
- վերացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը և կայացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտին փոխարինող դատական ակտ:

Ընդ որում, նշված երկու լիազորություններից յուրաքանչյուրի կիրառումը հանդիսանում է վերաքննիչ դատարանի կողմից հարցին տրված վերջնական լուծում:

Այսպես, վերաքննիչ դատարանը վերացվում է բողոքարկված միջանկյալ դատական ակտը այն դեպքում, երբ.

- վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ,
- վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանն ընդհանրապես չպետք է նման միջանկյալ դատական ակտ կայացներ,
- առկա չէ տվյալ հարցը (դիմումը, միջնորդությունը) առաջին ատյանի դատարանի կողմից կրկին քննելու անհրաժեշտություն,
- առկա չէ վերացված միջանկյալ դատական ակտը նոր դատա-

կան ակտով փոխարինելու անհրաժեշտություն:

Վերաքննիչ դատարանը վերացնում է բողոքարկված միջանկյալ դատական ակտը և կայացնում է բողոքարկված միջանկյալ դատական ակտին փոխարինող դատական ակտ այն դեպքերում, երբ՝

- վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ,

- վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանը պետք է կայացներ այլ միջանկյալ դատական ակտ,

- առկա չէ տվյալ հարցը (դիմումը, միջնորդությունը) առաջին ատյանի դատարանի կողմից կրկին քննելու անհրաժեշտություն,

- առկա է վերացված միջանկյալ դատական ակտը նոր դատական ակտով փոխարինելու անհրաժեշտություն:

Այսպիսով, վերը նշված երկու դեպքերում էլ քննարկվող հարցի և բողոքարկված դատական ակտի վերաբերյալ վերաքննիչ դատարանը կատարում է վերջնական ապառիչ եզրահանգում, և հարցին տրվում է ըստ էության վերջնական լուծում:

Վերաքննիչ դատարանի վերը նշված լիազորությունները երբեմն բավարար չեն վերջինիս առջև դրված խնդիրներն արդյունավետ լուծելու համար: Հնարավոր է, որ վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում եզրահանգի, որ՝

- բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ,

- առկա է տվյալ հարցը առաջին ատյանի դատարանի կողմից կրկին քննելու անհրաժեշտություն, քանի որ վերաքննիչ դատարանը որևէ պատճառով չի կարողանում վերջնական եզրահանգում կատարել քննարկվող հարցի և բողոքարկված դատական ակտի վերաբերյալ:

Նման իրավիճակներ կարող են առաջանալ մասնավորապես լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշման, ինչպես նաև դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու,

դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և այն վերականգնելու, վճռի կատարման շրջադարձի և կատարողական թերթը պարզաբանելու մասին դիմումների քննության արդյունքում կայացված որոշումների դեմ բերված բողոքների քննության ընթացքում:

Գտնում ենք, որ վերը նշված դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է օժտված լինի բողոքարկված **միջանկյալ դատական ակտը վերացնելու և քննարկվող հարցն առաջին աստիճանի դատարանն ինքնուրույն ուղարկելու լիազորությամբ:**

Բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու և հարցը նոր քննության ուղարկելու լիազորությունը վերաքննիչ դատարանի կողմից պետք է կիրառվի նաև բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվող միջանկյալ դատական ակտը կայացվել է ՔԴՕ-ի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դատավարական նորմերի պահանջները խախտելով (դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության պայմաններում):

Թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերին՝ իրավացիորեն նշելով, որ՝

- դրանք այնպիսի դատավարական սխալներ են, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ,

- այդպիսի խախտումները խաթարում են դատարանի դերն ու նշանակությունը,

- նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր,

- դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը կասկածի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը,

- նման խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում,

- դատական ակտի անվերապահ բեկանման որևէ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում կիրառման է ենթակա դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը¹:

Այսպիսով, դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, որոնք հանգեցնում են դատական ակտի անվերապահ բեկանման՝ անկախ այդ դատական ակտի՝ ըստ էության ճիշտ լինելու կամ չլինելու հանգամանքից:

Նման խախտումների առկայության պայմաններում բողոք բերած անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել սխալ դատական ակտ կայացնելու:

Անվերապահ բեկանման հիմքերով դատական ակտը բեկանելիս վերադաս դատարանները չեն անդրադառնում բողոքարկված դատական ակտի՝ ըստ էության ճիշտ կամ սխալ լինելուն: Անվերապահ բեկանման հիմքի առկայությունն ինքնին բավարար հիմք է հանդիսանում դատական ակտը բեկանելու համար: Վերադաս ատյանի կողմից նման խախտումների արձանագրումը *ipso facto* հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը:

Պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կիրառել բացառապես ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը (բեկանել դատական ակտը և գործն ուղարկել համապատաս-

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով:

խան ստորադաս դատարան՝ նոր քննության)¹: Նման մոտեցման հիմքում ընկած է այն պարզ տրամաբանությունը, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը արդարադատության այնպիսի «արատներ» են, որոնց առկայության պայմաններում հարցին վերջնական լուծում տալը չի բխում արդարադատության արդյունավետության շահերից:

Գտնում ենք, որ վերը նշված մոտեցումը կիրառելի է ոչ միայն գործն ըստ էության լուծող, այլև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման դեպքում: Բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվող միջանկյալ դատական ակտը կայացվել է ՔԴՕ-ի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դատավարական նորմերի պահանջները խախտելով, վերաքննիչ դատարանը իր որոշմամբ հարցին վերջնական լուծում տալու փոխարեն պետք է վերացնի բողոքարկված միջանկյալ դատական ակտը և հարցն ուղարկի առաջին աստիանի դատարան՝ նոր քննության:

Ասվածը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ իրավանորմով. «Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի.

1) վերացնել բողոքարկված դատական ակտը,

2) վերացնել բողոքարկված դատական ակտը և կայացնել դրան փոխարինող նոր դատական ակտ,

3) վերացնել բողոքարկված դատական ակտը և հարցն ուղարկել առաջին աստիանի դատարան՝ նոր քննության»:

Վերոհիշյալ հարցի կապակցությամբ համանման մոտեցում է ամրագրված նաև Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Այսպես, օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասը և 423-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում են, որ առաջին աստիանի դատարանի միջանկյալ դատական ակտերն օրենքով

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները՝ թիվ ԵԱՆԴ/0461/02/10, ԵԱՔԴ/2279/02/11, ԵԿԴ/2760/02/12, ԵԵԴ/0700/02/12, ԵԿԴ/1118/02/12 և ԵՔԴ/0443/02/08 քաղաքացիական գործերով:

նախատեսված դեպքերում կարող են անմիջականորեն բողոքարկվել վճռաբեկության կարգով: Օրենսգրքի 427-րդ հոդվածը թվարկում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում վճռաբեկ ատյանի դատարանի կողմից կիրառելի լիազորությունները, այն է՝ 1) մերժել բողոքը՝ անփոփոխ թողնելով բողոքարկված միջանկյալ դատական ակտը, 2) բավարարել բողոքը, ամբողջությամբ կամ մասնակի բեկանել դատարանի միջանկյալ դատական ակտը և գործը վերադարձնել նոր քննության, 3) բավարարել բողոքը, ամբողջությամբ կամ մասնակի բեկանել դատարանի միջանկյալ դատական ակտը և իր որոշմամբ հարցին ըստ էության լուծում տալ¹:

Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող մի շարք գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտեր դատական պրակտիկայում որակվում են որպես գործն ըստ էության լուծող: Դրանց դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են երեք դատավորի կազմով (մինչդեռ ՔԴՕ-ի 217-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքները վերաքննիչ դատարանում քննվում են միանձնյա): Նման բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը կիրառում է ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները, որոնք կիրառելի են գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության դեպքում:

Որպես ասվածի հիմնավորում ներկայացնենք հետևյալ օրինակները.

- Թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննության է առել Անժելա Գևորգյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննության առնելու մասին»

¹ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին, հրապարակվել է 12.06.2003թ., ուժի մեջ է մտել 12.06.2003թ., Monitorul Oficial № 111-115, հոդված № 451:

19.12.2013թ. որոշման դեմ: Բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը որոշել է բավարարել վերաքննիչ բողոքը, բեկանել և փոփոխել բողոքարկված դատական ակտը¹:

- Թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննության է առել Լևիկ և Սարգիս Աղաբեկյանների վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2013թ. «Վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու մասին» որոշման դեմ²:

- Թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննության է առել Սոֆիա Հարությունյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Վճիռը պարզաբանելու մասին» 19.12.2013թ. որոշման դեմ³:

- Թիվ ԵԱԴԴ/0134/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» 27.06.2014թ. որոշման դեմ⁴:

- Թիվ ԵԱԴԴ/0899/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննել է Երևան համայնքի և «Սևաբերդ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքները՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների

¹ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2014թ. որոշումը՝ թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2014թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով:

³ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2014թ. որոշումը՝ թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով:

⁴ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014թ. որոշումը՝ թիվ ԵԱԴԴ/0134/02/12 քաղաքացիական գործով:

ընդհանուր իրավասության դատարանի «Կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» 18.10.2013թ. որոշան դեմ¹:

- Թիվ ԳԴ/0540/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննել է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «ՎՃիոր պարզաբանելու մասին» 20.05.2013թ. որոշման դեմ: Բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը բեկանել է դատարանի որոշումը և գործն ուղարկել է առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության²:

Այսինքն, դատական պրակտիկայում գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում ոչ միայն վճիռները, այլև՝ առաջին աստիճանի դատարանի կողմից կայացված այն որոշումները, որոնք.

- որևէ կերպ փոփոխում են վճռի բովանդակությունը,
- կարգավորում են վճռի հարկադիր կատարման ընթացքը:

Այս դատական ակտերի բողոքարկումն իրականացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման համար սահմանված ընթացակարգով, և դրանց բողոքարկման արդյունքում կիրառվում են ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները³: Նման մոտեցումը վերաքննիչ դատարանին թույլ է

¹ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2014թ. որոշումը՝ թիվ ԵԱԴԴ/0899/02/09 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2013թ. որոշումը՝ թիվ ԳԴ/0540/02/12 քաղաքացիական գործով:

³ Թիվ ԿԴ/0003/11/10 քրեական գործով 2011թ. մայիսի 11-ին կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված լիազորություններով (այն լիազորություններով, որոնցով վերաքննիչ դատարանն օժտված է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման դեպքում): ՀՀ վճռաբեկ դատարանն իր այս դիրքորոշումը հիմնավորել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին վերաբերող օրենսդրական ձևակերպումների անորոշությամբ:

տալիս խուսափել մեր կողմից առաջադրված խնդրահարույց իրավիճակից: Այդուհանդերձ, համաձայն չլինելով դատական պրակտիկայում ձևավորված մոտեցման հետ՝ գտնում ենք, որ հարցն ունի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն:

Վերը շարադրվածի հիման վրա կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումներն ու առաջարկները.

1. Վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը պետք է կիրառվի բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու լիազորության հետ մեկտեղ: Վերաքննիչ դատարանի՝ նոր դատական ակտ կայացնելու լիազորությունն առանձին վերցրած կիրառման ենթակա չէ:

2. Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի. 1) վերացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը, 2) վերացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը և կայացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտին փոխարինող դատական ակտ: Ընդ որում, նշված երկու լիազորություններից յուրաքանչյուրի կիրառումը ենթադրում է վերաքննիչ դատարանի կողմից հարցի ըստ էության վերջնական լուծում և վերջնական սպառիչ եզրահանգում՝ քննարկվող հարցի և բողոքարկված դատական ակտի վերաբերյալ:

3. Գտնում ենք, որ վերաքննիչ դատարանը պետք է ունենա բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու և հարցն առաջին աստիճանի դատարան նոր քննության ուղարկելու լիազորություն:

4. Բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվող միջանկյալ դատական ակտը կայացվել է ՔԴՕ-ի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դատավարական նորմերի պահանջները խախտելով, վերաքննիչ դատարանը իր որոշմամբ հարցին վերջնական լուծում տալու փոխարեն պետք է վերացնի բողոքարկված միջանկյալ դատական ակտը և հարցն ուղարկի առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

5. Առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ իրավանորմով. «Միջանկյալ դատական ակտի

դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի.

1) վերացնել բողոքարկված դատական ակտը,

2) վերացնել բողոքարկված դատական ակտը և կայացնել դրան փոխարինող նոր դատական ակտ,

3) վերացնել բողոքարկված դատական ակտը և հարցն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության»:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ОТМЕНОЙ ОБЖАЛОВАННОГО ОПРЕДЕЛЕНИЯ СУДА

Ваагн Григорян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

Статья посвящена ряду практических проблем, возникающих в процессе применения апелляционным судом полномочий по удовлетворению жалоб на определения суда (не решающие дело по существу). В статье прежде всего выделены определения суда, подлежащие непосредственному обжалованию в апелляционном порядке. Также обсуждены условия, необходимые для отмены обжалованного судебного определения и принятия заменяющего его нового судебного акта. В статье обосновано, что иногда не достаточно полномочий апелляционного суда для эффективного решения задач, поставленных перед последним. В результате предложено наделить апелляционный суд полномочиями по отмене обжалованного определения суда и направлению обсуждаемого вопроса на новое рассмотрение в суд первой инстанции и классифицированы те случаи, когда данные полномочия должны применяться.

ISSUES RELATED TO ELIMINATION OF APPEALED JUDICIAL ACTS NOT BASICALLY SETTTLING THE CASE

Vahagn Grigoryan

*Assistant of the Chair of Civil Procedure of the YSU,
Candidate of Legal Sciences*

The following article is devoted to plenty of practical issues, which arise due to the application of the authority of court of appeal, when adopting the appeals lodged against the judicial acts (those not basically settling the case) of the courts of first instance. First and foremost, the judicial acts which are directly appealed, are differentiated by the author. The author also discusses the essential prerequisites for elimination of appealed judicial act and for adopting a new judicial act instead. The idea, that authorities of court of appeal sometimes are not sufficient to fulfill the duties of the court stipulated by law, is also supported. As a result, the author suggests to endow the court of appeal with the authority to eliminate the judicial act of court of first instance and return the case to the court for new examination, besides, to highlight the cases, when this authority can be applied.

Բանալի բառեր - վերաքննիչ դատարանի լիազորություններ, միջանկյալ դատական ակտ, միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում, միջանկյալ դատական ակտի վերացում, նոր միջանկյալ դատական ակտի կայացում, հարցն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու լիազորություն, միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկա:

Keywords: *authorities of the court of appeal, judicial act, appeal against judicial acts, elimination of judicial acts, adoption of a new judicial act, return the case to the court for new examination, judicial practice associated with appeal of interim judicial acts.*

Ключевые слова: *полномочия апелляционного суда, определение суда, апелляционная жалоба против судебных определений, отмена судебных определений, принятие нового судебного определения, направление обсуждаемого вопроса на новое рассмотрение в суд первой инстанции, судебная практика, связанная с обжалованием судебных определений.*

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆԻ ԽԱԽՏՈՒՄՈՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄԻ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ**

Գևորգ Պետրոսյան
***ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու***

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք: Այս իրավունքը ներառում է երեք հիմնական բաղադրիչ, մասնավորապես՝

ա) աշխատելու (զբաղվելու) և չաշխատելու (չզբաղվելու), ներառյալ՝ այս կամ այն գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու և չկնքելու ազատությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

բ) մասնագիտություն, զբաղմունքի տեսակ և գործունեության վայր ընտրելու ազատությունը,

գ) աշխատուժն իր հայեցողությամբ տնօրինելու ազատությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի¹:

Աշխատանքի ազատության սկզբունքը վերաբերում է ինչպես աշխատանքային հարաբերությունների ծագման, այնպես էլ դրանց փոփոխման ու դադարեցման հարցերին՝ այն բացառություններով, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է հարկադիր աշխատանքը: Ոչ ոք պարտադրված չէ իր կամքին հակառակ ներգրավվել աշխատանքի, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված

¹ Մանրամասն տե՛ս ՊետրոսյանԳ.Վ., Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս (Նոր խմբագրությամբ): Երևանի պետ. համալս. - Եր.: ԵՊՀ հրատ., 2015, էջ 366:

դեպքերի: Աշխատողներն ազատ են ստանձնած պարտավորությունների կատարումից իրենց նախաձեռնությամբ ազատվելու, այսինքն՝ ինչպես անորոշ, այնպես էլ ժամկետային աշխատանքային պամանագիրը լուծելու հարցում:

Աշխատանքային պայմանագրի հիման վրա ծագող հասարակական հարաբերություններում կիրառելի են նաև քաղաքացիական օրենսդրության սկզբունքները՝ այն առանձնահատկություններով, որոնք սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ: Աշխատանքային հարաբերություններում կիրառվող միջճյուղային սկզբունքներից է պայմանագրի ազատության սկզբունքը, որը ներառում է նաև պայմանագրի պայմաններ որոշելու՝ կողմերի ազատությունը (ՀՀ Քաղ.օր. 437-րդ հոդվ.): Պահպանելով աշխատանքային պայմանագրի¹՝ օրենքով սահմանված բոլոր էական պայմանները (ՀՀ Աշխ. օր. 84-րդ հոդվ.), կողմերն իրավունք ունեն նախատեսել իրենց աշխատանքային փոխհարաբերությունները կարգավորող նաև այլ պայմաններ: Ընդ որում, օրենքով չնախատեսված լրացուցիչ պայմանները կարող են սահմանվել ինչպես աշխատանքային պայմանագիրը կնքելիս (աշխատողին աշխատանքի ընդունելիս), այնպես էլ արդեն իսկ կնքված և կատարվող աշխատանքային պայմանագրի գործողության ընթացքում՝ դրանում համապատասխան լրացումներ կատարելով:

Օրենքով պարտադիր չհամարվող, սակայն իրականում բավականին տարածված աշխատանքային պայմաններից մեկը գործատուի միջոցների հաշվին որակավորումը բարձրացրած (նոր մասնագիտություն, մասնագիտացում ստացած կամ վերամասնագիտացում անցած) աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատանքը որոշակի ժամկետով (այսուհետ՝ պարտադիր ժամկետ) շարունակելու պարտականության մասին պայմանն է, որը նույնպես կնքվում է պայմա-

¹ Նույնը վերաբերում է նաև աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտին, որը նույնպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմք է:

նագրի ազատության սկզբունքի շրջանակներում: Առաջին հայացքից սովորական թվացող այս պայմանի կատարման ապահովումն ու չկատարման իրավական հետևանքների կարգավորումը երբեմն որոշակի բարդություններ է հարուցում այն դեպքում, երբ աշխատողները հանդես են գալիս աշխատանքային պայմանագիրը պարտադիր ժամկետի ընթացքում լուծելու, այսինքն՝ մինչև պարտադիր ժամկետի ավարտը աշխատանքը դադարեցնելու նախաձեռնությամբ, իսկ նրանց միջև կնքված համաձայնությունը չի մանրամասնում գործատուի խախտված իրավունքների վերականգնման հետ կապված հարցերը:

ՀՀ գործող աշխատանքային օրենսդրությունն աշխատողի կամքին հակառակ նրան փաստացի աշխատանքի ներգրավելու որևէ իրավաչափ եղանակ կամ միջոց չի նախատեսում: Ի վերջո, ինչպես նշեցինք, մարդու կամքին հակառակ, նրան աշխատանքի ներգրավելը հակասում է հարկադիր աշխատանքի կիրառման անթույլատրելիության մասին սահմանադրորեն և միջազգային իրավական նորմերով ամրագրված արգելքին: Հետևաբար, բացակայում է աշխատողին նրա ստանձնած պարտավորությունները շարունակելուն հարկադրելու իրավաչափ հնարավորությունը: Այդ նպատակին ծառայել չի կարող նաև աշխատանքային պայմանագրում անգամ այնպիսի պայմանի ներառումը, համաձայն որի՝ աշխատողը զրկվում է աշխատանքը վաղաժամկետ դադարեցնելու և այլ գործատուի մոտ աշխատանքի անցնելու իրավունքից: Նման պայմանները, որոնք օրենսդրության համեմատությամբ վատթարացնում են աշխատողների դրությունը, իրավաբանական ուժ չունեն: Հետևաբար, մյուս կողմին՝ գործատուին, մնում է լուծել միայն իր կրած վնասների հատուցումն ապահովելու խնդիրը: Վերջինս բարդություն չի ներկայացնում, եթե աշխատանքային պայմանագրում (կամ լրացուցիչ համաձայնագրում, որը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը) կարգավորված է աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու կարգն ու պայմանները, ներառյալ՝ նաև վնասները հատուցելու հարցերը: Այլ է իրավի-

ճակը, երբ կողմերը համաձայնության են եկել միայն համապատասխան հանգամանքներում աշխատանքը շարունակելու պարտադիր ժամկետի վերաբերյալ՝ առանց մանրամասնելու պայմանագիրն աշխատողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու պայմանները:

Ընդհանրապես պայմանագրային և մասնավորապես նաև աշխատանքային հարաբերություններում կազապահության պահպանման սկզբունքը նշանակում է, որ արդեն իսկ ծագած պարտավորության պայմաններին ենթարկվելը կողմի իրավական պարտականությունն է, ինչը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը անցանկալի իրավական հետևանքներ է առաջացնում դրանում մեղավոր անձի նկատմամբ:

Նախևառաջ, կարծում ենք, առաջնային իրավաբանական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե աշխատանքը դադարեցնելու նախաձեռնությունը պե՞տք է կապել աշխատողի մեղքի կամ դադարեցման պատճառի հարգելի լինելու հանգամանքի հետ, թե՞ ոչ: Նկատի ունենք այն, թե պայմանագրի կատարումը շարունակելուց հրաժարվելը, որն արտահայտվում է աշխատողի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու նախաձեռնություն դրսևորելով, բոլոր դեպքերում է բավարար վնասի հատուցման խնդիր բարձրացնելու համար, թե՞ միայն այն դեպքերում, երբ աշխատանքի վաղաժամ դադարեցումը կապված է աշխատողի չպատճառաբանված ցանկության կամ պայմանագրի ազատության իրավունքի իրացման հետ՝ առանց մյուս կողմին վնաս պատճառելու հատուկ դիտավորության: Եթե գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ օրենքով (ՀՀ Աշխ. օր. 113-րդ հոդվ.) նախատեսված հիմքերի մեջ դժվար չէ առանձնացնել աշխատողի մեղքի հետ կապված և չկապված պատճառները, ապա նույնը չի կարելի ասել աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու պատճառների մասին: Աշխատողը գրեթե բոլոր դեպքերում կարող է գոնե առերևույթ ներկայացնել այնպիսի պատճառներ, որոնք լրիվ կամ մասամբ կարող են արդարացնել կամ հիմնավորել պայմանագիրը վաղաժամկետ լուծելու իր ցանկությունը:

Կարծում ենք՝ գործատուի կրած վնասների հատուցման խնդիրըն աշխատողի վկայակոչած պատճառների բնույթից կախման մեջ դնելու պարագայում գրեթե իսպառ բացառվում է վնասի հատուցում ստանալու իրավաբանական հնարավորությունը: Այս իմաստով, թերևս, առավել նպատակահարմար է թվում վնասի հատուցման խնդիրը բացառապես անհաղթահարելի ուժի առաջացման, այսինքն՝ ստանձնած պարտավորությունը կատարելու օբյեկտիվ անհնարինության փաստի հետ կապելու մոտեցումը: Այս դիրքորոշումը համահունչ է կատարելու անհնարինության հետևանքով պարտավորությունները դադարեցնելու (ՀՀ Քաղ.օր. 432-րդ հոդվ., մաս 1)¹ և անհաղթահարելի ուժի առաջացման հիմքով պատասխանատվությունից ազատելու մասին ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի դրույթներին: Այլ կերպ ասած՝ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագիրը վաղաժամ լուծելու դեպքում գործատուին պատճառված վնասների հատուցման խնդիրը նպատակահարմար է ոչ թե կապել նրա կողմից վկայակոչված պատճառը գործատուի կողմից հարգելի կամ անհարգելի գնահատվելու հետ (որն, ի դեպ, կարող է սուրյեկտիվ լինել), այլ պայմանավորել առաջացած պատճառի կամ, որ նույնն է, պայմանագիրը շարունակելու անհնարինության մեջ աշխատողի մեղքի կամ կամքի գործոնի առկայության հանգամանքով: Այդ դեպքում, փաստորեն, վնասի հատուցման մասին խոսք կարող է լինել բոլոր դեպքերում, բացառությամբ, երբ առկա է աշխատանքը շարունակելու օբյեկտիվ անհնարինություն, որն ապացուցելու պարտականությունը պետք է կրի աշխատողը:

Քննարկվող խնդրի լուծման վերաբերյալ պատկերացումն ամբողջացնելու համար կարևոր է անդրադառնալ մյուս հիմնական

¹ՀՀ քաղ. օր. 432-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որեւէ մեկը պատասխանատու չէ: Այդ դեպքում պարտատերն իրավունք չունի պարտապանից պահանջել կատարել պարտավորությունը:

հարցադրմանը, թե աշխատողի նյութական¹ պատասխանատվության համար ո՞ր վնասը պետք է հիմք ընդունել՝ միմիայն իրական վնասը, թե նաև բաց թողնված օգուտը: Այստեղ նույնպես կարծիքներն իրարամերժ են: Մասնավորապես, կա կարծիք, համաձայն որի՝ աշխատողի նյութական պատասխանատվության չափը պետք է սահմանափակել միայն գործատուի կրած իրական վնասի սահմաններով, քանի որ իր մեղավորությունից ուղղակիորեն բխում է միայն իրական վնասը, իսկ բաց թողնված օգուտը պայմանավորված է իր հետ չհամաձայնեցված պայմանավորվածություններով (օրինակ՝ գործատուն այլ անձանց հետ կնքել է նախնական կամ հիմնական պայմանագրեր, տվել է երաշխավորություններ և այլն): Մյուս հիմնական տեսակետի համաձայն՝ աշխատողը պետք է պատասխանատու լինի նաև գործատուի բաց թողնված օգուտի համար, քանի որ գործատուն այդ օգուտից զրկվել է աշխատողի կողմից պարտավորությունը կատարելուց միակողմ հաժարվելու հետևանքով: Այս տեսակետը բխեցվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի (հոդվ. 241) իրավակարգավորումից, համաձայն որի՝ վնասներն են իրավունքը խախտված անձի այն ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար՝ նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղա-

¹ Վերլուծվող հանգամանքներում մենք գործ ունենք աշխատողի նյութական պատասխանատվության հետ, ինչը պետք է տարբերել գույքային (քաղաքացիաիրավական) պատասխանատվությունից (տե՛ս Звягин А.С. Материальная ответственность сторон трудовых отношений: ответственность работника перед работодателем http://edumsko.ru/consultation/pravo/materialnaya_otvetstvennost_storon_trudovyh_otnoshenij_otvetstvennost_rabotnika_pered_rabotodatelem/): Տվյալ պարագայում, սակայն, չի կարևորվում այն, թե խոսքը պատասխանատվության որ տեսակի մասին է, քանի որ երկու դեպքում էլ (թե՛ գույքային և թե՛ նյութական պատասխանատվության) կիրառվում է լիակատար պատասխանատվություն, քանզի վնաս առաջացնող գործողություններն աշխատողը կատարել է կամային, զիտակցված ձևով:

քացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Որոշակիորեն հիմնավորված համարելով նաև երկրորդ տեսակետը՝ այնուամենայնիվ մենք առավել հիմնավոր ենք համարում առաջին կարծիքը՝ հետևյալ փաստարկներով՝

ա) նախևառաջ, գործատուի կրած իրական վնասը չափելի է, և այն ապացուցելու խնդիրը բարդություններ չի ենթադրում:

բ) աշխատողը, ով համաձայնության է գալիս նախապես հայտնի կոնկրետ ծախսերի վերաբերյալ, հնարավորություն ունի հաշվարկել իր հնարավոր կորուստները իր կողմից պայմանագիրը շարունակելուց միակողմ հրաժարվելու դեպքում, և այդ հաշվարկի հաշվառումով է համաձայնում կնքել համապատասխան պայմանը:

գ) աշխատողը երաշխավորված չէ գործատուի կողմից կեղծ գործարքներ կնքած լինելու վտանգից, ինչը միանգամայն հնարավոր է, քանի որ այդ գործարքների մասին ինքը նախապես ծանուցված չի եղել:

դ) չնայած նման պայմանի առկայությանը՝ գործատուն, մեր կարծիքով, բոլոր դեպքերում պետք է կանխատեսի ցանկացած ելք, այդ թվում նաև՝ օբյեկտիվ պատճառներով աշխատողի կողմից պայմանագիրը կատարելուց միակողմ հրաժարվելու հետևանքով համապատասխան ռիսկերի առաջացման հնարավորությունը և այլ անձանց հանդեպ պարտավորություններ ստանձնելիս հաշվի առնի նաև այդ հանգամանքը: Ի վերջո, գործատուները, որոնց դերում հիմնականում հանդես են գալիս ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք «ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում ինքնուրույն, իրենց ռիսկով...» (ՀՀ Քաղ.օր. 2-րդ հոդվ.), և այդ ռիսկը հաշվարկելիս պետք է հաշվի առնել բոլոր հնարավոր իրավիճակները, մասնավոր, երբ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ուղղակիորեն պայմանավորված է այլ անձի, սովյալ դեպքում, աշխատողի՝ ապագայում

դրսևորելիք վարքագծով¹։ Գուցե և այս հանգամանքի հաշվառումով է, որ առանձին մասնագետներ արդարացի չեն համարում բաց թողնված օգուտի ձևով արտահայտված վնասի հատուցումն աշխատողի վրա դնելու մոտեցումը², ինչն, ի դեպ, ամրագրված է ՌԴ գործող Աշխատանքային օրենսգրքում (հոդվ. 238)³։

Վերը նշվածից բացի, քննարկվող դեպքերում, փաստորեն, գործատուի կնքած գործարքները պոտենցիալ պարտավորություններ են առաջացնում նաև աշխատողի համար։ Հետևաբար, իմ կարծիքով, այստեղ առնչվում ենք նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի այն դրույթի հետ, համաձայն որի՝ «պարտավորությունը պարտակալություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար» (հոդվ. 346, մաս 3)։

Քննարկվող հիմնախնդրի հաջորդ կարևոր հարցադրումը վերաբերում է հատուցվելիք վնասի չափը հաշվարկելու կանոնին, եթե կողմերն այն չեն որոշակիացրել աշխատանքային պայմանագրում կամ լրացուցիչ համաձայնագրում։

Այս խնդիրը լուծելիս, նախևառաջ, պետք է ելնել կողմերի՝ պայմանագիրը կնքելիս ունեցած իրական մտայնությունից։ Եթե պայմանագրի (համապատասխան պայմանի) տեքստից ակնհայտ է, որ կողմերը պայմանավորվածության են եկել պայմանագիրը ցանկացած ժամանակ վաղաժամկետ լուծելու դեպքում վնասի լրիվ չափով հա-

¹ Առհասարակ, բաց թողնված օգուտն Աշխատանքային օրենսգրքում որպես վնասի տեսակ ամրագրելը, մեր կարծիքով, բոլոր դեպքերում չէ, որ ճիշտ է։ Կարծում ենք՝ դրա սահմանման դեպքերը պետք է հստակ ամրագրել Աշխատանքային օրենսգրքում, մասնավորապես հենց աշխատողի պատասխանատվության մասով, քանի որ նրա նկատմամբ նման պահանջներ ներկայացնելը կարող է էապես վատթարացնել աշխատողի դրությունը։ Գոնե կարելի է օրենսդրորեն ամրագրել, որ «աշխատանքային իրավահարաբերություններից բխող պահանջներով աշխատողը կյուբական պատասխանատվություն է կրում գործատուին իր պատճառած միայն իրական վնասի չափով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ»։

² Մանրամասն տե՛ս Трудовое право России. Учебник. Отв. ред. Ю.П. Орловский. М., Юрайт, 2014, 578-579 էջերը։

³ Տե՛ս Трудовой кодекс РФ с комментариями // http://kzotrf.ru/head_39.html։

տուցման շուրջ, այդ դեպքում խնդիրը պարզ է: Նման համաձայնության բացակայության կամ նախատեսված պայմանի բովանդակության շուրջ տարրնկալումների դեպքում, եթե պայմանագրի ընդհանուր իմաստից հնարավոր չի լինում պարզել կողմերի իրական մտադրությունը, ապա կարծում ենք՝ ճիշտ կլինի, որ վեճը լուծող մարմինը կիրառի վնասի չափը ըստ ժամանակի հավասար բաշխելու մոտեցումը: Այս մոտեցման տրամաբանությունը բխեցվում է պայմանագրի պայմանից, որում նշվում է ոչ թե աշխատանքի արդյունքի, այլ պայմանագրի գործողության որոշակի ժամանակահատվածի մասին, ինչից ենթադրում է, որ աշխատողը ժամանակի մեջ հավասարաչափ է բաշխում իր աշխատուժը, ներառյալ նաև՝ ձեռք բերած ունակությունները: Այս իմաստով, կարծում ենք, արդարացի չէ, որ աշխատողը լրիվ (նկատի ունենք՝ իր ուսումնառության ուղղությամբ ծախսված ամբողջ գումարի, այսինքն՝ իրական ամբողջ վնասի չափով) նյութական պատասխանատվություն կրի պայմանագիրը և՛ օրինակ՝ դրա գործողության 4-րդ մասում դադարեցնելու, և՛ ասենք՝ 2 տարի 9 ամիս անց դադարեցնելու դեպքում, երբ ինքն արդեն զգալի ներդրում է ունեցել գործատուի ակնկալիքների ապահովման մեջ: Նման դիրքորոշումը բխում է իրավական ներգործության՝ լայն իմաստով, այդ թվում նաև՝ իրավունքի պաշտպանության համաչափության սկզբունքից¹: Իբրև ասվածի հիմնավորում կարող է ծառայել նաև ՀՀ Աշխ. օր. 6-րդ հոդվածը, որի 2-րդ մասն ամրագրում է փոխադարձ համաձայնությամբ աշխատանքային պայմաններ սահմանելիս արդարացիության, ողջամտության և ազնվության սկզբունքները պահպանելու՝ կողմերի պարտականությունը:

¹ ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (օրինակ՝ ՀՀ ՍԴ 2015 թվականի մայիսի 26-ի թիվ ՍԴՈ-1210 որոշումը, ՀՀ ՍԴ 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677 որոշումը և այլն) անդրադարձել է իրավունքի պաշտպանության համաչափության սկզբունքին, և այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կաող են կիրառելի լինել նաև աշխատանքային իրավահարաբերություններում անձանց իրավունքների սահմանափակումների, դրանց պաշտպանության և ապահովման լուծումները սահմանելիս:

О ПРОБЛЕМЕ ВОЗМЕЩЕНИЯ УЩЕРБА, НАНЕСЕННОГО РАСТОРЖЕНИЕМ ТРУДОВОГО ДОГОВОРА НА ОСНОВАНИИ НАРУШЕНИЯ УСЛОВИЙ ДОГОВОРА

Геворг Петросян

*Доцент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

Совершенствование трудового законодательства воспринимается в контексте эффективных законодательных реформ, обеспечивающих разумное правовое регулирование общественных отношений, относящихся как к традиционно исследованным фактическим ситуациям, так и относительно позднее распространенным в реальной жизни ситуациям.

Данная статья посвящена изучению взаимоотношений работодателя и работника по обеспечению правильного законодательного регулирования этих отношений, в частности, когда последний получает обучение и повышение квалификации за счет средств работодателя и отказывается продолжить работу, таким образом, нанеся ущерб работодателю.

Основные вопросы, поднятые в настоящем исследовании – основания возмещения ущерба, вид ущерба и механизм расчета, – были рассмотрены, основываясь на результатах проведенного сравнительно-правового анализа, принципах трудового законодательства РА и практике судебных органов РА.

ABOUT THE ISSUES OF REIMBURSEMENT OF DAMAGES CAUSED BY CEASURE OF LABOR CONTRACT DUE TO INFRINGEMENT OF CONTRACT TERM

Gevorg Petrosyan

*Docent of the YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences*

Improvement of labor legislation is understood in the sense of reforms addressing factual situations and their legal regulation both traditionally scrutinized and relatively late spread in real-life routine. The scientific article is devoted to the research and comprehensive legal regulation of labor relations between the employers and the employees, in particular cases where the employees have had studied and taken advanced training at the expense of the employers, and the relations arising with regard to compensation for

damages caused to the employers due to refusal to continue work by the particular employees. Based on the principles of the RA labor law, the RA case law and comparative analysis main issues – reimbursement bases, types and calculation mechanism have been scrutinized and corresponding solutions elaborated.

Բանալի բառեր – աշխատանքային պայմանագիր, իրավաչափ հնարավորություն, պայմանագրի ազատություն, հարկադիր աշխատանք, աշխատանքը շարունակելու պարտադիր ժամկետ, պայմանագրային կարգապահության պահպանման սկզբունք:

Ключевые слова: трудовой договор, правомерная возможность, свобода договора, принудительный труд, обязательный срок продолжения работы, принцип соблюдения трудовой дисциплины.

Key words: labor contract, lawful possibility, freedom of contract, forced labor, mandatory terms to continue labor, principle to maintain labor discipline.

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՎՃԻՌՆԵՐՈՒՄ**

Օլիմպիա Գեղամյան

***ԵՂՁ քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու***

1991թ. անկախության նվաճումից ի վեր Հայաստանը որդեգրեց համաշխարհային ու եվրոպական կառույցներին միանալու և քաղաքակիրթ հանրության լիիրավ անդամ դառնալու քաղաքականություն: Դրա կարևորագույն նախապայմաններից է ժողովրդավարական արժեհամակարգի հաստատումը, օրենքի գերակայության հիմնումն ու մարդու իրավունքների պաշտպանության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Այդ նպատակով Հայաստանն ընդունել և վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր ու կոնվենցիաներ, սկսել մի շարք միջազգային կառույցներին անդամակցելու գործընթացը, որոնց շարքում իր ծանրակշիռ տեղն է գրադեցնում Եվրոպայի Խորհուրդը: 2001թ. դառնալով Եվրոպայի Խորհրդի լիիրավ անդամ՝ Հայաստանի Հանրապետությունն իր ներկայացուցիչներն ունի Եվրոպայի Խորհրդի բոլոր կառույցներում: Այս գործընթացում իր կարևորությամբ պետք է առանձնացնել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (այսուհետ Կոնվենցիա): Ընդունվելով 1950թ.՝ Կոնվենցիան ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մաս է դարձել 2001թ. հունվարի 25-ի ստորագրմամբ ու 2002թ. ապրիլի 26-ի վավերացմամբ: Եվրոպական դատարանի իրավագործության և անդամ պետության ազգային իրավունքի փոխհարաբերության մեջ կարևոր հանգամանքն այն է, որ Դատարանի վճիռն ունի պարտադիր բնույթ, իսկ դրա կատարման պատասխանատվությունը կրում է ոչ թե առանձին մարմինը կամ պաշտոնատար անձը, այլ անդամ պետությունը՝ որպես իրավաքաղաքական կառույց: Եվրոպական դատարանը քաղաքական մարմին չէ և իրեն հասցեագրված վեճերը լուծում է

միայն իրավունքի հիման վրա:

1950-ական թվականները կարելի է բնութագրել որպես մի ժամանակահատված, որտեղ շրջակա միջավայրը դեռևս հռչակված չէր որպես հատուկ իրավական պաշտպանության կարիք ունեցող արժեք: Կոնվենցիայի հիմնական նպատակն էր սահմանել իրավական կանոնների մի համակարգ, որն ուղղված էր պետության ոսնձգություններից պաշտպանելու անհատի հիմնական իրավունքներն ու ազատությունները, ժողովրդավարական արժեքները: Այդ ժամանակաշրջանում անհատի իրավունքների ավանդական հասկացությունը բոլորովին կապված չէր էկոհամակարգի հավասարակշռության, մթնոլորտային օդի մաքրության, շրջակա միջավայրի գլոբալ կամ տարածքային հիմնախնդիրների լուծման հետ: Եվ հենց այդ պատճառով էլ տևական ժամանակ Կոնվենցիան ընդհանրապես չէր անդրադառնում բնապահպանական խնդիրներին, Դատարանն էլ իր հերթին նույնիսկ չէր փորձում որևէ կապ տեսնել Կոնվենցիայով սահմանված իրավունքների և շրջակա միջավայրի պահպանության միջև: Վաղ շրջանում կայացրած իր որոշումներից մեկում Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն¹ (այսուհետ Հանձնաժողով) ամրագրել է, որ շրջակա բնական միջավայրի պահպանության հետ կապված իրավունքները, որպես այդպիսին, ընդգրկված չեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների շարքում²:

Կոնվենցիայով սահմանված իրավունքների մի մասը, որոնք այսօր ըստ Դատարանի սերտորեն կապված են մարդու էկոլոգիական շահի հետ, ու որոնք լիարժեք իրականացնելու կարևոր երաշխիք են էկոլոգիական պահանջները, մասնավորապես հանդիսանում են օրինակ, Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված սեփականության պաշտպանության իրավունքը, ըստ ո-

¹ Եվրոպայի Խորհրդի կազմում 1955-1998թթ գործող մարմին, որը զբաղվում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղղված դիմումների նախնական քննարկմամբ: Բոլոր այն դիմումները, որոնք հետ չէին վերադարձվում հանձնաժողովի կողմից, ուղղվում էին Եվրոպական դատարան կամ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե:

² St u X and Y v Germany, application 7407/76, Decisions and Reports 5, էջ 161:

րի.«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»: Այս հոդվածի առնչությամբ Հանձնաժողովի նախնական դիրքորոշումն այն էր, որ այն չի կարող մեկնաբանվել որպես շրջակա միջավայրի որոշակի որակ ապահովելու երաշխիք¹:

Նույն ժամանակահատվածում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ամրագրել է, որ Կոնվենցիայի որևէ հոդվածի, այդ թվում ութերորդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի ամրագրումը նախատեսված չէն շրջակա միջավայրի պաշտպանությունն ապահովելու համար մատնանշելով, որ այդ նպատակով առավել արդյունավետ կլինի կիրառել ներպետական օրենսդրությունը²:

Ու չնայած տնական ժամանակ Դատարանի կողմից արտահայտվող նման հստակ դիրքորոշմանը՝ Կոնվենցիան միշտ էլ համարվել է նոր զարգացումներին հարմարվելու կենսունակություն ունեցող գործիք, ինչի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում այն բնութագրվում է որպես «կենդանի գործիք»³: Կոնվենցիայի ադապտացումն ու գործողության ոլորտի ընդլայնումն իրականացվել ու շարունակում է իրականացվել Դատարանի կողմից վերջինիս դրույթների մեկնաբանման միջոցով՝ ժողովրդավարական հասարակություններում կյանքի փոփոխվող պայմանների, ինչպես նաև գերակայող հայեցակարգերի և արժեքների ներքո: Ինչպես արդարացիորեն նշում է Քերլն Ռեյդը. «Բնապահպանական հարցերի, շրջակա միջավայրի որակի, ինչպես նաև այս ոլոր-

¹ St' u Rayner v the United Kingdom, application 9310/81, 47 DR 5: Sv France, application DR 65, էջ 250:

² St' u Kyrtatos v Greece, judgment of 22 August 2003, applicatioan 41666/98 para. 52:

³ St' u Eg Tyrer v the United Kingdom, Series A no 26 para. 31:

տի տեղեկատվության մատչելիության ապահովման կարևորության գիտակցման արդյունքում բնապահպանական հարցերն առավել հաճախ են սկսում շոշափվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից»¹: Այս հարցում սկզբունքային նշանակություն ունի այն, որ Դատարանի պրակտիկայի համաձայն՝ Կոնվենցիայի մասնակից պետությունները ոչ միայն պարտավոր են ձեռնպահ մնալ անհատի իրավունքները խախտելու, այլև նրանք պոզիտիվ պարտականություն են կրում պահպանելու այդ իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված և իրենց բնույթով բնապահպանական արժեքներ շոշափող հիմնական իրավունքները, վերոհիշյալ սեփականության պաշտպանության իրավունքից զատ, կյանքի իրավունքն է (Կոնվենցիայի հոդված 2) և՛ անձնական, և՛ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը (Կոնվենցիայի հոդված 8): Դատարանի դիրքորոշումն այն էր, որ որպեսզի համապատասխան դիմումատուն կարողանա վկայակոչել վերոհիշյալ իրավունքներից որևէ մեկը շրջակա միջավայրի համատեքստում, նա պետք է նախ և առաջ հիմնավորի, որ տվյալ իրավիճակում ինքը հանդես է գալիս որպես տուժող: Այսինքն՝ Կոնվենցիան չի թույլատրում տվյալ պարագայում կիրառել *action popularis* սկզբունքը: Դատական վերահսկողությունը գործադրելու համար նախապայմանը հանդիսանում է այն, որ զանգատարկուն հանդիսանա պետության գործողության կամ անգործության հետևանքով առաջացած Կոնվենցիայի խախտման ուղղակի կամ անուղղակի գոհ²: Այս սկզբունքը, որը հետագայում բազմիցս վերահաստատվել է շրջակա միջավայրի որակի հետ առնչվող իրավունքների վերաբերյալ դիմումներ քննելիս, ենթադրում է, որ Կոնվենցիայի խախտման վերաբերյալ դիմում կարող է ներկայացվել, եթե խախտումն արդեն տեղի է ունեցել, ինչպես նաև բացառության կարգով այն դեպքերում, երբ դիմումը պարունակում է Կոնվենցիայի խախտման իրական

¹ St' u K.Reid, A Practitioner's Guide to the European Convention on Human Rights (1998) 212-14:

² St' u Times Newspapers v United Kingdom, DR 65, էջ 307:

հնարավորությունը հիմնավորող հանգամանքներ:

Այս առումով հիշատակման արժանի է Տաուիրան և այլոք ընդդեմ Ֆրանսիայի¹ գործը, որտեղ դիմումատուները գանգատ էին ներկայացրել 1995թ. Խաղաղ օվկիանոսում Ֆրանսիայի կողմից միջուկային փորձարկումներ իրականացնելու արդյունքում իրենց կյանքի իրավունքի, սեփականության իրավունքի, ինչպես նաև անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտման վերաբերյալ: Հանձնաժողովը սույն դիմումի վերաբերյալ նշել է, որ դիմումատուները չեն ներկայացրել կոնկրետ այդ փորձարկումների հետևանքով իրենց առողջությանը պատճառված վնասի ապացույցները: Ընդ որում Հանձնաժողովն իր տեսակետը հիմնավորել է նաև այն փաստով, որ դիմումատուների բնակավայրերը գտնվել են փորձարկումների վայրից խիստ մեծ հեռավորության վրա, ուստի առողջության վրա պոտենցիալ բացասական ազդեցություն ունենալու հետևանքները հիմնավորված չեն:

Նմանատիպ գործերից ուշադրության արժանի է նաև ԼՄԲ-ն ընդդեմ ՄԻացյալ Թագավորության² գործը, որտեղ Հանձնաժողովն ու Ղատարանը հանգել են վերոհիշյալ գործի հետ նման եզրակացության: Մասնավորապես, դիմումատուն հանդիսանում է Բրիտանական այն զորքերի անդամի դուստրը, որոնք միջուկային փորձարկումներ են իրականացրել Խաղաղ օվկիանոսում 1957թ. և 1958թ.: Դիմումատուի մոտ ախտորոշվել է լեյկիմիա հիվանդությունը, և նա գանգատ է ներկայացրել Կոնվենցիայի 2րդ և 3րդ (խոշտանգումների արգելում) հոդվածները խախտելու վերաբերյալ այն հիմքով, որ իշխանությունները իր ծնողին չեն զգուշացրել, որ իր հայրը գտնվել է միջուկային փորձարկումների արդյունքում առաջացած ճառագայթման գոտում, և գուցե դրա հետևանքով ինքը կրել է հետևանքների ռիսկը: Դիմումատուն պնդել է, որ իր հիվանդությունը հանդիսանում է իր հոր կողմից այդ ճառագայթման գոտում գտնվելու հետևանք և

¹ St' u Tauria and others v France, application 28204/95, Decision of 4 December 1995:

² St' u Judgment of 9 June 1998, Reports of Judgments and Decisions 1998-III:

դրա վերաբերյալ տեղեկատվության նախնական տրամադրումը գուցե և նպաստեր իր հիվանդության արագ բացահայտմանը, բժշկական միջամտության ավելի արդյունավետ իրականացմանը: Հանձնաժողովը, սակայն, մերժել է այս դիմումը՝ ապացուցված չհամարելով այն հանգամանքը, որ տեղեկատվությունը կարող էր փոխել դիմումատուի առողջական վիճակի մահացու բնույթը, ավելին, խախտում չի ճանաչվել այն հիմքով, որ դիմումատուի հոր՝ ճառագայթման ենթարկվելու, դստեր հիվանդության, տեղեկատվությանը վաղաժամ տիրապետելու ու հիվանդության շուտ կանխորոշման ու բուժման միջև պատճառական կապը լիովին չի հաստատվել:

Նմանատիպ գործերից հետաքրքրաշարժ է նաև Գունարիդիսի գործը¹, որտեղ, ըստ դիմումատուների պնդման, նոր ճանապարհի կառուցումը կհանգեցներ Կոնվենցիայի 8րդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտմանը: Դիմումը մերժելիս Հանձնաժողովը նշել է, որ նոր ճանապարհի կառուցման շինարարությանը հատուկ շրջակա բնական միջավայրին պատճառված վնասի վկայակոչումը բավարար չէ, որ դիմումատուները հանդես գան որպես Կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտման գոհ: Նրանք պետք է կարողանան հիմնավորել, որ իրենց սպառնացող վնասի հավանականությունն այնքան լուրջ է, որ կարող է համարվել փաստացի խախտմանը հավասարագոր իրավիճակ: Դիմումատուների գանգատը մերժվել է այն հիմնավորմամբ, որ նրանք իրենց մոտեցումը փորձել են հիմնավորել ապագա ռիսկերով՝ առանց կոնկրետ ապացույցների:

Ակնհայտ է, որ տնական ժամանակ թե՛ Հանձնաժողովը, թե՛ Դատարանը դրսևորում էին այն համոզմունքը, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները ոչ մի շոշափելի եզր չեն կարող ունենալ շրջակա բնական միջավայրի պատշաճ որակի ապահովման հետ:

1980-ականների ժամանակահատվածը, երբ Էկոլոգիական գլոբալ ճգնաժամն ու Էկոլոգիական հավասարակշռության լուրջ խախ-

¹ St' u Gounaridis and Others v Greece, application 41207/98:

տումները, ցավոք, հանդիսանում էին կայացած իրողություն, բոլոր պետություններն ու ողջ հանրության ուշադրությունը սևեռվել էր շրջակա բնական միջավայրի աղտոտման անխուսափելի արդյունքների, դրանց անդառնալի հետևանքների ու հետագա սխալները հնարավորինս կանխարգելելու քաղաքականության վրա: Այս ժամանակաշրջանից սկսած՝ Դատարանի նախադեպային իրավունքի զարգացման պատմությունը վկայում է, որ Հանձնաժողովը ևս աստիճանաբար սկսում է հակվել այն դիրքորոշմանը, որ շրջակա բնական միջավայրին պատճառված վնասի կամ բնապահպանական այնպիսի խնդիրների, ինչպիսիք են օրինակ, սահմանված չափը գերազանցող աղմուկի, աղտոտման հետևանքով կարող են խախտվել մարդու անձնական կյանքը հարգելու, սեփականության պաշտպանության իրավունքները:

Այս զարգացումների սկզբնակետը համարվում է Արոնդելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը¹, որտեղ դիմումատուն, հանդիսանալով Լոնդոնի Գատուիկ օդանավակայանի վազքուղու մոտ գտնվող տան սեփականատեր, գանգատ է ներկայացնում Եվրոպական դատարան առ այն, որ ինքնաթիռների գործարկման և ավտոմեքենաների աղմուկը լուրջ բացասական ազդեցություն է ունեցել իր առողջության վրա՝ ապացուցելով, որ իր առողջական վիճակն էականորեն վատթարացել է հենց այդ գործոնների հետևանքով: Գանգատը ներկայացվել էր Կոնվենցիայի Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և Սեփականության պաշտպանության իրավունքների խախտման վերաբերյալ: Դատարանը վճիռ չի կայացրել այս գործով այն պատճառով, որ կողմերը հասել են հաշտության համաձայնության և Մեծ Բրիտանիայի և հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության կառավարությունը դիմումատուին վճարել է գումարային փոխհատուցում աղմուկի հետևանքով առաջացած խնդիրների լուծման համար:

¹ St' u Arrondelle v the United Kingdom, DR 26, para.5:

Փառելն ու Ռայներն ընդդեմ Միացյալ Թագավորության¹ և Բագգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերն² այս իմաստով ներկայացնում են առանձնահատուկ կարևորություն, քանի որ դրանցում Հանձնաժողովն ու Դատարանն առաջին անգամ հստակ կերպով ընդունում են, որ Կոնվենցիայում ամրագրված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և սեփականության պաշտպանության իրավունքները կարող են խախտվել բնապահպանական այնպիսի խնդրի պատճառով, ինչպիսին աղմուկն է: Վերոհիշյալ գործերով դիմումատուները գանգատներ են ներկայացրել իրենց մասնավոր կյանքին միջամտության վերաբերյալ, որն առաջացել էր օդանավերի գործարկման ժամանակ առաջացած աղմուկի հետևանքով: Ըստ Դատարանի դիրքորոշման. «...Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ոչ միայն հարգել, այլև պաշտպանել Կոնվենցիայի ութերորդ հոդվածով նախատեսված իրավունքները: Աղմուկի պատճառով առաջացած էական անհարմարությունն ակնհայտորեն կարող է ազդել անձի ֆիզիկական առողջության վրա և դրանով իսկ արդեն որակվել որպես միջամտություն վերջինիս անձնական կյանքին: Այն կարող է նաև լուրջ խնդիրներ առաջացնել անձի համար իր սեփական տան հարմարություններից լիարժեք օգտվելու հարցում: Գործի հանգամանքներով ներկայացվել է, որ դիմումատուի տան վրայով թռչող ինքնաթիռների աղմուկի միջին աստիճանը բարձր է սահմանված նորմերից, այն կարող է արթնացնել այդ տանը քնած անձին, ինչը, ըստ Հանձնաժողովի, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի ակնհայտ միջամտություն է»: Դատարանը նաև ընդունել է, որ դիմումատուների «անձնական կյանքի որակը» և իր գույքի լիարժեք տիրապետման սահմանները խախտվել են Հիտրոու օդանավակայանի ինքնաթիռների շահագործման հետևանքով: Մասնավորապես, «Կոնվենցիայի ութերորդ հոդվածի առաջին մասը, որը

¹ St' u Powell and Rayner v the United Kingdom, application 9310/81, Series A, 172:

² St' u Baggs v the United Kingdom, application 9310/81, Decision of 19 January 1985, DR 44, para.13:

երաշխավորում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն կարելի լինի կիրառել միայն իշխանությունների կողմից անհատի անձնական և ընտանեկան կյանքի դեմ ձեռնարկված անմիջական գործողությունների նկատմամբ: Այն կարող է ընդգրկել նաև այնպիսի անուղղակի միջամտություններ, որոնք հանդիսանում են մասնավոր անձնաց դեմ չուղղված այլ գործողությունների անխուսափելի հետևանք: Ահա այս համատեքստում էլ պետք է ընդունել, որ պետությունը պարտավոր է ոչ միայն հարգել, այլև պաշտպանել ութերորդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը»¹:

Ինչ վերաբերում է սեփականության պաշտպանության իրավունքը խախտելուն, ապա այդ կապակցությամբ Հանձնաժողովը նշել է. «Այս դրույթը հիմնականում վերաբերում է սեփականության կամայական բռնագրավմանը և ըստ էության չի երաշխավորում գույքի նկատմամբ սեփականության իրավունքների իրականացում հաճելի բնական միջավայրի պայմաններում: Մակայն ճշմարիտ է նաև այն, որ թե՛ աղմուկի բարձր աստիճանի, թե՛ հաճախականության առումով օդանավերի աղմուկը կարող է էական ազդեցություն ունենալ անշարժ գույքի շուկայական արժեքի վրա, այն դարձնել մասամբ ոչ պիտանի, ինչով կհավասարվի սեփականության մասնակի փաստացի օտարմանը: Այդուհանդերձ, դիմումատուները որևէ ապացույց չեն ներկայացրել, որը կհիմնավորեր, որ համապատասխան անշարժ գույքի արժեքը օդանավերի աղմուկի հետևանքով նվազել է այնքան, որ կարողանա հավասարեցվել մասնավոր սեփականությունից մասնակի զրկելուն, որն էլ իր հերթին անառարկելիորեն կհանգեցնեք փոխհատուցման վճարման»²:

Ինչպես և սպասելի էր, Հիտրոու օդանավակայանի աղմուկի հետևանքով առաջացած խնդիրները Դատարանի քննության առար-

¹St' u Daniel Garcia San Jose, Environmental protection and the European Convention on Human Rights, Council of Europe publishing, 2005, էջ 8:

² St' u Baggs v the United Kingdom, application 9310/81, Decision of 19 January 1985, DR 44, para.14:

կա դարձան նաև հետազայում՝ մանավանդ գիշերային խիտ չվացուցակների հաստատումից հետո: Ու թեև Մեծ Բրիտանիայի և հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունը որպես այդ չվացուցակի արդարացման հիմնական փաստարկ ներկայացնում էր երկրի տնտեսական բարեկեցությունը, սակայն Դատարանի երրորդ բաժանմունքի կողմից գործի քննության արդյունքում ճանաչվել է Պետության կողմից Կոնվենցիայի ութերորդ հոդվածի առաջին մասով սահմանված դիմումատուների իրավունքներն ապահովելու ուղղությամբ ողջամիտ միջոցառումներ իրականացնելու դրական պարտավորության խախտում: Դատարանը հաշվի է առել Կոնվենցիայի դրույթների կատարումն ապահովելուն ուղղված միջոցառումների ընտրության և անհատի ու հասարակության մրցակցող շահերի միջև արդարացի հավասարակշռություն պահպանելու՝ Պետության հայեցողությունը: Դատարանը որդեգրել է հետևյալ կարևորագույն մոտեցումը. «Դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ պահանջվող հավասարակշռությունը հաստատելու համար Պետությունները պետք է հաշվի առնեն մի շարք նյութական հանգամանքներ: Պետության տնտեսական բարեկեցության մասին կատարված պարզ վկայակոչումը բավարար չէ անձանց իրավունքների նկատմամբ առաջնահերթություն սահմանելու համար: Դատարանը գտնում է, որ Պետությունները պարտավոր են որքան հնարավոր է նվազեցնել անձանց իրավունքների նկատմամբ միջամտությունը՝ փորձելով գտնել այլընտրանքային լուծումներ և ընդհանուր առմամբ ձգտել իրենց նպատակներին հասնել մարդու իրավունքները նվազագույնս սահմանափակող ճանապարհներով: Այդ մոտեցմանը հավատարիմ մնալու համար մինչև համապատասխան նախագծի իրականացումը անհրաժեշտ է իրականացնել պատշաճ և ամբողջական ուսումնասիրություններ լավագույն հնարավոր լուծումը գտնելու համար, որն էլ իր հերթին հնարավորություն կտա գործնականում ապահովել ճիշտ հավասարակշռություն»: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ իր ժամանակի և ներկայիս համար Դատարանի այս դիրքորոշումն էական առաջընթացային քայլ էր շրջակա միջավայրի պահ-

պանության տեսանկյունից: Վերոհիշյալ գործով Դատարանն հանգել է այն եզրակացության, որ Կառավարությունը չի ձեռնարկել դիմումատուների դիրքորոշումը պաշտպանելուն ուղղված միջոցառումներ, որն է լուրջ փորձ չի ձեռնարկվել դիմումատուների բնականոն քունը խանգարող գործոնների ազդեցությունն ու խորությունը գնահատելու համար, չի կատարվել նախնական հատուկ և ամբողջական ուսումնասիրություն, որոնք ուղղված կլինեին մարդու իրավունքների խախտման տեսանկյունից նվազագույն լուծումների հայտնաբերմանը: Ուշագրավ է, որ Դատարանի Մեծ Պալատը, այնուհանդերձ, բեկանել է Դատարանի վճիռը՝ գտնելով, որ Կառավարությունն իրականացրել է համապատասխան ուսումնասիրությունները և նշված հանգամանքներում ներպետական իշխանությունները չեն գերազանցել մրցակցող շահերի միջև արդար հավասարակշռություն ապահովելու իրենց հայեցողության սահմանները: Այս գործի առանձնահատկությունը նաև այն է, որ Մեծ պալատի թվով հինգ անդամների կողմից գրվում է հատուկ կարծիք, ըստ որի մարդու իրավունքների պաշտպանության և շրջակա միջավայրի բարելավման միջև առկա է սերտ կապ: Հիմնվելով Կոնվենցիայի եվոլյուտիվ մեկնաբանության վրա, նրանք քննադատել են վճռի բեկանումը՝ այն գնահատելով որպես «քայլ հետ», քանի որ այդպիսով *inter alia* նախապատվությունը տրվում էր տնտեսական գործոններին և ոչ թե մարդու իրավունքներին ու առողջությանը¹:

Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի² գործով դիմումատուն Եվրոպական դատարան գանգատ է ներկայացրել, որի էությունն այն է, որ իր տան մոտ գտնվող գիշերային ակումբերի աղմուկը լուրջ բացասական ազդեցություն է թողնում իր առողջության վրա: Ըստ դիմումատուի խախտվել է Կոնվենցիայի ութերորդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, քանի որ Պետությունն ինքն է պատասխանատվություն կրում իր

¹ *St u Hatton and Others v the United Kingdom*, application 36022/97, judgment of 8 July 2003, para 118:

² *St u Gomez v Spain*, application 4143/02, Judgment of 16 November, 2004

երկրում յուրաքանչյուրի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պահպանության համար, ինչը ենթադրում է պատշաճ վերահսկողության իրականացում նաև աղմուկի նկատմամբ: Դատարանը, սույն գործի հետ կապված, 2004թ. նոյեմբերի 16-ի վճռով արձանագրում է. «Դիմումատուն ապրել է այնպիսի տարածքում, որտեղ տիրող իրավիճակի պատճառով անխուսափելիորեն ենթարկվել է գիշերային անհանգստությունների, ու հատկապես հանգստյան օրերին բավականին խաթարվել է նրա հանգիստ կյանքի ընթացքը: Հաշվի առնելով, որ աղմուկը գերազանցել է թույլտարելի նորմատիվի սահմանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այն կրել է շարունակական բնույթ, Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի ութերորդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտում: Չնայած համապատասխան քաղաքի Քաղաքային խորհուրդն ընդունել է աղմուկի թույլատրելիության աստիճանի հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտ, այնուհանդերձ, հետևողական չգտնվելով իրավական ակտերը կիրառելու խնդրում, հանդուրժել է խախտումները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Կոնվենցիայի խախտմանը»: Ըստ Դատարանի. «Իշխանությունների անգործության հետևանքով տեղի է ունեցել անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի կոպիտ խախտում»¹:

Քննարկվող թեմայի շրջանակներում խիստ ուշագրավ է Օներ-յիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործը², որի էությունը զազային պայթյունի հետևանքով մահացած մի քանի անձանց ներկայացուցիչների դիմումն էր: Սույն գործով վճիռ կայացնելիս Դատարանը Կոնվենցիայի երկրորդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ նշում է. «Եվրոպական Կոնվենցիայի երկրորդ հոդվածը անդամ պետություններին

¹ St' u Gomez v Spain, application 4143/02, Judgment of 16 November, 2004, para 53, para.60:

² St' u Judgment of 18 June 2002: Այս գործը փոխանցվել էր Մեծ Պալատի իրավասությանը, որը 2004 թ. նոյեմբերի 30ին կայացված վճռով հաստատեց Դատարանի Ստորին Պալատի կողմից նախկինում կայացված վճիռը:

պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձին կյանքից դիտավորությամբ կամ անօրինական զրկելուց, այլ նաև երաշխավորում է կյանքի իրավունքն ընդհանուր առմամբ՝ անդամ պետություններին պարտավորեցնելով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ հասարակության անդամների կյանքն ապահովելու համար»¹: Այս Դատարանը նշել է. «Այս կապակցությամբ պետք է վերահաստատել, որ եվրոպական չափանիշների վերջին զարգացումները հաստատում են շրջակա բնական միջավայրի պահպանության ոլորտում ազգային իշխանությունների պարտականությունների ընդլայնում»²:

Ակնհայտ է, որ ժամանակի պահանջների փոփոխության հետ Դատարանն իր պրակտիկայում գնալով առավել լայնածավալ է անդրադարձել բնապահպանական հարցերի կապակցությամբ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտումներին: Քննարկվող հիմնախնդրի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում մատնանշել նաև Գուերայի գործը³, որով Հանձնաժողովը ճանաչել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ պատասխանող պետության կառավարության լիազոր մարմիններն անհրաժեշտ ու բավարար միջոցներ չէին ձեռնարկել դիմումատուներին շրջակա միջավայրում առկա և վերջիններիս առողջությանը վտանգ սպառնացող նյութերի առկայության մասին պատշաճ տեղեկացնելու ուղղությամբ: Այս իմաստով Հանձնաժողովը վկայակոչել էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածից բխող պետության դրական պարտավորությունը, համաձայն որի պետությունները պարտավոր են ոչ միայն էկոլոգիական տեղեկատվությունը մատչելի դարձնել հասարակության համար ընդհանրապես, այլ նաև հավաքել, մշակել և տարածել հատկապես այն տեղեկատվությունը, որն իր էությամբ չի կարող անմի-

¹ St' u Oneryildiz v Turkey, Judgment of 18 June 2002, para 62, St' u նաև Carveli and Ciglio v Italy, application 32967/96, para 48, Paul and Andrey Edwards v the United Kingdom, application 46477/99 para 54:

² St' u Oneryildiz v Turkey, Judgment of 18 June 2002, para 64:

³ St' u Guerra and Others v Italy, Judgment of 19 February 1998, Reports 1998-I, էջ 238:

ջականորեն հասանելի լինել, իսկ հասարակությունն էլ չի կարող ինքնին դրա մասին տեղեկանալ, եթե պետական մարմիններն այդ ուղղությամբ հատուկ քայլեր չձեռնարկեն: Գուերայի գործով Դատարանը նաև հաստատել է, որ պետությունը պարտավոր է նաև անհատ անձանց տրամադրել տեղեկատվություն, որը վերջիններիս հնարավորություն կտա գնահատելու այն ռիսկերը, որոնք կարող են սպառնալ նրանց կամ նրանց ընտանիքների անդամներին, եթե շարունակեն ապրել ուժեղ աղտոտված շրջակա բնական միջավայրում: Պետության այս պարտավորության ճանաչման հիմքում Դատարանը դրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, մասնավորապես անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պահպանմանը ներհատուկ պետության դրական պարտավորության գաղափարը:

Օներիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործով Դատարանը վերահաստատում է Գուերայի գործով որդեգրած մոտեցումը, համաձայն որի հանրությունն իրավունք ունի տեղեկացված լինել իր առողջության վրա բացասական հետևանքներ առաջացնելու ռիսկեր պարունակող շրջակա բնական միջավայրի բաղադրիչների մասին: Նշված գործի քննության արդյունքում Դատարանը հաստատում է, որ պետական մարմինները չեն կատարել համապատասխան տարածքի բնակիչներին այդ ռիսկերի մասին տեղեկացնելու պարտականությունը, որը դիմումատուներին հնարավորություն կտար ինքնուրույն գնահատել իր և իր ընտանիքի համար ստեղծվող վտանգի աստիճանը և որոշում կայացնել այն մասին, թե շարունակել ապրել այդ միջավայրում, թե ոչ:

Այլ խմբում կարելի է առանձնացնել նաև այն գործերը, որտեղ, ելնելով շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթությունից, սեփականատերերի կողմից իրենց հողակտորների օգտագործման սահմանափակումները Հանձնաժողովը համարել է իրավաչափ: Այսպես, Հերիքն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով՝ դիմումատուն զրկվել է իր սեփական հողատարածքի վրա գտնվող գետե-

¹ St' u Herrick v the United Kingdom, European Commission's Decision on admissibility of 31 March 1985, DR 42, էջ 280:

դարանը որպես կացարան օգտագործելու հնարավորությունից, քանի որ այն գտնվել է Ջերսի կղզու կանաչ գոտու սահմաններում: Ըստ դիմումատուի այդ սահմանափակումները խախտում են Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված իր սեփականության իրավունքը: Սակայն, Հանձնաժողովը հանգել է այն դիրքորոշմանը, որ պետությունը արդարացի կերպով կարողացել է հավասարակշռել դիմումատուի անհատական և հասարակության ընդհանուր շահը, ուստի այդ սահմանափակումները համապատասխանում են Արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին: Ըստ Հանձնաժողովի նման սահմանափակումները ոչ միայն ցանկալի, այլ նաև անհրաժեշտ են բնության բացառիկ տարածքները պաշտպանելու համար, որպեսզի Ջերսիի բնակիչները և այցելուները հնարավորություն ունենան զմայլվելու այդ տեսարաններով:

Եվրոպական դատարանի դիրքորոշումը քննարկվող հիմնախնդիրների շուրջ առավել ամբողջական պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում դիտարկել նաև 2010թ. հետո կայացրած որոշ վճիռներ: Մասնավորապես, Եվրոպական դատարան գանգատ է ներկայացվել Ֆրանսիայի օդանավակայանի վազքուղու երկարացման հարցի կապակցությամբ: Դիմումատուները օդանավակայանի մոտակայնքում գտնվող բնակելի տան սեփականատերեր էին, որոնք վիճարկում էին, որ վազքուղու երկարացման արդյունքում այն ավելի մոտեցել է իրենց տներին, ինչի հետևանքով աղմուկի մակարդակի էական ավելացում է գրանցվել, որն էլ իր հերթին խախտում է 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու, ինչպես նաև 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության պաշտպանության իրավունքը, քանի որ այս ամենի հետևանքով էականորեն նվազում է այդ անշարժ գույքերի շուկայական արժեքը: 8-րդ հոդվածի կապակցությամբ ՄԻԵԴ-ը հանգում է այն եզրակացության, որ վազքուղու երկարացման նախագիծը նախապես անցել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մանրամասն փորձաքննություն, մոնիթորինգ և բոլոր պահանջվող ընթացակարգերը, որտեղ ապահովվել է նաև հանրության

մասնակցությունը: Իսկ այն փաստի կապակցությամբ, որ որոշման կայացման գործընթացը համակարգված չի եղել ու հանրությունը մեծ հաշվով հնարավորություն չի ունեցել ընդհանրական գնահատական տալու նախագծին, ՄԻԵԴ-ը գտնում է, որ չնայած կառավարությունը պարտավոր է հարգել և հաշվի առնել անհատների մասնավոր շահերը, այնուհանդերձ, այն կարող է ինքնուրույն «ընտրել այդ պարտավորության կատարումն ապահովող ուղիներն ու միջոցները»: Հաշվի առնելով նաև տեղական բնակչության վրա աղմուկի ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, Դատարանը հանգում է այն եզրակացության, որ Կառավարությանը հաջողվել է արդարացի կերպով հավասարակշռել տեղական բնակիչների և տվյալ տարածքի տնտեսական զարգացման մրցակցող շահերը: Հետևաբան այս հոդվածով մասով որևէ խախտում Դատարանի կողմից չի արձանագրվում:

1-ին Արձանագրության 1-ին հոդվածի կապակցությամբ Դատարանը մանրամասնում է, որ այդ մասնավոր սեփականությունը ցանկալի միջավայրում պահելը ըստ էության չի հանդիսանում այդ հոդվածի հիմնական առաքելությունը: Անշարժ գույքի արժեքի նվազման առումով Եվրոպական դատարանը լրացուցիչ պարզաբանումներ է պահանջել անշարժ գույքի գնահատման վերաբերյալ, սակայն դիմումատուները չէին կարողացել ներկայացնել այդ տեղեկատվությունը: Նման պայմաններում Եվրոպական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության. «Քանի որ դիմումատուները չկարողացան պատշաճ կերպով հիմնավորել, որ օդանավակայանի վազքուղին երկարացնելը լուրջ ազդեցություն է թողել իրենց պատկանող անշարժ գույքի շուկայական արժեքի վրա», հետևաբար, Եվրոպական դատարանը քննարկվող հոդվածի խախտում չի արձանագրում:

Դուբեցկան և մյուսներն ընդդեմ Ուկրաինայի գործով դիմումատուները երկու ընտանիքներ էին, որոնք բնակվում էին ածխահանքի և ածխի մշակման գործարանի մոտակայքում: Մոտակայքում են տեղաբաշխված եղել նաև ածխի արդյունահանման հետևանքով առաջացած թափոնները: Դիմումատուների պնդմամբ այս ամենի

հետևանքով խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող իրենց մասնավոր կյանքի իրավունքը, քանի որ պետության սեփականությունը հանդիսացող ածխահանքի և գործարանի շահագործման հետևանքով ստեղծվել է բնապահպանական տնական աղտոտման միջավայր: Մույն գործի քննության հետ կապված՝ Եվրոպական դատարանը մերժում է Կառավարության այն առարկությունը, համաձայն որի դիմումատուները չեն սպառել իրենց իրավունքների ներպետական պաշտպանության բոլոր միջոցները: Դատարանը գտնում է, որ 8-րդ հոդվածը կիրառելի է դիմումում բարձրացված հանգամանքների նկատմամբ՝ նշելով, որ շատ հաճախ հնարավոր չէ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատել արդյունաբերական աղտոտման ազդեցությունը, և դժվար է տարանջատել շրջակա միջավայրի աղտոտման ազդեցությունը առողջությանը վնաս պատճառող այլ հարակից գործոններից, ինչպիսիք են մասնագիտությունը, անձնական կենսակերպն ու տարիքը: Արդյունքում Դատարանը գտնում է, որ դիմումատուներին բնակության այլ վայր չհատկացնելը կամ բնապահպանական ռիսկերը նվազեցնելուն ուղղված համակարգված քաղաքականություն չիրականացնելով, Կառավարությունը արդար կերպով չի հավասարակշռել տվյալ անձանց մասնավոր և ընդհանրապես հասարակության շահերը: Հետևաբար, Կառավարության գործողությունները չեն կարող արդարացվել 8-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո: Դատարանը վճիռ է կայացնում 8-րդ հոդվածի հիման վրա դիմումատուներին տրամադրել ոչ նյութական վնասի հատուցում 55000 եվրոյի չափով:

Այսպիսով, ինչպես պարզ է դառնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռների վերլուծությունից, իր գործունեության սկզբնական շրջանում Դատարանը շրջակա միջավայրի որակի և մարդու իրավունքների միջև փոխազդեցությունը չէր ճանաչում որպես կարևորագույն գործոն: Անհրաժեշտ է նշել, որ մարդու իրավունքների պաշտպանության տարբեր միջազգային մարմինների դատազորությունն այս հարցում որոշակիորեն միատեսակ է եղել, ինչը, ամենայն հավանականությամբ, հանդիսա-

նում է այն բանի հետևանք, որ բոլոր մարմիններն էլ մարդու իրավունքների հիմնահարցերը քննարկում են՝ ելնելով նույն հիմնարար սկզբունքներից, ինչպիսիք են պետության հայեցողության սահմանները, պետությունների դրական պարտավորության հայեցակարգը, ապացուցման բեռի բաշխման սկզբունքը և այլն: Փաստորեն, մինչև 1980-ական թվականները այս ոլորտում պետությունների հայեցողության սահմանները շատ լայն էին, սակայն, ելնելով ժամանակի պահանջներից, Դատարանը քննարկվող ոլորտում անդամ պետությունների համար կարծես թե ավելի բարձր չափանիշներ է սահմանում: Այս մոտեցման արդյունքում արձանագրված հիմնական արդյունքն այն է, որ պետությունների համար ուղղակիորեն և անուղղակիորեն առաջացել է իրենց յուրիսդիկցիայի ներքո գտնվող բոլոր անձանց համար առողջ շրջակա միջավայր ապահովելու դրական պարտավորություն: Լիովին համաձայն ենք, որ Կոնվենցիայով սահմանված անհատների կյանքի իրավունքը պաշտպանելու պարտականությունը կարող է զրկվել իր բովանդակությունից և նշանակությունից, եթե այդ պաշտպանությունը ներառում է այնպիսի շրջակա միջավայր երաշխավորելու պարտականություն, որտեղ վտանգ է սպառնում կյանքի իրավունքի իրացմանը:

ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРАВА ЧЕЛОВЕКА В РЕШЕНИЯХ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА

Олимпия Гегамян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

В этой статье, посвященной содержанию и сущности экологических прав, а также международно-правовых и институциональных механизмов их защиты, автор оценивает значение концепции «живого инструмента» в контексте правовой практики Европейского суда по правам человека и предоставляет критический анализ правового подхода ЕСПЧ к экологическим правам человека в настоящее время. В частности, в свете правовой практики, сложившейся в результате применения Статьи 2, Статьи 8 и Статьи 1 Протокола № 1 ЕКПЧ, показано, как Европейский суд по правам человека постепенно менял свою позицию касательно доктрины «границ и свободы усмотрения» государств-участников при рассмотрении жалоб по экологическим вопросам.

Автор утверждает, что эта тенденция, в конечном счете, привела к распространению юрисдикции ЕСПЧ также на жалобы, утверждающие, что правовые системы и внутригосударственные регламенты не обеспечивают адекватную защиту окружающей среды, таким образом, создавая угрозу для человеческой жизни (Статья 2), права на личную и семейную жизнь (Статья 8) или права на беспрепятственное пользование имуществом (Статья 1 Протокола 1 № 1 ЕКПЧ).

ENVIRONMENTAL RIGHTS IN THE CASE-LAW OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Olimpia Geghamyan

*Assistant of the YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences*

In this article devoted to the nature of environmental rights and international protection mechanisms thereof the author reveals the role of the living instrument concept as applied in the jurisprudence of the European Court of Human Rights and subsequently critically analyzes the current standing of the ECHR case-law concerning human environmental rights. In particular, under the light of the ECHR case-law on Article 2, Article 8 and

Article 1 of Protocol 1 of the Convention it is shown how the European Court of Human Rights gradually changed its position as far as it concerns the doctrine of margin of appreciation in cases relating to environmental issues.

The author argues that this tendency ultimately resulted in advancement of the ECHR jurisdiction also to applications alleging that member states' activities, legal frameworks or domestic policies do not provide for adequate environmental protection, thus placing human life (Article 2), right to private and family life (Article 8) or right of peaceful enjoyment of possessions (Article 1 of Protocol 1) under risk.

Բանալի բաներ – շրջակա միջավայր, շրջակա միջավայրի վնասողնեցության փորձաքննություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ, էկոլոգիական տեղեկատվություն, աղտոտում:

Ключевые слова: *окружающая среда, оценка воздействия на окружающую среду, мониторинг окружающей среды, экологическая информация, Загрязнение.*

Key words: *environment, environmental impact assessment, environmental monitoring, environmental information, pollution.*

ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարդուշ Եսայան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,
խրակաբանական գիտությունների թեկնածու*

Քաղաքացիական դատավարությունում պատմականորեն գոյություն են ունեցել դատավարության անցկացման երկու հիմնական ձևեր՝ քննչական (հիմնված քննչական դատավարական սկզբունքի վրա) և մրցակցային (հիմնված դատավարական մրցակցության սկզբունքի վրա):¹

Քննչական (ինկվիզիցիոն) դատավարությունում կողմերի և դատարանի դերերը բաշխված են եղել մրցակցային դատավարությանը տրամադծորեն հակառակ: Դատարանն այստեղ ակտիվ էր գործի քննության ժամանակ, կողմերը՝ հարաբերականորեն պասիվ: Այլ կերպ ասած՝ քննչական դատավարությունում, ինչպիսին էր նաև խորհրդային դատավարությունը, դատարանը պետք է գործով ապացույցներ հավաքեր: Այս առումով, կարծում ենք, խոսել դատարանի օբյեկտիվության մասին՝ դժվար էր:

Դատարանի ակտիվությունը առավել ցայտուն էր դրսևորվում ապացույցների հետազոտման ժամանակ: Կողմերը և նրանց ներկայացուցիչները հարցեր էին տալիս քննվող անձին ոչ թե անմիջականորեն, այլ դատարանի միջոցով:

1864թ դատական բարեփոխումներով և քաղաքացիական դատավարության Կանոնագրքի ընդունմամբ դատավարական ուսմունքում զգալի հետաքրքրություն առաջացավ մրցակցային դատավարության հիմնախնդիրների նկատմամբ: Այն խորը ուսումնասիրվել և վերլուծության է ենթարկվել Ա.Խ. Գոլստենի, Ե.Վ. Վասկովսկու, Ե.Ա. Նեֆեդևի, Տ.Մ. Յաբլոնովի և մի շարք այլ դատավարագետների աշ-

¹ St'e u Коршунов Н.М., Мареев Ю.Л. Гражданский процесс. Учебник. 2-е изд, М., 2007, էջ 43:

խատություններում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բոլորի կարծիքը միասնական է այն հարցում, որ մինչ բարեփոխումները դատավարությունը Ռուսաստանում քննչական էր, և որ միայն դատական բարեփոխումները հանգեցրեցին դատավարությունում մրցակցության ի հայտ գալուն: Բացի այդ, մրցակցությունը քաղաքացիական դատավարությունում դիտարկվում էր ոչ միայն որպես սկզբունք, այլև որպես գործի փաստացի հանգամանքները հետազոտող մեխանիզմ (մեթոդների համակցություն): Մրցակցային դատավարության հետազոտությունները իրականացվում էին ամբողջությամբ քննչական դատավարության հետ համեմատության սահմաններում, իսկ դատավարությունը «քննչականի» և «մրցակցայինի» բաժանումը կատարվում էր՝ հաշվի առնելով դատավարության նյութական կողմի ղեկավարման հարցում դատարանի ունեցած դերը (փաստական նյութերի հավաքում, գործով ապացույցների փնտրտուք և այլն): Թվարկված հեղինակների մեծ մասը մրցակցությունը դիտարկում էր ոչ միայն կողմերի գործունեության դիրքերից, այլև դատավարությունում դատարանի դերի և գործառույթների տեսանկյունից:¹

Արտասահմանյան քաղաքացիական դատավարական գրականությունում 19-20-րդ դարերում մրցակցության սկզբունքը ստացավ իրեն ըստ էության բնութագրող «դատավիճող կողմերի անձնական ինքնավարություն» անվանումը²:

Մրցակցության սկզբունքի հայեցակարգը մանրամասն մշակվել է Ա.Խ. Գոլստենի կողմից, ով մրցակցության սկզբունքը սահմանում էր որպես սկիզբ, որի ուժով կողմերի դիմումից է կախված, թե դատարանը ինչպես կգործի: Այսինքն՝ դատավիճող կողմերը հանդիսանում են դատավարության լիիրավ «տերը», իսկ դատարանը օրյե-

¹ St' u Шишкин С.А. Состязательность в гражданском и арбитражном судопроизводстве. М.: Городец, 1997, էջ 75:

² St' u Васильковский Е.В. Учебник гражданского процесса. Краснодар, 2003, էջ 138-139:

տիվ դիրք է գրավում¹:

Մինչխորհրդային շրջանում մրցակցության սկզբունքի մասին մոտեցումները իրարամերժ էին, շատ դեպքերում՝ նաև հակասական: Այսպես օրինակ՝ Մ. Բերնարդը, մերժելով դատավարությունում «մաքուր մրցակցությունը», նշում էր, որ դատավորն այդ դեպքում դառնում է անտարբեր ձևամուլ, որին արդարադատությունը որպես դատական որոշման տարր քիչ է հետաքրքրում:² Իսկ ըստ Մ. Պլևակոյի՝ մրցակցության անհիմն լինելը արտահայտվում էր նրանում, որ դատավարությունը կարող էր շահել առավել փորձառու և ճարպիկ կողմը, որը և համարվում էր Ռուսական արդարադատության ցավոտ տեղերից մեկը:³

Մրցակցության սկզբունքը առավել խորը վերլուծության ենթարկվեց խորհրդային շրջանի դատավարագետներ Մ. Ավդյուկովի, Ս. Կուրիլևի, Վ. Տարանենկոյի, Մ. Տրեուշնիկովի և այլոց կողմից:

Մ. Ավդյուկովը և Ա. Կլեյմանը գտնում էին, որ դատավարության մրցակցության սկզբունքը օբյեկտիվ ճշմարտությունը պարզելու հիմնական խոչընդոտն է, և այս սկզբունքի համաձայն՝ դատարանը որոշման հիմքում կարող է դնել միայն այն փաստերը, որոնք նշում են կողմերը, կամ կարող է օգտագործել միայն այն ապացույցները, որոնք ներկայացրել են կողմերը և այլն: Այսպիսի կարգը դատավարությունում հաղթանակ կարող է ապահովել ոչ թե նրան, ով ճիշտ է, այլ նրան, ով օգնության համար հնարավորություն ունի վճարելու այն փաստաբանին, ով ավելի ճարպիկ է և կարողացել է օգտվել մյուս կողմի վրիպումներից:⁴

¹ St' u Гольстмен А.Х. Состязательное начало гражданского процесса в теории и русском законодательстве, Юридические исследования и статьи, СПб, 1884, էջ 404:

² St' u Бернард М. Предполагаемые изменения в процессуальном законодательстве // Судебная газетаб 1980, N 19, էջ 4:

³ St' u Плевако С.А. Одно из больших мест нашего правосудия // Юрист, 1904, N 6, էջ 225-226:

⁴ St' u Авдюков М.Г., Клейнман А.Ф., Треушников М.К. Основные черты буржуазного гражданского процессуального права. М., 1978, էջ 18-20:

Քաղաքացիական դատավարությունում մրցակցության սկզբունքի նման մեկնաբանումների դեմ հանդես է եկել բուլղար դատավարագետ Ժ. Ստալը: Ըստ նրա «անկողմնակալությունը» ըստ էության կողմնակալություն է, որը դրսևորվում է անգործության տեսքով: Դատական անկողմնակալության ճշմարտացի բովանդակության և ճշմարտության բացահայտման միջև գոյություն չունի ոչ մի իրավական անհամատեղելիություն:¹

Դատավարությունում դատարանի ունեցած ակտիվ դերը պաշտպանում էին նաև դատավարագետներ Վ. Տիխինյան և Վ. Տիխինովիչը: Ըստ վերջիններիս յուրաքանչյուր կողմ պետք է ապացուցի այն հանգամանքը, որը նա վկայակոչում է որպես իր պահանջների կամ առարկությունների հիմք: Սակայն, ըստ նրանց, եթե կողմերի ներկայացրած ապացույցները բավարար չեն, դատարանը կողմերին և այլ անձանց պետք է առաջարկի ներկայացնելու լրացուցիչ ապացույցներ, դրանք ստանալու համար անի հարցումներ, հիմնարկներից, կազմակերպություններից կամ քաղաքացիներից անձամբ պահանջի ապացույցներ:²

Այսպիսով, եթե ամփոփենք վերը հիշատակված դատավարագետների մոտեցումները մրցակցության սկզբունքի հասկացության և էության մասին, ապա կարող ենք ասել, որ մրցակցության սկզբունքը ըստ էության հանդիսանում է դատավարության սուբյեկտների և, առաջին հերթին, կողմերի հետ դատարանի համագործակցության արտահայտություն՝ նպատակ ունենալով առավել ամբողջական պարզելու գործի փաստական հանգամանքները և ապահովել իրավունքների արագ և գործուն պաշտպանությունը:

Այնուամենայնիվ, քաղաքացիական դատավարության իրավունքում մրցակցության սկզբունքի առկայությունը գիտության մեջ երկար ժամանակ մնում էր վիճահարույց:

¹ St' u Сталев Ж. Судейское беспристрастие и состязательное начало // Правовая мысль. 1968, N 6, էջ 17:

² St' u Тихиня В.Г., Тихонович В.В. Рассмотрение в суде гражданских дел. Минск, 1982, էջ 28-29:

Քննարկվող սկզբունքի վերաբերյալ ժամանակակից տարբեր դիրքորոշումներից առանձնահատուկ քննարկման է արժանի Վ.Սեմյոնովի մոտեցումը: Նա քաղաքացիական դատավարությունում բացառում է մրցակցային սկզբունքի ինքնուրույն գոյության առկայությունը՝ դրա հետ մեկտեղ հիմնավորելով մրցակցային ձևի պայմաններում՝ դատավարությունում կողմերի դատավարական իրավահավասարության սկզբունքը: Նա մրցակցությանը՝ որպես դատավարությունում նյութական կողմի շարժիչ ուժի, դեր չի հատկացնում, և շեշտը մրցակցությունից տեղաշարժ է արվում դեպի մրցակցային ձևի: Ըստ Վ.Սեմյոնովի՝ մրցակցությունը քննարկվում է ոչ թե նրա էության առումով, այլ ձևական իմաստով, որի հիմքում ընկած է կողմերի դատավարական իրավահավասարությունը:

Ժամանակակից դատավարական տեսությունը մրցակցությունը դիտարկում է որպես քաղաքացիական դատավարության իրավունքի հիմնարար սկզբունք:

Ժամանակակից դատավարագետները մրցակցության սկզբունքի հիմնական հատկանիշ են համարում այն, որ դատարանը ակտիվ դեր է խաղում կողմերի մրցակցության իրականացման համար, որոնք իրենց տեսակետը պաշտպանելու համար ունեն հավասար հնարավորություններ¹:

ՀՀ դատավարական համակարգի բարեփոխումների գլխավոր նպատակը, ինչպես գիտենք, քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված ու արդյունավետ պաշտպանությունն է: Իսկ ՀՀ գործող Սահմանադրությունը կարևորագույն դեր է հատկացնում իրավունքների դատական պաշտպանությանը (հոդվ. 18): Դատական պաշտպանության կառուցակարգի տարրերից մեկը, ինչպես հայտնի է, քաղաքացիական գործի (վեճի) փաստական հանգամանքների հետազոտումն ու հաստատումն է, որն իր հերթին ժամանակակից դատավարության մեջ իրականացվում է նյութաիրավական հարաբերությունների մասնակիցների՝ դատավարության կողմերի մրցակ-

¹ См. и Арбитражный процесс. Под. ред. М.К. Треушникова. М., 1993, էջ 37:

ցության պայմաններում:¹

Համաձայնելով հայ դատավարագետ Ռ.Գ. Պետրոսյանի կարծիքին՝ գտնում ենք, որ քանի որ քաղաքացիական իրավունքը ներկայումս դարձել է մասնավոր իրավունք՝ կորցնելով իր նախկին «հանրային» բնույթը, դատավարության կողմերի մրցակցությունն արդեն պետք է իրականացվի ոչ թե դատարանի, այլ դատավարության կողմ համդիսացող նյութաիրավական հարաբերությունների մասնակիցների ակտիվ գործունեությամբ: Մա է այն հիմանական պատճառը, որ ժամանակակից դատավարագիտությունը, դատավարության օրենսդրությունը և դատական պրակտիկան քաղաքացիական դատավարությունում առաջնահերթ առանցքային նշանակություն են տալիս կողմերի մրցակցությանը, որն այսօր քննարկվում և սահմանվում է ոչ միայն որպես դատավարության «շարքային» սկզբունք, այլև որպես դատական պաշպանության ինքնուրույն սկզբունք՝ կառուցակարգ, սկզբունք-մեթոդ, դատավարությունը կազմակերպելու և անցկացնելու մեթոդների համակցություն, որը գործում է քաղաքացիական դատավարության բոլոր փուլերում, բոլոր ինստիտուտներում, և ըստ որի դատարանը մրցակցող (հակամարտող) կողմերի միջև տեղի ունեցող մրցակցային գործընթացում հանդես է գալիս սուկ չեզոք և անկողմնակալ արբիտրի դերում:²

ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Կողմերը և գործին մասնակցող այլ անձինք օգտվում են ապացույցներ ներկայացնելու, դրանց հետազոտմանը մասնակցելու հավասար իրավունքներից, ինչպես նաև գործին անձինք պետք է ապացուցեն իրենց պահանջ(ներ)ի կամ առարկությունների հիմքում

¹ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 84:

² Տե՛ս նույն տեղում և Шишкин С.А. Состязательность в гражданском и арбитражном судопроизводстве. Городец, М., 1997, էջ 23-35:

դրված փաստերը:¹

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը ևս պարտավորեցնում է գործին մասնակցող յուրաքանչյուր անձի ապացուցել իր վկայակոչած փաստերը (ՔԴՕ 48-րդ հոդվ. 1-ին մաս): Հակառակ դեպքում՝ դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (ՔԴՕ 48-րդ հոդվ. 6-րդ մաս):

Մրցակցության սկզբունքը ապահովում է փաստական և ապացուցողական նյութերի ամբողջականությունը, որոնց առկայությունը գործող հանգամանքների հաստատման կարևորագույն պայմանն է:

Մրցակցության սկզբունքի էությունը հիմնականում հետևյալում է.

- դատարանի գործողությունները կախված են հայցվորի պահանջներից և պատասխանողի առարկություններից. դատարանը գործը քննում է կողմերի հայտարարած պահանջների ծավալով,
- ապացուցողական միջոցների օգտագործման հնարավորության ազատություն,
- յուրաքանչյուր կողմ ապացուցում է փաստեր, որոնք ընկած են պահանջի և առարկության հիմքում,
- դատարանը կարող է առաջարկել կողմերին ներկայացնել լրացուցիչ ապացույցներ²:

Հայ դատավարազետ Ռ.Գ. Պետրոսյանը նույնպես մրցակցության էությունը բնութագրում է նշված հատկանիշներով՝ բացառությամբ թվարկված առաջին հատկանիշի:³ Համաձայնվելով պրոֆեսորի հետ՝ պետք է նշել, որ ընդունելով առաջինը՝ որպես մրցակցության էությունը բնութագրող հատկանիշ, կխախտվեն մրցակցության և տնօրինչականության սահմանները:

¹ St' u Васильев С.В. Гражданский процесс. Учебное пособие. Харьков: Одиссей, 2007, էջ 44-45:

² St' u Васильев С.В. Гражданский процесс. Учебное пособие. Харьков: Одиссей, 2007, էջ 45:

³ St' u Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 86:

Մրցակցային դատավարության բուն էությունն այն է, որ արդարադատությունը իրականացվում է մրցակցության հիման վրա:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը նույնպես պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում: Այս հարցին է անդրադարձել նաև Վճռաբեկ դատարանը իր մի շարք որոշումներում¹:

Հարկ է նշել, որ դատավարական մրցակցության հիմքը վիճելի նյութաիրավական հարաբերության մասնակիցների շահերի բախումներն են: Այսինքն՝ հենց նյութաիրավական շահերի բախումներն են, որ դատարանում առաջացնում են մրցակցություն: Եվ վերջապես, դատավարության մրցակցային ձևը նպատակաուղղված է գործով փաստական հանգամանքները և արդարությունը բացահայտելուն:²

Մրցակցության սկզբունքի էությունը ցայտուն կերպով իր դրսևորումն է ստացել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, համաձայն նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը ամրագրում է, որ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն

¹Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 0351/02/08-(ԵԴ) քաղաքացիական գործով 31.10.2008 թ. և ԵԿԴ/0016/02/09 քաղաքացիական գործով 03.12.2010 թ. որոշումները:

² Տե՛ս Завадская Л.Н. Гражданский процесс: в схемах с комментариями. М., 2010, էջ 14:

գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ՝ դիմելու դատարան: Միջնորդությունում պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է:

Մրցակցության սկզբունքը գործում է դատավարության բոլոր փուլերում: Սակայն առավել շատ մրցակցությունը դրսևորվում է դատաքննության փուլում¹, որտեղ կողմերը և գործին մասնակցող այլ անձինք իրավունք ունեն մասնակցելու ապացույցների հետազոտմանը, հարցեր, բացատրություններ տալու, գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց փաստարկները և այլն:

Ի տարբերություն գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածը ամրագրում է, որ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ակներև է, որ օրենսդիրը ի տարբերություն գործող օրենսգրքի՝ նախագծում առանձնացրել է մրցակցության սկզբունքը իրավահավասարության սկզբունքից (վերջինս ամրագրելով Նախագծի 8 հոդվածում): Համամիտ ենք օրենսդրի հետ այն հարցում, որ Նախագծով առանձնացվել են մրցակցության և իրավահավասարության սկզբունքները: Իհարկե, մրցակցության սկզբունքի իրացման հիմքում իրավահավասարությունն է, քանի որ մրցակցել հնարավոր է միայն իրավահավասար պայմաններում, հավասար դատավարական միջոցների իրացմամբ, այնուամենայնիվ, կարծում ենք, նշված երկու սկզբունքները տարբեր են իրենց սահմաններով և բովանդակությամբ:

Նախագծի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու, որ օ-

¹ St' u Васильев С.В. Гражданский процесс. Учебное пособие. Харьков: Одиссей, 2007, էջ 25:

րենսդիրը ոչ միայն սահմանում է դատավարության մրցակցային ձև, այլև նախատեսում է ռեալ երաշխիքներ դատավարությունում մրցակցություն ապահովելու համար:

Նախագծի 61-րդ հոդվածով ապացույցները, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները, ներկայացնում են գործին մասնակցող անձինք: Գործին մասնակցող անձը պարտավոր է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը առաջին ատյանի դատարանի և գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել ու հնարավորության դեպքում տրամադրել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում՝ որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք:

Դատաքննության ողջ ընթացքը տարվում է մրցակցային ձևով¹: Ասվածը նշանակում է, որ ապացուցման ամբողջ պարտականությունը, ապացուցման ողջ բեռը դրված է հենց վիճող կողմերի (գործի ելքով շահագրգռված անձանց) վրա, որոնց խնդրանքով դատարանը կարող է միայն օժանդակել նրանց:²

Այնուամենայնիվ, ժամանակակից քաղաքացիական դատավարությունում մրցակցության սկզբունքի իրացման գործում առանձնահատուկ դեր է առանձնացված նաև օրինականության ապահովմամբ շահագրգռված դատարանին:

Դատարանը, ապահովելով չեզոք դիրք, օբյեկտիվություն և անաչառություն, գործին մասնակցող անձանց պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, զգուշացնում է դատավարական գործողությունների կատարման կամ դրանք չկատարելու դատավարական հետևանքները, և ամենակարևորը, դատարանն է ստեղծում համապատասխան պայմաններ ապացույցների բազմա-

¹ Ст'я Шишкин С.А. Состязательность в гражданском и арбитражном судопроизводстве. М., 1996, էջ 23:

² Ст'я Պետրոսյան Ռ.Գ. ՀՀ Քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 86:

կողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար¹: Դատարանը ըստ գործող օրենսդրության, ապացուցելու պարտականություն չի կրում: Ինչ վերաբերում է իրավակիրառ պրակտիկայում արտահայտած այն կարծիքին, որ ապացուցման առարկայի մեջ որոշակի հանգամանքներ մտցնելով կամ կողմի վկայակոչած հանգամանքները գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակից հանելով՝ դատարանը խախտում է մրցակցության սկզբունքը՝ ըստ էության իրականացնելով կողմի գործառույթ, հիմնավորված չի թվում²: Այս հարցին անդրադարձել է սահմանադրական դատարանը իր որոշումներից մեկում, ըստ որի **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենևին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս կողմերի միջև ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները, հետևաբար փաստական հիմք կստեղծեն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու համար:**³

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է նշել, որ մրցակցության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում պատմականորեն ձևավորված, քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերում ամրագրված հիմնարար սկզբունք է, որն ապահովում է դատավարության ընթացքը կողմերի մրցակցության ձևով և ուղղված է գործն ապացույցներով համալրելուն ու հետազոտելուն:

¹ Տե՛ս Коршунов Н.М., Мареев Ю.Л. Гражданский процесс. Учебник, 2-е изд., М., 2007, էջ 45:

² Տե՛ս Մեղոյան Ս.Գ. Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., 2011, էջ 80:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՌ-845 որոշումը:

ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ ПРИНЦИПА СОСТЯЗАТЕЛЬНОСТИ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Вардуш Есаян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

Работа посвящена выявлению понятия и сущности принципа состязательности, а также исследованию и анализу вопросов состязательности в процессуальном праве.

Исследования показывают, что принцип состязательности исторически сформировался в гражданском процессе и как основополагающий принцип закреплён в гражданско-процессуальных правовых нормах, что обеспечивает состязательность сторон в судебном процессе и направлен на обогащение процесса доказательствами.

THE NOTION AND ESSENCE OF PRINCIPLE OF THE COMPETITIVENESS IN CIVIL PROCEDURE

Vardush Yesayan

*Assistant of the YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences*

The article refers to the disclosure of the concept and nature of the competitive principle of competitiveness and also to the research and analysis of competitive procedural issues in procedural law.

The researches show that this principle is historically formed in civil procedure and is a fundamental principle of the civil procedural law, which provides trial process in a competitive form and is directed to replenishment the case with evidences and examine it.

Բանալի բառեր – քաղաքացիական դատավարություն, մրցակցություն սկզբունք, դատարան, փախցույց, մրցակցային ձև, դատարանություն, դատավարական նորմեր:

Ключевые слова: гражданский процесс, принцип состязательности, суд, доказательства, форма состязательности, судебное разбирательство, процессуальные нормы.

Keywords: civil procedure, principle of competitiveness, court, evidence, competitive form, trial, procedural norms.

ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հարություն Խաչիկյան

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՀՀ-ում իրապես կատարվել է քրեակատարողական համակարգի բարեփոխում. ամբողջությամբ փոփոխվել է պենիտենցիար գործունեության բովանդակությունը՝ դառնալով ավելի ժողովրդավարական և մարդասիրական, նմանվելով արևմտյան չափանիշներին: Բայց առջևում անելիքները բազմաթիվ են՝ առաջին հերթին քրեական պատիժների բովանդակության, պատիժը կրելու պայմանների և դրանք կատարելու, դատապարտյալների նկատմամբ ներգործության միջոցները կիրառելու մասով: Պատիժներ կատարող հիմնարկների ու մարմինների գործունեությունը և ընդհանրապես քրեակատարողական համակարգը ամբողջությամբ պետք է լինի ոչ միայն պետության, այլ նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների արդյունավետ վերահսկողության առարկա: Ժողովրդավարացումը, մասնավորապես, դրսևորվում է նաև սրանով:

ՀՀ գործող քրեակատարողական օրենսգիրքը¹ որոշակի իմաստով համապատասխանում է պատիժների կատարման հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից սկզբունքներին և քրեակատարողական իրավունքի գիտության տեսական մշակումների պահանջներին, այն արտացոլում է պենիտենցիար գիտության նվաճումները և արտասահմանյան օրենսդրության փորձը:

Բայց, այնուամենայնիվ, այս բնագավառում օրենսդրությունն և քրեակատարողական համակարգն ամբողջությամբ հետագա բարեփոխումների կարիք ունի. անհրաժեշտ է աստիճանական անցում քրեական պատիժները կատարելու և կրելու առավել լիբերալ ու արդյունավետ կառուցակարգերի, ինչպես նաև միջազգային չափա-

¹Այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ:

նիշներին համապատասխանող պատիժը կրելու սոցիալական, նյութական և տնտեսական պայմանների փուլային կատարելագործում: Քրեակատարողական օրենսդրության կատարելագործումն այս մասով, պետք է առավելագույնս ընդգրկի դատապարտյալի անձի և պատիժը կրելու ընթացքում նրա վարքագծի գիտական ուսումնասիրությունների արդյունքները:

ՀՀ-ում արձանագրվում է դատափրավական բարեփոխումների նոր փուլ, այդ թվում՝ քրեափրավական համալիրի (քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրություններ) շրջանակներում, և շարունակվում է օրենսդրության այդ ճյուղերի հիմքը կազմող օրենքներ մշակելու գործընթացը՝ ՀՀ Նախագահի՝ 2012թ. հունիսի 30-ի «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» կարգադրությանը համապատասխան:

Քրեական պատիժների կատարումը կարգավորող օրենսդրության ճյուղի մշակման գործընթացը ենթադրում է զարգացման երկու փուլ. նախ ՀՀ քրեական օրենսգրքի¹ ընդունում, ապա քրեական օրենսգրքով նախատեսված բոլոր պատժատեսակների կատարումն ու կրումը կարգավորող ՀՀ ՔԿՕ-ի ընդունում: Տրամաբանական հաջորդականությամբ կընդունվեն օրենսդրական ակտեր՝ մեկը նախատեսում է քրեական պատիժները (քրեական օրենսգիրք), մյուսը՝ կարգավորում է դրանց կատարումը (քրեակատարողական օրենսգիրք):

Քրեակատարողական օրենքը չի կարելի դիտել միայն ընթացակարգային և դատավարական տեսանկյունից, այսինքն՝ որպես միայն քրեական պատիժների կատարումը կարգավորող երևույթ: Այն իր մեջ ընդգրկում է նյութական իրավունքով նախատեսված սահմանափակումներ պարունակող բազմաթիվ նորմեր, այդ թվում և՛ պատժիչ բնույթի: Որպեսզի պատիժների կատարման գործընթա-

¹Այսուհետ՝ ՀՀ ՔՕ:

ցում այդ հատկանիշները չսաստկանան, քրեակատարողական օրենսդրությունը պետք է նախատեսի դատապարտյալների իրավունքների և ազատությունների, օրինական շահերի ապահովման երաշխիքների ճյուղավորված համակարգ, ինչպես նաև սահմանի վերահսկողության և հսկողության տարաբնույթ միջոցներ: Այս ամենը պայմանավորում է հետաքրքրությունը ՀՀ նոր ՔԿՕ-ի նկատմամբ ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում՝ հատկապես դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափանիշների պաշտպանության առումով:

ՀՀ նոր ՔՕ-ի հայեցակարգը և նախագիծը, որի մշակման գործընթացը կարճ ժամանակ անց կմոտենա իր տրամաբանական ավարտին նախատեսում է պատժի՝ որպես պետական հարկադրանքի ամենախիստ միջոցի սահմանման այլ մոտեցում, մասնավորապես պատժի նպատակների մասով. սոցիալական արդարության վերականգնման և հանցագործությունների կանխման նպատակների հետ միաժամանակ նախատեսում է պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագիծ ձևավորելու նպատակներ:

ՀՀ ՔՕ-ի նախագծում կառուցվածքային փոփոխության է ենթարկվել և պատժի նոր տեսակներով է համալրվել պատժի համակարգը, այդ թվում և՛ ազատությունից զրկելու հետ կապված (ազատության սահմանափակումը), և՛ ազատությունից զրկելու հետ չկապված (հանրային իրավունքները սահմանափակելը, ծնողական իրավունքներից զրկելը, օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից վտարելը), այլ կերպ են շարադրվել գործող օրենսդրությամբ նախատեսված որոշ պատժատեսակների անվանումները նաև բովանդակային իմաստով, փոփոխվել են հիմնական և լրացուցիչ պատիժները:

ՀՀ ՔՕ-ի նախագիծը համալրվել է անվտանգության միջոցներ նախատեսող նոր գլխով: Սահմանվում են անվտանգության միջոցները նշանակելու հիմքերն ու պայմանները, դրանց տեսակները՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, գույքի բռնագրավում,

որոշակի վայրեր այցելելու արգելք, հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելու պարտականություն, վարքագծի նկատմամբ հատուկ հսկողություն, ընտանեկան հսկողություն, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորում, կրթական, մշակութային, մարզական կամ այլ ծրագրերի ներգրավում: Պատժից ազատելու տեսակները ենթարկվել են կառուցվածքային և բովանդակային փոփոխության:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը չի նախատեսում դատական ակտերի կատարման փուլը: Դատական ակտերի կատարման փուլն ամբողջությամբ կարգավորվելու է ՀՀ նոր ՔԿՕ-ով:

Հաշվի առնելով ՀՀ ՔՕ-ի նախագծով նախատեսվող իրավական կարգավորման առարկայի ծավալի զգալի ընդարձակումը, նորովի ձևակերպված բազմաբնույթ և բազմաբովանդակ նյութական (քրեական) իրավունքի նորմերը՝ անհրաժեշտություն է առաջանում ընթացակարգային (քրեակատարողական) իրավունքի նորմերի, որոնք պետք է սահմանեն դրանց իրականացման կարգն ու պայմանները:

ՀՀ նոր ՔԿՕ-ի ընդունումը հնարավորություն կնձեռնի ընդարձակել ոչ միայն իրավական կարգավորման առարկան, այլև համակարգել տարաբնույթ իրավական ակտերը, որոնք վերաբերում են առանձին պատժատեսակների կատարման ու կրման և պատիժների առանձին ինստիտուտների հետ: Այն կամրապնդի մեր պետության քրեակատարողական քաղաքականության կարևորագույն դրույթները օրենսդրության ուղղվածության և դրանց կիրառման ընթացքում առաջնահերթ կարևորության խնդիրների լուծման բնագավառներում, որոնցից կարևորագույնը պատժի նպատակների իրականացումն է: ՀՀ նոր ՔԿՕ-ի ընդունումը կհանդիսանա ոչ միայն իրավական բարեփոխումների նոր փուլ, այլև կծառայի որպես դա շարունակելու և կատարելագործելու խթանիչ ուժ: Օրենսգրքի նորմերին համապատասխան՝ կընդունվեն քրեական պատիժները կատարելու բնագավառին վերաբերող բազմաթիվ այլ նորմատիվ իրավական ակտեր:

Բարեփոխումները օրենսդրության ցանկացած ճյուղում, այդ թվում քրեակատարողական, չի կարող իրականացվել հասարակությունում կատարվող սոցիալական ձևավորումներից զատ, առանց հաշվի առնելու տնտեսական և քաղաքական զարգացումները, գաղափարախոսության վիճակը, հասարակության բարոյական արժեքները, քաղաքական, հասարակական և իրավական ինստիտուտների զարգացման միտումները, ՀՀ-ում հանցավորության դինամիկան և կառուցվածքը, պատմական դրական և բացասական փորձը, հասարակության իրավագիտակցությունը, մարդու իրավունքների և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերի դրույթները:

Համադրելով վերը շարադրված դրույթները և հաշվի առնելով ՀՀ ՔԿՕ-ի ավելի քան մեկ տասնամյակ կիրառման փորձը՝ կարելի է մշակել և ընդունել պատիժների կատարման հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից միջազգային սկզբունքներին և քրեակատարողական իրավունքի գիտության տեսական մշակումների պահանջներին համապատասխանող ՀՀ նոր ՔԿՕ: Մեր երկրում մարդասիրական ուղղվածություն ունեցող ՔԿՕ ունենալն այսօր անհրաժեշտություն է: Քրեական պատիժների կատարումը կարգավորող բարձրակարգ օրենք ունենալը բխում է բոլորիս շահերից և, եթե ունենք հնարավորություն այդ օրենքը հասցնելու կատարելության աստիճանի, քան կա իրականում, ապա պարտավոր ենք. չէ՞ որ ըստ ժողովրդական իմաստնության՝ երբեք մի՛ ասա երբեք. կարող ես մուրացիկ դառնալ և կամ բանտում հայտնվել:

ՀՀ նոր ՔՕ-ով նախատեսված պատիժների համակարգը և պատժի նպատակները պայմանավորում են նոր քրեակատարողական օրենսգրքի կառուցվածքն ու բովանդակությունը: Առանցքային նշանակություն է ստանում քեակատարողական օրենսդրության նպատակների և խնդիրների ամրագրումը օրենքում, որը զուրկ չէ տրամաբանությունից, քանի որ օրենսդրության նպատակները որոշակիացվում են նրա խնդիրներում: Քրեակատարողական օրենսդրության նպատակները համապատասխանում են նորովի սահմանված

քրեական օրենսդրության նպատակներին որոշակի բովանդակային տարբերությամբ: Այն է. հանցագործությունների կանխում՝ դատապարտյալների կողմից նոր հանցագործությունների կատարման կանխում (մասնավոր պրենեցիա), այլ անձանց կողմից նոր հանցագործությունների կատարման կանխում (ընդհանուր պրենեցիա), պատժի ենթարկված անձի վերասոցիալականացում և իրավահպատակ վարքագծի ձևավորում: Վերջին երկու նպատակը բովանդակային տեսակետից կարելի է նույնացնել դատապարտյալներին ուղղելու նպատակի հետ և որպես ինքնուրույն նպատակ սահմանել քրեակատարողական օրենսդրությունում:

Փաստորեն, պատժի նպատակները սահմանվում են այլ տեսանկյունից, մասնավորապես, դատապարտյալների ուղղումն որպես պատժի նպատակ ընդգրկված չէ այդ համակարգում (կամ գոնե անունն է փոփոխվել), ուստի, կարծում ենք, ուղղումը, դրա բովանդակային կողմը ու դրա հետ կապված բոլոր արտահայտությունները՝ ուղղիչ համակարգ, ուղղիչ հիմնարկ, դատապարտյալների ուղղում, դատապարտյալի ուղղման աստիճան և այլն, կարող են այլ ձևակերպում ստանալ ՀՀ նոր ՔԿՕ-ում: Դրանց փոխարեն անհրաժեշտ է բացահայտել մի շարք հասկացությունների իմաստն ու բովանդակությունը՝ պատժի ենթարկված անձի վերասոցիալականացում, իրավահպատակ վարքագծի ձևավորում:

ՀՀ ՔԿՕ-ը սահմանելու է պատժի կարևորագույն նպատակներից մեկի՝ պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման ապահովման հիմնական միջոցները: Այն է՝ պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգը և պայմանները (ռեժիմը), դատապարտյալների աշխատանքը, դաստիարակչական աշխատանքը, հանրակրթական ու մասնագիտական ուսուցումը և հասարակական ներգործությունը: Այս միջոցները կիրառվելու են՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը պատիժը կրելու ընթացքում: Օրենքում առանձնահատուկ պետք է սահմանվեն

այն միջոցները, որոնք հատկապես վերաբերում են անչափահաս դատապարտյալներին:

Օրենսդրության նպատակները կոնկրետացվում են նրա խնդիրներում՝ պատիժների կատարման ու կրման, քրեաիրավական բնույթի ներգործության այլ միջոցների կիրառման կարգավորումը, դատապարտյալների վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցների սահմանումը, նրանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, պարտականությունների իրականացման ապահովումը, պատիժը կրելուց հետո սոցիալական օգնության ցուցաբերումը: Նման ձևակերպմամբ կարտահայտվի քրեակատարողական օրենսդրության մարդասիրական ուղղվածությունը:

Յուրաքանչյուր իրավական պետությունում նախատեսվում են անհրաժեշտ երաշխիքներ այդ պետության բոլոր քաղաքացիների, այդ թվում և դատապարտյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Քրեական պատիժների դատապարտված անձանց իրավական վիճակը քրեակատարողական իրավունքի տեսության և պրակտիկայի կարևոր խնդիրներից է: Քրեակատարողական օրենքը փոխում է դատապարտյալի իրավական վիճակը՝ նրան վերապահելով որոշակի իրավունքներ և պարտականություններ: Քրեական պատիժների կատարման ու կրման ընթացքում դատապարտյալների հիմնական (սահմանադրական), քաղաքացիական և հատուկ իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը կազմում է նրանց իրավական վիճակը: Նոր մշակվող օրենքում բացառիկ կարևորություն են ստանում դատապարտյալների իրավական վիճակին վերաբերող դրույթները: Դատապարտյալների իրավական վիճակը՝ նրանց հիմնական իրավունքներն ու պարտականությունները, պետք է անպայմանորեն ամրագրված լինեն օրենքի առանձին բաժնում (գլխում), բացի այդ դատապարտյալների իրավական վիճակի բազմաթիվ այլ հարցեր պետք է իրենց արտահայտությունը գտնեն օրենքի՝ պատիժների առանձին տեսակների կատարման կարգն ու պայմանները նախատեսող նորմերում: Դատա-

պարտյալների հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են առանց բացառության բոլոր պատժատեսակների կատարման ու կրման վերաբերյալ: Իսկ դատապարտյալների հատուկ իրավունքներն ու պարտականությունները վերաբերում են առանձին պատժատեսակների կատարման կարգին ու պայմաններին: Փաստորեն, դատապարտյալների իրավական վիճակին վերաբերող դրույթներն ամրագրվում են օրենքում և ոչ թե գերատեսչական նորմատիվ ակտերում:

ՀՀ նոր ՔԿՕ-ը դատապարտյալներին երաշխավորելու է ՀՀ քաղաքացիների իրավունքներով և ազատություններով: Դատապարտյալների համար սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն ՀՀ քրեական և ՀՀ քրեակատարողական օրենսգրքերով, այլ խոսքով՝ ոչ մի այլ իրավական ակտ չի կարող փոփոխել, նեղացնել կամ լրացնել այն: Այստեղից հետևում է, որ ՀՀ արդարադատության նախարարության ակտերը կարող են կարգավորել պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների, նրանց պաշտոնատար անձանց գործունեության միայն կազմակերպական-տեխնիկական բնույթի հարցեր:

ՀՀ նոր ՔԿՕ-ի՝ դատապարտյալների իրավական վիճակը կարգավորող գլխում սահմանվելու են դատապարտյալների իրավական վիճակի հիմքերը, իրավունքների, պարտականությունների, ազատությունների և օրինական շահերի ապահովման երաշխիքները: Սահմանվելու է, որ ՀՀ-ն պաշտպանում է դատապարտյալի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը պատիժը կատարելու ընթացքում, ապահովում է դատապարտյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների օրինականությունը: Դատապարտյալների իրավական վիճակը սահմանելիս հաշվի են առնվելու մարդու իրավունքների և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերի դրույթները:

Դատապարտյալների իրավական վիճակը սահմանելիս կարևոր նշանակություն ունի նրանց պարտականությունների ամրագրումը: Դատապարտյալը պետք է կրի պատիժն իր բոլոր զրկանքներով,

դժվարություններով, որոշակի բարիքների կորստով, ինչպես նաև բազմաթիվ այլ բացասական հետևանքներով: Դատապարտյալը պարտավոր է պահպանել պատիժների կրման կարգը և պայմանները կարգավորող ՀՀ օրենսդրությունը, կատարել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ՀՀ քաղաքացիների պարտականությունները, հասարակությունում ընդունված բարոյականության նորմերը: ՀՀ նոր ՔԿՕ-ի դատապարտյալի իրավական վիճակին վերաբերող գլխում սահմանվելու են դատապարտյալների հիմնական պարտականությունները, որոնք տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝ անկախ պատժատեսակից, և ամրագրելու են դատապարտյալներին ներկայացվող առավել կարևոր պահանջները: Դատապարտյալների պարտականությունների գերակշռող մասը սահմանվելու է ՀՀ նոր ՔԿՕ-ի պատիժների առանձին տեսակների կատարման և կրման կարգն ու պայմանները կարգավորող նորմերում:

Դատապարտյալների հիմնական պարտականությունների շարքում, կարծում ենք, կարելի է ընդգրկել նաև աշխատելու պարտականությունը: Ինչպես վկայում են տեսությունն ու պրակտիկան, աշխատանքի դաստիարակչական ներգործությունը խիստ մեծ է, այն դրական է անրադառնում մարդու վրա:

Ակնհայտ է, որ ներկայումս հնարավոր չէ բոլոր դատապարտյալներին ապահովել աշխատանքով, բայց կարծում ենք, որ եթե ոչ հիմա, ապա գոնե մոտ ապագայում մենք կդառնանք դրա ականատեսը: Դատապարտյալների աշխատելու պարտականությունը ոչ թե հակասում, այլ ընդհակառակը, ամբողջովին համընկնում է դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական չափանիշներին: Այսպես, դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշներում, որն ընդունվել է «Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվելակերպին են վիրված ՄՄԿ-ի 1-ին կոնգրեսում (Ժնև, 1955 թ.), նշվում է. «Յուրաքանչյուր դատապարտյալ պարտավոր է աշխատել իր ֆիզիկական և հոգեկան հնարավորություններին համապատասխան (հոդվ. 71.2):

Ի տարբերություն ընդհանուր ձևով ներկայացվող դատապարտ-

յալների պարտականությունների՝ ՀՀ նոր ՔԿՕ-ում դատապարտյալների իրավունքները պետք է սահմանվեն բավական մանրամասն: Այդպիսի կարգավորվածությունը բխում է պատիժների կատարման և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներից:

Պետք է ապահովել պատիժներ կատարող մարմինների կամ հիմնարկների ծառայողների և աշխատակիցների կողմից բարեկիրթ վերաբերմունքի արժանանալու դատապարտյալի իրավունքը: Պատիժը կատարելիս պետք է ապահովվի դատապարտյալի իրավական պաշտպանությունը: Դատապարտյալը կարող է պաշտպանվել բոլոր օրինական միջոցներով՝ դիմելով համապատասխան մարմիններին: Ընդ որում՝ պետք է էապես ընդարձակվի դատապարտյալի իրավունքը դիմելու համապատասխան մարմիններին: Դատապարտյալին պետք է իրական հնարավորություն ընձեռվի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ: Նման դեպքերում դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության չեն ենթարկվելու:

Արգելվելու է դատապարտյալի նկատմամբ որևէ ձևով հետապնդումը իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներներ կայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրելու են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Ազատությունից զրկվելու հետ կապված՝ պատիժների դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի բողոքարկման, տուգանային մեկուսարանում (պատժախցում)

գտնվող դատապարտյալների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ գործող օրենսդրությունը չի նախատեսում: Այսինքն՝ երբ դատապարտյալն ամբողջությամբ կամ մասամբ մեկուսացված է հասարակությունից և գտնվում է քրեակատարողական համակարգի պահպանության ու հսկողության ներքո: Այստեղ կարևորվում է նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը

ՀՀ նոր ՔԿՕ-ն ամրագրելու է նաև դատապարտյալի անձնական անվտանգության ապահովման իրավունքը: Խոսքը, ազատությունից զրկելու հետ կապված, պատիժների դատապարտված անձանց անձնական անվտանգության ապահովման մասին է, երբ դատապարտյալն ամբողջությամբ կամ մասամբ մեկուսացված է հասարակությունից և գտնվում է քրեակատարողական համակարգի պահպանության ու հսկողության ներքո: Նման դատապարտյալները հնարավորություն չունեն ինքնուրույն ապահովել իրենց անվտանգությունը: Դատապարտյալների անձնական անվտանգությանը վտանգ սպառնալու դեպքում նրանց իրավունք է վերապահվում խնդրանքով դիմելու պատիժներ կատարող հիմնարկի ցանկացած պաշտոնատար անձի, ընդ որում՝ սպառնալիքի բովանդակությունը կարող է տարբեր լինել՝ սպանության, մարմնական վնասվածքներ հասցնելու, համասեռ բռնության սպառնալիք և այլն: Նման դեպքում համապատասխան պաշտոնատար անձինք պարտավոր են անհապաղ միջոցներ ձեռնարկել դատապարտյալների անձնական անվտանգության ապահովման համար: Այդ նպատակով վերը նշված պատժատեսակները կատարող հիմնարկի պետը դատապարտյալի դիմումի համաձայն կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է ընդունում դատապարտյալին անվտանգ վայր տեղափոխելու կամ դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովող այլ միջոցներ կիրառելու մասին: ¹

Նոր օրենքը որոշակիացնելու է մարդու մտքի, խղճի և դավա-

¹Այդ մասին մանրամասն տե՛ս Старков О.В., Миллюков С.Ф. Наказание: уголовно-правовой и криминопеналогический анализ.

նանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության իրավունքը դատապարտյալների համար: Դատապարտյալները, ինչպես և ՀՀ բոլոր քաղաքացիները երաշխավորվում են մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքով: Նրանք կարող են ազատորեն ընտրել, ունենալ և տարածել կրոնական կամ աթեիստական համոզմունքներ: Միևնույն ժամանակ, այդ իրավունքն իրականացնելիս չպետք է խախտվեն պատիժը կատարող հիմնարկի ներքին կարգապահության կանոնները, ինչպես նաև չպետք է սահմանափակվեն այլ անձանց իրավունքները:

Կրոնի բարոյահոգեբանական ազդեցությունը մարդու վրա հսկայական է, իսկ հասարակությունից մեկուսացման պայմաններում՝ ազատագրկման վայրերում, որոշակի գործոնների ազդեցության ներքո այն ձեռք է բերում առավել մեծ կարևորություն: Իր գործառույթների խնդիրներով կրոնը պենիտենցիար հիմնարկների համար ավելի մեծ նշանակություն ունի, քան հասարակությունը: Կրոնական սփոփանքի առավել կարիք ունեն խարխլված հոգեկան կամ տհաճ, ծանր ներգործության ազդեցության ներքո գտնվող անձինք, որն ավելի բնութագրական է դատապարտյալներին: Մարդու նկատմամբ ներգործության մեթոդներով կրոնն առավել, քան որևէ այլ երևույթ, համապատասխանում է դատապարտյալների հետ աշխատանքի պենիտենցիար բնագավառի պահանջներին:

Պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների համակարգը ՀՀ իրավապահ մարմինների մասն է, որոնց կարևորագույն խնդիրն է պայքարը հանցավորության դեմ: Այս խնդրի իրականացմամբ շահագրգռված է ամբողջ հասարակությունը, որը պետական և հասարակական կազմակերպությունների միջոցով սահմանում է մշտական վերահսկողություն և հսկողություն իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ: Պատիժները կատարելու նկատմամբ վերահսկողության և հսկողության համակարգում առանձնահատուկ տեղ է տրվելու դատական և հասարակական վերահսկողությանը: Դատական վերահսկողությունը ՀՀ նոր ՔԿՕ-ում շարադրվելու է նորովի և առավել մանրամասն: Դատական վերահսկո-

դության ձևերը բազմատեսակ են և խիստ արդյունավետ. պատիժներ կատարող մարմնի և հիմնարկի վարչակազմը դատարանին հայտնում է պատիժը կատարելու մասին: Դատարանը վերահսկողություն է իրականացնում պատժի կատարման նկատմամբ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց պատժի կրումը հետաձգելու, պատժից ազատելու, ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հարցերը լուծելիս, ինչպես նաև հարկադրանքի այլ միջոցները կիրառելու նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ: Դրանով իսկ կարող են բացահայտվել դատապարտյալի իրավունքների և օրինական շահերի խախտումները: Այս տեսակետից դատական վերահսկողությունը քրեական պատիժների դատապարտված անձանց օրինական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է:

ՀՀ նոր քրեական և քրեակատարողական օրենսգրքերը սկզբունքորեն նոր մոտեցումներ և կառուցակարգեր են նախատեսելու ազատազրկման՝ որպես հիմնական և իր բովանդակությամբ պատժի համակարգի առավել խիստ պատժատեսակի կատարման կարգի և պայմանների վերաբերյալ: Առաջարկվում է ազատարկում պատժատեսակի հասկացության հետևյալ ձևակերպումը, որն առավել ամբողջական է դարձնում այս պատժատեսակի էությունը. որոշակի ժամկետով ազատազրկումը դատապարտյալի հարկադիր մեկուսացումն է հասարակությունից, նրան այդ նպատակին ծառայող հատուկ՝ քրեակատարողական հիմնարկներում տեղավորելու միջոցով, դատարանի դատավճռով սահմանված ժամկետով:

Ազատազրկման դատապարտվածների դասակարգումը ապահովում է դատապարտյալների տարբեր խմբերի մեկուսացումը՝ կանխելու համար առավել վտանգավոր հանցագործների ազդեցությունը (հատկապես, եթե վերջիններս ազատազրկման ձևով նախկինում

պատիժ են կրել) նվազ վտանգավորների վրա, պատժի կրման արդյունավետ պայմանների ստեղծումը:

Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշների 67 հոդվածի համաձայն՝ դատապարտյալների դասակարգման նպատակներն են՝ դատապարտյալների առանձնացումը նրանցից, ովքեր իրենց հանցավոր անցյալի կամ այլ բացասական հատկանիշների ուժով կարող են վատ ազդեցություն ունենալ այլ դատապարտյալների վրա և հեշտացնել նրանց հետ տարվող աշխատանքը:

Ազատազրկման դատապարտվածների դասակարգումը սերտորեն կապված է քրեական իրավունքի այնպիսի ինստիտուտի հետ, ինչպիսին հանցագործության տեսակներն են: Վերջինս որոշակի իմաստով որոշում է դատապարտյալների դասակարգման խմբերը: Ազատազրկման դատապարտվածների դասակարգմանն անմիջականորեն վերաբերում են նաև քրեական օրենսդրության բազմաթիվ այլ նորմեր և ինստիտուտներ՝ ռեցիդիվը, քրեական պատասխանատվության տարիքը, անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները, մեղքի ձևերը, ազատազրկման ժամկետները և այլն: Քրեական օրենսդրության թվարկված ինստիտուտները և նորմերն ազատազրկման դատապարտվածների դասակարգման չափանիշներ են, որոնք իրացվում են դատապարտյալների նկատմամբ ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելիս:

ՀՀ նոր ՔԿՕ-ը ոչ միայն ամրապնդելու է դատապարտյալների դասակարգման չափանիշները և նրանց նկատմամբ ուղղիչ հիմնարկի տեսակը նշանակելու կանոնները, այլև նախատեսելու է դասակարգման որոշակի խմբերի պատկանող դատապարտյալների միմյանցից առանձին պահելու կարգը, թեև դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական նոր չափանիշներում չի խրախուսվում դատապարտյալներին միմյանցից առանձին պահելու գործող կարգը: Կարծում ենք՝ անպայմանորեն առանձին պետք է պահվեն.

1) տղամարդիկ՝ կանանցից.

2) անչափահասները՝ չափահասներին,

3) դատարանների, իրավապահ մարմինների աշխատակից կամ նախկին աշխատակից դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից. առանձին ուղղիչ հիմնարկում: Այստեղ կարող են բերվել նաև այլ դատապարտյալներ:

4) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից.

5) ցմահ ազատազրկման դատապարտված անձինք՝ առնվազն ութ տարի, որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանցից:

6) Օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող դատապարտյալներն՝ ՀՀ քաղաքացի դատապարտյալներից:

Ազատազրկման դատապարտված անձանց դասակարգումը կազմում է ուղղիչ հիմնարկներով դատապարտյալների փաստական բաշխման հիմքը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դասակարգման միևնույն խմբին պատկանող դատապարտյալները ենթակա են պատիժը համատեղ կրելու մեկ ուղղիչ հիմնարկի սահմաններում: Այս հանգամանքը ազդում է ուղղիչ հիմնարկների համակարգի վրա, չնայած որ վերջիններիս տեսակներն ավելի քիչ են, քան դատապարտյալների դասակարգման խմբերը, և միևնույն տեսակի ուղղիչ հիմնարկում ենթակա են պատիժ կրելու դասակարգման տարբեր խմբերի պատկանող դատապարտյալներ:

Փոփոխման է ենթակա նաև ազատազրկում պատժատեսակը կատարող քրեակատարողական հիմնարկների համակարգը: ՀՀ նոր ՔԿՕ-ում կարելի է նախատեսել ազատազրկում պատժատեսակը կատարող քրեակատարողական հիմնարկների ոչ թե հինգ, այլ չորս տեսակ, այն է՝ բաց, կիսափակ, փակ և բժշկական քրեակատարողական հիմնարկներ:

Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը կարող է որոշվել հետևյալ առանձնահատկություններով.

1) բաց քրեակատարողական հիմնարկում պատիժ են կրում անզգույշ և դիտավորյալ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագոր-

ծուրջան համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվելու դեպքում.

2) կիսափակ քրեակատարողական հիմնարկում պատիժ են կրում դիտավորյալ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվելու կամ ռեցիդիվի դեպքում.

3) փակ քրեակատարողական հիմնարկում պատիժ են կրում առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտվելու կամ նախկինում ազատազրկում կրածները ռեցիդիվի դեպքում.

4) բժշկական քրեակատարողական հիմնարկում պատիժ են կրում որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվելու և բուժսանիտարական ու բուժկանխարգելիչ համապատասխան օգնություն կազմակերպելու անհրաժեշտության դեպքում:

Առանձին ուշադրության է արժանի անչափահաս դատապարտյալների նկատմամբ նախատեսվող պատիժների համակարգը, դրանց կատարման կարգն ու պայմանները, անչափահասների իրավունքների ապահովման երաշխիքները, ազատազրկում պատժատեսակի կատարման առանձնահատկությունները նրանց նկատմամբ: Ազատարկում պատժատեսակը կատարելու համար քրեակատարողական հիմնարկների ինքնուրույն տեսակներ է անհրաժեշտ նախատեսել անչափահաս դատապարտյալների համար՝ պատժի կրման ինքնուրույն պայմաններով.

1. Ընդհանուր տեսակի քրեակատարողական հիմնարկներ. պատիժ են կրում առաջին անգամ ազատազրկման դատապարտված անչափահասները:

2. Խիստ տեսակի քրեակատարողական հիմնարկներ. պատիժ են կրում նախկինում ազատազրկման ձևով պատիժը կրած և դատվածություն ունեցող անչափահասները:

3. Խիստ տեսակի քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում նաև այն դատապարտյալները, ովքեր թողնվել են այստեղ մինչև նրանց 21 տարին լրանալը:

Ինչպես արդեն նշվեց, դատապարտյալների դասակարգման կարևորագույն խնդիրներից է ազատագրվում պատժատեսակը կատարող քրեակատարողական հիմնարկի տեսակը որոշելը, որտեղ և դատապարտյալը պետք է կրի պատիժը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատապարտյալը պատժի ամբողջ ժամկետը, որպես կանոն, կրում է մեկ քրեակատարողական հիմնարկում: Նման մոտեցումը պայմաններ է ստեղծում դատապարտյալի անձի ուսումնասիրման, պատժի արդյունավետ կատարման, ներգործության միջոցների խելամիտ կիրառման համար: Բայց պրակտիկայում պատժի կրման ընթացքում երբեմն առաջանում է դատապարտյալի պատժի կրման պայմանների փոփոխման անհրաժեշտություն, ինչպես մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում, այնպես էլ դատապարտյալին մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխելու միջոցով: Գործող օրենսդրությունը նախատեսում է պատժի կրման պայմանների փոփոխում դատապարտյալին մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխելու միջոցով, բայց մեկ հիմնարկի շրջանակներում այն պատժի կրման պայմանների փոփոխում նախատեսված չէ:

Պատժի կրման պայմանների փոփոխման ինստիտուտն ազատագրվման կատարման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն անհրաժեշտ է նախատեսել ոչ միայն մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխելու միջոցով (նախատեսված է գործող ՀՀ ՔԿՕ-ով), այլև մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում: Պատժի կրման պայմանների փոփոխումը, այսպես կոչված «պրոգրեսիվ համակարգը» ծագել է Անգլիայի ազատագրվման կատարման համակարգում դեռևս 19-րդ դարի սկզբին և հանդիսացել է բանտային գործի հայտնի առաջընթաց: Այն կիրառվում է մինչև օրս աշխարհի բազմաթիվ երկրներում և, բնականաբար, ապրել է որոշակի զարգացում՝ ներառելով իրավաբանների տեսական մշա-

կումները: «Պրոգրեսիվ համակարգը»¹ պատժի իրավական կառուցվածքի մասն է կազմում և խթանում է դատապարտյալների ուղղման գործընթացը, քանի որ խրախուսում է օրինապահ վարքագիծ դրսևորող դատապարտյալներին, մեղմացնում նրանց պատժի կրման պայմանները և, ընդհակառակը, պատժի կրման պայմանների խստացում է նախատեսում հակաօրինական վարքագիծ դրսևորողների նկատմամբ: Պատժի կրման պայմանների փոփոխման նախատեսումը մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում, անշուշտ, կունենա դրական ազդեցություն պատժի կատարման և դրա նպատակների իրականացման արդյունավետության վրա:

Մեկ քրեակատարողական հիմնարկում պատժի կրման պայմանների փոփոխման հնարավորությունն ապահովելու նպատակով առաջարկվում է յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում նախատեսել պատժի կրման երկու պայման՝ մեղմ և խիստ.

1) բաց քրեակատարողական հիմնարկի մեղմ պայմաններում պատիժ են կրում անզգույշ հանցագործության համար ազատազրկման դատապարտվածները, խիստ պայմաններում՝ դիտավորյալ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար առաջին անգամ ազատազրկման դատապարտվածները.

2) կիսափակ քրեակատարողական հիմնարկի մեղմ պայմաններում պատիժ են կրում ծանր հանցագործության համար ազատազրկման դատապարտվածները, խիստ պայմաններում՝ առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվածները կամ ռեցիդիվի դեպքում.

3) փակ քրեակատարողական հիմնարկի մեղմ պայմաններում պատիժ են կրում առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտվածները, խիստ պայմաններում՝ ցմահ ազատազրկման դատապարտ-

¹Այդ մասին մանրամասն տե՛ս Ткачевский Ю.М. Прогрессивная система исполнения уголовных наказаний. М., 1997:

վածները, ինչպես նաև նախկինում ազատագրվում կրածները ռեցի-
դիվի դեպքում:

Մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում պատժի
կրման պայմանների փոփոխումը դատապարտյալների՝ օրենքով
նախատեսված իրավունքների և արտոնությունների ավելացումն է
կամ կրճատումը, այսինքն՝ պատժի կրման ընթացքում իրենց դրա-
կանորեն դրսևորող դատապարտյալները, պատժի սահմանված
ժամկետի որոշակի մասը կրելուց հետո կարող են խիստ պայմաննե-
րից տեղափոխվել մեղմ պայմաններ. իրավունքների և ազատությ-
ւոնների շրջանակը կարող է ընդլայնվել (լրացուցիչ կարճատև կամ
երկարատև տեսակցություն, զբոսանքի տևողության ավելացում
մինչև երկու ժամ և այլն), կամ, ընդհակառակը, բացասական վարքա-
զիծ դրսևորողները կարող են մեղմ պայմաններից տեղափոխվել
խիստ պայմաններ, և իրավունքների շրջանակը կարող է սահմանա-
փակվել: Այսպես՝ ցանկացած տեսակի քրեակատարողական հիմ-
նարկի խիստ պայմաններից մեղմ պայմաններ կարելի է տեղափոխ-
վել, օրինակ՝ ազատագրվման ժամկետի մեկ երրորդը կրելուց հետո,
իսկ ցմահ ազատագրվման դատապարտվածները՝ ութ տարի փակ
տեսակի քրեակատարողական հիմնարկի խիստ պայմաններում
պատիժ կրելուց հետո:

Մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում սահմա-
նելով պատժի կրման տաքեր պայմաններ՝ փոփոխվում է ոչ միայն
քրեակատարողական հիմնարկի տեսքը (ստեղծվում է, փաստորեն,
երկու բնակելի գոտի), այլև տվյալ հիմնարկի կանոնակարգի բովան-
դակությունը: Պատժի կրման պայմանների տարբերակումն իրակա-
նացվում է ոչ միայն քրեակատարողական հիմնարկների տեսակնե-
րում, այլև հիմնարկի ներսում: Ընդ որում, թե որ պայմանում դատա-
պարտյալը պետք է պատիժ կրի, հիմնականում կախված է դատա-
պարտյալից և առաջին հերթին պատժի կրման ընթացքում նրա վար-
քագծից:

Կարծում ենք՝ ՀՀ նոր ՔԿՕ-ը հուսալի հիմք կհանդիսանա պա-
տիժների կատարման արդյունավետ կազմակերպման համար: Նոր

օրենքի մեծագույն նվաճումը, մեր կարծիքով, լինելու է նրա համապատասխանեցումը միջազգային նորմերին և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական չափանիշներին:

ՀՀ նոր ՔԿՕ-ը ձևակերպելու է ՀՀ քրեակատարողական համակարգի բարեփոխումը և մատնանշելու է որոշակի գործունեության ուղղություններ ոչ միայն մոտ ապագայում, այլև հեռանկարում: Պետք է նկատի ունենալ, որ նպատակամղված առաջընթաց այստեղ անհնար է, քանի որ «բանտային գործը» ինքնին պահպանողական է, խիստ և ուղղվածություն ունի դեպի ավանդույթներն ու սովորույթները: Փոփոխություններ այս բնագավառում հնարավոր է միայն աստիճանաբար և փուլերով՝ հաշվի առնելով հասարակության ու պետության ներսում գործող սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնները:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Арутюн Хачикян

*Профессор кафедры уголовного права ЕГУ,
доктор юридических наук*

В Республике Армения была проведена реформа уголовно-исполнительной системы: полностью изменилось содержание пенитенциарной деятельности, став более демократичным и гуманным. Тем не менее, законодательство в этой области и уголовно-исполнительная система нуждаются в дальнейшем реформировании, нужен постепенный переход к более либеральным и эффективным механизмам в сфере исполнения и отбывания уголовных наказаний.

Учитывая значительное расширение объема предмета правового регулирования, предусмотренного Уголовным кодексом Республики Армения (новые виды наказаний, цели, меры безопасности), вновь сформулированные разнообразные и многогранные нормы материального закона, необходимо процессуальное (пенитенциарное) законодательство, которое бы определяло правила и условия их реализации.

Новый уголовно-исполнительный закон предоставит возможность расширить не только предмет правового регулирования, но и координировать различные правовые акты, которые относятся к исполнению и отбыванию отдельных видов наказаний и отдельных институтов наказаний. В связи с этим необходимо разработать и принять новый уголовно-исполнительный кодекс Республики Армения по проблемам исполнения наказаний в соответствии со современными международными принципами и требованиями теоретических исследований науки уголовно-исполнительного права.

TENDENCIES OF DEVELOPMENT OF THE PENITENTIARY LAW IN THE REPUBLIC OF ARMENIA

Harutyun Khachikyan

Professor of the YSU Chair of Criminal Law,

Doctor of Legal Sciences

She penal system was actually reformed in the Republic of Armenia: the content of penitential activities was completely changed, becoming more democratic and humanistic. However, this field of legislation and penitentiary system as a whole need further reforms: there is a need of gradual transition to more liberal and effective mechanisms in the field of execution and serving of criminal punishments.

Taking into account the significant expansion of the scope of legal regulation's subject under the Criminal Code of the Republic of Armenia (new types of punishments, goals, security measures), the newly formulated diverse and multifaceted norms of material law, there is a need for penitentiary law norms which will define the terms and conditions of the implementation of newly introduced punishments and measures.

New penitentiary law will provide an opportunity to expand not only the subject of legal regulation, but also to coordinate the various legal acts that relate to the execution and serving certain types of punishments and certain institutes of sentences. In this connection it is necessary to develop and adopt new Penitentiary Code of the Republic of Armenia on issues of execution of punishments in accordance with current international principles and requirements of theoretical research of penitentiary law science.

Բանալի բառեր – քրեակատարողական համակարգ, վերասոցիալականացում, իրավահպատակ վարքագիծ, դատապարտյալների իրավական վիճակ, դատապարտյալների դասակարգում, պատժի կրման պայմանների փոփոխման պրոգրեսիվ համակարգ:

Ключевые слова - уголовно-исполнительная система, ресоциализация, правомерное поведение, правовой статус осужденных, классификация осужденных, прогрессивная система изменения условий отбывания наказания.

Keywords - penitentiary system, resocialization, lawful behavior, the legal status of prisoners, the classification of prisoners, progressive system of amendments in the conditions of serving the sentence.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Աննա Մարգարյան
*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ-ը Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը ստորագրել է 1999 թ.-ի հոկտեմբերի 1-ին, սակայն այն մինչ օրս չի վավերացրել: Այնուհանդերձ, գործող քրեական օրենսգրքի բաժին 13-ը պատասխանատվություն է սահմանում խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 5-ում ներկայացված հանցավոր ոտնձգությունների՝ զենոցիդի, մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, պատերազմական հանցագործությունների համար:

Գործող քրեական օրենսգրքի հոդված 393-ը պատասխանատվություն է սահմանում **ցեղասպանության** համար, այն է՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելու, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելու, մանկածնությանը խոչընդոտելու, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելու, բռնությամբ վերաբնակեցնելու կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելու համար:

Ցեղասպանության բնորոշման ներկայացված ձևակերպումը կարծես թե կրկնում է այն դրույթները, որոնք Հռոմի կանոնադրության հոդված 6-ով ներկայացվում են ցեղասպանության հանցակազմի բնորոշմանը:

Այնուհանդերձ, նշված ձևակերպման մեջ առկա է դրույթ, որը միանշանակ մեկնաբանվել չի կարող: Խոսքը վերաբերում է ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ

մասնակի ոչնչացման նպատակով այդ խմբի անդամների առողջությանը ծանր վնաս պատճառելուն: ՀՀ Քրեական իրավունքի տեսանկյունից նման ձևակերպման հիմնական նպատակն էր կանոնակարգել Հոռմի կանոնադրության հոդված 6-ում ներկայացված՝ «խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնաս հասցնելը» արտահայտությունը:

Առաջին հայացքից թվում է, որ այս ձևակերպումը խնդիր չի առաջացնում, քանի որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ անձի առողջությանը պատճառված ծանր վնաս է համարվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան վնաս պատճառելը: Նման մոտեցումն, ի դեպ, իր ամրագրումն է ստացել նաև քրեաիրավական գրականության մեջ¹: Այնուհանդերձ, պետք է նկատի ուեննալ, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում՝ հոդված 112-ում, հայ օրենսդիրը հստակ պահանջ է ներկայացնում, որ հանցավոր ոտնձգությունը «անձի առողջությանը ծանր վնաս պատճառել» դիտելու համար անհրաժեշտ է, որ պատճառված վնասը հանգեցնի հոգեկան հիվանդության, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացման: Իսկ ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ ցեղասպանության ժամանակ տարածում գտած խոշտանգումները, բռնաբարությունները, սեքսուալ բռնությունը ազդել են հոգեկանի վրա, հոգեկան տրավմայի են հանգեցրել, սակայն որպես հոգեկան հիվանդություն չեն ախտորոշվել: ՀՀ գործող քրեական օրենսգրքում ներկայացված ձևակերպման համաձայն՝ դրանք դուրս են հանցակազմի շրջանակներից:

Դա նկատի ուեննալով՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում ցեղասպանությունը բնորոշվում է որպես ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով այդ խմբի անդամներին սպանելը, նրանց ա-

¹ Տե՛ս Հայաստանի հանրապետության քրեական իրավունք. Հատուկ մաս: Գ. Ղազինյանի խմբագրությամբ, դասագիրք բուհերի համար, 4-րդ հրատարակություն, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 1073; Левашова О.В. Пправовая квалификация геноцида. Современные тенденции развития науки и технологий. 2015. № 8-6, стр. 76.

ռողջությանը ծանր վնաս կամ հոգեկան այլ լուրջ վնաս պատճառելը, բռնությամբ տեղահանելը, այլ վայրում վերաբնակեցնելը կամ այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը, այդ խմբում մանկածնությանը խոչընդոտելը կամ այդ խմբի ներկայացուցիչներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելը:

Քրեաիրավական գրականության մեջ բարձրացված խնդիրներից է նաև ցեղասպանություն իրականացնելու կամ դրան մասնակցելու հրապարակային կոչը որպես ինքնուրույն ավարտված հանցագործություն նախատեսելու նպատակահարմարությունը¹: Գործող քրեական օրենսգրքում նշված արարքները առանձին հանցակազմով նախատեսված չեն, այլ ընդհանուր մոտեցման համաձայն՝ նման արարքների համար քրեական պատասխանատվություն է առաջանում կամ հանցակցության կամ չավարտված հանցագործության ինստիտուտի շրջանակներում: Մինչդեռ գործող քրեական օրենսգրքի հոդված 385-ը ինքնուրույն պատասխանատվություն է սահմանում ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերի համար, և նման տարբերակված մոտեցումը ոչնչով արդարացված չի թվում: Հետևաբար, հարցի լուծման ճիշտ տարբերակ է քրեական օրենսգրքի նախագծում պատասխանատվության սահմանումը ոչ միայն ագրեսիվ պատերազմի, այլև ցեղասպանության հրապարակային կոչերի համար, հատկապես որ ցեղասպանության հրապարակային կոչերը հաճախ ուղղված են անձանց անորոշ շրջանակի, և կատարվածը դրդյություն դիտելը ևս խնդրահարույց կարող է լինել²:

Վերջին տասնամյակների ընթացքում առանձին կարևորություն է ստանում նաև ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելու

¹St' u Moskal'ev G. L. Проблема криминализации публичных призывов к совершению геноцида. Вестник Алтайской академии экономики и права. 2014. № 6, стр. 24-26.

² St' u Apytyonov, A. A. Соучастие в преступлении М. : Статут, 2013, стр. 87; Гаухман, Л. Д. Квалификация преступлений: закон, теория, практика М. : ЮрИнфоР, 2001, стр. 217.

կամ արդարացնելու համար քրեական պատասխանատվության սահմանման հարցը¹: Պատահական չէ, որ մի շարք երկրների քրեական օրենսգրքերում նման վարքագծի դրսևորման համար սահմանված է քրեական պատասխանատվություն: Մասնավորապես, նման նորմ նախատեսված է Շվեյցարիայի քրեական օրենսգրքի հոդված 261^{bis}-ում, որը մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում է նախատեսում ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները հերքելու կամ արդարացնելու կամ դրավտանգավորությունը նվազեցնելու համար: Համանման դրույթներ էին նախատեսված նաև Ֆրանսիայի, Իսպանիայի քրեական օրենսդրությամբ, թեև այդ երկրների Սահմանադրական դատարանները գտան, որ քրեական օրենսգրքում նման դրույթի առկայությունը անհարկի սահմանափակում է մարդու խոսքի ազատության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով իր կայացրած վճռում անդրադարձել է քննության առարկա խնդրին: Կայացված վճռից հետևում է, որ քրեական օրենսգրքում ցեղասպանության հերքման կամ արդարացման համար պատասխանատվության սահմանումը ընդունելի կարող է համարվել, եթե այն հրահրում է ազգային, ռասայական, էթնիկ կամ կրոնական թշնամանք կամ անհանդուրժողականություն, կամ նսեմացնում է նշված խմբերի անդամների արժանապատվությունը՝ սուր հասարակական լարվածության տեղիք տալով²:

Նկատի ունենալով խոսքի ազատության իրավունքի պաշտպանության կարևորությունը, սակայն, Մարդու իրավունքների կոնվենցիայով նախատեսված դեպքերում, դրա սահմանափակման հնարավորությունը՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում պատասխանատվություն է նախատեսվում ազգային, ռասայական, էթնիկ կամ կրոնական թշնամանք կամ անհանդուրժողականություն հարուցելու

¹ St' u S Garibian - Cardozo J. Taking denial seriously: genocide denial and freedom of speech in the french law. Conflict Resol., 2007, p 479.

² St' u Perincek v. Switzerland, ECHR, Application no. 27510/08, 15.10.2015.

կամ ազգային, ռասայական, էթնիկ, կամ կրոնական խմբի անդամների արժանապատվությունը նվաստացնելու նպատակով ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելու, արդարացնելու, դրավտանգավորությունը նսեմացնելու կամ դրան հավանություն տալու համար:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում նույն հանցանքի համար, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցն օգտագործելով

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի՝ կանոնադրության հոդված 7-ում տեղ գտած **մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները** արտացոլվել են ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 392-ում՝ վերնագրվելով մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ: Համաձայն այդ նորմի՝ քրեական պատասխանատվություն է սահմանվում արտաքսման, ապօրինաբար կալանքի տակ պահելու, ստրկացնելու, առանց դատի զանգվածային և պարբերական մահապատիժներ կիրառելու, մարդկանց առևանգելու համար, ինչին հետևում է նրանց անհետանալը, խոշտանգելու կամ դաժան գործողությունների համար, որոնք կատարվել են ըստ քաղաքացիական բնակչության ռասայական, ազգային, էթնիկական պատկանելության, քաղաքական հայացքների և դավանանքի:

Ներկայացված ձևակերպումը, սակայն, որոշակի անճշտություններ ունի Հռոմի կանոնադրության հոդված 7-ում տեղ գտած հանցակազմի հետ համեմատելիս: Նախ՝ հոդված 7-ում նշվում է, որ մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն բնորոշվելու համար անհրաժեշտ է, որ հանցավոր ոտնձգությունը լինի քաղաքացիական բնակչության հանդեպ իրականացվող սիստեմատիկ կամ ընդգրկուն ոտնձգությունների մի մաս, մինչդեռ ՀՀ քրեական

օրենսգրքի հոդված 392-ի ձևակերպումից դա չի որևում, այլ ստացվում է, որ նույնիսկ մեկ անձի արտաքսման պարագայում այս նորմը կարող է կիրառվել, ինչը չի արտացոլում Հռոմի Կանոնադրության հոդված 7-ի պահանջները: Միաժամանակ, Հռոմի կանոնադրության մեջ ներկայացված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքները ևս տարբեր են՝ սպանություն, բնաջնջում, այդ թվում՝ կենսապահովման համար անհրաժեշտ սննդից կամ դեղորայքից զրկելը, ստրկացում, բնակչության դեպորտացիա կամ բռնի տեղահանում, միջազգային իրավունքի հիմնարար դրույթների խախտմամբ իրականացված ազատագրկում կամ ֆիզիկական ազատությունից զրկում, խոշտանգում, բռնաբարություն, սեքսուալ ստրկություն, մարմնավաճառության հարկադրում, հարկադրաբար հղիացում կամ ստերիլիզացիա կամ համանման ծանրության սեքսուալ բռնություն, որոշակի խմբի անդամներին իրենց հիմնարար իրավունքներից և ազատություններից զրկելը՝ պայմանավորված վերջիններիս սեռով, ազգությամբ, ռասայով, էթնիկ, մշակութային, քաղաքական պատկանելությամբ կամ միջազգային իրավունքի կողմից ոտնահարման համար անթույլատրելի ճանաչված այլ հիմքերով, մարդկանց անհետացում, ապարտեիդ, նմանաբնույթ այլ անմարդկային արարքներ, որոնք հանգեցնում են տառապանքի կամ լուրջ վնաս պատճառում ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:

Ակնհայտ է, որ Հռոմի կանոնադրության մեջ ներկայացված հանցակազմը իր հատկանիշներով շատ ավելի լայն է, քան այն, ինչը ներկայացված է ՀՀ գործող քրեական օրենսգրքում, թեև հարկ է նշել, որ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների որոշ դրսևորումներ, հատկապես զինված ընդհարումների ժամանակ տեղ գտնողները, նախատեսվել են հոդված 390-ում:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում քննարկվող հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ. քաղաքացիական բնակչության նկատմամբ համակարգային կամ լայնամասշտաբ բնույթ կրող ոտնձգություններ կատարելը, որը դրսևորվել է անձին սպանելով, անհիմն մահապատժի ենթարկելով, ստրկացնելով, խոշտանգելով,

սեքսուալ բնույթի բռնի գործողությունների ենթարկելով, նրա կամքին հակառակ հղիացնելով, մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելով, մանկածնությանը խոչընդոտելով, արտաքսելով, բռնությամբ տեղահանելով կամ այլ վայրում վերաբնակեցնելով, առնանգելով, ապօրինաբար ազատությունից զրկելով, անհետացնելով կամ առողջությանը ծանր վնաս կամ ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառող նույնաբնույթ արարք կատարելով, քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկ, կրոնական, մշակութային պատկանելությամբ կամ սեռով պայմանավորված՝ որոշակի խմբի ներկայացուցիչներին հետապնդելով:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում նշված հանցանքի իրականացման համար, որը կատարվել է՝

1) անձի կողմից իր ծառայողական կամ իշխանական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) առանձին դաժանությամբ,

3) անչափահասի նկատմամբ:

Հռոմի կանոնադրության հոդված 8-ում տեղ գտած **պատերազմական հանցագործությունները** նախատեսված են ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 390-ում, որում, մասնավորապես, պատասխանատվություն է սահմանված զինված ընդհարումների ժամանակ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող կամ պաշտպանության միջոցներից զրկված անձանց, վիրավորների, հիվանդների, բժշկական կամ հոգևոր անձնակազմի, սանիտարական գործակալների կամ սանիտարական տրանսպորտային միջոցների, ռազմագերիների, քաղաքացիական անձանց, քաղաքացիական բնակչության, փախստականների, հովանավորվող անձանց կամ ռազմական գործողությունների ժամանակ պաշտպանությունից օգտվող այլ անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները կատարելու համար, որից հետո մանրամասն ներկայացվում են այն արարքները, որոնց կատարումը առաջացնում է քրեական պա-

տասխանատվություն:

Առաջին իսկ դիտարկումը, որը կարելի է անել, այն է, որ հոդվածում խոսքը վերաբերում է միայն զինված ընդհարմանը, մինչդեռ կարիք կա նախատեսել պատասխանատվություն նաև օկուպացված¹ տարածքում կատարվող ոստնձգությունների համար: Բացի այդ, հստակության կարիք ունի նաև այն սուբյեկտների շրջանակը, ում հանդեպ կատարվող ոստնձգությունը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, պետք է դիտարկվի որպես պատերազմական հանցագործություն:

Թերևս առավել ճշգրիտ է թվում հետևյալ ձևակերպումը «Օկուպացված տարածքում կամ պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող կամ ռազմական գործողություն իրականացնելու հնարավորությունից զրկված անձի, վիրավորի, հիվանդի, ազատությունից զրկվածի, ռազմագերու, բժշկական կամ հոգևոր սպասարկող անձնակազմի, քաղաքացիական բնակչության, քաղաքացիական անձի, փախստականի, հովանավորվող անձի կամ ռազմական գործողությունների ժամանակ պաշտպանությունից օգտվող այլ անձի հանդեպ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը»: Իհարկե, չպետք է մոռանալ, որ բացի ֆիզիկական անձանցից, պաշտպանության տակ են գտնվում նաև որոշ տրանսպորտային միջոցներ, օբյեկտներ, սակայն դրանց հանդեպ ոստնձգությունները պետք է առանձին մասերով նախատեսել հենց խմբագրական թերություններից խուսափելու նպատակով, այլապես ՀՀ գործող քրեական օրենսգրքի ներկայիս ձևակերպումից զուտ լեզվական մեկնաբանության արդյունքում կարող է ստեղծվել սպավորություն, որ օրենսդիրը 12-20 տարի ժամկետով ազատազրկում կամ ցմահ ազատազրկում է նախատեսում «սանիտարական գորամասերի կամ սանիտարական

¹ St 'u George H. Aldrich. Prospects for United States Ratification of Additional Protocol I to the 1949 Geneva Conventions. *The American Journal of International Law*: Vol. 85, No. 1 (Jan., 1991), pp. 1-20

տրանսպորտային միջոցների սպանության, խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի, ներառյալ կենսաբանական փորձերի համար...»:

Միաժամանակ, հստակեցման կարիք ունեն այն արարքները, որոնք հայ օրենսդրի կողմից դիտվում են որպես միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ զինված ընդհարումների ժամանակ: Գործող քրեական օրենսգրքով 12-20 տարի ժամկետով ազատազրկում կամ ցմահ ազատազրկում է նախատեսված, եթե քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվել է սպանությամբ, խոշտանգմամբ և անմարդկային վերաբերմունքով՝ ներառյալ կենսաբանական փորձերով, դիտավորությամբ լուրջ տառապանք պատճառելով կամ անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակին սպառնացող այլ գործողություններ կատարելով: Նշված ձևակերպման մեջ արդեն ի հայտ են գալիս մի շարք թերություններ, մասնավորապես, օրենսդիրը, օգտագործելով «և» շաղկապը, անհրաժեշտ պայման է համարում, որ սոսկ անմարդկային վերաբերմունքի պարագայում պատասխանատվություն չառաջանա, այլ այն զուգակցվի խոշտանգմամբ, ներառյալ կենսաբանական փորձերով, մինչդեռ Հռոմի կանոնադրությամբ օգտագործված է «կամ» շաղկապը, ինչը հնարավորություն է տալիս ինքնուրույն պատասխանատվություն սահմանել անմարդկային վերաբերմունք դրսևորելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասը 5-12 տարի ժամկետով ազատազրկմամբ պատասխանատվություն է սահմանում զինված ընդհարումների ժամանակ սույն հոդվածի առաջին մասում թվարկված անձանց կամ օբյեկտների նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները կատարելու համար՝

1) առողջությանը վնաս պատճառելը,

2) հովանավորվող անձին կամ ռազմագերուն հակառակորդ տերության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը,

3) հովանավորվող անձին կամ ռազմագերուն անաչառ և պատշաճ դատավարության իրավունքից զրկելը,

4) հովանավորվող անձի անօրինական բռնազաղթը, տեղափոխելը և կալանավորումը կամ այլ ձևով ազատությունից զրկելը,

5) պատանդ վերցնելը,

6) գույքն անօրինական, կամայական, մեծ չափերով ոչնչացնելը կամ յուրացնելը, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասը 13-20 տարի ժամկետով ազատազրկում կամ ցմահ ազատազրկում է սամանում զինված ընդհարումների ժամանակ անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակին լուրջ վնաս պատճառած կամ մարդու մահ առաջացրած միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքների համար՝

1) քաղաքացիական բնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց վրա հարձակումը,

2) ոչ ընտրովի բնույթի հարձակումը, որը վնասում է քաղաքացիական բնակչությանը կամ քաղաքացիական օբյեկտներին, եթե ակնհայտ է, որ նման հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների քաղաքացիական անձանց շրջանում կամ չափազանց մեծ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, եթե այդպիսի վնասներ պատճառելը չափազանց է՝ կոնկրետ և անմիջական ռազմական գերազանցության հասնելու համար,

3) վտանգավոր ուժեր պարունակող կառույցների և սարքավորումների վրա հարձակվելը, եթե ակնհայտ է, որ այդպիսի հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների քաղաքացիական անձանց շրջանում կամ չափազանց մեծ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, եթե այդպիսի վնասներ պատճառելը չափազանց է կոնկրետ և անմիջական ռազմական գերազանցության հասնելու համար,

4) չպաշտպանվող տարածքները և ապառազմականացված գոտիները հարձակման օբյեկտ դարձնելը,

5) հարձակումն այն անձի վրա, ով հանցավորի համար ակնհայտ դադարեցրել է անմիջական մասնակցությունը ռազմական

գործողություններին:

Ներկայացված ձևակերպման մեջ ևս առկա են անճշտություններ, մասնավորապես եթե համեմատենք ներկայացված ձևակերպման 3-րդ կետը, ապա այն թերի է, քանի որ Հոռմի կանոնադրության մեջ նշվում է ոչ թե քաղաքացիական օբյեկտների մեծ վնաս պատճառելու, այլև շրջակա բնական միջավայրին լուրջ վնաս պատճառելու մասին, ինչը բացակայում է ՀՀ օրենսդրությամբ: Միաժամանակ, 5-րդ կետի առումով Հոռմի Կանոնադրությունը ավելի նեղ է. այն սահմանում է պատասխանատվություն ոչ թե ռազմական գործողություններին իր անմիջական մասնակցությունը դադարեցրած անձի նկատմամբ հարձակման, այլ վերջինիս սպանելու կամ նրան վնասվածք հասցնելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքում թվարկվում են նաև այլ արարքներ, որոնք միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ են հանդիսանում, սակայն որպես ամփոփում հոդված 390-ի 5-րդ մասում նշվում է զինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի միջազգային պայմանագրերով նախատեսված այլ խախտումները, պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Ըստ էության, այս ձևակերպումը թույլ է տալիս հանցավոր համարել բոլոր այն դրսևորումները, որոնք նախատեսված չեն քննարկվող հոդվածի նախորդ մասերով, այլ խնդիր է, որ տարակուսանքի տեղիք է տալիս սանկցիան՝ 3 ամսից մինչև 5 տարի ժամկետով ազատազրկումը, որը կարող է կիրառվել, օրինակ, այն դեպքում, երբ կատարվում է բռնաբարություն, սեքսուալ ոտնձգություն և այլն:

Պատերազմական հանցագործությունների դրսևորումները նախատեսված են նաև գործող քրեական օրենսգրքի հոդված 387-ում՝ պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը, սակայն այս հանցակազմի ձևակերպումը ևս թերի է, քանի որ ստացվում է, որ միայն արգելված ռազմական մեթոդի կիրառման դեպքում պատասխանատվություն չի առաջանա, այլ այն պետք է զուգակցվի պատերազմ վարելու արգելված միջոցի կիրառմամբ: Որպես հարցի լուծման տարբերակ կարող է ծառայել հետևյալ ձևակերպումը. «Օ-

կուպացված տարածքում, պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներով կամ դրանց կից արձանագրություններով նախատեսված միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտում հանդիսացող արարք կատարելը»:

Հոդված 396-ը պատասխանատվություն է սահմանում միջազգային պաշտպանությունից օգտվող օտարերկրյա պետության ներկայացուցչի կամ միջազգային կազմակերպության աշխատակցի կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց ծառայողական կամ բնակելի շենքերի կամ տրանսպորտային միջոցների վրա հարձակվելու համար, որը, սակայն, անհարկի նեղացնում է հանցակազմի շրջանակը՝ սահմանելով, որ այդ արարքները պատժելի են, եթե նշված գործողությունները կատարվել են պատերազմի պրովոկացիայի կամ միջազգային հարաբերությունները բարդացնելու նպատակներով, մինչդեռ Հոդվածի Կանոնադրությամբ նման պահանջ ներկայացված չէ:

Հոդված 397-ը պատասխանատվություն է սահմանում ռազմական գործողությունների ժամանակ, հակառակ միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքով և միջազգային պայմանագրերով պահպանվող Կարմիր խաչի, Կարմիր մահիկի կամ մշակութային արժեքների համար նախատեսված պաշտպանիչ նշանները կամ այլ տարբերանշաններն օգտագործելու, կամ հակառակորդի կամ չեզոք պետության պետական դրոշից կամ պետական տարբերանշաններից ապօրինի օգտվելու կամ միջազգային կազմակերպության դրոշից կամ տարբերանշաններից ապօրինի օգտվելու համար:

Թերևս նման թերություններից խուսափելու լավագույն տարբերակ կլինե՞ր պատերազմական հանցագործությունների նկարագրման ժամանակ բլանկետային նորմի նախատեսումը, այն է՝ միջազգային մարդասիրական իրավունքի խախտում հանդիսացող արարք կատարելը, սակայն նման մոտեցումը խնդիրներ է առաջացնում սանկցիայի կիրառման տեսակետից, քանի որ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները իրենց վտանգավորությամբ ևս տարբեր են:

Ինչ վերաբերում է **ազրեսիայի** հանցակազմին, ապա գործող քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված ազրեսիվ պատերազմ ծրագրելու, նախապատրաստելու, սանձազերծելու կամ վարելու, ազրեսիվ պատերազմի հրապարակային կոչերի համար: Քրեական նոր օրենսգրքի նախագծում նախատեսվել են հետևյալ հանցակազմերը՝

1. Ազրեսիվ պատերազմ կամ զինված ընդհարում սանձազերծելը կամ վարելը կամ այդպիսի պատերազմ կամ զինված ընդհարում սանձազերծող կամ վարող կողմին միանալը,

2. Ազրեսիվ պատերազմ կամ զինված ընդհարում սանձազերծելու կամ դրան մասնակցելու հրապարակային կոչը,

3. Պատերազմ կամ միջազգային լարվածություն հրահրելը՝ պատերազմ, զինված ընդհարում կամ միջազգային լարվածություն հրահրելու նպատակով այլ պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ դրա անունից հանդես եկող անձին առևանգելը, ազատությունից զրկելը, պատանդ վերցնելը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը կամ այլ պետության տարածքում պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ պատերազմ, զինված ընդհարում կամ միջազգային լարվածություն հրահրելու նպատակով սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձի սպանությունը՝

4. Հրադադար հայտարարելու կամ խաղաղության համաձայնագրի պայմանները չկատարելը՝ հրադադարի կամ խաղաղության համաձայնագիր կնքելու մասին պաշտոնական տեղեկությունը ստանալուց հետո ռազմական գործողությունները չդադարեցնելը կամ հրադադարի կամ խաղաղության համաձայնագրի պայմանները այլ կերպ խախտելը կամ ռազմական գործողություններն ավարտելուց հետո ռազմագերու կամ քաղաքացիական անձի հայրենադարձությանը խոչընդոտելը:

Բնական է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի դրույթները դեռևս լրամշակման կարիք ունեն՝ օրենսդրությունը Հռոմի կանոնադրության և միջազգային իրավական այլ ակտերի պահանջներին առավել մոտարկելու նպատակով:

ОТРАЖЕНИЕ НОРМ СТАТУТА МЕЖДУНАРОДНОГО УГОЛОВНОГО СУДА В УГОЛОВНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА

Анна Маргарян

*Доцент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук,*

Армения подписала Римский Статут Международного уголовного суда 1-ого октября 1999 года, однако до сих пор он не был ратифицирован. Однако составы преступлений, предусмотренных Римским Статутом, закреплены в уголовном кодексе Республики Армения, хотя и не в полном объеме. Некоторые пробелы и противоречия были выявлены при конструкции составов преступлений геноцида, военных преступлений, агрессии, а также преступлений против безопасности человечества. Учитывая важность соответствия дефиниции этих преступлений международным требованиям, в проекте нового Уголовного кодекса РА составы преступлений были изменены с целью максимальной имплементации требований международных конвенций, предусматривающих ответственность за геноцид, преступления против безопасности человечества, а также военные преступления.

REFLECTION OF STANDARDS OF THE STATUTE OF THE INTERNATIONAL CRIMINAL COURT IN THE RA CRIMINAL LEGISLATION

Anna Margaryan

*Docent at the YSU Chair of Criminal Law,
Candidate of Legal Sciences*

On the 1st of October, 1999 Armenia signed Rome Statute of International Criminal Code, however so far it hasn't been ratified. However the crimes foreseen by the Rome Statute were stipulated in the criminal code of the Republic of Armenia, but not completely. Some shortcomings and inconsistencies were revealed while setting criminal responsibility for genocide, war crimes, crime of aggression, as well as crimes against humanity. Given the importance of the compliance of the mentioned crime

definitions to the international standards and having the aim to fulfill the implementation of the requirements of international conventions providing criminal responsibility for genocide, war crimes, as well as crimes against humanity, corpus delicti of the discussed crimes were improved in the draft of the new criminal code of the Republic of Armenia.

Բանալի բառեր – *ցեղասպանություն, պատերազմական հանցագործություն, մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություն, ագրեսիա, Հռոմի կանոնադրություն, ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ:*

Ключевые слова: *геноцид, военное преступление, преступление против безопасности человечества, агрессия, Римский Статут, уголовный кодекс РА, проект нового уголовного кодекса РА.*

Keywords: *genocide, war crime, crime against humanity, aggression, Rome Statute, criminal code of the RA, draft criminal code of the RA.*

**ՊԱՏԺԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

Մերգեյ Առաքելյան
*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատակիցների
կազմակերպման կատարելագործման բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում հանցածին իրավիճակը զգալիորեն սրվել է: Հանցավոր ամենատարբեր դրսևորումները խոչընդոտում են սոցիալ-տնտեսական բարեփոխումների բնականոն ընթացքը և ստեղծում լարվածության, տագնապայնության ու անկայունության մթնոլորտ: Արդյունքում առավել ընդգծվում են հասարակության քրեականացման բացասական միտումները: Այդ ֆոնի վրա վերջին տարիներին հանրապետությունում արձանագրվում է ընդհանուր հանցավորության կայուն աճ: Ստեղծված պայմաններում առավել արդիական է դառնում հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ ադեկվատ պատիժ նշանակելը: Այս առումով էական նշանակություն է ձեռք բերում ոչ միայն նշանակված պատիժների արդյունավետ կատարումը, այլև պատիժների զարգացած, բազմատեսակ համակարգի առկայությունը:

Այսօրվա պայմաններում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններին հաճախ, փաստորեն, հետևում են նույն սանկցիաները, ինչ որ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին: Հանցավորությունը, սակայն, դրանից չի նվազում: Ավելին, անպատժելիության մթնոլորտն ավելի է խորանում, ինչի մասին վկայում են նաև հանցագործությունների ռեցիդիվի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական ցուցանիշները: Այդ իմաստով ազատազրկման հետ չկապված պատիժների կիրառումը, երբ դա, իհարկե, հիմնավորված

է, պետք է դառնա իրավակիրառ տարածված պրակտիկա, որի հիմնական նպատակը քրեական պատասխանատվության անխուսափելիության, այլ ոչ թե չափազանց խստության ապահովումն է:

Հետևաբար, ներկայումս առավել կարևորվում է որոշակի կատեգորիայի հանցագործությունների համար ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների կիրառման անհրաժեշտությունը: Այդ առումով պատահական չէ, որ դեռևս երկու հազար տարի առաջ օգտագործվել է աստվածաշնչյան «աստի՛ր մեղքը, բայց սիրի՛ր մեղսավորին» արտահայտությունը, որի բարոյական իմաստը դրվել է նաև հանցանք կատարած անձանց նկատմամբ իրականացվող քրեական արդարադատության միջազգային հանրահայտ չափորոշիչների հիմքում:¹

Միևնույն ժամանակ, հասարակությունից տևականորեն մեկուսացնելու այլընտրանքները հանդիսանում են հասարակության քրեականացումից, դատապարտյալների՝ հանցավոր ենթամշակույթին սերտաճումից խուսափելու գործունե միջոցներ: Ուստի հենց այլընտրանքային պատիժները պետք է դառնան քրեական սանկցիաների նոր համակարգի առավել պահանջված բաղադրատարրեր:

Բացի դրանից, ՀՀ քրեական օրենսդրության՝ պատժի և քրեափրավական ներգործության այլ միջոցների վերաբերյալ նորմերի բարեփոխման անհրաժեշտությունը նախ և առաջ ենթադրում է՝

– համաձայնեցված, տեսականորեն հիմնավորված և աներկիմաստ հայեցակարգային մոտեցման հիման վրա՝ քրեական պատասխանատվություն,՝ պատիժ՝ և՝ քրեափրավական ներգործության այլ միջոցներ՝ հասկացությունների հարաբերակցության և սահմանազատման օրենսդրական կարգավորում,

– քրեափրավական ներգործության պատժիչ, վերականգնողական և կանխարգելիչ միջոցների համալիր կիրառման օպտիմալ բալանսի ապահովում,

– պատժի համակարգի և առանձին պատժատեսակների բո-

¹ St 'u նաև Заруднева Ю.С. Альтернативы наказанию в Республике Казахстан и зарубежных странах. Усть-Каменогорск, 2007, էջ 5:

վանդակության կատարելագործում,

– ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների առավել լայն շրջանակի մշակում,

– հանցագործություններից տուժողներին պատճառված վնասի պարտադիր հատուցման դեպքերի շրջանակի նախատեսում:

Այս իմաստով խիստ հրատապ են և բազմակողմանի լուրջ վերանայման կարիք են զգում ՀՀ քրեական գործող օրենսդրությամբ նախատեսված պատժի համակարգի հետ կապված հարցերը: Մասնավորապես, ներկայիս պայմաններում հաճախ դատարանները ազատազրկմանն այլընտրանք չեն ունենում: Արդյունքում ակներև է ազատազրկում պատժատեսակի չարդարացված հաճախակի կիրառումը, ինչը ոչ միայն չի նպաստում պատժողական քաղաքականության արդյունավետությանը, այլև բազմաթիվ խնդիրներ է ստեղծում քրեակատարողական հիմնարկների բնականոն աշխատանքի համար և նպաստում հասարակական հարաբերությունների քրեականացմանը, քաղաքացիական հասարակության մեջ «գողական օրենքների» տարածմանը¹: Թեև դատարանները հաճախ ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, սակայն տվյալ ինստիտուտի ոչ հստակ և բացերով ու թերություններով աչքի ընկնող օրենսդրական կարգավորումը ևս չի նպաստում քրեաիրավական ներգործության արդյունավետությանը:

Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներից քիչ թե շատ արդյունավետ կիրառվում է միայն տուգանքը: Հանրային աշխատանքները գրեթե չեն նշանակվում: Դրանք արդյունավետ չեն, ինչը բացատրվում է մի քանի պատճառներով, որոնցից հիմնականներն են՝ չափազանց երկար ժամկետը, քր. օր.-ի հատուկ մասի հոդվածում նախատեսված չլինելը և դատապարտյալի հայեցողությանը

¹ St' u նաև Дворянсков И.В., Сергеева В.В., Баталин Д.Е. Применение альтернативных видов наказания в Западной Европе, США и России (сравнительно-правовое исследование). М.: РОО «Центр содействия реформе уголовного правосудия», Penal Reform International, 2004, էջեր 4-5:

թողնված լինելը: Որպես հետևանք՝ հանրային աշխատանքները հիմնականում նշանակվում են տուգանքի վճարման անհնարինության դեպքում: Կալանք պատժատեսակը նույնպես գրեթե չի կիրառվում, ինչի գլխավոր պատճառը երկար ժամկետն է: Բանն այն է, որ մինչև երեք ամիս տևողությամբ շտկային էֆեկտը, որը տվյալ պատժատեսակի իմաստն է, չի կարող հիմնավորված համարվել:¹

Տվյալ խնդրի լուծման հիմնական ուղղություններից մեկը, բնականաբար, ազատագրվմանն իրական այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկի ընդլայնումն է և դրանց (ինչպես նաև արդեն նախատեսված այլընտրանքային պատժատեսակների) կիրառման համար գործուն մեխանիզմների ներդրումը: Ընդ որում, այլընտրանքային պատժատեսակներ ասելով՝ պետք է հասկանալ հանցագործությանը պետության կողմից արձագանքելու քրեաիրավական ներգործության այն միջոցները, որոնք պատժիչ բնույթ են կրում, սակայն կապված չեն հանցանք կատարած անձին հասարակությունից մեկուսացնելու և նրա առանձին սոցիալական կապերը խզելու հետ:² Հետևաբար, լիովին արդարացված է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվել են նաև այլընտրանքային հետևյալ նոր պատժատեսակները՝ 1) հանրային իրավունքները սահմանափակելը, 2) ծնողական իրավունքներից զրկելը, 3) օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից վտարելը և 4) ազատության սահմանափակումը:

Այս առումով, կարծում եմ, հարկ է հատուկ անդրադառնալ վերոհիշյալ նոր պատժատեսակների պարզաբանմանը:

Մասնավորապես, Նախագծի հոդված 66-ի բովանդակությունից հետևում է, որ հանրային իրավունքները սահմանափակելու էությունը

¹ St 'u նաև Альтернативы тюремному заключению. Меры, связанные и не связанные с лишением свободы / Управление ООН по наркотикам и преступности. Пособие по оценке систем уголовного правосудия. Нью-Йорк, 2010, էջեր 8-9:

² St 'u նաև Дуденко Е.А. Альтернативы лишения свободы в современной России // Актуальные проблемы Российского права, 2007, № 2, էջեր 326-327:

յունն այդ իրավունքների իրականացման հետ կապված հանցանք կատարած անձին ընտրվելու, հասարակական կամ հասարակական-քաղաքական կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց անդամակցելու, գործադուլ, հանրահավաք կամ ցույց կազմակերպելու կամ դրան մասնակցելու իրավունքների իրականացումն արգելելն է: Այս առումով երբեմն կարծիք է արտահայտվում, որ տվյալ պատժատեսակը կարող է դառնալ ընդդիմադիր քաղաքական գործիչներին հետապնդելու միջոց, ինչին, սակայն, չի կարելի համաձայնել: Բանն այն է, որ, նախ, այն նախատեսված է համապատասխան հանցանք կատարած ցանկացած անձի (թե՛ իշխանամետ և թե՛ ընդդիմադիր) նկատմամբ կիրառելու նկատառումներով: Բացի այդ, ընդդիմադիր քաղաքական գործիչներին հնարավոր է հետապնդել նաև նրանց նկատմամբ այլ (այդ թվում՝ առավել խիստ) պատժատեսակներ կիրառելով: Այդ իմաստով դժվար է համաձայնել, որ հանրային իրավունքները սահմանափակելու հետ կապված պատժատեսակի նախատեսումը վատթարացնում է անձանց որոշակի շրջանակի վիճակը: Հակառակը, այն հնարավորություն է տալիս նշանակելու ազատագրկման հետ չկապված պատիժ, ինչը չի կարելի թերագնահատել:

Ինչ վերաբերում է ծնողական իրավունքներից զրկելուն, ապա Նախագծի հոդված 67-ի համաձայն՝ այն սահմանվում է որպես նշված իրավունքները չարաշահելու հետ կապված հանցանք կատարած անձին իր երեխայի հետ համատեղ ապրելու, նրա հետ շփվելու, նրա մասին տեղեկատվություն ստանալու, նրա դաստիարակությանը մասնակցելու, կրթություն ստանալու հարցերը լուծելու և որպես նրա օրինական ներկայացուցիչ հանդես գալու իրավունքների արգելում: Այս առումով դժվար է համաձայնել քննադատությանն առ այն, որ տվյալ պատժատեսակը քաղաքացիաիրավական հարաբերության բաղկացուցիչ մաս է և չպետք է նախատեսվի քրեական օրենքում: Բանն այն է, որ ծնողական իրավունքները չարաշահելու հետ կապված հանցանք կատարելու դեպքում նշված իրավունքներից զրկելը պետք է համարվի որպես քրեաիրավական ներգործության

միջոց: Ընդ որում, դա չի բացառում քաղաքացիական օրենսդրությամբ, սակայն այլ դեպքերի կապակցությամբ նման իրավակարգավորման նախատեսման հնարավորությունը:

Օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից վտարելը, Նախագծի հոդված 68-ի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության ենթակա օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Հայաստանի Հանրապետության սահմաններից հեռացնելն է՝ արգելելով գտնվել Հայաստանի Հանրապետությունում: Այս առումով լիովին արդարացված է, որ տվյալ պատժատեսակի նշանակումը թողնված է դատարանի հայեցողությանը: Մասնավորապես, նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ տվյալ պատժատեսակը կարող է նշանակվել այն դեպքում, երբ դատարանը, ելնելով հանցավորի անձը բնութագրող առանձնահատկություններից և նրա կատարած հանցանքի բնույթից, հնարավոր չի համարում Հայաստանի Հանրապետության տարածքում նրա գտնվելը: Բանն այն է, որ հնարավոր չէ առանձնացնել այն հանցանքների սպառիչ ցանկը, որոնք կարող են կատարվել օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից: Հետևաբար, հնարավոր չէ նաև տվյալ պատժատեսակը համապատասխան հոդվածների սանկցիաներում նախատեսելը:

Միևնույն ժամանակ, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում արդարացված պետք է համարել նաև Նախագծի հոդված 68-ի երրորդ մասում նախատեսված իրավակարգավորումը: Մասնավորապես, վերջինիս համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքից չեն կարող վտարվել՝ 1) մինչև հանցանք կատարելը փախստականի կարգավիճակ կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձը, 2) պատիժ նշանակելու պահին ապաստան հայցող անձը և 3) մինչև հանցանք կատարելը Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ ամուսնացած կամ խնամքին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձը:

Ազատության սահմանափակում պատժատեսակի կապակցությամբ հարկ է նշել, որ Նախագծի հոդված 69-ի առաջին մասի համաձայն՝ այն դրսևորվում է դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելու մեջ: Տվյալ դեպքում, փաստորեն, խոսքը տնային կալանքի մասին է, որը պարզապես նախատեսվել է այլ վերտառությամբ, որպեսզի հստակ սահմանազատվի ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված համանուն խափանման միջոցից: Հատկանշական է նաև, որ Նախագծի հոդված 69-ի երրորդ մասի համաձայն՝ ազատության սահմանափակումը չի կարող նշանակվել ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ:

Հարկ է նշել, որ Նախագծում առկա են նաև պատժի համակարգի բարեփոխմանն ուղղված այլ լուրջ ձեռքբերումներ, որոնց շարքում հատկապես կարևորվում է պատժի նպատակների հստակեցումը: Մասնավորապես, Նախագծի հոդված 59-ի երկրորդ մասի համաձայն՝ պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին, ձևավորել նրա իրավահպատակ վարքագիծը և կանխել հանցագործությունները:

Բացի դրանից, հիմնական պատիժների շարքում նախատեսված են միայն ազատազրկման կամ ազատության սահմանափակման հետ կապված պատժատեսակները: Մասնավորապես, Նախագծի հոդված 61-ի առաջին մասին համապատասխան՝ դրանք են՝ հանրային աշխատանքները, ազատության սահմանափակումը, կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ նախատեսված է լրացուցիչ միայն մեկ պատիժ: Այն է՝ հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը: Մնացած բոլոր պատժատեսակները, Նախագծի հոդված 61-ի երրորդ մասում նախատեսված իրավակարգավորմանը համապատասխան,

կարող են նշանակվել որպես թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ, այսինքն՝ խառը պատիժներ են: Ընդ որում, հիմնական պատիժները (բացառությամբ օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը) կարող են նշանակվել միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված լինելու պարագայում: Մինչդեռ լրացուցիչ պատիժների նշանակումը լիովին թողնված է դատարանի հայեցողությանը, ինչը, կարծում եմ, էապես կնպաստի պատասխանատվության անհատականացմանը:

Լուրջ ձեռքբերում պետք է համարել նաև Նախագծում առկա այն իրավակարգավորումները, որոնք սահմանափակում են ազատագրկում պատժատեսակի կիրառման հնարավոր տարբերակների շրջանակը: Մասնավորապես, վերջինիս հոդված 73-ի չորրորդ մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը չի կարող դատապարտվել ազատագրկման: Միաժամանակ, այդ առումով կարևոր դրույթ է պարունակում Նախագծի հոդված 75-ի երրորդ մասը, որի համաձայն՝ ազատագրկման հետ կապված պատիժ կարող է նշանակվել, եթե դատարանը հիմնավորի, որ առավել մեղմ պատժատեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները: Մինչդեռ, կարծում եմ, որ առավել նպատակահարմար կլինե՞ր ազատագրկում պատժատեսակի նշանակման հնարավորությունը բացառել նաև առաջին անգամ միջին ծանրության այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը զուգորդված չէ բռնությամբ, եթե այն կատարած անձն ամբողջությամբ հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը, կամ եթե հանցանքը կատարվել է տուժողի հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի հետևանքով:

Հատկանշական է, որ Նախագծում առկա իրավակարգավորումներին համապատասխան՝ պատժի համակարգը և առանձին պատժատեսակները նպատակաուղղված են նաև հանցագործություններից տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը, հանցագործությամբ նրանց պատճառված վնասի հատուց-

մանը, ինչը ևս պետք է լուրջ ձեռքբերում համարել: Մասնավորապես, Նախագծի հոդված 63-ի վեցերորդ մասի համաձայն՝ տուգանքի կիրառմամբ գոյացած միջոցների հիսուն տոկոսն ուղղվում է հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման պետական ֆոնդ, որից փոխհատուցում է կատարվում, եթե հանցագործությամբ պատճառված վնասը չի հատուցվել: Նույն հոդվածի յոթերորդ մասի համաձայն՝ եթե տուգանքի կիրառումն անհնարին է դարձնում հանցագործությամբ տուժողին անմիջականորեն պատճառված վնասի հատուցումը, ապա այն չի նշանակվում:

Արդարացված պետք է համարել նաև տուգանքի չափի որոշման հարցի կապակցությամբ կատարված բարեփոխումը: Մասնավորապես, Նախագծի հոդված 63-ի երրորդ և չորրորդ մասերին համապատասխան՝ տուգանքի չափը որոշվում է հանցանք կատարած անձի ամսական եկամտի հաշվառմամբ: Տվյալ մոտեցումը միանշանակ ընդունելի է տվյալ պատժատեսակի կիրառման արդարացվածության և արդյունավետության տեսանկյուններից: Հատկանշական է նաև, որ Նախագծի նշված հոդվածի հինգերորդ մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի եկամտի չափը պարզելու անհնարինության դեպքում տուգանքի չափը որոշվում է հանցանքը կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի չափով:

Միևնույն ժամանակ, պատժի համակարգի և առանձին պատժատեսակների բովանդակության կատարելագործման առումով էական ձեռքբերում պետք է համարել Նախագծում առկա մի շարք այլ իրավակարգավորումներ, որոնք կապված են ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված իրավադրույթների փոփոխման, լրացման և հստակեցման հետ:

Այսպես, գործող օրենքի համեմատ, Նախագծում, նախ՝ որոշ պատժատեսակներ լրացվել կամ անվանափոխվել են: Մասնավորապես, գործող քր. օր.-ով նախատեսված կալանք պատժատեսակը վերանվանվել է կարճաժամկետ ազատազրկում, իսկ որոշակի ժամկետով ազատազրկումը՝ ազատազրկում:

Միաժամանակ, Նախագծի հոդված 62-ով՝ որպես լրացուցիչ պատիժ նախատեսվել է ոչ միայն հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից, այլև պետական պարգևից զրկելը, որը կարող է կիրառվել հանցագործության բոլոր տեսակների, այլ ոչ թե միայն ծանրերի կամ առանձնապես ծանրերի համար: Ընդ որում, նշված հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ դատարանն իրավասու չէ դատապարտյալին զրկել գիտական աստիճանից և գիտամանկավարժական կոչումից, արվեստի, մշակույթի, գրականության, սպորտի բնագավառների հատուկ կոչումից:

Բացի դրանից, Նախագծի հոդված 64-ի երկրորդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները ոչ ավել, քան օրական վեց ժամ տևողությամբ սահմանվում են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ վաթսունից երկու հարյուր յոթանասուն ժամ ժամկետով: Մինչդեռ, ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 54-ին համապատասխան՝ հանցագործության վերոհիշյալ տեսակների համար տվյալ պատիժը կարող է նշանակվել միայն առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ, ազատազրկման փոխարեն՝ դատապարտյալի գրավոր դիմումի հիման վրա:

Միաժամանակ, Նախագծի հոդված 64-ի չորրորդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքներ չեն նշանակվում միայն ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի նկատմամբ: Մինչդեռ ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 54-ի համաձայն՝ դրանք չեն նշանակվում նաև առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց և հղի կանանց նկատմամբ, ինչը չի կարող արդարացված համարվել:

Հատկանշական է, որ Նախագծում այս առումով նախատեսված է շատ կարևոր ևս մեկ իրավակարգավորում, որը վերաբերում է հիշատակված անձանց առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությանը: Մասնավորապես, վերջինիս հոդված 64-ի հինգերորդ մասի համաձայն՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամի, վաթսունհինգ տարին լրացած անձի կամ հղի կնոջ նկատմամբ

հանրային աշխատանքները նշանակվում են նրանց դիմումի հիման վրա՝ աշխատանքների բնույթը ընտրելիս հաշվի առնելով նրանց կարգավիճակը:

Հարկ է նշել նաև, որ Նախագծում փոփոխության են ենթարկվել նաև որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կարճաժամկետ ազատազրկման (կալանքի) և ազատազրկման (որոշակի ժամկետով ազատազրկման) ժամկետները:

Մասնավորապես, Նախագծի հոդված 65-ի համաձայն՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես հիմնական պատիժ, ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար նշանակվում է 2-7 տարի ժամկետով (գործող քր. օր.-ով՝ դիտավորյալ հանցագործության համար 2-7, իսկ անզգույշի համար՝ 1-5 տարի), իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 1-3 տարի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար՝ 1-5 տարի ժամկետով (գործող քր. օր.-ով՝ բոլոր դեպքերում 1-3 տարի):

Մինևույն ժամանակ, ի տարբերություն ՀՀ քրեական գործող օրենսգրքի, Նախագծի հոդված 71-ի երկրորդ մասի համաձայն՝ կարճաժամկետ ազատազրկումը (կալանքը) սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով (գործող քր. օր.-ով՝ տասնհինգ օրից երեք ամիս ժամկետով), իսկ հոդված 73-ի համաձայն՝ ազատազրկումը (որոշակի ժամկետով ազատազրկումը) սահմանվում է վեց ամսից քսան տարի ժամկետով (գործող քր. օր.-ով՝ երեք ամսից քսան տարի ժամկետով):

Բացի դրանից, Նախագծի հոդված 72-ի համաձայն, ի տարբերություն ՀՀ քրեական գործող օրենսգրքի, կարգապահական գումարտակում պահելը կարող է նշանակվել հանցանք կատարած ոչ միայն ժամկետային, այլև պայմանագրային ծառայության զինծառայողների նկատմամբ, ինչը լիովին արդարացված է: Միաժամանակ, Նախագծի նույն հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ ազատազրկման փոխա-

րեն տվյալ պատժատեսակը չի կարող նշանակվել նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած և դատվածություն ունեցող անձանց նկատմամբ (գործող քր. օր.-ով՝ նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած անձանց նկատմամբ):

Ուշագրավ է, որ Նախագծում էական փոփոխության է ենթարկվել նաև ցմահ ազատազրկում պատժատեսակը: Մասնավորապես, վերջինիս հոդված 74-ի երկրորդ մասի համաձայն՝ ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս 21 տարին չլրացած անձինք: Մինչդեռ, ՀՀ գործող քր. օր.-ի հոդված 60-ի երկրորդ մասին համապատասխան՝ տվյալ պատժին չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս 18 տարին չլրացած անձինք, հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք:

Այսպիսով, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծն աչքի է ընկնում ազատազրկմանն իրական այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկի ընդլայնմամբ և դրանց (ինչպես նաև ՀՀ գործող քր. օր.-ով նախատեսված այլընտրանքային պատժատեսակների) կիրառման համար հստակ ու գործուն մեխանիզմների սահմանմամբ: Այդ առումով Նախագծում առկա իրավակարգավորումներն էապես կնպաստեն նաև քրեական արդարադատության ոլորտում իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը:

СИСТЕМА НАКАЗАНИЙ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Сергей Аракелян

*Профессор кафедры уголовного права ЕГУ,
доктор юридических наук*

*Начальник отдела совершенствования организации следственных работ
Специальной следственной службы РА*

В статье анализируются виды уголовных наказаний по действующему уголовному законодательству и проекту нового Уголовного кодекса Республики Армения. Отмечаются основные направления оптимизации уголовной ответственности и совершенствования отечественной системы уголовных наказаний.

THE SYSTEM OF PUNISHMENTS ACCORDING TO THE DRAFT OF NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Sergey Arakelyan

*Professor of the YSU Chair of Criminal Law, Doctor of Legal Sciences,
Chief of the Investigation Activities Advanced Organization Department of the RA
Special Investigation Service*

Different types of criminal punishments according to the present Criminal Code and the Draft Criminal Code of the Republic of Armenia are analyzed in this article. The main directions of criminal responsibility optimization and enhancement of domestic system of criminal punishments are revealed.

Բանալի բառեր – ՀՀ քրեական օրենսգիրք, պատժի համակարգ, քրեական պատասխանատվության օպտիմալացում, քրեական օրենսդրության կատարելագործման ուղղություններ:

Ключевые слова: уголовный кодекс РА, система наказаний, совершенствование и оптимизация уголовной ответственности, направления совершенствования уголовного законодательства.

Key words: the RA criminal code, system of punishments, enhancement and optimization of criminal responsibility, directions of criminal legislation enhancement.

**ՎԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ
ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱ-ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Արթուր Ղազինյան

***ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, ԵՊՀ
եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ,
յուրավաքանական գիտությունների թեկնածու***

Միջազգային հարաբերությունների զարգացման ներկայիս դինամիկան պետությունների միջև հարաբերությունների տրամաբանությունն ու ձևաչափը ենթարկում են շոշափելի փոփոխությունների: Մասնավորապես միջազգային միջկառավարական կազմակերպությունների հետ մեկտեղ ի հայտ են գալիս միջազգային վերապետական կազմակերպություններ, որոնք իրենց նպատակներով ու խնդիրներով, ինչպես նաև ներքին իրավական կանոնակարգումներով ենթադրում են անդամակցող պետության ինքնիշխանության կոնկրետ ծավալով սահմանափակումներ: Որպես առաջին վերապետական ինտեգրացիոն միավորում ընդունված է դիտարկել Եվրոպական միությունը, որի ստեղծման համար հիմք հանդիսացան նախորդ դարի 50-ականներին ստեղծված վերապետական տնտեսական ինտեգրացիոն միավորումները: Հիմնադրված լինելով ընդամենը 6 պետությունների կողմից՝ ԵՄ ներկայումս ներառում է եվրոպական 28 պետություններ, որոնք Եվրոպական ինտեգրացիոն միավորումներին միացան տարբեր ժամանակաշրջաններում: Եվրոպական ընկերակցությունների, իսկ 2007թ.-ից հետո արդեն ԵՄ հիմնադիր պայմանագրերը ձևավորեցին այնպիսի իրավական ավտոնոմ համակարգ, որոնց ուղով անդամ-պետությունները, թեկուզ սահմանափակ ոլորտներում, պարտավոր էին սահմանափակել իրենց ինքնիշխանությունը և այն փոխանցել վերապետական ինստիտուտներին: Այդ ինստիտուտները նույն պայմանագրերի ուժով իրավասու էին ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք պարտադիր էին անդամ-պետությունների համար, գերակայում էին ազգային իրավունքի նկատմամբ, գործում էին ուղղակիորեն ազգային իրավական համա-

կարգում և օժտված էին դատական ամբողջական և արդյունավետ պաշտպանությամբ՝ վերաբնակային և ներաբնակային դատական մարմինների կողմից: Պետությունների միավորման այս մոդելը տասնամյակների ընթացքում ապացուցեց իր կենսունակությունը և ընդօրինակելի դարձավ այլ պետությունների համար: Մասնավորապես, հետխորհրդային տարածքում ընթացող ինտեգրացիոն գործընթացները միջկառավարական հարթությունից դեպի վերաբնակային բնույթի տեղափոխությունը առավել տեսանելի դարձավ 2009թ. Ստեղծված Մաքսային միության օրինակով, որին մասնակցում էին հետխորհրդային 3 պետություններ՝ Ռուսաստանը, Ղազախստանն ու Բելորուսը: Այս պետությունների առաջնորդները, ավարտված համարելով մաքսային միության ձևավորման գործընթացը, ձեռնամուխ եղան առավել խորը համագործակցության հաստատման, մասնավորապես Եվրասիական տնտեսական միության հիմնադրմանը, ինչը և տեղի ունեցավ 2015թ. Հունվարի 1-ին: 2013թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունը հայտարեց Մաքսային միությանը միանալու իր քաղաքական որոշման մասին, ինչը վավերացնող փաստաթուղթը ստորագրվեց 2014թ. հոկտեմբերին: Հայաստանի ԵՏՄ անդամակցության մասին պայմանագիրը, ինչպես վերաբնակային ինտեգրացիոն միավորումներին անդամակցության մասին այլ պետությունների կնքած պայմանագրերը որոշակի խնդիրներ առաջացրեցին ՀՀ սահմանադրության հետ, քանի որ այս պարագայում ՀՀ պետք է սահմանափակի իր ինքնիշխանությունը և ինքնիշխանության որոշակի ծավալ պետք է փոխանցի վերաբնակային կազմակերպության ինստիտուտներին: ՀՀ Սահմանադրության պարագայում ԵՏՄ անդամակցության մասին պայմանագիրը որոշակի խնդիրներ առաջացրեց Սահմանադրության 1 և 2 հոդվածների հետ, և այդ խնդիրները ուսումնասիրելու նպատակով նույն հետազոտության սահմաններում կփորձենք պարզել անդամակցության գործընթացի իրավաչափությունը ու սահմանադրականությունը՝ մանրակրկիտ վերլուծության ենթարկելով ՀՀ Սահմանադրության 1 և 2 հոդվածները:

ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը սահմանում է՝ **ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:**

Հասկանալու համար, թե ինչ է նշանակում այս սահմանադրական իրավանորմը, անհրաժեշտ է վեր հանել, թե արդո՞ք սա դիսկրիպտիվ նորմատիվ արտահայտություն է, թե իսկական նորմ է: Դիսկրիպտիվ նորմատիվ են կոչվում այն արտահայտությունները, որոնք արտահայտում են այս կամ այն նորմի գոյության կամ բացակայության փաստը¹: Օրինակ, Հ.-ն պնդում է, որ գոյություն ունի նորմ, ըստ որի ՀՀ-ն «**ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է**»: Այս տրամաբանական դատողություն է, և հետևաբար՝ այն կամ ճշմարիտ է, կամ էլ սխալ: Այսինքն՝ Հ.-ի պնդումը, որ կա N կամ $\sim N$ (բացակայում է), համարվում է ճշմարիտ, եթե և միայն եթե՝ առկա է N-ն, կամ էլ՝ բացակայում է N-ն: Իսկ արդո՞ք այս սահմանադրական իրավանորմը համարվում է դիսկրիպտիվ: Եթե այս նորմն ինքնին հանդիսանում է դիսկրիպտիվ դատողություն, ապա ենթադրվում է նրա տրամաբանորեն ճշմարիտ կամ սխալ լինելու հնարավորություն: Նման մոտեցումը կարիք ունի հստակ և հանգամանալից բացահայտման: Պնդումը, որ բուն նորմը կարող է լինել տրամաբանորեն ճշմարիտ կամ սխալ՝ բացառվել է դեռևս 20-րդ դարի խոշորագույն իրավագետների և խոշորագույն դեօնտիկ տրամաբանության մասնագետների կողմից: Փորձենք ցույց տալ նորմի ճշմարիտ կամ սխալ լինելու մոտեցման անարդյունավետությունը: Եթե մենք պնդում ենք, որ ՀՀ-ն «**ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է**» և սա արտահայտում է սոցիալական փաստ, ապա մենք հայտնվում ենք ոչ այնքան հուսալի իրավիճակում: Այդ դեպքում հարց է ծագում. արդո՞ք ՀՀ-ն սոցիալական պետություն է, կամ այստեղ խոսվում է նույն սոցիալական պետության գաղափարը ամրագրող իրավանորմի մասին, ինչն առկա է արևմտաեվրոպական պետությունների սահմանադրությունում:

¹ Wright, G. 1963. *Norm and action*. New York: Humanities. P. 130-131., *Norms, Truth, and Logic*. In G. H. von Wright editor: *Practical Reason: Philosophical papers, Volume 1*. Cornell University Press. P.-130-209..

Արդյո՞ք սրանից հետևում է, որ յուրաքանչյուր իրավանորմ սոցիալական փաստ է և արձանագրում է սոցիալական փաստ և ոչ ավելին: Այսինքն, արդյո՞ք Սահմանադրության երկրորդ հոդվածի երրորդ մասը, որը սահմանում է, որ «իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է», սա սոցիալական փաստի ամրագրում է: Եթե այդպես է, ապա մենք կարողալիս սահմանադրության այս հոդվածը կարող ենք ասել, որ այս նորմը տրամաբանորեն սխալ է, քանի որ ներկայումս իշխանությունը չի յուրացվել: Իսկ հետագայում, եթե նման հանցանք կատարվի, ապա հանցագործը հնարավորություն կունենա պնդելու, որ դա տրամաբանորեն ճշմարիտ դատողություն չի եղել հենց ընդունման պահից, դրա համար նա չպետք է քրեական պատասխանատվություն կրի: Այսինքն՝ կլինի հետևյալ պատկերը. հանցանք կատարելու պահին այն տրամաբանորեն ոչ ճշմարիտ իրավանորմ էր, ապա՝ հանցանքն կատարվելուց հետո դարձավ տրամաբանորեն ճշմարիտ: Անկասկած սա մեզ կբերի տրամաբանական սխալի մեր դատողության մեջ՝ *reductio ad absurdum*: Փաստորեն, կարելի է պնդել, որ իսկական իրավանորմը տրամաբանական արտահայտություն չէ: Իսկ ի՞նչ է: Սրա համար անհրաժեշտ է բացահայտել, թե ինչ են նորմ-ձևակերպումները: Օգտվելով 20-րդ դարի խոշորագույն տրամաբան, դեօնտիկ տրամաբանության հիմնադիր Գ. Վ. Վրիգթի մոտեցումից՝ պնդենք, որ նորմ-ձևակերպումներ են կոչվում այն նախադասությունները, որոնք նշանների և սիմվոլների միջոցով ձևակերպում են նորմեր¹: Սակայն, նորմ-ձևակերպումների/նորմատիվ նախադասությունների հարցը այդքան էլ հստակ է: Այստեղ ևս իսկական նոր-

¹ Wright, G. 1963. *Norm and action*. New York: Humanities. P. 93.

Առաջին անգամ նորմերի և նորմ-նախադասությունների *Rechtsnom* և *Rechtssatz* բերում է Հ. Քելզենը, սակայն ոչ այնքան հստակ սահմանելով դրանց իմաստը: - Kelsen, H. 2000. *Reine Rechtslehre*. Wien: Verl. Osterreich. Սակայն քելզենյան նորմերի և նորմ-նախադասությունների միջև հստակ չէր տարանջատումը: Հստակ դասակարգումը կատարեց Գ. Վ. Վրիգթը, ով նշում էր, որ իսկական նորմի և նորմ-ձևակերպման տարբերությունը հասկանալը իրենից խլել է մոտ 30 տարի. - Meggle, G. 1999. *Actions, Norms, Values*. Discussions with George Henrik von Wright. Berlin: De Gruyter. P. 11-33.

մերը տրամաբանական դատողություն (ճշմարիտ կամ սխալ) չեն կարող լինել: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը, որ սահմանում է՝ **ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է**, պարունակում է իսկական նորմեր, որոնք տրամաբանական դատողություններ չեն: Սակայն, սրա հետ միասին, չլինելով տրամաբանական դատողություններ, նրանք վկայում են իրենց գոյության մասին: Այսինքն՝ այն սահմանադրական իրավականորմը, որը սահմանում է, որ **ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է** տրամաբանական դատողություն չէ, սակայն նա նաև ինքնին վկայում է, որ գոյություն ունի այդ նորմը: Այլ կերպ ասած՝ այս նորմից ենթադրվում է իր գոյության փաստը, որը տրամաբանորեն ճշմարիտ է¹:

Ինչ վերաբերում է բուն կամ իսկական նորմին, այն տրամաբանական դատողություն չէ, հետևաբար՝ ոչ ճշմարիտ է, ոչ էլ՝ սխալ²: Իսկական նորմը կամ գործող է, կամ՝ ոչ: Յուրաքանչյուր գործող նորմ դա պարտավորեցում է: Այն պարտավորեցնում է որոշակի վերազրվող վարքագծի: Այսինքն՝ Սահմանադրության առաջին հոդվածը, որն ամրագրում է՝ **ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է**, սա պարտադրում է բոլոր իրավունքի սուբյեկտներին հետևել այս նորմին և զերծ մնալ այնպիսի վարքագծից, որը կհակասի տվյալ իրավանորմին: Ելենելով նորմի

¹ Անհիարժեշտ է նշել, որ նույն կերպ՝ օգտագործելով Ջ.Լ. Օսթինի լեզվի տրամաբանությունը, չենք կարող ասել, որ գոյություն ունի իրավանորմ, որով սահմանված է, որ **ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է**, բայց մենք չենք հավատում դրան /այն գոյություն ունի/: Այս դեպքում առկա կլինի պերֆորմատիվ հակասություն: Austin, J. 1962. *How to do things with words*. Cambridge: Harvard University Press. P. 48.

² Kelsen, H. 2005. *Pure theory of law*. Clark, N.J.: Lawbook Exchange. P. 19., Jørgensen, J. 1937. Imperatives and logic. *Erkenntnis*, 7 (1), pp. 288--296. Ross, A. 1944. Imperatives and logic. *Philosophy of Science*, 11 (1), pp. 35-36., Wright, G. 1963. *Norm and action*. New York: Humanities. P.151., Wright, G. 1983. *Norms, Truth, and Logic*. In G. H. von Wright editor: *Practical Reason: Philosophical papers, Volume 1*. Cornell University Press. P.-130-209 և այլն.

«պետք է» էությունից, կարելի է ասել, որ այս նախադասությունն ունի այսպիսի տեսք. **ՀՀ-ն պետք է լինի ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:** Այս նորմի «պետք է-ով» պարտավորեցումն շարունակվում է, քանի դեռ սա գործում է (ուժի մեջ է):

Հաջորդ հարցը, որն էական նշանակություն ունի. թե ի՞նչ է նշանակում՝ **ՀՀ-ն պետք է լինի ինքնիշխան** պետություն: Ինիշխանությունը նորմատիվ կարգի որակական հատկանիշն է¹: Այս որակական հատկանիշը նորմատիվ կարգին տրվում է հենց ժողովրդի կամարտահայտության միջոցով: Ժողովուրդը ընդունում է կամ լիազորում է ընդունել որևէ հիմնական փաստաթուղթ (փաստաթղթերի ամբողջություն) տվյալ իրավակարգի համար, որով տվյալ նորմատիվ կարգը ճանաչվում է բացառիկ ամբողջ պետության տարածքում: Բացառիկությունը տվյալ նորմատիվ կարգի ելնում է հենց ժողովրդի կամքից: Դրանով իսկ անհնար է որևէ հիմնական նորմատիվ փաստաթղթի ընդունում տվյալ նորմատիվ կարգում, որը կամրագրի հակառակը: Չի կարող գոյություն ունենալ «Անկախության հռչակագիր» կամ «Մահմանադրություն» որևէ նորմատիվ իրավական կարգում, որը կամրագրի ոչ անկախ լինելու կամ ոչ ինքնիշխան լինելու մասին նորմեր: Այսպիսով, ՀՀ անկախության հռչակագրի երկրորդ հոդվածը չէր կարող հչակել, որ **ՀՀ-ն ոչ ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ, կամ՝ ՀՀ-ն ինքնիշխան պետություն է՝ չօժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:** Այս բոլոր դեպքերում տեղի կունենար *reductio ad absurdum*: Նույնն էլ չի կարող ՀՀ Մահմանադրության առաջին հոդվածը ամրագրել, որ **ՀՀ-ն ոչ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:** Այս դեպքում ևս գործ ունենք *reductio ad absurdum*-ի հետ: Այսպիսով, երևում է, որ ժողովրդի կամքի արտահայտությունն է ինքնիշխանությունը, որը դառնում է տվյալ նորմա-

¹ Kelsen, H. 2006. *General theory of law & state*. New Brunswick, N.J.: Transaction Publishers. P. 383.

տիվ իրավան կարգի որակական հատկանիշ: Կարելի է պնդել, որ տվյալ պետության տարածքում առկա է նորմատիվ իրավան կարգի բացառիկություն՝ եթե ու միայն եթե՝ կա ինքնիշխանություն: Քանի որ ինքնիշխանությունը ժողովրդի կամքի որակական արտահայտությունն է նորմատիվ իրավական կարգում, ապա տվյալ պետության նորմատիվ իրավական գլխավոր փաստաթղթում (փաստաթղթերում) ինքնիշխանի կամքով **կարող են տեղ գտնել նորմեր**, որոնք կճանաչեն ներպետական որոշակի իրավանորմերի նկատմամբ որոշակի միջազգային իրավանորմերի գերակայությունը: Սա յուրաքանչյուր դեպքում պետք է չարգելվի և թույլատրվի նորմատիվ իրավակարգի հիմնական փաստաթղթի (փաստաթղթերի) նորմերով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասն արգելում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը լինեն նորմատիվ իրավակարգի բաղկացուցիչ մաս և պարտադրում այս իրավանորմի կիրառող սուբյեկտներին հետևել արգելքին, և, միաժամանակ, հռչակում է (թույլատրում է), որ **ՀՀ կողմից վավերացված Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետությունում լինեն իրավական համակարգի բաղկացուցիչ մասը (իհարկե, բացառությամբ՝ արգելող սահմանադրական իավանորմով սահմանվածի):** Եթե որևէ պետությունում նորմատիվ իրավական հիմնական փաստաթղթի (փաստաթղթերի) նորմերը չեն սահմանում թույլատրող իրավանորմ միջազգային պայմանագրերի՝ նորմատիվ իրավական կարգի բաղկացուցիչ մաս լինելու վերաբերյալ, ապա այն չի կարող համարվել տվյալ պետության նորմատիվ իրավական կարգի բաղկացուցիչ մաս:

Այս ամենը նշելով՝ հիմա անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ ՀՀ Սահմանադրության հաջորդ հոդվածին, որը էական նշանակություն ունի ՀՀ-ն տնտեսական, քաղաքական ինտեգրացիոն գործընթացներին լիիրավ անդամակցությամբ միանալու հարցը որոշելու գործում: **ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին:** Այսինքն՝ միայն նա ունի ինքնիշխան կամք, ուրիշ այլ ոք

ՀՀ-ում բացի ժողովրդից չունեն այդ կամքը: Այսինքն, ինչպես նշվեց, ժողովրդի այս կամքը դառնում է նորմատիվ իրավակարգի որակական հատկանիշը: ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ **ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:** Այս սահմանադրական նորմը սահմանում է, որ ինքնիշխան իր կամքը պետք է իրացնի **բացառապես** հետևյալ ձևերով՝ **ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:** ՀՀ Սահմանադրությունը ինքնիշխանի կամքի արտահայտման հիմնական ձևեր է սահմանում **ազատ ընտրությունները և հանրաքվեները:** Սրանցից ածանցվում են «ինչպես նաև» շաղկապով **ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք¹:** Ինքնիշխանի կամքի իրականա-

¹«Ձև» և «միջոց» բառերը հիմնականում օգտագործում ենք, որպեսզի աշխատանքի լեզվական տրամաբանության մեջ ճշմարտացիորեն արտահայտվի «ինչպես նաև» շաղկապին նախորդող և հաջորդող բառերի շարադասության բովանդակությունը: Անհնար է, որ «ինչպես նաև» շաղկապն այս նորմատիվ-նախադասության շրջանակներում այլ տրամաբանական իմաստ հայտնի նախադասությանը: Այսպես՝ անհնար է. «ժողովուրդն իր իշխանությունը իրականացնում է Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, **ինչպես նաև**՝ ընտրությունների և հանրաքվեների միջոցով»: Այս դեպքում կլիներ, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն չեն ընտրվում և ընտրությունների միջոցով չեն ձևավորվում: Եվ եթե գեթ պետական մարմնի ձևավորումը նախատեսվեր ՀՀ Սահմանադրությամբ ընտրություններով, ապա առկա կլիներ նորմատիվ հակասություն: Նորմատիվ հակասություն առկա կլիներ նաև այն դեպքում, երբ հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ կնախատեսվեր որևէ պետական մարմնի ձևավորում: **Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում այս նորմատիվ նախադասության այլ կերպ մեկնաբանությունը կբերի հետևյալ նորմատիվ հակասությանը՝ $P(p \& q) \& O \sim p \& O \sim q$:**

ցումը սրանց **միջոցով** բացառապես իրականացվում է **ընտրությունների** և **հանրաքվեների ձևի շրջանակներում**: Սրանից հետևում է, որ միայն և միայն ընտրություններով ու հանրաքվեներով են ձևավորվում և գործում **ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք**: Հետևում է նաև՝ ընտրությունների և հանրաքվեների ձևի շրջանակներում միայն և միայն պետք է ձևավորվեն **ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք և ուրիշ ոչ այլ մարմին**: Այլ միջոցներ այս ձևի շրջանակներում անհնար է սահմանել: ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով այս իրավանորմը որպես ուժեղ, բացառում է այս ձևերի և իրենցից ածանցված միջոցների վերացում կամ որևէ փոփոխություն: Այսպիսով, որպես միջոց ժողովրդի կողմից իր իշխանության իրացման ձևի շրջանակներում սահմանվում են Սահմանադրությամբ նախատեսված **պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք**: Հարց է առաջանում՝ արդյո՞ք հնարավոր է ստեղծել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով կնքված միջազգային պայմանագրերով որևէ վերազգային մարմին, որը կընդունի պարտադիր ուժ ունեցող նորմեր ՀՀ նորմատիվ իրավական կարգում: Այս հարցի պատասխանը բխում է ՀՀ Սահմանադրության հենց 2-րդ հոդվածից: Ժողովուրդը իր ինքնիշխանությունն իրականացնում է բացառապես **ընտրությունների և հանրաքվեների ձևի շրջանակներում**՝ բացառապես հետևյալ միջոցներով: Բացառապես հետևյալ միջոցներ ասելով՝ հասկանում ենք, որ ժողովուրդը հանրաքվեով չի կարող հրաժարվել այս միջոցներից: Անհնար է պատկերացնել, որ ժողովուրդն հանրաքվեով որոշում է հրաժարվել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից, և ինքն իրականացնում իր իշխանությունը: Եթե նույնիսկ այս տեղի ունենար, ապա այդ հանրաքվեն կլիներ հակասահմանադրական, քանզի հենց Սահմանադրության 2-րդ հոդվածը՝ որպես ուժեղ իրավանորմ, փոփոխման ենթակա չէ 114-րդ հոդվածի իրավանորմով: Այսինքն՝ անհնար է՝ որևէ

վերազգային մարմին ընդունի ՀՀ տարածքում պարտադիր ուժ ունեցող իրավանորմեր, քանի որ ՀՀ Սահմանադրությունը հստակ նախատեսում է, որ այդպիսի նորմեր ընդունում են **բացառապես** Սահմանադրությամբ նախատեսված **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց համար**: Միայն նրանք պետք է ընդունեն նորմեր, որոնք պարտադիր ուժ ունեցող կլինեն ՀՀ տարածքում: Նույնիսկ եթե ժողովուրդը հանրաքվեով սահմանի, որ ցանկանում է, որ վերազգային որևէ կազմակերպություն պարտադիր ուժ ունեցող նորմեր ընդունի ամբողջ ՀՀ տարածքում, ՀՀ գործող Սահմանադրության իրավակարգավորումները դա բացառում են: Ժողովուրդը հնարավորություն չունի վերացնելու և ավելացնելու նոր ձևեր և միջոցներ:

Ժողովուրդը իր իշխանությունը իրականացում է **բացառապես ընտրությունների և հանրաքվեների ձևի շրջանակներում՝ միայն և միայն ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով**:

Այսպիսով, ՀՀ լիիրավ անդամակցությունը որևէ քաղաքական և տնտեսական միավորմանը, որը կնախատեսի այնպիսի **վերազգային մարմնի գոյություն, ինչը կարող է ընդունել պարտադիր ուժ ունեցող իրավական նորմեր ՀՀ տարածքում, հակասահմանադրական է**:

Իրենցից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն պետությունների նորմատիվ իրավական հիմնական փաստաթղթերի իրավանորմերը, որոնք միացել են այս կամ այն ինտեգրացիոն միավորումներին: Մրա համար, որպես օրինակ, կարելի է վերցնել Լեհաստանի և Ղազախստանի գործող Սահմանադրությունները:

Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության չորրորդ հոդվածը սահմանում է, որ Լեհաստանում բարձրագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին: Չորրորդ հոդվածի երկրորդ մասն էլ ամրագրում է, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ներկայացուցիչների միջոցով կամ անմիջականորեն:

Այստեղ ևս ծագում է նորմատիվ իրավական կարգի որակական

հատկանիշի հարցը: Արդյո՞ք Լեհաստանը, միանալով ԵՄ-ին, չի կորցնում նորմատիվ իրավական կարգի այդ որակական հատկանիշը՝ ինքնիշխանությունը: Լեհաստանի Սահմանադրությունը ամրագրելով, որ ժողովուրդն իր ինքնիշխանությունը իրականացնում է ներկայացուցիչների միջոցով կամ անմիջականորեն, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի՝ «կամ»-ով հավասարեցնում է «իշխանության ներկայացուցիչների միջոցով» և «անմիջականորեն» ժողովրդի ինշխանության իրականացնելը: Այստեղ ամրագրված «ներկայացուցիչները», ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների, կարող են լինել յուրաքանչյուրը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, վերազգային կազմակերպությունները և այլն: Ժողովուրդը նաև սահմանափակված չէ հանրաքվեով (անմիջականորեն)՝ որոշակի հասարակական կյանքի ոլորտներում, պարտադիր ուժ ունեցող իրավանորմեր ընդունելը՝ լիազորել վերազգային որևէ մարմնի: Սա չի նշանակում, որ ինքնիշխանությունը՝ որպես նորմատիվ իրավական կարգի որակական հատկանիշ, Լեհաստանում բացակայում է: Հարցն ուղղակի այն է, որ տվյալ նորմատիվ իրավան կարգի նորմատիվ-իրավական հիմանական փաստաթուղթը (փաստաթղթերը) չի պարունակում իրավանորմեր, որոնք կարգելեին Լեհաստանի ժողովրդին, որպեսզի նա իր իշխանությունն իրականացնի վերազգային մարմնի միջոցով: Միաժամանակ, սրա վերաբերյալ Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ, 87-րդ, 88-րդ , 89-րդ, պարունակում են թույլ թույլատվություններ, իսկ Սահմանադրության 90-րդ հոդվածը՝ **ուժեղ թույլատվություն**: Լեհաստանի Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն՝ **Լեհաստանի Հանրապետությունը կարող է միջազգային պայմանագրի հիման վրա փոխանցել միջազգային կազմակերպությանը կամ միջազգային մարմնի պետական իշխանության մարմիններին իրավասություններ՝ որոշակի հարցերում**:

Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականաց-

նում է անմիջականորեն՝ հանրապետական հանրաքվեներով և ընտրություններով, ինչպես նաև՝ դեկզագնում է իր իշխանության իրականացումը պետական մարմիններին: Այստեղ, ինչպես ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, առկա է «ինչպես նաև» շաղկապը, որը ևս ածանցում է իշխանության իրականացման ձևերին՝ իրացման միջոցը: Այստեղ միջոց է հանդիսանում իշխանության իրականացման դեկզագնումը պետական մարմիններին: Դեկզագնումը այս երկու միջոցների շրջանակներում միջոտ «պետք է» լինի: Դեկզագնելով իշխանության իրականացումը պետական մարմիններին՝ հանրապետական հանրաքվեի և ընտրությունների ձևի շրջանակներում՝ ժողովուրդը իր իշխանությունը այլևս չի իրականացնում պետական մարմինների միջոցով: Այն **դեկզագնում** է նրանց՝ իրականացնելու պետական իշխանությունը, որով ժողովուրդի և պետական մարմնի միջև հաստատվում է թույլ կապ: Ղազախստանի Սահմանադրության 2-րդ հոդվածը, կարելի է ասել, ունի հետևալ տեսքը. Ժողովուրդն իր իշխանությունն պետք է իրականացնի անմիջականորեն՝ հանրապետական հանրաքվեի և ընտրությունների միջոցով, ինչպես նաև պետք է դեկզագնի իր իշխանության իրականացումը պետական մարմիններին: Պետական մարմինը, յուրաքանչյուր դեպքում՝ իշխանությունը, պետք է իրականացնի ի շահ ժողովրդի՝ սահմանադրական արգելող և թույլատրող իրավանորմերի շրջանակներում: Հետագայում թե ինչպե՞ս սահմանադրական իրավանորմերի շրջանակներում պետական մարմինը կիրականացնի կամ թե ի՞նչ վերապետական մարմիններին կլիազորի այս կամ այն հարցով նորմատիվ իրավական կարգում ընդունելու պարտադիր ուժ ունեցող իրավանորմեր, մնում է անորոշ:

Այստեղ՝ «հանրապետական հանրաքվեի» և «ընտրությունների» միջոցի շրջանակներում, իշխանության դեկզագնումը պետական մարմիններին հնրավորություն է տալիս պետական մարմիններին Սահմանադրությամբ նախատեսված իրավանորմերի շրջանակներում իրականացնել իրենց դեկզագցված իշխանությունը:

Այսպիսով, Ղազախստանի Հանրապետության սահմանադրա-

կան իրավանորմերը, որոնք վերաբերվում են ժողովրդի կողմից իրենց իշխանության իրացման ձևերին և միջոցներին, չի արգելում Ղազախստանի հանրապետության լիիրավ անդամակցությունը վերագրելու միավորումներին: Միաժամանակ, Սահմանադրության 4-րդ, 8-րդ և 40-րդ հոդվածների իրավանորմերը պարունակում են թույլ թույլատվություններ դրա վերաբերյալ:

CONSTITUTIONAL-LEGAL ISSUES OF ACCESSION TO SUPRANATIONAL ORGANIZATIONS

Artur Ghazinyan

*Director of the Centre for European Studies,
Project Director of the Regional Master Program on Human Rights
and Democratization, Candidate of Legal Sciences*

The accession to supranational organizations is complicated process and could entail significant problems with national constitutions in terms of delegation of sovereign authorities towards supranational institutions. Numerous states have faced with this obstacle and were obliged to introduce amendments into national constitutions in order to complete the accession process.

In its nature and structure Eurasian Economic Union is supranational organization due to its proclaimed goals and procedures, determined by the Treaty and accession treaty of states to this organization must comply with national constitutions. Republic of Armenia has joined to EEU on October 2014 and the accession Treaty has been ratified by National Assembly, after acquiring the opinion of the RA Constitutional Court regarding the compliance of the Treaty with the RA Constitution. This article aims to analyze the 1st and 2nd articles of the RA Constitution on the subject legal aspect of delegation of national sovereign authorities towards supranational institutions.

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ЧЛЕНСТВА В НАДГОСУДАРСТВЕННЫХ ИНТЕГРАЦИОННЫХ ОБЪЕДИНЕНИЯХ

Артур Казинян
*Директор Центра Европейских исследований,
кандидат юридических наук, доцент*

Процесс присоединения государства к надгосударственным организациям является достаточно сложным и сопровождается определенными юридическими проблемами с национальными конституциями в плане делегирования суверенных полномочий надгосударственным институтам. Большое количество государств столкнулись с этой проблемой и были вынуждены внести определенные изменения и поправки в текст конституции для завершения процесса присоединения.

По своему характеру и структуре Евразийский экономический союз является надгосударственной организацией и Договор о присоединении государств к этой организации должен соответствовать национальным конституциям. Армения присоединилась к Евразийскому Союзу в октябре 2014г. и договор о присоединении был ратифицирован Национальным Собранием РА после получения положительного заключения Конституционного Суда РА о соответствии договора Конституции РА.

Данная статья ставит перед собой цель изучить статьи 1 и 2 Конституции РА на предмет юридических аспектов делегирования суверенных полномочий надгосударственным институтом.

Բանալի բաներ՝ վերլուծական ինտեգրացիոն միավորում, միջազգային պայմանագիր, դելեգացում, Եվրասիական տնտեսական միություն, ինքնիշխան լիազորություններ:

Ключевые слова – надгосударственное интеграционное объединение, международный договор, делегирование, Евразийский экономический союз, суверенные полномочия.

Key words – supranational organization, international treaty, delegation, Eurasian Economic Union, sovereign authorities.

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЗАЩИТЫ БЕЖЕНЦЕВ И УБЕЖИЩА В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА

Кнарик Варданян

Кафедра европейского и международного права, ЕГУ

кандидат юрид. наук, ассистент

Для того, чтобы присоединиться к международным и европейским структурам и стать полноправным членом международного сообщества, Республика Армения со времени своей независимости ратифицировала ряд международных договоров и взяла на себя обязательство претворять в жизнь устанавливаемые ими положения.

4 октября 1993г. Республика Армения присоединилась к Конвенции 1951г. «О статусе беженцев», а 6 октября – к Протоколу 1967г. В дальнейшем, в дополнение к взятым на себя международным обязательствам, в 1999г. Национальное собрание РА приняло закон «О беженцах» (с дополнениями и поправками в 2001, 2002, 2004гг.). Несмотря на то обстоятельство, что принятие настоящего закона явилось прогрессивным шагом, тем не менее, существовал ряд упущений, которые нуждались в дальнейшей проработке и совершенствовании. Они существенно препятствовали полноценной защите прав лиц, ищущих убежище, и беженцев.

С целью анализа существующих в законодательстве РА упущений, дополнения и приведения в соответствие с международными критериями внутригосударственного законодательства в 2006г. совместно с сотрудниками Управления Верховного комиссара ООН по делам беженцев и действующего на тот момент в составе Министерства территориального управления РА Миграционного агентства РА (18 ноября 2009г. по указу Президента РА УП-286-н в системе Министерства территориального управления РА была создана Государственная миграционная служба РА, далее ГМС МТУ РА) была сформирована рабочая группа, которая была уполномочена разрабатывать

проект нового закона РА «О беженцах и убежище». Последний должен был отображать вытекающие из Конвенции 1951г. основные принципы защиты беженцев. Поэтому, 27 ноября 2008г. Национальное собрание РА приняло новый закон «О беженцах и убежище», который вступил в силу 24 января 2009г.

30 декабря 2010г. правительство РА утвердило концепцию политики государственного регулирования миграции в РА, которая определила 14 направлений политики государственного регулирования миграции, в случае каждого из которых определена цель, а также приведены основные механизмы и пути достижения этих целей. Для осуществления данной концепции решением правительства РА 1593-н от 10 ноября 2011г. был утвержден «План действий по реализации концепции политики государственного регулирования миграции в Республике Армения на 2012-2016 гг..».

По программе были предусмотрены 147 конкретных шагов, которые направлены на обеспечение реализации установленных в миграционной концепции целей по 14 направлениям, в том числе, совершенствование системы защиты, предоставляемой из гуманитарных соображений иностранным гражданам и не имеющим гражданства лицам со стороны РА, урегулирование трудовой эмиграции, предотвращение нерегулярной миграции, обеспечение разработки миграционной политики, эффективная и систематическая деятельность ответственных органов – для систематизации и осуществления развития их профессиональных возможностей и т.д.¹. Одним из основных вопросов, предусмотренных в плане действий, является усовершенствование системы предоставления убежища в Республике Армения, и в случае признания иностранных граждан беженцами обеспечить их

¹ См. Приложение 1 решения Правительства РА N 1593-н от 10 ноября 2011г. «План действий по реализации концепции политики государственного регулирования миграции в Республике Армения на 2012-2016 гг..», введение, пункт 5, С. 6-7.

эффективную интеграцию в общество РА¹.

Примечательно также, что с апреля 2015г. Республика Армения является полноправным членом Исполнительного комитета УВКБ ООН, что даст возможность Армении участвовать в обсуждении и принятии Заключений Комитета². Сами государства выбирают те вопросы, которые нуждаются в обсуждении и дают заключения по этим вопросам. Безусловно, заключения Исполнительного комитета УВКБ ООН являются документами, не имеющими юридически обязательное значение, однако логично, что УВКБ ООН руководствуется установленной своим Исполнительным комитетом политикой, а государства при этом получают возможность истолковать и на основании этого применить свое внутригосударственное законодательство. Принимая во внимание существующий в Армении вопрос беженцев, в частности, в связи с эффективностью реализации их прав, считаем, что членство в Исполнительном комитете УВКБ ООН даст возможность поднять вопросы, существующие в нашей стране и получить средства для эффективного их решения.

В Республике Армения на сегодняшний день можно дифференцировать две группы беженцев: этнические армяне, которые прибыли из Азербайджана в 1988-1992гг., из Ирака – в 2010-2012гг., из Сирии – в 2012г., из Украины- в 2014г. и беженцы из других стран, в частности из Ирана, Мали, Гвинеи, Кот-д'Ивуар, Либерии, Ливана и других стран³.

Согласно информации УВКБ ООН по состоянию на июнь 2015г. в республике Армения находятся около 16 тыс. беженцев, более 11

¹ См. Там же, приложение 9, С.43-48.

² См. http://mfa.am/hy/press-releases/item/2015/04/08/armenia_unhcr/ (просмотрено 10 декабря 2015г.)

³ См. С просьбой о получении убежища в РА в 2015г. в службу обратились 312 иностранных граждан, из которых 104 являлись гражданами Сирии, а остальные в основном из Ирака и Украины. Более подробно см. <http://smsmta.am> (просмотрено 10 февраля 2016г.).

тыс. из которых являются этническими армянами¹.

Защита прав беженцев и правовое регулирование процедуры предоставления убежища в Республике Армения осуществляется по Конституции РА, принятыми Национальным собранием законами и ведомственными актами. В законотворческой сфере необходимо выделить следующие акты: Закон РА «О беженцах и убежище» от 2008г., Закон РА «О гражданстве Республики Армения» от 1995г., Закон РА «Об иностранных лицах» от 2007г., Закон РА «О политическом убежище» от 2001г., Закон РА «О государственной границе» от 2001г., Закон РА «О пограничных войсках» от 2001г. и т.д. Касательно ведомственных актов, то было принято свыше одного десятка правительственных решений и указов Президента РА, направленных на урегулирование этой области.

6 декабря 2015г. в Армении состоялся конституционный референдум, в результате которого конституционные поправки были одобрены 66,2% избирателями. Измененная и уже действующая Конституция РА содержит положения, касающиеся вопросов политического убежища, обязательств, связанных с принципом невысылки (невыдворения), которые не были определены в предыдущем тексте Конституции.

В частности, новая Конституция в ст. 54 устанавливает право каждого просить политическое убежище в Республике Армения, порядок и условия предоставления которого должны быть предписаны законом. В 2001г. Армения приняла закон «О политическом убежище», в котором политическое убежище предусматривается как специальный вид на жительство в Республике Армения, предоставленный иностранному гражданину или лицу без гражданства, целью которого является его защита на территории Республики Армения от политических преследований, которым он подвергался в стране своего гражданства или постоянного местожительства или мог подвергаться

¹ См. <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/page?page=49e48d126&submit=GO> (просмотрено 10 декабря 2015г.).

в этой стране, если бы ему не было предоставлено убежище в Республике Армения¹.

Правовое регулирование института политического убежища, по нашему мнению, является результатом постсоветского наследия. Дело в том, что международное право беженцев не затрагивает вопрос о регулировании права на политическое убежище и права на убежище отдельно. В международной практике государств известны две формы убежища: *территориальное* и *дипломатическое*.

Территориальное убежище предоставляется государством какому-либо лицу или лицам для возможности укрыться от преследований по политическим мотивам на своей территории. Дипломатическое убежище предоставляет возможность укрыться от преследований по политическим мотивам в помещении иностранного дипломатического представительства или консульского представительства, а также на иностранном военном корабле. Последнее признается и широко применяется лишь в странах Латинской Америки.

В Республике Армения не зарегистрированы случаи применения положений о предоставлении политического убежища. Более того, после изменений в Конституции РА, в частности после вступления в силу главы Конституции, кодифицирующей конституционные полномочия президента, становится неясным, какой орган уполномочен решать вопросы, связанные с предоставлением политического убежища. В предыдущем тексте Конституции РА эти вопросы были включены под юрисдикцию главы страны. В новом тексте Конституции в соответствующей статье такие полномочия Президента отсутствуют². Статья 123, пункт 4 Конституции РА гласит: «Президент выполняет свои функции через полномочия, установленные Конституцией», что дает нам право заключать, что Президент не может взять на себя дополнительные полномочия, закрепленные в законе. Закон РА «О по-

¹ См. Закон РА «О политическом убежище» 2001г., статья 3, пункт 1.

² См. Конституция РА (с изменениями от 06.12.2015г.), Глава 5 (статьи 123-145).

литическом убежище» от 19 октября 2001г. в статье 7, пункт 1 регулирует вопросы, связанные с принятием решения по заявлению и протесте, в котором говорится, что Президент РА в месячный срок после получения заявления со всеми необходимыми документами от Уполномоченного государственного органа принимает решение о предоставлении политического убежища в Республике Армения или отказе в нем¹.

Принимая во внимание, что глава 5 Конституции РА, которая предусматривает правовой статус президента, вступит в силу и будет применяться только с вступлением в должность новоизбранного Президента, конституционные положения, регулирующие вопросы предоставления политического убежища, до этого времени продолжают действовать в соответствии с поправками к Конституции от 2005 года².

В действительности, до этого времени соответствующее положение закона «О политическом убежище» также применимо. До истечения указанного времени, мы считаем, необходимо будет внести законодательные изменения, которые урегулируют вопрос об органе, уполномоченном решать вопросы о предоставлении или отказе в политическом убежище в соответствии с Конституцией.

Можно предположить, что это право будет предоставлено Правительству РА, на основе пункта 4, статьи 146 Конституции РА, которая гласит: «Под полномочия Правительства подпадают все вопросы, касающиеся исполнительной власти, которые не предоставлены государственным или другим органам местного самоуправления.»³.

Полагаем, что для соответствия нормам международного права, регулирующим вопросы, касающиеся убежища и прав беженцев, идеальным решением было бы урегулирование Конституцией право иностранцев и лиц без гражданства просить и получать убежище. Это, конечно, не означает, что государство должно предоставлять убежище

¹ См. Закон РА. «О политическом убежище» 2001г., статья 7, пункт 1.

² См. Конституция РА (с изменениями от 06.12.2015г.), статья 209, пункт 6.

³ См. Там же, статья 146, пункт 4.

всем тем, кто обращается за ним в уполномоченный орган, так как предоставление убежища – это реализация суверенных прерогатив страны, ее доброй воли оказать конкретным лицам в покровительстве и защите, но помогло бы обеспечить максимальное применение принципа невысылки в контексте свободного въезда в страну и доступа к процедурам предоставления убежища. Для избежания неправильного толкования или применения конституционной нормы, полагаем, что правильнее было бы регулировать вопросы, связанные с убежищем, не Конституцией, а законом, также ликвидировать институт политического убежища и заменить существующее определение следующим: «Беженцы, в соответствии с международным правом, имеют право просить и получить убежище в Республике Армения. Сроки и условия предоставления убежища устанавливаются законом».

Эта формулировка относительно уточняет содержание права убежища и соответствует международно-правовым нормам в области прав беженцев.

Положительным шагом можно считать конституционное регулирование обязательств государства, связанных с принципом невысылки. В частности, пункт 1, ст.55 Конституции РА с изменениями от 06.12.2015г. запрещает высылку или выдачу любого лица иностранному государству, если есть реальный риск, что человек будет подвергнут смертной казни, пыткам, бесчеловечному или унижающему достоинство обращению или наказанию.

Хотелось бы, чтобы принцип невысылки рассматривался в контексте защиты прав беженцев, и при установлении его были приняты во внимание положения статьи 33 «Конвенции о статусе беженцев» 1951 года, которые регламентируют принцип невысылки. Это способствовало бы полному пониманию всех аспектов принципа невысылки, а также соответствовало бы положениям Конституции, которые регулируют вопросы соотношения основных прав и свобод и международной юридической практики.

Что касается Закона РА «О беженцах и убежище», то его приня-

тие было обусловлено необходимостью проявления всестороннего подхода в отношении решения проблем, связанных с беженцами и предоставлением убежища, и урегулирования отношений, оставшихся за рамками регулирования прежнего закона. Об этом свидетельствует тот факт, что в отличие от старого закона, который имел всего лишь 25 статей, действующий закон состоит из 65 статей. В декабре 2015 года Национальное собрание РА приняло 2 закона «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище», один из которых (от 16 декабря 2015г.) вступил в силу 9 января 2016г., а другой (от 17 декабря 2015г.) вступит в силу только 30 июня 2016г.

Сопоставляя прежний (от 3 марта 1999г.) и действующий законы, следует отметить, что во-первых, новый документ более четко устанавливает понятия «беженец» и «убежище». В частности, приводится определение убежища (статья 2), дается определение беженца (статья 6), а также представлено понятие «лицо, ищущее убежище» (статья 5), которые отсутствуют в прежнем законе. Кроме этого, новый закон в отличие от старого закрепляет институт временного убежища, то есть предоставление убежища в случае массового притока беженцев (статья 3), а также добровольное возвращение (статья 4) как одно из долгосрочных решений беженцев, при котором беженцы и лица, ищущие убежище, при непосредственной поддержке ГМС МТУ РА безопасно и достойно возвращаются в страну своей гражданской принадлежности или прежнего постоянного местожительства.

Более того, Закон РА «О беженцах и убежище», устанавливая понятие «беженец», более расширило его, признавая таковым не только лицо, подвергшееся преследованию или опасющееся преследований по основаниям Конвенции 1951г., но и по примеру других региональных документов, также лицо, которое покинуло страну своего происхождения или прежнего местожительства «...по причине всеобщего насилия, внешнего нападения, внутренних конфликтов, массовых нарушений прав человека или же других, нарушающих общественный

порядок, серьезных событий»¹.

Действующий Закон также подвергает регулированию некоторые вопросы, связанные с получением убежища членами семьи и воссоединением семьи. В частности, статья 7 закрепляет, что супруга/супруг беженца, получившего убежище в Республике Армения, ребенок до 18 лет и иное лицо, находящееся под его опекой, также считаются беженцами и получившими в Республике Армения убежище, если они живут совместно с этим беженцем и не имеют гражданства какой-либо другой страны, предоставляющей эффективную защиту, отличающуюся от гражданства беженца². При вышеприведенных обстоятельствах другие родственники беженца или родственники признанного беженцем супруга/супруги считаются беженцами и лицами, получившими убежище, если находятся под его опекой и не имеют гражданства другой страны, которая может обеспечить им эффективную защиту³, а родители признанного беженцем ребенка, его совершеннолетние или несовершеннолетние недееспособные родные братья и сестры получают убежище на территории РА, если они живут совместно с получившим статус беженца ребенком и не имеют гражданства другой страны⁴. Однако необходимо отметить, что если первый в семье, кто был признан беженцем подпадает под положение о прекращении статуса беженца или признании недействительным, то все вышеперечисленные члены семьи автоматическим образом утрачивают свой статус, что, однако, не лишает их возможности, исходя из личных мотивов, непосредственно подать заявление о предоставлении убежища⁵.

Статья 8 Закона, которая устанавливает правовой статус несопро-вождаемых и разлученных с семьями детей, ищущих убежище, и бе-

¹ См. Закон РА «О беженцах и убежище» 2008г., статья 6, подпункт 2) пункт 1.

² См. Там же, статья 7, пункт 1.

³ См. Там же пункт 2.

⁴ См. Там же пункт 3.

⁵ См. Закон РА «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище» от 16.12.2015, статья 7, пункты 5, 6.

женцев, подверглась ряду изменений законом РА «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище»» от 16.12.2015, начиная с наименования статьи. Измененная статья называется «Лица, ищущие убежище и беженцы с особыми потребностями», 1 подпункт, пункта 1 которого определяет, кто является таковым. В частности, лицом, ищущим убежище и беженцем с особыми потребностями являются дети, ищущие убежище, дети-беженцы, инвалиды, беременные женщины, одинокие родители, имеющие несовершеннолетних детей, пациенты, страдающие от тяжелой болезни, люди с психическими расстройствами, жертвы торговли людьми, пыток изнасилования или других форм насилия. Статья также определяет несопровождаемых и разлученных с семьями детей.

Как видим, законодатель положительно расширил круг лиц, нуждающихся в особой защите, дополняя несопровождаемых и разлученных с семьями детей вышеупомянутыми другими группами, для них предоставляя также ряд процессуальных гарантий.

Что касается детей беженцев, родившихся на территории РА, то эта область регулируется Законом «О гражданстве РА». В мае 2015г. Национальное собрание РА приняло закон «Об изменениях и дополнениях в законе «О гражданстве РА»», которое вступило в силу 13 июня 2015 года. Закон внес ряд изменений, особенно связанных с положениями о приобретении гражданства детей, родители которых являются лицами без гражданства, гражданство родителей которых неизвестно или родители которых не могут передавать им свое гражданство в соответствии с законодательством страны (стран) своего гражданства. В частности, статья 12 Закона «О гражданстве РА» закрепляет основания, по которым ребенок родившийся на территории РА, приобретает гражданство Республики Армения¹. Дети беженцев, родившиеся на территории РА не могут считаться беженцами, поскольку существует соответствующее определение, согласно которому,

¹ См. Закон РА «О гражданстве Республики Армения» 1995г., статья 12, пункт 1 (1-6).

беженцем считается лицо, которое подвергается преследованию в стране своей гражданской принадлежности или постоянного места жительства.

По Закону РА «О беженцах и убежище» также определенным изменениям подверглись, точнее дополнились положения о прекращении статуса беженца. В частности, в статье 10 Закона было внесено положение, согласно которому, статус беженца прекращается, если лицо, исходя из личных мотивов, больше не хочет считаться беженцем. Законодатель не уточняет и никак не комментирует, что следует понимать, говоря, личные причины и каковы пределы их применения. Кроме того, он не уточняет, что должно быть после того, как на этом основании прекратится статус беженца. Что будет с ним? Независимо от прекращения статуса, должен он/она продолжать жить на территории Армении или нет, и если да, то в каком статусе?

Учитывая тот факт, что вышеупомянутая норма до сегодняшнего дня не применялась на практике, и есть много вопросов, связанных с его реализацией, трудно дать какую-либо оценку его эффективности и потребности.

Закон предусматривает также основания для прекращения убежища, предоставленного на территории РА, когда при наличии обоснованных причин лицо, получившее статус беженца, представляет угрозу для национальной безопасности данного государства, либо осуждено за совершение тяжкого или особо тяжкого преступления, а также, если лицо выехало за границы РА и после истечения срока действия конвенционного дорожного документа находится за пределами РА¹.

Последнее положение будет отменено после вступления в силу Закона РА «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище» от 17 декабря 2015г.²

¹ См. Закон РА «О беженцах и убежище» от 2008г., статья 10 пункт 3,4.

² См. Закон РА «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище» от 17.12.2015 (вступит в силу 30 июня 2016г.), статья 1.

В случае прекращения уже предоставленного убежища необходимо особо обратить внимание на принцип защиты прав беженцев о невысылке (*non-refoulement*). Аналогичное положение было закреплено также в пункте 3 статьи 53 Закона РА «О беженцах и убежище», согласно которому: «Во время процедур прекращения или признания недействительным компетентный орган не должен пересматривать применяемость критериев понятия «беженец», а при вынесении решения принимать за основание принцип невысылки». После изменений Закона от 16 декабря 2015 года данная статья непонятным образом не содержит пункта с требованиями о вынесении решения на основании принципа невысылки. В этом смысле, пожалуй, вызывает определенные опасения основание прекращения предоставленного убежища в случае угрозы, представляемой для национальной безопасности. Заключение, выдаваемое Службой национальной безопасности относительно представляемой угрозы для национальной безопасности, должно быть обоснованным и с соблюдением принципа невысылки. Служба национальной безопасности на сегодняшний день в общем играет основную роль в процедуре решения о статусе беженца. Дело в том, что статья 35 Закона РА «О беженцах и убежище», закрепляя полномочия органа национальной безопасности в этой сфере, устанавливает содействие последнего на основании заявления Государственной миграционной службы в вопросе выяснения личности лица, ищущего убежище, и расследования предоставленных ею фактов, а также дает заключение о представляющей для национальной безопасности РА возможной угрозе¹.

До изменений от 16 декабря 2015 г. Закон устанавливал возможность обращения Государственной миграционной службы в органы Государственной безопасности только в случае незаконного въезда лиц, ищущих убежище, и по необходимости. После изменений Закона РА «О беженцах и убежище» Государственная миграционная служба может обратиться в органы Государственной безопасности при каж-

¹ Закон РА «О беженцах и убежище» от 2008г., статья 35, пункт 1, подпункт 1.

дом случае незаконного въезда лиц, ищущих убежище, а также по вопросам, связанным с предоставлением информации о фактических обстоятельствах, касающихся применения оснований для исключения статуса беженца определенных в статье 11 Закона РА «О беженцах и убежище»¹.

Тем не менее, по нашему мнению, подобное изменение закона может явиться прямым основанием для отказа в убежище, а в ограниченных условиях добывания информации иногда допускать злоупотребления и ошибки, поэтому необходимо с осторожностью его применять после детального изучения взятых на рассмотрение дел.

Одна из наиболее важных статей, которая внесена в Закон РА «О беженцах и убежище», регулирует право на бесплатную юридическую помощь, которая предоставляется и лицам, ищущим убежища, и беженцам. Дело в том, что в предыдущем тексте закона оно отсутствовало, однако, учитывая уязвимость этой группы лиц, считаем, что предоставление им бесплатной юридической помощи является необходимостью. Закон устанавливает, что уполномоченные на то органы обязаны принимать ходатайство от всех лиц, ищущих убежище, и беженцев, а также информировать их о праве на бесплатную юридическую помощь².

Закон РА «О беженцах и убежище» предусматривает также возможность предоставления временной защиты³. Последняя представляет собой краткосрочную чрезвычайную меру, которая применяется в случае массового притока лиц, когда страна в соответствии с минимальными критериями защиты временно допускает прибывшую на ее территорию группу. Когда ситуация в стране происхождения улучшается настолько, что большинство лиц, ищущих убежище, получает возможность безопасного возвращения, тогда временная защита прекращается. Если ситуация в стране происхождения не меняется на про-

¹ См. Там же, статья 34, пункт 1 (3).

² См. Закон РА «О беженцах и убежище» от 2008г., статья 16.1.

³ См. Там же, глава 5, статьи 61-63.

тяжении нескольких лет, то возникает необходимость изыскания других мер международной защиты. В обратной ситуации предоставление ограниченной защиты лицам является несправедливым, в том случае, когда они имеют возможность получения более благоприятного отношения и более устойчивого статуса.

Лица, получившие временную защиту, также признаются беженцами, однако без обычно необходимой для этого индивидуальной процедуры, что закреплено в главе 4 Закона РА «О беженцах и убежище». Претендентам на временную защиту, как и лицам, ищущим убежище, предоставляются документы, удостоверяющие личность, которые в дальнейшем заменяются конвенционным проездным документом (идентификационными карточками¹).

¹ После вступления в силу изменений Закона РА «О беженцах и убежище» от 17 декабря 2015г. предоставленные Государственной миграционной службой лицам, ищущим убежище, удостоверяющие личность документы после решение о предоставлении им статуса беженца возвращаются Уполномоченному органу, и вместо этого им предоставляются идентификационные карточки с *10-летним сроком действия для лиц, старше и с 3-летним сроком действия для лиц, меньше 16-ти лет. Она является документом, подтверждающим личность и легальное пребывание беженца в Республике Армения и предназначена для использования только на ее территории. (Более подробно см. Закон РА «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище» от 17.12.2015 (вступит в силу 30 июня 2016г.), статья 30).*

Что касается регулирования вопросов, связанных с конвенционным проездным документом беженца, то в Законе РА «О беженцах и убежище» внесены поправки новыми статьями 30.1 -30.4, которые определяют проездной документ, как документ, удостоверяющий личность беженца, который предназначен для выезда за пределы Республики Армения и возвращения (въезда) на ее территорию. Проездной документ предоставляется беженцам на основе идентификационной карточки сроком на 3 года для лиц, меньше 16-ти лет и на 10 лет, лицам старше 16-ти. Вышеупомянутые статьи Закона также регулируют вопросы, связанные с основаниями и со сроками обмена проездных документов и удостоверений личности, с юридическими основаниями для их признания недействительными, а также с основаниями для их изъятия. (Более подробно см. Закон РА «Об изменениях и дополнениях в законе «О беженцах и убежище» от 17.12.2015 (вступит в силу 30 июня 2016г.), статьи 30.1-30.4).

Относительно принципов защиты беженцев и лиц, ищущих убежище, следует отметить, что закон, отражая положения Конвенции 1951г., отдельными статьями закрепляет принцип единства (воссоединения) семьи (статья 7), принцип невысылки (статья 9), запрет на привлечение к уголовной или административной ответственности за незаконный въезд на территорию страны (статья 28), однако отсутствуют положения, касающиеся распределения ответственности и сотрудничества государств, как особого принципа защиты беженцев и лиц, ищущих убежища.

Касательно проблемы защиты социально-экономических прав беженцев и лиц, ищущих убежище, то выполненные в этой связи исследования свидетельствуют о том, что беженцы и лица, ищущие убежище в РА в основном сталкиваются с такими проблемами, с которыми встречается каждый гражданин РА, в частности, в сфере работы, социального обеспечения, медицинского обслуживания и других. Существующие социально-экономические проблемы носят общий характер и не относятся исключительно к правам беженцев и лиц, ищущих убежище, по этой причине требуют всеобщего и систематического решения. В данном случае важным является реализация идеи равенства возможностей и доступности, которая должна служить основанием на пути защиты прав беженцев и лиц, ищущих убежище, а также успешного осуществления интеграционных процессов, выявления и нейтрализации существующих недочетов и пробелов.

В ряду социально-экономических прав беженцев и лиц, ищущих убежище, особенно большое место отводится праву на обладание жильем. Последнее закреплено в ряде ратифицированных РА международных документов, в частности, Всеобщей декларации прав человека (статья 25 пункт 1), Международном пакте об экономических, социальных и культурных правах (статья 11 пункт 1), Конвенции о статусе беженцев (статья 21) и т.д.

Несмотря на то обстоятельство, что право на жилье не нашло своего закрепления в Европейской конвенции по защите прав челове-

ка и основных свобод (далее ЕКПЧ), однако Европейский суд по правам человека затронул также вопросы, касающиеся права на жилье (убежище), например, статьей 8 ЕКПЧ (право на уважение личной и семейной жизни) и статьей 1 Протокола N1 Конвенции (право на собственность)¹. Суд по ряду дел обращался к нарушениям статьи 8 Конвенции и статьи 1 Протокола N1².

Статья 24 Закона РА «О беженцах и убежище» закрепляет *право на жилье*. Согласно данной статье, компетентный орган размещает представивших на основании закона заявление о получении убежища лиц, ищущих убежище, и членов их семей в центре временного размещения, где им предоставляется трехразовое питание в день, белье, предметы личной гигиены, а в случае необходимости, одежду и обувь. Более того, в результате изменений, внесенных в Закон РА «О беженцах и убежище», в наилучших интересах ребенка и с консультацией с их представителем, правом первоочередности на предоставление комнаты в центре временного размещения лиц, ищущих убежище, наделены несопровождаемые и разлученные с семьями дети, ищущие убежище³.

Согласно статье 14 Закона РА «О беженцах и убежище», которая также изменилась, дополнилась и переименовалась (вместо предыдущей «Центр временного размещения лиц, ищущих убежище» настоящая статья именуется «Условия проживания лиц, ищущих убежище»), центр временного размещения лиц, ищущих убежище, является специальным учреждением, где уполномоченный орган размещает лиц, ищущих убежище, до момента вынесения окончательного решения

¹ См. Европейская конвенция о защите прав человека и основных свобод, Протокол 1, статья 1.

² См. *Altun v. Turkey*, No.24561/94, Council of Europe: European Court of Human Rights, 1 June 2004, <http://www.refworld.org/docid/414d83cf4.html> (просмотрено 15 февраля 2016г.), *Smirnova v. Russia*, No.46133/99, 48183/99, European Court of Human Rights, 24 July 2003, *Gladysheva v. Russia*, No.7097/10, 6 December, 2011.

³ См. Закон РА «О беженцах и убежище» 2008г., статья 24 пункт 1.

относительно их заявления об убежище.

Тем лицам, ищущим убежище, которым невозможно предоставить комнату, и которые не имеют возможности удовлетворить свои основные потребности, предоставляется финансовая помощь, установленная Правительством РА¹.

Решением правительства N 1440-н от 29 ноября 2009г. «Об утверждении порядка размещения лиц, ищущих убежище, в центре временного размещения и предоставления условий жизнеобеспечения» устанавливается порядок размещения лиц, ищущих убежище, в центре временного размещения и предоставления условий жизнеобеспечения. Согласно этому порядку, уполномоченные органы размещают лиц, ищущих убежище, в центрах временного размещения до вынесения окончательного решения относительно их статуса. Кроме этого, ГМС МТУ РА может позволить беженцам, получившим отказ в убежище, продолжить проживание в центре временного размещения, пока в течение установленных законом 6 месяцев они добровольно или недобровольно покинут Армению или если выезд невозможен, то на основании принципа невозвращения без дополнительной процедуры получают убежище или конвенционные проездные документы².

Вопрос обеспеченности жильем на сегодняшний день продолжает оставаться актуальным, особенно для депортированных из Азербайджана в 1988-1992гг. беженцев³. Из годового отчета ГМС РА становится ясно, что депортированные еще в 1988-1992гг. из Азербайджана 924 наиболее нуждающихся семей, из которых 670 семей в г. Ереване и 254 семей в разных областях Армении решением Правительства РА

¹ Там же, статья 24, пункт 2.

² См. Там же, статья 58 пункт 2.

³ Касательно обеспечения депортированных из Азербайджана беженцев жильем были приняты в 2000г. Закон РА «О правовых и социально-экономических гарантиях лицам, депортированным в 1988-1992гг. из Республики Азербайджан и получившим гражданство Республики Армения» и в 2002г. Закон РА «О предоставлении на правах собственности построенных квартир для депортированных в 1988-1992 гг. из Азербайджанской Республики беженцев».

№747-н от 20 мая 2004г. считаются утвержденными первичными выгодоприобретателями первичной программы обеспечения жилья. ГМС РА данное обстоятельство обосновывает отсутствием с 2009 года финансирования этой программы из государственного бюджета РА. По оценкам ГМС РА для решения данной проблемы потребуется около 10 миллиард драм¹. Хотя, начиная с 2008г. ГМС РА каждый год представляла в Правительство РА бюджетную заявку на 4 миллиарда драм, однако эта заявка не была удовлетворена, и проблема обеспечения находящихся в РА беженцев снова не получила своего решения, как и в течение предыдущих шести лет².

Фактически государственное финансирование, направленное на обеспечение жилищных вопросов беженцев, отсутствует (за исключением предоставляемых лицам, ищущим убежище, и членам их семей центра временного размещения). При осуществлении жилищных программ необходимо учитывать и социально-экономическое состояние государства, и личные, крайне оправданные предпочтения беженцев, в частности, связанные с их размещением особенно в тех местах, которые сделают более доступным осуществление беженцами своего права на образование, работу, медицинскую помощь, либо позволят беженцу по возможности быть ближе к членам своей семьи.

Основное бремя труднейшей проблемы обеспечения квартирами беженцев берут на себя международные организации, в частности, УВКБ ООН. Последний предоставляет убежище наиболее нуждающимся и уязвимым группам беженцев, но несмотря на это из-за отсутствия достаточного размера финансирования, только незначительное количество беженцев могут пользоваться программами по обеспечению жилья³. Большая часть беженцев в Армении пока еще имеют

¹ Годовой отчет Государственной миграционной службы МТУ РА за 2015г.

² См. Годовой доклад омбудсмана за 2015г.

³ В 2014 году 8 семей, включенных в первичную программу обеспечения жилья, получили социальное жилье в селе Касах Котайкской области и 4 семьи в селе Дарбник Араратской области. *(Более подробно см. Годовой доклад омбудсмана за 2015г.).*

жилищные проблемы. Ряд беженцев из Азербайджана еще продолжают жить на довольно низком уровне жизнеобеспечения¹.

Проведенное исследование позволяет нам прийти к выводу, что на сегодняшний день законодательство РА в общем и целом предоставляет лицам, ищущим убежище, и беженцам основные права, необходимые для обеспечения благоустроенной жизни, однако вместе с тем не всегда обеспечивает их полноценную реализацию в обществе. Очевидно, что законодательное основание для предоставления убежища, равенство перед законом и положения о запрете дискриминации не всегда устраняют существующие препятствия и не гарантируют эффективной реализации прав беженцев. Не все применяемые до сих пор мероприятия, направленные на решение вопроса беженцев, дали свои желаемые результаты и не во всех случаях их объем был достаточен.

В связи с этим, положительным шагом рассматривается дополнение к статье 31 Закона РА «О беженцах и убежище», которое предусматривает осуществление компетентными органами в рамках своих полномочий программ интеграции для беженцев, таких, как организация языковых и культурных курсов, предоставление информации о повседневной жизни, обеспечение их участие в общественной жизни и т.д.².

¹См. Усиление возможностей защиты беженцев в Армении. Консультации национальных партнеров Доклад конференции, 7-8 ноября, 2008, см также <http://www.aravot.am/2012/06/22/300329/>.

² См. Закон РА «О беженцах и убежище» 2008г., статья 31, пункт 4, *см. также там же*, статья 34, пункт 8 (8.1).

**ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ
ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ**

Քնարիկ Վարդանյան
*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն,
իրավ. գիտ. թեկն., ապիստենտ*

Մույն գիտական հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվում փախստականների իրավունքների պաշտպանության և ապաստանի իրավական կարգավորման հետ կապված հիմնախնդիրները ոլորտը կարգավորող ՀՀ ներպետական օրենսդրությամբ:

Հեղինակը քննարկում է ՀՀ Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդունված սահմանադրական նոր դրույթները, որոնք առնչվում են խնդրո առարկա ոլորտներին: Բացի դրանից՝ հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվում «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները:

Հեղինակը անդրադարձ է կատարում նաև փախստականների և ապաստան հայցողների հիմնարար սոցիալ-տնտեսական իրավունքների ամրագրման ու դրանց իրականացման հետ կապված խնդիրներին՝ որպես ընդունող երկրում նրանց բարեկեցիկ կյանքն ու լիակատար ինտեգրումն ապահովելու հիմնական երաշխիքներ:

SOME PROBLEMS OF LEGAL REGULATION OF REFUGEES' PROTECTION AND ASYLUM IN THE LEGISLATION OF THE RA

Knarik Vardanyan

*Assistant of the YSU Chair of European and International Law,
Candidate of Legal Sciences*

The article briefly examines legal issues of refugees' protection and ensuring asylum in the Armenian legislation relevant to the subject of concern.

Within the frame of the topic the author discusses the new constitutional provisions of the Constitution of RA relating to the areas in question. In addition, the provisions to the Law of RA on Refugees and Asylum are also analysed.

The author also focuses on the refugees' and asylum seekers' fundamental social and economic rights, their implementation and realization as the main guarantees to their prosperous life and full integration in the host country.

Բանալի բառեր – փախստական, ապաստան հայցող, ՀՀ Սահմանադրություն, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, կազարանի իրավունք, քաղաքական ապաստան, Միգրացիոն պետական ծառայություն

Ключевые слова: беженец, лицо, ищущее убежище, Конституция РА, закон РА «О беженцах и убежище», право на жилье, политическое убежище, Государственная миграционная служба.

Key words: Refugee, Asylum seeker, Constitution of the RA, Law of the RA on Refugees and Asylum, Right to Shelter, Political asylum, State Migration Service.

**ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ ՎՃՈԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**

Դավիթ Մելքոնյան

***ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու***

Թեև քր. դատ. օր. 309-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել, այնուամենայնիվ նշված նորմի առկայությունը չի նշանակում, որ նոր փաստական հանգամանքների պարագայում մեղադրանքի սահմանները չեն կարող փոփոխվել: Դատական քննության սահմանները հնարավորություն են տալիս օրենքով սահմանված կարգով և հիմքերով փոխելու մեղադրանքը:

Քր. դատ. օր. 309.1-րդ հոդվածը, որով սահմանվում են դատարանում մեղադրանքը փոխելու հիմքը և դատավարական կարգը, օրենսգրքում ամրագրելու անհրաժեշտությունը պայմանավորվեց ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՄԴՈ-710 որոշմամբ, որով հակասահմանադրական ճանաչվեցին գործը լրացուցիչ քննության ուղարկելու հիմքերը սահմանող՝ քր. դատ. օր. 311-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապված քր. դատ. օր. 311-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 292-րդ հոդվածի 5-րդ կետի, 297-րդ հոդվածի, 363-րդ հոդվածի 2-րդ մասի, 394-րդ հոդվածի 5-րդ մասի, 398-րդ հոդվածի 6-րդ մասի, 421-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները և 419-րդ հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՄԴՈ-710 որոշման 11-րդ կետում դատարանն անդրադարձել է 2007թ. փետրվարի 22-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով վիճարկվող խնդրին տրված իրավակարգավորմանը, որի համաձայն. «Եթե առաջին ատյանի դատարանում

մեղադրողը գտնում է, որ դատական քննության ժամանակ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, դատախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դատարան՝ արարքը վերադրակելու նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար...»: Հետագայում քր. դատ. օր. 309.1-րդ հոդվածով ամրագրված այս կարգավորումը ՀՀ սահմանադրական դատարանը գնահատել է որպես բարեփոխում, որն ուղղված է դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը: Այսպիսով, վիճարկման առարկա իրավական կարգավորման վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հստակ իրավական դիրքորոշում՝ միննույն ժամանակ նշելով, որ. «այս նոր դրույթը բացառում է դատարանի կողմից գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու գործող կարգը, և այս տրամաբանությունը կարող է դրվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխման հիմքում»:

Նախքան մեղադրանքի փոփոխմանն անդրադառնալը՝ նախ և առաջ նպատակահարմար է բացահայտել «մեղադրանք» հասկացության բովանդակությունը:

«Մեղադրանք» հասկացության օրենսդրական ձևակերպումը տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետում: Նշված իրավանորմի համաձայն՝ մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորումն է որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների իրացման առումով մեղադրանքը բնորոշվում է որպես լիազորված պետական մարմնի

կողմից անձին արված պաշտոնական ծանուցում այն մասին, որ հիմքեր կան պնդելու, թե նա քրեական հանցանք է գործել¹:

«Մեղադրանք» հասկացությունը Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության է ենթարկվել Ա. Պապյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն²:

Գ. Ճաղարյանի վերաբերյալ գործով որոշմամբ զարգացնելով Ա. Պապյանի գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, վճռաբեկ դատարանը նշել է. ըստ էության բացահայտել է «մե-

¹ St' u Eckle v. Germany, 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, կետ 73:

² St' u Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ կետը:

դադրանք» հասկացության բովանդակությունը, ինչն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Մեղադրանքն, ըստ վճռաբեկ դատարանի. «Քրեական դատավարությունում մեղադրանքը բնորոշվում է որպես կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը»¹:

Մեղադրանքի՝ վերը նշված հասկացության շրջանակներում Ս. Նալբանդյանի վերաբերյալ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն առանձնացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքի փոփոխման հետյալ դեպքերը.

1. մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը,

2. նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը,

3. միևնույն իրավաբանական որակման շրջանակներում մեղադրանքի մեջ ավելացվում կամ մեղադրանքի ծավալից հանվում են առանձին դրվագներ: Նման դեպքերում, եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում նոր դրվագի վերաբերյալ կատարել քննություն, ապա մեղադրողը,

¹ Տե՛ս Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 15-րդ կետը:

դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգել գործի դատական քննությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատաքննության շրջանակում նոր դրվագի վերաբերյալ քննություն կատարել, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով, պետք է որոշում կայացնի առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ մեղադրանքի փոփոխման վերը նշված դեպքերից բացի, հնարավոր են նաև այլ դեպքեր: Այսպես, հնարավոր են դեպքեր, երբ մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների փոփոխությունը չհանգեցնի արարքի վերառարկման, սակայն տվյալ փոփոխությունը համարվի մեղադրանքի փոփոխություն: Այսպես, փաստական հանգամանքների ցանկացած փոփոխություն, որն ուղղակիորեն առնչվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացման հետ կամ ինչ-որ ձևով կարող է ունենալ որևէ իրավական հետևանք, միանշանակորեն պետք է դիտվի որպես մեղադրանքի փոփոխություն՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Մեղադրանքի փոփոխման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ս. Նալբանդյանի վերաբերյալ որոշմամբ՝ դրանով իսկ հաստատություն մտցնելով այս երկու ռեժիմների կիրառման պայմանների մեջ: Այսպես, ըստ վճռաբեկ դատարանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից սահմանում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու ռեժիմ՝ փոփոխում քննչական գործողությունների կատարմամբ, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, և փոփոխում առանց քննչական գործողություններ կատարելու, որը սահմանված է ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով: Ընդ որում, «ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում» պայմանը, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին մասում, ամրագրված կամ վկայակոչված չէ 309¹-րդ հոդվածի 3-րդ մասում: Ուստի օրենսդրի կամքն այն է, որ առանց քննչական գործողություններ կատարելու մեղադրանքի փոփոխությունը (309¹-րդ հոդվածի 3-րդ մասի ռեժիմ) կարող է կատարվել նաև այն դեպքում, երբ դրա համար հիմք հանդիսացած հանգամանքները մինչդատական վարույթում հայտնի են եղել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված երկու իրավական ռեժիմների համար ընդհանուր է այն, որ երկու դեպքում էլ պաշտպանության իրավունքի երաշխիքների ապահովումը պարտադիր է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմների գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ միևնույն իրավաբանական որակման շրջանակներում մեղադրանքի մեջ ավելացվում կամ մեղադրանքի ծավալից հանվում են առանձին դրվագներ: Նման դեպքերում, եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում նոր դրվագի վերաբերյալ կատարել քննություն, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 1-ին և 2-րդ

մասերով, պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգել գործի դատական քննությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատաքննության շրջանակում նոր դրվագի վերաբերյալ քննություն կատարել, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով, պետք է որոշում կայացնի առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմաններն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասը չի մեկնաբանվում նույն հոդվածի 1-ին մասի համատեքստում:

ПРОЦЕССУАЛЬНЫЙ ПОРЯДОК ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ В ХОДЕ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА В ПРЕЦЕДЕНТАХ КАССАЦИОННОГО СУДА РА

Давид Мелконян

*Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук*

В статье детально проанализирована практика Кассационного суда РА касательно процессуального порядка изменения обвинения в ходе судебного разбирательства. Прежде всего в статье проанализировано само понятие изменения обвинения, условия изменения обвинения судом по действующему уголовно-процессуальному кодексу, принимая во внимание определения Кассационного суда. Автор подробно анализирует определенные действующим кодексом и прецедентами Кассационного суда режимы изменения обвинения в ходе судебного разбирательства.

PROCEDURAL FORM OF CHANGING CRIMINAL INDICTMENT IN THE COURSE OF TRIAL IN THE CASE LAW OF THE COURT OF CASSATION

Davit Melkonyan

*Docent of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,
Candidate of Legal Sciences*

The article is dedicated to the problems of changing criminal indictment in the course of trial in the case law of the Court of Cassation. In the beginning, the author discusses the concept of the amendment of indictment, the conditions of changing the indictment according to the Code of Criminal Procedure taking into account the case law of the Court of Cassation. The author thoroughly analyses the modes of changing the indictment stated by the Code by carrying out a comprehensive analysis between them.

Բառայի բառեր – Վճարելի դատարանի նախադեպային իրավունք, մեղադրանք, մեղադրանք փոխելը, մեղադրանքը փոխելու ռեժիմներ:

Ключевые слова: прецеденты Кассационного суда, обвинение, изменение обвинения, режимы изменения обвинения.

Key words: case law of the Court of Cassation, indictment, change of the indictment, modes of changing the indictment.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝
ՈՐՊԵՍ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՎ ԲԱՅԱՌԻԿ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՀԻՄՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Արմեն Հովհաննիսյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի
ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական*

Պետական իշխանության մարմինների համակարգում իր ունեցած տեղով, դերով և դրան համապատասխան լիազորություններով պայմանավորված՝ ՀՀ սահմանադրական դատարանը օժտված է սահմանադրաիրավական առանձնահատուկ կարգավիճակով, ինչի մասին է վկայում նաև այն, որ ՀՀ Սահմանադրությունը բացառապես սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահել իրականացնելու սահմանադրական արդարադատություն և ապահովելու երկրի «Հիմնական օրենքի» գերակայությունն ու անմիջական գործողությունը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածների ուսումնասիրությունից հետևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր այդ լիազորությունների իրականացման արդյունքում ընդունում է որոշումներ (նաև եզրակացություններ), որոնք վերջնական, անվիճարկելի, անշրջելի են, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը ու «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին, իսկ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ՀՀ ամբողջ տարածքում:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայաց-

նում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ վարքագծի կանոններ¹:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն ունեն նորմատիվ բնույթ և հանդիսանում են իրավունքի աղբյուր: Ասվածը հաստատում են նաև բազմաթիվ հեղինակներ²:

Իրավունքի աղբյուր հանդիսացող սահմանադրական դատարանի որոշումների հենց նորմատիվ բնույթով է պայմանավորված դրանց արդյունքում այնպիսի իրավաբանական հետևանքների առա-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ՍԴՈ-943 որոշումը, կետ 8:

² Տե՛ս **Митюков М.А.**, Акты Конституционного Суда РФ и конституционных (уставных) судов субъектов Федерации, общая характеристика и статистический анализ // Журнал российского права, № 6, 2001, էջեր 16-17, **Бозров В.М.**, К вопросу о праве и его источниках в уголовном судопроизводстве, Федеральное законодательство об адвокатуре, практика применения и проблемы совершенствования, Екатеринбург, Изд. Урал. ун-та, 2004, էջ 54, **Баруев Н.В.**, Решения Конституционного Суда Российской Федерации в механизме уголовно-процессуального регулирования, Учеб. пособие, Ижевск, Детектив-информ, 2003, էջեր 67-68, Общая теория государства и права, Академический курс в 2 томах, под ред. проф. **Марченко М.П.**, Т. 2. Теория права, М., Изд. «Зерцало», 1998, էջեր 340-341, **Арутюнян Г.Г.**, Особенности функционирования Конституционных Судов в условиях общественной трансформации//Доклад на международной научной конференции в Душанбе 4 ноября 2010г., **Մանասյան Ս.**, Սահմանադրական դատարանի որոշումները որպես ՀՀ իրավունքի առանձնահատուկ աղբյուր//Դատական իշխանություն, թիվ 12/161/, դեկտեմբեր, 2012թ., էջ 8, **Морщакова Т.Г.**, Конституционная концепция судопроизводства//Российская юстиция. - М.: Юрид. лит., 2001, № 10, էջ 8 և այլը:

ջացումը, ինչպիսին է հակասահմանադրական ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված օրենքի դրույթի հիման վրա կայացված վերջնական ակտի վերանայումը, ինչը նոր հանգամանքի տեսքով իր ամրագրումն է ստացել ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Գործող օրենսգիրք) 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում (ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի¹ (այսուհետ՝ նաև Նախագիծ) 409-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ), այլև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասում:

Այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանը նշում է. «Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք և արդյունավետ համակարգի առկայությունն էլ ավելի է կարևորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապես՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետևանքների առկայության հանգամանքը»²:

Ի տարբերություն հակասահմանադրական ճանաչված օրենքի դրույթի հիման վրա կայացված ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման՝ պետք է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես նոր հանգամանք դիտարկելը բավականին նոր իրողություն է քրեադատավարական օրենսդրության պատմության մեջ և Գործող օրենսգրքում ամրագրվել է միայն 2011 թվականի վերջերում տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններից հետո:

Համեմատության համար նշենք, որ մի շարք երկրներում (օրի-

¹Տե՛ս http://parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf:

²Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թ.-ի հոկտեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-767 որոշումը, կետ 9:

նակ՝ Էստոնիա¹, Վրաստան², Ուկրաինա³, Սերբիա⁴ և այլն) սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները ուղղակիորեն նախատեսված չեն որպես նոր (կամ նոր երևան եկած)⁵ հանգամանքի հիմք վերջնական ակտերի վերանայման համար, սակայն նույնը չի կարելի ասել, օրինակ, Լատվիայի պարագայում, որի քրեական դատավարության օրենքի 655-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում 2012 թվականի դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններից հետո ամրագրվել է. «Նոր երևան եկած հանգամանք է համարվում սահմանադրական դատարանի եզրակացությունը այն իրավական նորմի կամ դրա մեկնաբանության՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու մասին, որի հիման վրա որոշումն ուժի մեջ է մտել»⁶:

Կարծում ենք՝ Գործող օրենսգրքում տեղի ունեցած վերը նշյալ փոփոխությունները ուղղակիորեն պայմանավորված են եղել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ՍԴՈ-943 որոշման պահանջներով: Այդ որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը փաստացի բացահայտեց «իրավական դիրքորոշում» եզրույթի բովանդակությունը և հաստատեց սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների՝ համապատասխան դեպքերում որպես նոր հանգամանք հանդիսանալու անհրաժեշտությունը:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը նշեց, որ վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս սահմանադրական դատարանը, հաճախ մեկնաբանելով վիճարկվող իրավանորմերը, տալիս է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը՝ որոշման եզրափակիչ մասում ճանաչելով

¹Տե՛ս file: ///C: /Users/User/Downloads/Estonia_CPC_am2013_en.pdf:

²Տե՛ս <http://codex.ge/3031>:

³Տե՛ս <http://zakon4.rada.gov.ua/laws/show/1001-05>:

⁴ Տե՛ս file: ///C: /Users/User/Downloads/Serbia_2011%20CPC%20English_%20(2).pdf:

⁵ Տարբեր երկրներում այս եզրույթներն ունեն տարբեր անվանումներ:

⁶ Տե՛ս <http://likumi.lv/doc.php?id=107820>:

այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը Սահմանադրությանը՝ իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում, կամ մասամբ՝ որոշակի իրավակարգավորման շրջանակում՝ դրանցով իսկ մատնանշելով:

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ:

Ասվածը հիմք հանդիսացավ ՀՀ սահմանադրական դատարանի համար, որը վերոգրյալի հիման վրա արձանագրեց, որ իրավական ակտերի սահմանադրականության որոշման վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար նաև սահմանադրաիրավական պահանջ¹:

Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ, մեկնաբանելով վիճարկվող նորմը, բացահայտում է այդ նորմի սահմանադրաիրավական իմաստը, բովանդակությունը, ուստի որպեսզի այդ նույն նորմը այլ իմաստով չմեկնաբանվի և կիրառվի, սահմանադրական

¹Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ՍԴԴ-943 որոշումը, կետեր 9,11: Նշենք, որ քննարկվող հիմնախնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը իր մի շարք զիտագործնական զեկույցներում և հրապարակումներում (տե՛ս, օրինակ, «Սահմանադրական որոշումների որոշումների կատարման երաշխիքները» (2012թ.) կամ «Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես նախադեպային իրավունքի աղբյուր» (2011թ.) զեկույցները // <http://concourt.am>):

դատարանի այդ որոշումը դառնում է պարտադիր իրավակիրառողների համար, իսկ սա ենթադրում է, որ եթե այն արդեն իսկ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ապա այդ որոշումները պետք է վերանայվեն: Եթե համապատասխան դեպքերում սահմանադրական դատարանի որոշումները չդիտարկվեն որպես նոր հանգամանք, ապա, ինչպես իրավացիորեն նշում է նաև ՌԴ սահմանադրական դատարանը, հակառակ պարագայում կստացվի, որ ընդհանուր իրավասության դատարանները կարող են մեկնաբանել ակտը՝ դրան տալով այլ իմաստ, քան դա արել էր սահմանադրական դատարանը՝ արդյունքում փոխարինելով սահմանադրական դատարանին, ինչը հնարավոր չէ և ուղակիորեն հակասում է Մահմանադրությանը, ըստ որի՝ սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինը բացառապես սահմանադրական դատարանն է¹:

Այստեղ ուշագրավ է նաև այն փաստը, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի, որի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ նաև Եվրոպական դատարան) դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների՝ դատարանների համար պարտադիր լինելու մասին, Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասում դրանց շարքին արդեն ավելացել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը²:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա վերջնական ակտերի վերանայման անհրաժեշտության

¹ Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2001 թվականի հունվարի 25-ի թիվ 1-Պ որոշում, կետ 7, ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի փետրվարի 27-ի թիվ 1-Պ որոշում, կետ 6, **Մարաբայան Ս.Ռ.**, Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման որոշ հիմնախնդիրներ (Օրենսդրական առկա կարգավորումների և զարգացման միտումների մասին իրավական վերլուծությունը)//Դատական իշխանություն, թիվ 4/129/, ապրիլ, 2010թ., էջեր 26-27:

² Ինչևէ, ամեն դեպքում նշենք, որ հակասություններից խուսափելու համար Նախագծին զուգահեռ հարկ է համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում:

մասին է վկայում նաև վիճակագրությունը, ըստ որի՝ միայն 2014 թվականի ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 2 ակտի՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 53 հոդվածների կամ դրանց առանձին դրույթների (ներառյալ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 5 դրույթները) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում վիճարկվող ակտերի 7 հոդվածներ և 14 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրախրապական կոնկրետ բովանդակությամբ (ՄԴՈ-1136, 1137, 1139, 1142, 1154, 1176)¹:

Հարկ է նկատել նաև, որ ՀՀ սահմանադրական դատարանի համար կայուն պրակտիկա է դարձել կոնկրետ գործով կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայման ենթակա լինելու մասին դրույթը ընդգրկել իր որոշման մեջ²:

Ուսումնասիրելով դատական պրակտիկան՝ կարող ենք վկայել, որ այն դատական ակտերը, որոնցում կիրառվել են սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող նորմեր, որպես կանոն, վերանայվում են դատարանների կողմից:

Այսպես, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 18-ի որոշումներից հետևում է, որ քննարկվող հիմքով և՛ վերանայման վարույթ է հարուցվել, և՛ բավարարվել է բողոքը³:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ

¹ Տե՛ս http://concourt.am/armenian/report/statistic/cc_decision_stat2014.pdf:

² Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՄԴՈ-1234 որոշումը (այլ գործերով՝ ՄԴՈ-1010, 1038, 1063, 1115, 1120 որոշումները):

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 18-ի քրեական գործերով թիվ ԵԿԴ/0025/11/11, թիվ ԵԿԴ/0033/15/11 և թիվ ԼԴ/0267/01/11 որոշումները:

իրավիճակը նույնն է նաև հակասահմանադրական ճանաչված նորմի հիման վրա կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքի հիմքով վերանայելիս¹: Ընդ որում, այն դեպքերում, երբ համապատասխան հիմքով վերանայման վարույթ է հարուցվում և բողոքն ըստ էության քննության ենթարկվելուց հետո արդյունքում մերժվում է, ապա դատարանները հստակ պատճառաբանում են, թե ինչու Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմը տվյալ դեպքում չի հանդիսանում նոր հանգամանք համապատասխան դատական ակտի վերանայման համար²:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ, 12-րդ և 13-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

-երբ սահմանադրական դատարանը որոշում է այդ որոշման ուժը տարածել նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ³,

-երբ հակասահմանադրական է ճանաչվում քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը, որի դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից (այդ դրույթի կիրառման վե-

¹Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0050/15/08, 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԵԱՆԴ/0007/11/09 կամ թիվ ԵԿԴ/0090/01/09 քրեական գործերով որոշումները:

²Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի քրեական գործերով թիվ ԵԿԴ/0008/11/09 և թիվ ԵԿԴ/0007/11/09 որոշումները:

³Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649, 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-723 և 2008 թվականի հունվարի 29-ի թիվ ՍԴՈ-731 որոշումները:

րաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման):

Վերջինի դեպքում հասկանալի է դառնում, որ օրենսդիրը, տարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական և քրեաիրավական հարաբերությունների միջև, փաստացի սահմանել է, որ երբ հակասահմանադրական է ճանաչվում քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթը, ապա դրա հիման վրա կայացված բոլոր դատական և վարչական ակտերը անխտիր ենթակա են վերանայման նոր հանգամանքի հիմքով¹:

Այսպիսով, վերոգրյալը վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումներին հետադարձ ուժ կարող է տրվել այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է որոշակի կենսական շահերի պաշտպանության նպատակով, և երբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, քննության առնելով այդ կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, հիմնավորված և պատճառաբանված որոշում է կայացնում իր որոշմանը հետադարձ ուժ տալու մասին²:

Իհարկե, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կանոնից բացառությունը պետք է վերաբերի նաև կոնկրետ դիմողին, հակառակ պարագայում սահմանադրական արդարադատությունը՝ որպես մասնավոր շահերի իրավական պաշտպանության միջոց, ինքնաբերաբար կարծեզրկվի:

Դրա հետ կապված՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Վերացական և կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններով է պայմանավորված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օ-

¹Այդ մասին տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՍԴՈ-833 որոշումը, կետ 10:

²Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի թիվ ՍԴՈ-751 որոշումը, կետ 4:

թենքի 68 հոդվածի 10-րդ և 69 հոդվածի 12-րդ մասերի միջև եղած «անհամապատասխանությունը»: Մասնավորապես, Օրենքի 68 հոդվածի 10-րդ մասը սահմանում է ընդհանուր կանոն, որից բացառություն է անում նույն հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով նախատեսված դեպքերում միայն՝ այդ ցանկում չներառելով օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը: Մինչդեռ օրենքի 69 հոդվածի նշված մասն ամրագրում է, որ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման: Այսինքն՝ այս նորմը ևս բացառություն է օրենքի 68 հոդվածի 10-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից, բնորոշ է կոնկրետ վերահսկողությանը, որի մասին, բնականաբար, հիշատակում չէր կարող լինել 68 հոդվածում, որն էլ իր հերթին տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություն է տալիս¹:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին տրվում է հետադարձ ուժ ոչ միայն կոնկրետ դիմողի համար, այլև ընդհանրապես դրանց տրվում է վեցամսյա նախընթաց հետադարձ ուժ, ինչը և վկայում է Գործող օրենսգրքի 426.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Այստեղ հետաքրքիր է նաև այն հարցը, թե երբ դատարանները, օգտվելով իրենց սահմանադրական լիազորությունից (ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետ), կասեցնում են գործի վարույթը և դիմում սահմանադրական դատարան իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցով², իսկ ՄԴ-ն այդ նորմը հակասահ-

¹Տե՛ս նույն տեղը, կետ 7:

²Լեւնք, որ համապատասխան դեպքերում գործի վարույթը կասեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորված են Գործող օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերում (Նախագծի 285-րդ հոդված): Ընդ որում, 2-րդ մասում սահմանված այն դրույթը, որ կարող են ստուգվել ոչ միայն նորմատիվ ակտերի, այլ նաև այլ իրավական ակտերի (օրինակ՝ անհատական ակտ) սահմանադրականությունը, հակասում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետին:

մանադրական է ճանաչում կամ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչում միայն իր իրավական դիրքորոշումների շրջանակում¹, արդյոք այդ դեպքում ՄԴ որոշումը հանդիսանում է նոր հանգամանք այն անձանց համար, ում նկատմամբ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ, և նրանք դեռևս չեն կորցրել ՄԴ դիմելու իրենց իրավունքը, այսինքն՝ չէր անցել համապատասխան վեցամսյա ժամկետը:

Կարծում ենք, որ հարցին պետք է դրական պատասխան տալ, քանի որ թե՛ Գործող օրենսգրքով, թե՛ Նախագծով սահմանված կարգավորումների շրջանակներում (Գործող օրենսգրքի 426.2-րդ և Նախագծի 408-րդ հոդվածների 1-ին մասերի 2-րդ կետեր) համապատասխան անձանց համար այդ հնարավորությունն ապահովված է, և նրանք կարող են օգտվել դրանից:

Պետք է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի վերլուծությունից հետևում է նաև, որ ՀՀ սահմանադրական դատարանը կարող է տարածամկետել հակասահմանադրական ճանաչված նորմատիվ իրավական ակտի կամ դրա դրույթի իրավաբանական ուժի կորցնելը (այդ դեպքում մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելը այն համարվում է Սահմանադրությանը համապատասխանող)², ինչը, չնայած նշյալ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված չլինելուն, փաստացի նույնպես հանդիսանում է բացառություն այդ մասից: Դրան անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ նշելով. «Այս դրույթի՝ թեկուզ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ եթե սահ-

¹Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-931 որոշումը:

²Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՄԴՈ-765, 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՄԴՈ-930, 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ՄԴՈ-943, 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՄԴՈ-984 որոշումները:

մանվել է ավելի ուշ ժամկետ, ապա սահմանադրական դատարանի որոշման ընդունման եւ հրապարակման պահից Սահմանադրությամբ չհամապատասխանող նորմատիվ ակտը (դրույթը) իրավական ուժը չի կորցնում¹»:

Այսինքն՝ դրանից հետևում է, որ այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը տարաժամկետում է օրենքի դրույթի իրավաբանական ուժը կորցնելը, ապա այդ դրույթը ուժը կորցնելուց հետո օրենքով սահմանված եռամսյա ժամկետում (օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 3-րդ մաս) նոր հանգամանքներով բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները կարող են բողոք ներկայացնել ուժը կորցրած ճանաչված նորմի հիման վրա իրենց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վերանայման համար:

Սակայն, ինչպես վկայում է դատական պրակտիկան, հակասահմանադրական ճանաչված օրենքի դրույթի տարաժամկետման դեպքում նոր հանգամանքներով բողոք ներկայացնելու ժամկետային կանոնը կարող է մեկնաբանվել նաև այնպես, ըստ որի՝ «նոր հանգամանքի ի հայտ գալը» վերաբերում է ոչ թե հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված օրենքի դրույթին, այլ այդ դրույթը հակասահմանադրական ճանաչելու մասին որոշմանը², ինչի արդյունքում ստացվում է, որ երբ Սահմանադրությանն անհամապատասխանող ճանաչված և տարաժամկետված օրենքի դրույթը իրավաբանական ուժը կորցնում է այն հակասահմանադրական ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելուց հետո երեք ամիս անց, անձը

¹Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի մայիսի 11-ի թիվ ՄԴՈ-701 որոշումը, կետ 6:

²Այդ մասին տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՄԴՈ-984 որոշումը, կետ 6 (չնայած այնտեղ խոսքը գնում է քաղաքացիական գործերով ձևավորված պրակտիկայի մասին, սակայն ամեն դեպքում դրա մատնանշումը, մեր կարծիքով, կարևոր է: Բանն այն է, որ համապատասխան կարգավորումները թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության, թե՛ ՀՀ քրեական դատավարական օրենսգրքերում ամբողջությամբ նույնն են):

չի կարող նոր հանգամանքներով բողոք ներկայացնել, քանի որ արդեն իսկ անցած է լինում համապատասխան բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը:

Այս, մեր կարծիքով, ոչ հիմնավոր մեկնաբանությանը անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ դատական պրակտիկան զարգացել է իր իրավական դիրքորոշումներին հակառակ տրամաբանությամբ¹:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով», իսկ այնուհետև ավելացրել. «Հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետոված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած ... ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը՝ բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում»²:

Ասվածը վկայում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը անթույլատրելի է համարում համապատասխան դրույթների նման մեկնաբանությունը, ինչը, մեր կարծիքով, արդարացի է, քանզի հակառակ պարագայում այն փաստացի հանգեցնում է նոր հանգամանքներով բացառիկ վերանայման ինստիտուտի արժեզրկմանը և մարդու խախտված իրավունքների վերականգնումը երաշխավորող հիմնարար դրույթների խեղաթյուրմանը:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՍԴՈ-984 որոշումը, կետ 6:

² Տե՛ս նույն տեղը, կետ 6, տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի մայիսի 11-ի թիվ ՍԴՈ-701 որոշումը, կետ 6:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները՝

1) ոչ միայն հակասահմանադրական ճանաչված, այլև սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված օրենքի դրույթի հիման վրա կայացված վերջնական ակտերը ենթակա են վերանայման նոր հանգամանքի հիմքով,

2) մինչ վարույթի ավարտը դատարանների կողմից ներկայացված դիմումի հիման վրա նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության ստուգման արդյունքում սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումները կարող են հանդիսանալ նոր հանգամանք այն անձանց համար, ում նկատմամբ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտ, և նրանք դեռևս չեն կորցրել սահմանադրական դատարանի դիմելու իրենց իրավունքը,

3) սահմանադրական դատարանի կողմից օրենքի դրույթի՝ իրավաբանական ուժը կորցնելը տարածամկետելու դեպքում այդ դրույթը ուժը կորցնելու պահից նոր հանգամանքներով բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները օրենքով սահմանված կարգով կարող են բողոք ներկայացնել ուժը կորցրած ճանաչված նորմի հիման վրա կայացված վերջնական ակտի վերանայման համար:

ОБЩИЙ ОБЗОР РЕШЕНИЙ КОНСТИТУЦИОННОГО СУДА КАК ОСНОВАНИЯ ДЛЯ ИСКЛЮЧИТЕЛЬНОГО ПЕРЕСМОТРА ПО НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

Армен Оганесян

*Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук,
Советник Председателя Кассационного Суда РА*

Настоящая статья посвящена обсуждению проблем, связанных с изучением решений Конституционного Суда РА как основания для исключительного пересмотра в связи с новыми обстоятельствами. В частности, проводится анализ правовых норм указывающих на необходимость пересмотра в связи с новыми обстоятельствами в случае, если норма была признана неконституционной Конституционным Судом или была применена в толковании отличном от толкования Конституционного Суда; рассматриваются соответствующие правовые позиции Конституционного Суда; изучены механизмы, предусмотренные в проекте Уголовного кодекса, международной практике и отечественной судебной практике. Кроме того, автор обсуждает возможность предоставления обратной силы решениям Конституционного Суда, отсрочки Конституционным Судом утраты юридической силы неконституционного акта или его отдельного положения.

В результате автор приходит к выводу о том, что

- 1) не только неконституционность закона является основанием для пересмотра на основании новых обстоятельств, но и его применение в толковании, противоречащем толкованию Конституционного Суда;
- 2) если до конца разбирательства суд обращается к Конституционному Суду с запросом о проверке конституционности подлежащего применению акта, принятые на основании такого запроса акты могут являться новым обстоятельством для лиц, в отношении которых вступил в силу обвинительный приговор, но которые еще не утратили права на обращение в Конституционный суд;
- 3) в случае если Конституционный Суд признает норму недействительной, но отсрочивает потерю юридической силы, лица, обладающие правом на обжалование, имеют право с момента утраты юридической силы данной нормой, обратиться с требованием о пересмотре судебного акта, принятого на ее основании, в связи с новыми обстоятельствами.

GENERAL REVIEW OF CONSTITUTIONAL COURT DECISIONS AS THE BASIS FOR EXCEPTIONAL REVIEW DUE TO NEW CIRCUMSTANCES IN THE CRIMINAL PROCEDURE LAW

Armen Hovhannisyan

Assistant of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics,

Candidate of Legal Sciences

Adviser to the Chairman of the RA Cassation Court

The present article is dedicated to the discussion of problems related to study of the RA Constitutional Court decisions as the basis for exceptional review due to new circumstances. Particularly, analysis of legal norms hinting at the need for review due to new circumstances if a norm has been declared unconstitutional by the Constitutional Court or has been applied and interpreted differently then the Constitutional Court's interpretation, the relevant legal position of the Constitutional Court, the mechanism foreseen in the draft criminal code, international practice and domestic court practice are presented. In addition, the author discusses the possibility of giving retroactive effect to the decisions of the Constitutional Court, postponing by the Constitutional Court of the loss of force of unconstitutional act or its provision.

As a result, the author comes to the conclusion that

1) not only the unconstitutionality of the law forming bases for conviction, but also its interpretation contrary to the Constitutional Court's interpretation is a ground for review due to new circumstances,

2) if before the end of proceedings a court refers to the Constitutional Court to decide on the constitutionality of a normative act, decisions, made as a consequence of such referral, may become new circumstance for those persons, who had been convicted by a court decision in force, but had not lost the right to refer the issue to the Constitutional Court,

3) in case the Constitutional Court finds the norm invalid, but postpones the loss of legal force, persons, possessing right to appeal may from the moment the norm loses legal force apply for review of decisions made on the bases of that norm due to new circumstances.

Բաձայի բառեր – ՀՀ սահմանադրական դատարանի որոշում, նոր հանգամանք, վերջնական ակտ, ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշում, դատական վերանայում, ՀՀ քրեական դատավարություն:

Ключевые слова: решение Конституционного Суда РА, новое обстоятельство, окончательный акт, правовое положение Конституционного Суда РА, судебный пересмотр, уголовный процесс РА.

Keywords: Decision of the Constitutional court of the RA, new circumstance, final act, legal position of the Constitutional court of RA, judicial review, criminal procedure of the RA.

**ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԻՄ**

Սերգեյ Մարաբյան

***ԵՊՀ քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի
ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության
առաջին աստյանի դատարանի դատավոր***

Հայաստանի անկախացումից ի վեր իրականացվող դատաիրավական բարեփոխումների կարևորագույն նվաճումներից էր քրեական դատավարությունում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի ներդրումը: Այն, իր զարգացման աստիճանով պայմանավորված, դառնում է քրեադատավարական իրավահարաբերությունների ոլորտ ներգրավված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և ապահովման գործուն կառուցակարգ: Հաշվի առնելով մեր պետության տոտալիտար անցյալը, որում մարդկանց վարքագիծը սահմանափակված էր արգելքներով, մարդու պարտականությունները առավելություն ունեին իրավունքների նկատմամբ, հանրային շահը՝ մասնավորի¹, դատական վերահսկողության ինստիտուտի ներդրումը չի կարող չողջունվել, հատկապես որ այն վերաբերում է քրեական դատավարության այնպիսի փուլի, ինչպիսին նախնական քննությունն է: Փուլ, որը գաղտնի է, որում բացակայում են մրցակցությունը և որում

¹ Մարդու, այսպես կոչված, բնական իրավունքները մերժվում էին, քանի որ դրանք անձին դարձնում էին սոցիալական հարաբերությունների ազատ սուբյեկտ, իսկ դա հայեցակարգային հակասության մեջ էր գտնվում տոտալիտար ռեժիմի էության հետ, որը հիմնված էր դասակարգային շահը մասնավորի նկատմամբ առավելություն ունենալու սկզբունքի վրա: Այս մասին մանրամասն տե՛ս Демидов И.Ф. Проблема прав человека в российском уголовном процессе. М., 1995, с. 7, Социалистическое правовое государств: концепция и пути реализации. М., 1990, էջ 77-78:

անձի իրավունքները և օրինական շահերը հաճախ են ենթարկվում անհամաչափ, նույնիսկ անհիմն սահմանափակումների: Հիմք ընդունելով նաև այն իրողությունը, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ ՀՀ-ն «ժողովրդավարական և իրավական» պետություն է, որտեղ անձի իրավունքները և ազատությունները հոչակված են որպես բարձրագույն արժեքներ և առավելություն ունեն այլ արժեքների նկատմամբ, կարող ենք արձանագրել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը հանդես է գալիս ոչ միայն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործուն երաշխիք, այլև դրա գործնական կիրառումից հետևություն է արվում պետության իրական ժողովրդավարական և իրավական լինելու մասին:

Իրավական և ժողովրդավարական հոչակված պետություններում քրեական դատավարության նպատակներին պետք է հասնել անձի իրավունքների և ազատությունների հնարավորինս քիչ սահմանափակման ճանապարհով, ոչ թե ցանկացած գնով, իսկ սահմանափակումներն էլ պետք է լինեն սոցիալապես անհրաժեշտ և իրավաբանորեն հիմնավորված:

Այս գաղափարախոսությունը կարմիր թելի նման անցնում է ողջ Սահմանադրության միջով, որտեղ խոսքը անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման մասին է:

Ու թեև ակնհայտ է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մեծ տեմպերով իրականացվող դատաիրավական բարեփոխումները միտված են հենց մարդու իրավունքներին ու ազատություններին այլ արժեքների նկատմամբ գերապատվություն տալուն և այդ իրավունքների պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքների ընդլայնմանն ու ամրապնդմանը, այդուհանդերձ մեր իրականությունում դեռևս վաղ է խոսել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանվածության մասին, քանի որ իրավակիրառ պրակտիկայի նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անգամ գործող օրենսդրությամբ ամրագրված այդ երաշխիքները հաճախ կրում են ձևական, հոչակագրային բնույթ:

Նույնը վերաբերում է նաև անձի բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման երաշխիքներին քրեական դատավարությունում:

ՀՀ 1998 թվականին ընդունված և 1999 թվականի հունվարի 12-ից ուժի մեջ մտած քրեական դատավարության օրենսգրքով՝ բնակարանում խուզարկություն կատարելու համար սահմանվեց նախնական դատական վերահսկողություն, մինչ այդ՝ բնակարանի խուզարկություն կատարելու համար օրենքով սահմանված էր դատախազական հսկողության կառուցակարգը:

Հրաժարվելով դատախազական հսկողությունից և սահմանելով նախնական դատական վերահսկողություն բնակարանի խուզարկության կատարման նկատմամբ՝ թույլտվություն տալու ձևով, նշվում էր, որ դատարանն, ի տարբերություն դատախազի, ունի այն առավելությունը, որ պատասխանատու չէ հանցագործությունների բացահայտման և քննչական մարմինների աշխատանքի որակի համար, դատարանն անկախ է որոշում կայացնելիս¹ և հետապնդում է այլ նպատակներ, նախնական դատական վերահսկողությունը գործում է որպես պաշտպանական բնույթի միջոց, որն ապահովում է անձի իրավունքների սահմանափակումների օրինականությունը և հիմնավորվածությունը², հանդես է գալիս որպես քննչական մարմինների կամայականության դեմ արգելք³ և այլն:

Արդյո՞ք այդպես է, արդյո՞ք դատական վերահսկողության ինս-

¹ Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան 2001, էջ 280-298, ՀՀ քրեական դատավարություն, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2010, էջ 242, Муратова Н.Г. Система судебного контроля в уголовном судопроизводстве: вопросы теории, законодательного регулирования и практики, Казань, 2004թ., էջ 146, Устимов, М. А. Судебный контроль на стадии предварительного расследования: Автореф. Кандидатской диссертации. Саранск, 1999:

² Տե՛ս *Володина Л.М.* Проблемы уголовного процесса: закон, теория, практика. М., 2006, էջ 184:

³ Տե՛ս *Семенцов В.А.* Следственные действия в досудебном производстве (общие положения теории и практики). Екатеринбург, 2006, էջ 215-216:

տիտուտի հիմքում դրված հայեցակարգը կամ գաղափարախոսությունը դատական պրակտիկայում իրականացվում ու պահպանվում է, արդյո՞ք բնակարանի խուզարկության նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելով՝ անձի իրավունքներն ու օրինական շահերը դարձել են առավել պաշտպանված, քան դատախազական հսկողության պայմաններում էր:

Կարծում ենք՝ այս հարցերին պետք է միանշանակ բացասական պատասխանել:

ՀՀ տարբեր իրավական ակտերի ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ բնակարանում խուզարկություն կատարելու հիմքերի, պայմանների, կարգի և անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության այլ երաշխիքների տեսանկյունից ՀՀ օրենսդրությունն ընդահանուր առմամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին, ինչը, սակայն չի կարելի ասել դատական պրակտիկայի մասին:

Բնակարանի խուզարկության հետ կապված դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ հաճախ դատական վերահսկողությունը կրում է ձևական բնույթ, որ ընդամենը տեղի է ունեցել տեխնիկական բնույթի փոփոխություն. բնակարանի խուզարկության սանկցիավորումը վերցվել է դատախազից և տրվել է դատարանին, իսկ այն գաղափարախոսությունը, որը դրված է դատական վերահսկողության ինստիտուտի ներդրման հիմքում, գործնականում չի ապահովվում և հաճախակի են հանդիպում բնակարանի խուզարկության անհիմն թույլտվություններ, անձի իրավունքների անհիմն սահմանափակումներ և այլն:

Նախևառաջ, դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրություններից տպավորություն է ստեղծվում, որ դատարանը հաճախ գործում է որպես «վարչական մարմին», քանի որ առանց պատշաճ իրավական ընթացակարգի (նիստ հրավիրելու, միջնորդություն ներկայացրած անձի բացատրությունները լսելու, միջնորդությանը կից նյութերը հետազոտելու, ըստ անհրաժեշտության լրացուցիչ տվյալներ պահանջելու և այլն, ինչպես պահանջում է Օրենսգրքի 283-րդ հոդվածը) բավարարում է նախաքննական մարմնի միջնոր-

դությունը և որոշում է կայացնում բնակարանի խուզարկության թույլտվություն տալու մասին, որը բնութագրական էր գերատեսչական և/կամ դատախազական հսկողության գործունեության մեթոդներին և միջոցներին՝ բարձրացված հարցին առանց որևէ ընթացակարգի լուծում տալուն:

Բացի այդ, նախաքննական մարմինների միջնորդությունները քննարկելիս դատարանները հաճախ սահմանափակվում են այդ միջնորդությունների, այսպես ասած, ձևական չափանիշներով ստուգմամբ, առանց խորամուխ լինելու օրինական և հիմնավոր որոշում կայացնելու համար նշանակություն ունեցող հանգամանքների «ապացուցվածության» աստիճանի մեջ, որոնք վերաբերում են խուզարկության թույլտվություն տալու հիմքերին և այլ պայմաններին: Այս հարցերին դեռ կանոնադաշտնանք, այստեղ նշենք, որ մեզ համար առավել խնդրահարույց է այն պրակտիկան, երբ որևէ դեպքով հարուցված քրեական գործը (որպես կանոն չբացահայտված) քողարկված ձևով օգտագործվում է օպերատիվ հետախուզական ճանապարհով ստացված մեկ այլ հանցագործության վերաբերյալ տեղեկատվություն ստուգելու միջոց և դատարանի որոշման հիման վրա կատարվում է խուզարկություն որևէ անձի բնակարանում, որն առերևույթ առնչություն չունի կոնկրետ դեպքով հարուցված քրեական գործի հետ: Նման մոտեցումն անընդունելի է և հակասում է ոչ միայն բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքին, այլև գործող քրեական դատավարության օրենսդրության իրավապաշտպան էությանը¹:

¹ Այս առումով պետք է համաձայնվել Արագածոտնի մարզի դատարանի կողմից թիվ ԱՐԱԴ1/0023/01/14 դատավճռում արտահայտած այն դիրքորոշումներին, որ «...մի հանցագործության դեպքի կապակցությամբ իրականացվող քննության շրջանակներում, այլ անձի կողմից այլ հանցագործության դեպք կամ հանգամանքներ հաստատելու մասին ապացուցողական տվյալներ ձեռք բերելիս, դրանք կարող են օգտագործվել որպես ապացույց, եթե համապատասխան իրավասություն ունեցող սուբյեկտները գործել են բարեխիղճ: Բնակարանի անձեռնմխելիության Սահմանադրական և Կոնվենցիոն երաշխիքները կլինեն երևակայական (ոչ իրական), պատրանքալիս, եթե համապատասխան մարմիններին հնարավորություն տրվի իրակա-

Դատական վերահսկողության անարդյունավետության և անձի իրավունքների անհիմն սահմանափակումների մասին են վկայում նաև նախաքննական մարմինների միջնորդությունների գրեթե 100 %-ի հասնող բավարարումները¹, որից կարելի է հետևություն անել, որ դատական վերահսկողությունը փաստացի հանդիսանում է «թույ-

նությանը չհամապատասխանող տվյալների հիման վրա դատարանից ստանալ բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն և օրենքի շրջանցմամբ և խախտումներով բացահայտել նոր հանցագործության դեպք: Դատարանը գտնում է, որ նման պայմաններում Օրենսգրքի 27-րդ, 57-րդ, 180-181-րդ հոդվածների ուժով հետաքննության մարմինն իրավասու էր հարուցել քրեական գործ, ձեռնարկել համապատասխան քննչական և դատավարական գործողություններ թմրամիջոցների ապօրինի շրջանառության ենթադրյալ հանցագործության դեպքը և հանգամանքները պարզելու, այն կատարող անձանց բացահայտելու ուղղությամբ: Օրենսդրական նման իրավակարգավորումների պայմաններում Ս.Ղարիբյանի բնակարանում կատարված խուզարկությունը չի կարող գնահատվել որպես **ազգային օրենքի վրա հիմնված՝ ինչպես սահմանում է Եվրոպական դատարանը:** Վերոգրյալի հիման վրա դատարանը գտնում է, որ ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքով հարուցված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող քրեական գործով բնակարանի խուզարկություն կատարելը, ընդ որում, ի սկզբանե իմանալով, որ ձեռք է բերվելու այնպիսի ապացույց, որը վկայելու է մեկ այլ ոչ մեծ ծանրության հանցագործության մասին, **անհրաժեշտ և բավարար չէ ժողովրդավարական հասարակությունում բնակարանի անձեռնմխելիության իրավունքի միջամտության և հետապնդվող նպատակի համաչափության տեսանկյունից:** Հետևաբար, դատարանն արձանագրում է, որ Ս. Ղարիբյանի բնակարանի խուզարկությունը եղել է անօրինական ինչպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության, այնպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից, որպիսի պայմաններում բնակարանի խուզարկության արձանագրությունը չի կարող համարվել թույլատրելի և պատշաճ ապացույց Ս. Ղարիբյանի մեղադրանքը գնահատելու համար»:

¹ Դատական իշխանության պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունից երևում է, որ 2010-2015 թվականների ընթացքում ընդհանուր առմամբ ՀՀ դատարաններին ներկայացվել է խուզարկություն կատարելու մասին, համապատասխանաբար՝ 4096, 4111, 3543, 3956, 4504, 4134 միջնորդություններ, որոնցից բավարարվել են, համապատասխանաբար՝ 4053-ը, 4028-ը, 3485-ը, 3862-ը, 4373-ը և 3927, այսինքն՝ գրեթե 97%-ը, որը հիմնականում կայուն ցուցանիշ է՝ չհաշված որոշակի փոքր տարբերությունները (տե՛ս www.court.am):

լատվության» ընթացակարգ, այլ ոչ թե դատական վարույթ, որում քննարկվում է նախաքննական մարմնի միջնորդության հիմնավորվածությունն ու օրինականությունը:

Դատական պրակտիկայի հիման վրա բնակարանի խուզարկության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի անարդյունավետության օգտին խոսող փաստարկներ շատ կարելի է ներկայացնել, որոնց մի մասին կանդիդատանսք ստորև, այստեղ ուղղակի նշենք, որ մեր խորին համոզմամբ՝ իրերի այսպիսի վիճակն է, որ բացի անձի իրավունքների և ազատությունների «խախտումների», «անհիմն սահմանափակումների», նաև հասարակական գիտակցությունում ձևավորում է համոզմունք այն մասին, որ դատարանն անկախ չէ, ունի մեղադրական թեքում՝ նույն կողմում է քննիչի հետ և այլն:

Պետք է նաև փաստել, որ հենց իրերի այդպիսի վիճակն է առանձին հեղինակների հիմք տալիս նշելու, որ բնակարանի խուզարկության նկատմամբ նախնական դատական վերահսկողությունն անհրաժեշտ է փոխարինել հետագա դատական վերահսկողության մեխանիզմներով¹, կամ վերադառնալ նախկին կարգին և դատախազական հսկողություն սահմանել առանձին քննչական գործողությունների, այդ թվում բնակարանում խուզարկություն կատարելու նկատմամբ²:

Չանդրադառնալով հիշյալ տեսակետների վերլուծությանը, քանի որ ՀՀ Սահմանադրությունը նման առաջարկությունների համար որևէ հիմք չի տալիս՝ նրանում ուղղակիորեն սահմանված է նախնա-

¹ St' u *Быков В.М.* Актуальные проблемы уголовного судопроизводства. Казань, 2008, էջ 208, Ղազիկյան Գ. Ս., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան 2001, էջ 280-298:

² St' u *Кальницкий В.В.* «Санкционирование» и проверка судом законности следственных действий в ходе досудебного производства не эффективны // Уголовное право. 2004. № 1, էջ 73, *Свиридов М.К.* Соотношение функций разрешения уголовных дел исудебного контроля в деятельности суда // Правовые проблемы укрепления российской государственности: сборник статей / под ред. Ю.К. Якимовича. Вып. 7, Томск, 2001, էջ 5-6:

կան դատական վերահսկողությունը բնակարանում խուզարկություն կատարելու նկատմամբ, այդուհանդերձ՝ չենք կարող չհամաձայնվել այդ մոտեցումների հիմնավորման համար բերվող փաստարկներին, հատկապես երբ ուսումնասիրում ենք դատական պրակտիկայի նյութերը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ բնակարանի խուզարկության սանկցիավորումը դատական վերահսկողության տիրույթ տեղափոխելով՝ իրերի վիճակը չի փոխվել, մարդու իրավունքները դրանից առավել պաշտպանված չեն դարձել, իսկ այդ ինստիտուտի գործնական կիրառությունը առանձին դեպքերում վտանգել է նաև դատական իշխանության հեղինակությունը, կասկածի տակ դրել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը:

Մեր խորին համոզմամբ այդ նեգատիվ երևույթի պատճառներն առավելապես սուբյեկտիվ են, քան օբյեկտիվ. դրանք հետևանք են նախևառաջ ձևավորված ավանդույթների և ինքնատիպ մտածելակերպի, որից, ցավոք, դեռևս չենք ձերբազատվել:

Ինչևէ, նշենք, որ սույն հոդվածի շրջանակներում նպատակ ունենք քննարկելու արդի փուլում առավել հրատապ և արդիական թվացող որոշ հարցեր բնակարանում խուզարկություն կատարելիս անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

1) Դրանցից առաջինը վերաբերում է նրան, թե բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին օրինական և հիմնավորված որոշում կայացնելու համար դատարանին ինչպիսի՞ փաստական հիմքեր են անհրաժեշտ:

Ակնհայտ է, որ խուզարկության կատարման, հետևաբար նաև բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման օրինականության և հիմնավորվածության հարցը նախևառաջ բնակարանում խուզարկություն կատարելու որոշում կայացնելու համար հիմք հանդիսացող փաստական տվյալների առկայության կամ բացակայության, դրանց բավարար կամ անբավարար լինելու և դրանով պայմանավորված անձի իրավունքների և օ-

րինական շահերի խախտումները կանխելու կամ բացառելու հարցն է: Հարց, որի ճիշտ որոշումն է այն կարևոր չափանիշը, որից հետևություն է արվում բնակարանի խուզարկության սանկցիավորումը դատախազական հսկողության տիրույթից դատական վերահսկողության տիրույթ տեղափոխելու իրավաչափության և արդարացիության մասին:

Բանն այն է, որ օրենքը վարույթն իրականացնող մարմնին չի պարտավորեցնում յուրաքանչյուր քրեական գործով իրականացնել բնակարանի խուզարկություն, այսինքն՝ օրենքով չկա սահմանված որևէ «իրավիճակ», որի դեպքում պարտադիր է համարվում բնակարանում խուզարկություն կատարելը: Օրենքը բնակարանում խուզարկություն կատարելը թողնում է կոնկրետ վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը՝ միաժամանակ սահմանելով, որ այդ հայեցողության հիմքում դրված **խնայողությունը** (գիտելիքը) կրում է հավանական (ենթադրական) կամ կանխատեսական բնույթ: Այսպես, Օրենսգրքի 225-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ բնակարանում խուզարկություն կատարելու համար անհրաժեշտ են **«բավարար հիմքեր ենթադրելու»**, որ դրա կատարման արդյունքում կհայտնաբերվեն քրեական գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալներ (իրեր, առարկաներ, անձինք, դիակ և այլն), այսինքն՝ առկա է հավանականություն այն մասին, որ դրա կատարման արդյունքում հնարավոր է հասնել բնակարանում խուզարկություն կատարելու նպատակներին: Մակայն այդ հետևության հավանական, կանխատեսական բնույթը չունի որևէ ընդհանրություն **կամայական, սուբյեկտիվ հայեցողության հետ, որը հաճախ տեղ է գտնում դատական պրակտիկայում:**

Հավանականությունը (ենթադրությունը) արտացոլում է իրական կյանքում գոյություն ունեցող կոնկրետ երևույթների օրինաչափությունները, պատճառահետևանքային և այլ կապերը: Դրա համար հավանականությունը պիտանի է որոշում կայացնելու համար, եթե հիմնվում է որոշակի **հավաստի բնույթ ունեցող փաստերի վրա:** Հավաստի տվյալների առկայությունը, որը թույլ է տալիս հավանա-

կանության որոշակի աստիճանով հետևություն անել քննչական գործողության կատարման հիմքերի մասին, վկայում է նաև կոնկրետ որոշման հիմնավորվածության մասին, այսինքն՝ հավաստի տվյալների առկայությունը կոնկրետ որոշմանը հաղորդում է հիմնավորվածության որակ:

Այսպիսով, հարց է ծագում, թե ինչ պետք է հասկանալ Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված բնակարանում խուզարկություն կատարելու համար անհրաժեշտ «բավարար հիմքեր» հանդիսացող հավաստիության չափանիշին համապատասխանող տվյալների տակ, որոնց հիման վրա ենթադրություն է արվում բնակարանում խուզարկություն կատարելու նպատականերին հասնելու մասին:

Դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գողությունների, կողոպուտների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին նախաքննական մարմինների միջնորդությունների զգալի մասի հիմքում դրված է եղել բացառապես ոստիկանության տարածքային բաժնի պետի գրությունն՝ ուղղված տարածքային քննչական բաժնի (վարչության) պետին այն մասին, որ օրինակ, ոստիկանության համապատասխան բաժնում ***ստացված հավաստի օպերատիվ տեղեկությունների համաձայն՝ քննիչի վարույթում գտնվող ինչ-որ քրեական գործով հանցագործությունը, հնարավոր է, կատարել է Ա.Ա.Հ. –ն և ներկայումս հափշտակված և քրեական գործի համար նշանակություն ունեցող առարկաները և այլնը թաքցնում է իր բնակության հասցեում կամ նրան պատկանող օժանդակ շինություններում:***

Ուշագրավն այն է, որ նման գրություններով հայտնված տվյալների արժանահավատությունը, իրականությանը համապատասխանությունը նախաքննական մարմնի կողմից բացարձակապես չի ստուգվում, և այդ գրություններն ուղղակիորեն ներկայացվում են դատարան, իսկ դատարանները մեծամասամբ դեպքերում բացառա-

պէս այդ գրությունների հիման վրա թույլատրում են քրեական գործի հետ որևէ առնչություն չունեցող անձի կամ անձանց բնակարաններում կատարելու խուզարկություն:

Քննիչների հետ անհատական գրույցներում նրանք հայտնում էին, որ եթե այդ գրության հիման վրա դատարան միջնորդություն չներկայացնեն, ապա ոստիկանության հետ համագործակցության առումով խնդիրներ կառաջանան (ինքնաստիպ մտածելակերպի, ձևավորված ավանդույթի վառ դրսևորում): Այն հարցին, թե իսկ ինչու այդ գրություններում բովանդակվող տեղեկատվությունը չեն ստուգում դատավարական այլ միջոցներով և մեթոդներով, որոնց արդյունքում ստացված տվյալները հիմք կտան կա՛մ չկատարելելու խուզարկություն, կա՛մ առավել հիմնավոր կդարձնեն միջնորդությունը, քննիչները հայտնում էին, որ իրենք լիարժեք վստահում են ոստիկանությանը:

Այս առումով առավել հետաքրքրականն այն է, որ նման գրությունների հիման վրա կատարված խուզարկություններով, որպես կանոն, հայտնաբերվում են զենք, զինամթերք կամ թմրամիջոց, քան այն առարկաները, որոնց հայտնաբերման նպատակով նախաքննական մարմինը միջնորդել, իսկ դատարանը թույլատրել է կատարել խուզարկություն: Այդպես էր եղել, օրինակ, ԱՐԱԴ1/0023/01/14 քրեական գործով, երբ բենզալցակայանից կատարված գողության դեպքով հարուցված քրեական գործով, գողացված հոսանքի բարձր լարման փոխանցման մեկուսիչները հայտնաբերելու նպատակով Ս.Դ-ի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին **քննիչի միջնորդության և դատարանի որոշման** հիմքում դրված է եղել բացառապես ոստիկանության բաժնի պետի գրությունն՝ ուղղված մարզային քննչական վարչության պետին, իսկ կատարված խուզարկությամբ հայտնաբերվել էր **թմրամիջոց**: Դատարանի գնահատականներից երևում է, որ սա այն դեպքերից է, երբ մի քրեական գործը քողարկված ձևով օգատգործվել է մեկ այլ հանցագործության դեպք բացահայտելու համար, ինչի մասին նշեցինք վերևում:

Սույն քրեական գործով դատարանի կողմից տրված գնահատա-

կաններին դեռ կանդրադառնանք, այստեղ արձանագրենք, որ ոստիկանության բաժնի պետի մի քանի տողից բաղկացած գրությունը չի համապատասխանում հավաստիության չափանիշին՝ համապատասխանող «բավարար հիմքերին»՝ անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման մասին դատարանի կողմից որոշում կայացնելու համար, հատկապես, որ դրանում պարունակվող տեղեկատվության արժանահավատությունը դատարանը չի կարող որևէ ձևով ստուգել։ Ինչ վերաբերում է ոստիկանության բաժնի պետին վստահելուն, ապա այդ խնդիրը դուրս է դատավարական հարաբերությունների ոլորտից, ավելին՝ այն իրավական կատեգորիա չէ։ Ինչպես քննիչը, այնպես էլ դատարանը չեն կարող իրենց որոշման մեջ որպես պատճառաբանություն նշել, որ վստահում են ոստիկանության պետին, քանի որ ճանաչում են, կամ վստահելի, լավ աշխատող անձ է, և այլն։ Դատարանը պետք է փաստարկի իր համոզմունքը, որը կարող է հիմնված լինել օբյեկտիվորեն գոյություն ունեցող տվյալների վրա, ոչ թե ինտուիցիայի, համակրանքի կամ հակակրանքի և այլ անհաշվետու զգացմունքների վրա, որպիսին, մեր կարծիքով, հանդիսանում է ոստիկանության պետի գրությունը կամ նրան վստահելը։

Նկատի ունենալով, որ դատարանը չի կարող ստուգել այդ տվյալների արժանահավատությունը, օրենքի պահանջների պահպանմամբ այդ գործողությունը կատարած լինելը և դրա հետ կապված այլ հարցեր, ուստի անկախ ոստիկանության պետի վստահելի, լավ աշխատող լինելու կամ անձամբ ճանաչելու հանգամանքներից, նրա ներկայացրած տվյալը չի կարող հիմք ընդունվել դատարանում խուզարկություն կատարելու մասին որոշում կայացնելու համար։ Եթե նախաքննական մարմնի պարագայում նման տվյալների հիման վրա խուզարկություն կատարելը կամ դատարան միջնորդություն ներկայացնելը կարող է ինչ-որ տեղ գնահատվել իրավաչափ, ապա դատարանի պարագայում միանշանակ է, որ այն բավարար չէ։ Այս տեսանկյունից, թվում է, ճիշտ են այն հեղինակները, ովքեր առաջարկում են դատախազական սանկցիավորման կառուցակարգին վերադառնալ բնակարանում խուզարկություն կատարելու համար, քանի

որ, ի տարբերություն դատարանի, ըստ ՕՀԳ մասին օրենքի՝ դատախազը օժտված է օպերատիվ-հետախուզական տվյալների ծանոթանալու որոշակի լիազորություններով (հոդված 35-րդ), և նա կարող է գնահատել դրանց արժանահավատությունը:

Ինչն է, նկատենք, որ բնակարանում խուզարկություն կատարելու համար բավարար հիմքերի էության և բովանդակության վերաբերյալ միասնական մոտեցում չի ձևավորվել՝ նաև քրեադատավարական իրավունքի տեսության մեջ, ավելին՝ հանդիպում են տրամազոծրեն իրար հակասող, մեկը մյուսին բացառող մոտեցումներ:

Որոշ գիտնականներ գտնում են, որ բնակարանում խուզարկություն կատարելու հիմք կարող են հանդիսանալ ինչպես քրեադատավարական կարգով ձեռք բերված ապացույցները, այնպես էլ օպերատիվ հետախուզական ճանապարհով ձեռք բերված տվյալները, առանձին դեպքերում՝ նաև ոչ դատավարական նշանակություն ունեցող այլ տեղեկությունները¹: Այս տեսակետը հիմնավորվում էր ինչպես խորհրդային տարիներին, երբ դատախազի սանկցիայի հիման վրա էր իրականացվում բնակարանի խուզարկությունը, այնպես էլ ներկայումս, երբ սահմանված է դատական վերահսկողություն բնակարանի խուզարկության համար: Ի դեպ, այս մոտեցումը լայն տարածում ունի նաև դատական պրակտիկայում:

Հակառակ մոտեցման կողմնակիցները գտնում են, որ բնակարանի խուզարկություն կատարելու համար հավաստիության չափանիշին համապատասխանող բավարար տվյալներ կարող են լինել բացառապես քրեադատավարական կարգով ձեռք բերված ապացույցները², քանի որ, ըստ նրանց, որքան էական է սահմանադրական

¹ Ст'я Гапанович Н.М., Мартинович И.И. Основы взаимодействия следователя и органа дознания при расследовании преступлений. Минск, 1983, էջ 67, Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс, учебник, 3-е издание, переработанное и дополненное, М., 2007, էջ 395 և այլն:

² Ст'я Петрухин И.Л. Теоретические основы реформы уголовного процесса в России. М., 2004, Ч. 1, էջ 178, Васильева Е.Г. Гарантии прав личности при производстве обыска в уголовном процессе // Материалы Международной научно-практической конференции, Екатеринбург, 27-28 января 2005, Ч. 1, Екатеринбург, էջ 141-144 և այլն:

իրավունքի սահմանափակումը, այդքան բարձր պետք է լինի կատարվող գործողության հիմնավորվածության աստիճանը, այդքան առավել խիստ պահանջներ են ներկայացվում հիմքերի բավարարվածությանը:

Հիմնավորելով այս տեսակետը՝ Վ.Մ.Կորնուկովը¹ նշում է՝ խուզարկություն կատարելու անհրաժեշտության մասին հետևությունը պետք է ապացուցել, իսկ քրեական դատավարությունում որպես բոլոր հանգամանքների, այդ թվում միջանկյալ որոշումների հիմքում դրվող հանգամանքների ապացուցման միջոց հանդես են գալիս միայն ապացույցները: Հետևաբար օպերատիվ տվյալները ինչպես ինքնին, այնպես էլ այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ, չեն կարող հանդես գալ որպես խուզարկության կատարման հիմք: Դա հակասում է քրեական դատավարությունում ապացուցման մեթոդաբանական հիմքերին: Հեղինակի գնահատմամբ՝ խուզարկություն կատարելու որոշման ընդունման համար հիմք կարող են ծառայել միայն այն տվյալները, որոնք ունեն փաստական բնույթ, այսինքն՝ անձի բնակարանում համապատասխան առարկաների կամ հետախուզվող անձանց կամ դիակի առկայության մասին վկայող ապացույցները: Օպերատիվ տվյալները չպետք է հաշվի առնվեն խուզարկություն կատարելիս, դրանք ունեն կարևոր նշանակություն, սակայն չեն կարող դրվել ընդունվող որոշման հիմքում: Խուզարկության որոշումը կարող է հիմնվել ինչպես հավաստի, այնպես էլ ենթադրական (հավանական) հետևության վրա, որ անձի բնակարանում կարող են լինել համապատասխան առարկաներ, փաստաթղթեր և այլն: Հեղինակի կարծիքով՝ հոդվածը, որը վերնագրված է «Խուզարկություն կատարելու հիմքերը», ավելի շուտ մատնանշում է խուզարկության նպատակները, քան հիմքերը, որովհետև նրանում դրանք բացարձակապես բացահայտված չեն: Հեղինակը կարծում է, որ հենց այս օրենսդրական թերության պատճառով է, որ մասնագիտական գրականության մեջ տարբեր մասնագետներ հնարավոր են

¹ См' u В.М.Корнуков Конституционные основы положения личности в уголовном судопроизводстве. Саратов, 1987, էջ 166-170:

համարում օպերատիվ տվյալների հիման վրա բնակարանում խուզարկություն կատարելը: Հեղինակը վերոգրյալի հիման վրա առաջարկում է օրենքում «բավարար հիմքերի» փոխարեն նշել՝ «ապացույցներ ունի ենթադրելու» ձևակերպումը, որը, ըստ նրա, կբացառի տարաբնույթ մեկնաբանությունները, և ըստ այդմ օրենքը կհամապատասխանի նաև բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքին¹:

Ընդհանուր առմամբ կարելի է համաձայնվել հեղինակի դատողությունների հետ, սակայն որոշ վերապահումներով: Կարծում ենք՝ միայն ապացույցների հիման վրա խուզարկություն կատարելու թույլտվության մասին խոսելիս հեղինակը հաշվի չի առնում «խուզարկության», որպես քննչական գործողության էությունը: Ինչպես գիտենք խուզարկությունը ենթադրում է որոնողական գործողությունների կատարում, ինչը նշանակում է, որ նախաքննական մարմինը **ստույգ տեղեկատվություն** չունի այն մասին, որ ինչ-որ բնակարանում կամ այն անձի մոտ, ում բնակարանում կատարվում է խուզարկությունը միանշանակ **գտնվում են** որոնվող իրերը, առարկաները և այլնը, այլ ենթադրում է, կանխատեսում է, որ կգտնվեն, ուստի կատարում է որոնողական գործողություններ դրանք հայտնաբերելու և վերցնելու համար²: Եթե քննիչի տրամադրության տակ առկա լինեն ստույգ տեղեկություններ (ապացույցներ, ինչպես նշում է Կորնուկովը) առ այն, որ անձի բնակարանում են գտնվում իր կողմից որոնվող կամ քննության համար հետաքրքրություն ներկայացնող համապա-

¹ См. у В.М.Корныков, *նույն տեղում*:

² Պետք է փաստել, որ Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասը ունի ներքին հակասություն, քանի որ մի դեպքում նշում է, որ քննիչի տրամադրության տակ եղած բավարար հիմքերը պետք է հաստատեն առարկաների և այլնի որևէ անձի մոտ կամ շենքում «գտնվելու» փաստը, իսկ մյուս դեպքում նշում է, որ խուզարկությունը կատարվում է դրանք **գտնելու և վերցնելու** համար: Հարց է ծագում, թե քննիչն ինչու է խուզարկություն կատարում որևէ առարկա **գտնելու** համար, եթե նրա տրամադրության տակ եղած տվյալներով դրանք **գտնվելու փաստը** ստույգ է: Կարծում ենք՝ 225-րդ հոդվածում առկա է քերականական խնդիր, որը պետք է խմբագրել:

տասխան առարկաները, փաստաթղթերը կամ հետախուզվող անձինք կամ դիակը և այլն, ապա այս դեպքում քննիչը պետք է առգրավում կատարի, այլ ոչ թե խուզարկություն:

Այլ կերպ ասած՝ խուզարկությունը կատարվում է որոնվող առարկաների և այլնի մասին միայն ենթադրության մակարդակով տեղեկատվություն ունենալու դեպքում, իսկ առգրավման դեպքում պետք է առկա լինեն **ստույգ** տեղեկություններ, քանի որ այդ գործողության բովանդակության մեջ չի մտնում որոնողական գործողություններ կատարելը: Օրենքը առգրավման ենթակա առարկաների հայտնաբերման համար որոնողական գործողություններ կատարելը թույլատրում է միայն այն դեպքում, երբ առգրավման որոշման մեջ նշված **տեղում** դրանք չեն հայտնաբերվում, ընդ որում՝ սահմանելով, որ այդ դեպքում քննիչը որոշում պետք է կայացնի խուզարկություն կատարելու մասին, որը, սակայն, չի վերաբերում այն դեպքերին, երբ խուզարկությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշման հիման վրա (ՀՀ քր. դատ. օր.-ի 228 հոդ. մաս 6-րդ):

Վերոգրյալից հետևում է, որ բնակարանում խուզարկություն կատարելու համար միայն բավարար ապացույցներ ունենալը թեև կարևոր երաշխիք է բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի հայեցակարգի տեսանկյունից, սակայն խիստ չափանիշ է: Նման մոտեցումը գործնականում ոչ միայն կհանդիսանա խոչընդոտ վարույթն իրականացնող մարմինների պատշաճ գործունեության համար, այլև չի բխում խուզարկության էությունից և դատական պրակտիկայում կբացառի խուզարկությունները:

Միայն ապացույցների հիման վրա բնակարանում խուզարկություն կատարելու մոտեցման կողմնակիցների այլ փաստարկումները հանգում են նրան, որ Դատարանը չի կարող որոշում ընդունել նախաքննական մարմնի գուտ ձևական պահանջի (միջնորդության) հիման վրա՝ առանց խորանալու նրա կողմից առաջարկվող գործողությունը կատարելու հիմքերի ապացուցվածության աստիճանի մեջ: Հակառակը, կնշանակի դատարանի վերահսկողական գործունեության իրական բովանդակության փոխարինում քննիչի միջնոր-

դության մեջ ՔՂՕ այս կամ այն դրույթը մեջքերած լինելու նկատմամբ «հասարակ» դիտարկման: Դա նաև կնշանակի անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման մասին որոշման կայացում նախաքննական մարմնի կողմից, իսկ դատարանի դերը կսահմանափակվի զուտ անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդության՝ գրանցմամբ, հաշվառմամբ կամ զուտ հաստատմամբ: Անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը պետք է ապացուցել, իսկ այդ պարտականությունը կրում է դատարան միջնորդություն ներկայացրած քրեական հետապնդման մարմինը, անկախ նրանից, որ դատական նիստում բացակայում է մյուս կողմը: Այս հետևությունը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից, որը ոչ միայն անձի իրավունքների երաշխիքն է, այլև ապացուցման պարտականության բաշխման հիմքն է: Նկատի ունենալով, որ բնակարանի խուզարկության դեպքում ևս որոշակի քրեական հետապնդման տարրեր են առկա, ուստի անմեղության կանխավարկածի ուժով անձը անմեղ է և ազատվում է մեղադրական իշխանության պնդումները հերքելու պարտականությունից, այդ թվում՝ իր սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտության հետ կապված, հատկապես, որ այդ անձը չի ել մասնակցում իր իրավունքների սահմանափակման հարցի քննարկման դատական նիստին¹:

Քննարկվող մոտեցման կողմնակիցները իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար նաև նշում են, որ որևէ քննչական գործողություն կատարելու հիմք հանդիսացող փաստական հանգամանքների առկայությունը դատարանին համոզելու անհրաժեշտությունը, պահանջում է դատական վարույթներին բնութագրական ապացուցման կանոնների և ձևերի օգտագործումը: Ըստ նրանց կարծիքի՝ թեև

¹ St' u Краткий курс лекций по дисциплине «Защита прав личности в уголовном процессе России»/ http://studme.org/125706266610/pravo/osobennosti_rassmotreniya_sudom_hodataystv_proizvodstve_sledstvennyh_deystviy:

քննչական գործողությունների կատարման թույլտվություն տալու մասին միջնորդությունների քննարկման վարույթում մրցակցության սկզբունքը չի գործում, դատարանը չի կարող որոշում կայացնել առանց դատական նիստ անցկացնելու, որում առնվազն նախատեսված է մի կողմի մասնակցությունը: Նկատի ունենալով, որ քննչական գործողություն կատարելու թույլտվություն տալու հարցը քննարկելիս պետք է անցկացվի պաշտոնական նիստ, որում մասնակցում է միջնորդություն ներկայացրած կողմը, որում հրապարակվում և հետազոտվում են միջնորդությունը, դրան կից ներկայացված փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում՝ դատարանի պահանջած նյութերը, միջնորդություն ներկայացրած անձը բացատրություններ է ներկայացնում դատարանին միջնորդության հիմնավորման համար և այլն, այսինքն՝ քննչական գործողության կատարման թույլտվություն ստանալու հարցի քննարկումն իրականացվում է դատական վարույթներին բնորոշ կարգով, ուստի այդ դեպքում ևս պետք է պահպանվեն ապացուցման ընթացակարգային կանոնները, որոնք բնութագրական են դատական վարույթներին և որոնք ապահովում են յուրաքանչյուր հարցի արդար լուծումը: Հակառակ դեպքում՝ ստացվում է, որ դատարանը գործում է որպես «վարչական մարմին», այսինքն՝ աշխատում է այն մեթոդներով, որոնք բնութագրական են քննչական բաժնի պետի կամ դատախազի գործունեությանը¹:

Վերոգրյալից հետևում է, որ, փաստորեն, բնակարանի խուզարկության թույլտվություն տալու հիմնավորվածության պահանջը պատճառական կապի մեջ է դրվում մի շարք հանգամանքներից՝

1) բնակարանի խուզարկության գործողության մեջ քրեական հետապնդման տարրերի առկայությունից, որի դեպքում, ըստ անմեղության կանխավարկածի սկզբունքի, պետք է ապացուցել անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումը,

2) միջնորդության քննարկման դատական վարույթի ձևից և բն-

¹ См. и Краткий курс лекций по дисциплине «Защита прав личности в уголовном процессе России»/ http://studme.org/125706266610/pravo/osobennosti_rassmotreniya_sudom_hodataystv_proizvodstve_sledstvennyh_deystviy:

վանդակությունից:

Դատական վարույթների հետ համեմատական անցկացնելով, բնակարանի խուզարկության թույլտվություն տալու մասին որոշման հիմքում միայն ապացույցներ դնելու հիմնավորումներն ունենալով, ռացիոնալ հատիկ և պայմանավորված լինելով դատական պրակտիկան փոխելու հեղինակների «բարի» նկրտումներով, այդուհանդերձ խնդրահարույց են. դրա կողմնակիցները հաշվի չեն առնում մի շարք սկզբունքային պահեր:

Բնակարանի խուզարկության թույլտվություն տալու վարույթն ունի վերահսկողական բնույթ և հետապնդում է այլ նպատակներ, իսկ քրեական գործն ըստ էության քննելու դատական վարույթներն ունեն այլ բնույթ, դրանք հետապնդում են այլ նպատակներ: Չի կարելի նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացվող որոշումների հիմնավորվածության չափանիշը և արդարադատություն իրականացնելիս դատարանի կայացրած դատական ակտերի հիմնավորվածության չափանիշը համեմատել և նույնացնել: Բնակարանի խուզարկության միջնորդությունը քննարկելու վարույթը, լինելով դատական, այդուհանդերձ տարբերվում է մեղքի հաստատման դատական վարույթից ինչպես ձևով, այնպես էլ բովանդակությամբ, սուբյեկտների կազմով և այլ հատկանիշներով:

Բացի այդ, հեղինակները հաշվի չեն առնում այն իրողությունը, որ նախնական քննությունը, հատկապես սկզբնական փուլում, իրականացվում է այլ տեղեկատվական բազայի պայմաններում, քան դատական քննությունը, և բնութագրվում է հատկապես տեղեկատվության պակասով և որոշում կայացնելու համար անհրաժեշտ ժամանակի պակասով, այդ թվում՝ քննչական գործողություն կատարելու: Այստեղ բացակայում է հանցագործության դեպքի ամբողջական պատկերը, ապացույցների այնպիսի համակցությունը, որոնք լինում են դատարանում դատավճիռ կայացնելու համար: Դատական նիստում, որի առարկան կազմում է բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքերի պարզումը, պետք է վերլուծության ենթարկվի յուրաքանչյուր տեղեկություն, սակայն ակնհայտ է, որ դա-

տարանը որոշում կայացնելիս պետք է ելնի ոչ թե դատաքննության փուլում հանցագործության հանգամանքները հետազոտելու տրամաբանությունից, այլ հենց նախաքննության տրամաբանությունից:

Խիստ վիճելի են նաև այն դատողությունները, որ եթե ապացույցներ չեն ներկայացվում դատարան բնակարանի խուզարկության թույլտվություն ստանալու միջնորդությունը հիմնավորելու համար, իսկ դատարանը բավարարում է քննիչի միջնորդությունը դա նշանակում է դատարանի վերահսկողական գործունեության իրական բովանդակության փոխարինում քննիչի միջնորդության մեջ ՔԴՕ այս կամ այն դրույթը մեջբերած լինելու նկատմամբ «հասարակ» դիտարկման կամ միջնորդության բավարարում **նախաքննական մարմնի զուտ ձևական պահանջի (միջնորդության)** հիման վրա, կամ որոշման կայացում նախաքննական մարմնի կողմից, իսկ դատարանի դերի սահմանափակում միայն քննիչի միջնորդության հաստատմամբ, հաշվառմամբ և այլն:

Կարծում ենք՝ պատճառահետևանքային կապ չկա քննչական գործողության հիմքերի ապացուցվածության աստիճանի մեջ խորանալու դատարանի հնարավորությունների և միայն ապացույցների հիման վրա բնակարանում խուզարկություն կատարելու մասին որոշում կայացնելու հարցի միջև: Բանն այն է, որ օրենսդիրը, նախ՝ չի սահմանել, որ միայն ապացույցների հիման վրա կարող է դատարանը որոշում կայացնել բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին, երկրորդ՝ սահմանել է մի շարք երաշխիքներ հեղինակների մտահոգությունը փարատելու համար: Քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է, որ ինչպես քննիչը, այնպես էլ դատարանը որոշում կայացնելիս պետք է իրենց տրամադրության տակ ունենան «բավարար հիմքեր ենթադրելու», որ բնակարանում խուզարկություն կատարելով՝ հնարավոր է հասնել խուզարկության նպատակներին, այսինքն՝ օրենսդիրը սահմանել է, որ որոշում կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պետք է իր տրամադրության տակ ունենա անհրաժեշտ և բավարար տվյալներ այն «իրավական վիճակի» ամկայությունը հիմնավո-

րելու համար, որի հետ օրենքը կապում է այս կամ այն իրավական հետևանքները, իսկ որոշման հիմնավորվածությունը, որը բխում է Օրենսգրքի 225-րդ, 283-րդ և 286-րդ հոդվածներից, պահանջում է հետազոտել միջնորդության հիմնավորման համար անհրաժեշտ ապացույցները և այլ փաստական տվյալները և այդ ամենը, դատական ակտերի պատճառաբանվածության կանխավարկածի ուժով, արտացոլել քննիչի միջնորդությունը բավարարելու մասին որոշման մեջ: Դրա համար, օրենսդիրը «հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնելու» դատարանի պարտականության գործնական կիրառությունն ապահովելու համար, նրան հնարավորություն է տվել միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձից պահանջելու լրացուցիչ նյութեր, բացատրություններ և այլն միջնորդությունը հիմնավորելու համար, իսկ միջնորդություն ներկայացնող անձի վրա պարտականություն է դրել հիմնավորել իր միջնորդությունը (այս կարծիքին են նաև քննարկվող մոտեցման կողմնակիցները):

Այս օրենսդրական կանոնակարգումների պայմաններում, եթե որևէ անձի բնակարանում խուզարկություն կատարելու անհիմն թույլտվություն է տրվում՝ նախաքննական մարմնի զուտ ձևական պահանջի (միջնորդության) հիման վրա, առանց խորամուխ լինելու դրա հիմքերի ապացուցվածության աստիճանի մեջ, ապա խնդիրը սուբյեկտիվ է, դուրս օրենսդրական կանոնակարգումներից:

Քննարկվող հարցի հետ կապված, առանձնահատուկ դիրքորոշում են արտահայտել Կ.Բ. Կալինովսկին և Ա.Վ. Սմիրնովը:

Այս հեղինակների կարծիքով՝ խուզարկություն կատարելու համար հիմք են հանդիսանում բավարար տվյալներն այն մասին, որ

1) ինչ-որ մեկի օրինական (տիտղոսային) տիրապետման տակ կարող են գտնվել քրեական գործի համար նշանակություն ունեցող օբյեկտները (առարկաներ, փաստաթղթեր, հետախուզվող անձինք, դիակներ և այլն),

2) առկա է վտանգ (հավանականություն) այդ օբյեկտները

թաքցնելու կամ ոչնչացնելու մասին¹:

Նրանք գտնում են, որ խուզարկություն կատարելու նպատակով որոնվող օբյեկտների գտնվելու տեղի վերաբերյալ ենթադրություն անելու համար կարող են հաշվի առնվել ոչ միայն ապացույցները, այլև ոչ դատավարական տեղեկատվությունը (օրինակ, ՕՀՄ արդյունքները, այլ ազդանշանները): Մակայն, միաժամանակ վերապահում են անում՝ նշելով, որ պետք է հիշել, որ խուզարկությունը առնչվում է անձի առանցքային սահմանադրական իրավունքներին՝ բնակարանի անձեռնմխելիության, անձնական անձեռնմխելիության, սեփականության իրավունքին, որի հետ կապված միայն ոչ դատավարական տեղեկությունները՝ առանց քրեադատավարական ապացույցների, չեն կարող բավարար լինել խուզարկության կատարումը հիմնավորելու համար:

Ըստ հեղինակների՝ թվում է, որ միայն ապացույցներով կարող են հիմնավորվել (թեև հավանականության աստիճանով) ենթադրությունն առ այն, որ որևէ անձի մոտ կարող են գտնվել որոնվող օբյեկտները, իսկ այն բանի ենթադրությունը, թե որտեղ դրանք կարող են գտնվել՝ այս կամ այն շինությունում, հողատարծքում և այլն, կարող է հիմնվել ինչպես ապացույցների, այնպես էլ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքների կամ այլ՝ ոչ դատավարական տեղեկությունների վրա, ինչպես նաև ուղղակի քննչական փորձի վրա²:

Փաստորեն, այս հեղինակները խուզարկության հիմքերի հարցը բաժանում են երկու մասի և ըստ այդմ տարբերակում դրանց հիմնավորվածության չափանիշը: Այս տարբերակումը հետաքրքիր է և ունի գործնական կարևոր նշանակություն, սակայն որոշ վերապահումներով:

Նախևառաջ պետք է փաստել, որ օրենսդիրն իրավացիորեն

¹ Ст. 5 Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс, учебник, 3-е изд., переработанное и дополненное, М., 2007, с. 395.

² Ст. 5 Смирнов А.В., К.Б. Калиновский Уголовный процесс, учебник, 3-е издание, переработанное и дополненное, М., 2007, с. 395.

պարտադիր չի համարել որոնվող օբյեկտը թաքցնելու կամ ոչնչացնելու հանգամանքը որպես խուզարկության կատարման պայման դիտելը ինչպես նշում են հեղինակները, քանի որ նման պայման սահմանելու դեպքում նախաքննական մարմնի համար կառաջանա անլուծելի խնդիր:

Երկրորդ՝ հեղինակները՝ նշելով, որ «միայն ապացույցներով կարող են հիմնավորվել (թեև հավանականության աստիճանով) ենթադրությունն առ այն, որ որևէ անձի մոտ կարող են գտնվել որոնվող օբյեկտները», հաշվի չեն առնում օպերատիվ-քննչական իրադրությունը, որը հաճախ ուղղակիորեն վկայում է կոնկրետ անձի մոտ դրանք գտնվելու հավանականության, համապատասխանաբար նաև նրա բնակարանում խուզարկություն կատարելու անհրաժեշտության մասին: Օրինակ՝ անձը ձերբակալվել է թմրամիջոց իրացնելիս կամ ապօրինի զենք, զինամթերք պահելու, կրելու, առաքելու կամ իրացնելու կասկածանքով. հանցագործության առարկան նրա մոտից առգրավված է: Քրեական գործով հավաքված նյութերը անուղղակիորեն վկայում են (չեն բացառում) կասկածյալի կողմից նման այլ հանցանք կատարած լինելու կամ նրա բնակարանում քննությանը հետաքրքրություն ներկայացնող առարկաներ լինելու հանգամանքի մասին, ուստի ինքնին այդ անձին՝ հանցանք կատարելու պահին ձերբակալման փաստը, կարծում ենք, բավարար է նրա բնակարանում խուզարկություն կատարելու հիմքերի առկայության մասին հետևություն անելու համար: Այս առումով մենք համակարծիք ենք նաև Վ.Կալնիցկու այն դատողություններին, որ չպետք է կուրորեն հրաժարվել երկարամյա քննչական պրակտիկայի վրա մշակված և ձևավորված կրմինալիստիկական այն հանձնարարականներից, որոնց համաձայն, օրինակ, բնակարանային գողությունների, կողոպուտների, ավագակությունների վերաբերյալ գործերով քննության սկզբնական փուլում անհրաժեշտ է կատարել խուզարկություններ, քանի որ առկա է հավանականությունն առ այն, որ ձերբակալվածներ-

որը կատարել են նմանատիպ այլ հանցագործություններ ևս¹:

Բնակարանի խուզարկության թույլտվություն տալու մասին որոշում կայացնելու ընթացքում օպերատիվ-քննչական իրադրությունն այն ազդանշաններից է, որն ունակ է լրացնելու որևէ անձի բնակարանում խուզարկություն կատարելու անհրաժեշտությունը հիմնավորող նախաքննական մարմնի և դատարանի տրամադրության տակ առկա տեղեկատվությունը: Դրա համար, Կալինովսկու և Սմիրնովի մոտեցումը, լինելով հիմնավոր, միաժամանակ խոցելի է վերևում նշված պատճառաբանությամբ և որոշակի խնդիրներ կարող է առաջացնել դատաքննչական պրակտիկայում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ այն բանի հետևությունը, որ «կոնկրետ անձի մոտ կարող են գտնվել որոնվող օբյեկտները» կարող է հիմնվել ինչպես ապացույցների, այնպես էլ օպերատիվ-հետախուզական տվյալների և օպերատիվ-քննչական իրադրության վրա, կարևորը այն անձի, ում բնակարանում պետք է կատարվի խուզարկություն և հանցագործության դեպքի հետ կապի հիմնավորումն է:

Դատական պրակտիկայի թույլ տեղը նախևառաջ հենց այս հանգամանքի մեջ է, բանի որ միայն օպերատիվ տվյալի հիման վրա նախաքննական մարմինը փորձում է հիմնավորել ոչ միայն այդ կապը, այլև անձի բնակարանում հենց քննությանը հետաքրքրություններկայացնող առարկաներ լինելու փաստը, որը միանշանակ անընդունելի է:

Կարծում ենք՝ այն հարցի պարզումը, թե կոնկրետ ինչպիսի փաստական տվյալներ պետք է առկա լինի դատարանի տրամադրության տակ բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին որոշում ընդունելու, ինչպես նաև այդ որոշման ընդունման համար դրանց բավարար լինելը գնահատելու համար՝ կախված է փոխկապված և փոխլրացնող մի շարք գործոններից, որոնք հանգում են հետևյալին՝

¹ St' u Кальницкий В., Обоснованность производства следственных действий как предмет судебной оценки, Электронный ресурс, 2003 // http://www.juristlib.ru/book_2810.html

1) օրենքով խուզարկության կատարման հիմքերի ձևակերպմանը ներկայացվող պահանջից, որը չի պարտավորեցնում ելնել բացառապես ապացույցներից, այն ձևակերպված է «բավարար հիմքեր ունենալով ենթադրելու» կանխատեսական, հավանական հասկացությամբ, հետևաբար՝ ցանկացած տվյալ, այդ թվում՝ օպերատիվ հետախուզական ճանապարհով ստացվածը, կարող է հիմք ընդունվել բնակարանում խուզարկություն կատարելու համար, սակայն միայն այն դեպքում, երբ դրա արժանահավատությունը հնարավոր է ստուգել: Բանն այն է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով¹ պայմանավորված՝ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինը զրկված է գնահատելու օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներում պարունակվող տվյալների արժանահավատությունը: Օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալի արժանահավատությունը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման

- կոնկրետ տեսակին օրենքով առաջադրվող պահանջները: Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված է օպերատիվ-հետախուզական միջոցառումների որոշակի տեսակների նկատմամբ նախնական դատական վերահսկողության պահանջ, ինչը դրանց օրինականության, հետևաբար նաև արժանահավատության գործունեության երաշխիք է: Այդպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներն են՝ ներքին դիտումը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, հեռախոսային խոսակցությունների վերահսկումը, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական մի-

¹ Գործունեության գաղտնի մեթոդների և միջոցների կիրառումը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատակիցների, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահությունը:

ջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դա անցկացնելու հնարավորության մասին,

- արդյունքների ամրագրման եղանակը (օրինակ՝ տեխնիկական միջոցները կիրառելու առկայությունը),

- օրենքով սահմանված կարգով աղբյուրը բացահայտելու հանգամանքը և այլն:

Այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ արժանահավաստ տվյալների հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս:

2) քրեական դատավարության այն սուբյեկտի դատավարական վիճակից (տուժող, մեղադրյալ, վկա, գործով որևէ կարգավիճակ չունեցող անձ), որի բնակարանում անհրաժեշտություն է առաջացել կատարելու խուզարկությունը, այլ կերպ ասած՝ բնակարանում խուզարկություն կատարելու մասին որոշում կայացնելուց պետք է հաշվի առնել այն, թե անձը, ում բնակարանում պետք է կատարվի խուզարկությունը, արդյոք կասկածվում կամ մեղադրվում է հանցագործության մեջ կամ նախկինում կասկածվել կամ մեղադրվել է նույնաբնույթ հանցագործությունների կատարման համար¹ և այլն: Եթե ան-

¹ Այս գործոնը համապատասխանում է ՄԻԵԴ սահմանած չափանիշներին: Այսպես, *Միդրեովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2007 թվականի* հունիսի 7-ի որոշմամբ Եվրոպական դատարանը խուզարկության իրավաչափության գնահատումը կատարել է՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, թե այն անձը, ում բնակարանում կատարվել է այդ խուզարկությունը, կասկածվել կամ մեղադրվել է որևէ հանցավոր կամ անօրինական գործունեության մեջ (կետեր 46, 47 և 49): *Ալֆանեսյանն ընդդեմ Ռուսաստանի գործով 2014 թվականի* սեմտեմբերի 18-ի որոշման մեջ դատարանը 8-րդ հոդվածի խախտում է արձանագրել և, ի թիվս այլ հանգամանքների, իր հետևությունը հիմնավորել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այն որոշումը, որի հիման վրա խուզարկվել են դիմողի բնակարանը, օժանդակ շինությունները չի պարունակել որևէ նշում այս կամ այն վարույթի, դիմողի կատարած իրավախախտման կամ հանցագործության մասին, **ինչպես նաև այդ կասկածի հիմքում դրված ապացույցների մասին:**

ձը, ում բնակարանում անհրաժեշտություն է առաջացել կատարելու խուզարկություն, որևէ առնչություն չունի հանցագործության դեպքի հետ, ապա նրա բնակարանում խուզարկություն կատարելու նախորդ կետում նշված հիմքերը պետք է համապատասխանեն ավելի բարձր չափանիշի: Այդ տվյալները նախևառաջ պետք է բավարար լինեն անձի, ում բնակարանում անհրաժեշտություն է առաջացել կատարելու խուզարկություն և հանցագործության դեպքի կապը հաստատելու համար, այնուհետև՝ խուզարկության մնացած հիմքերը,

3) օրենքով բնակարանի խուզարկության կատարման թույլտվություն տալու մասին դատարանի որոշմանը ներկայացվող պահանջներից, մասնավորապես՝ պատճառաբանված որոշում կայացնելու անհրաժեշտությունից,

4) հանցագործության ծանրությունից, որի կապակցությամբ իրականացվող քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որևէ անձի բնակարանում խուզարկություն կատարելու համար¹,

5) օպերատիվ-քննչական իրադրությունից, որն առկա է քննիչի կողմից միջնորդություն ներկայացնելու և դատարանի կողմից որոշում կայացնելու պահին,

6) այն դեպքով հարուցված քրեական գործի առկայությունից, որի համար նշանակություն ունեցող ապացույցներ հայտնաբերելու և վերցնելու նպատակով կատարվում է խուզարկությունը՝ բացառելով քրեական գործը մեկ այլ նոր հանցագործության դեպք բացահայտե-

¹ Հանցանքի ծանրությունը որպես խուզարկություն կատարելու դեպքում հետապնդվող նպատակի և անձի իրավունքի միջամտության համաչափությունը գնահատելու չափանիշի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել Եվրոպական դատարանը *Բակն (buck) ընդդեմ Գերմանիայի գործով* 28.04.2005 (41604/98) որոշման մեջ: Դատարանն այս գործով պետության միջամտությունը օրենքով հետապնդվող նպատակներին համաչափ լինելու տեսանկյունից խախտում է արձանագրել, ի թիվս այլ պատճառների, նաև նրա համար, որ բնակարանի խուզարկությունը տրված է եղել ճանապարհային երթևեկության կանոնների հասարակ խախտման դեպքով և այն անձի նկատմամբ, որը նախկինում նման խախտումներ թույլ տված չի եղել: ՄԻԵԴ-ը նման դիրքորոշում է արտահայտել նաև *Կոլեսնիչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով* 2009 թվականի ապրիլի 9-ի որոշման մեջ:

լու նպատակով օգտագործելու արատավոր պրակտիկան:

Դատարանը, բացի հիշյալ փաստական հանգամանքներից, բնակարանում խուզարկություն կատարելու մասին որոշում կայացնելիս պարտավոր է հաշվի առնել նաև անձի բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման սահմանադրական նպատակները՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունը (ՀՀ փոփոխված Սահմանադրության 32-րդ հոդված):

Մենք այն կարծիքին ենք, որ առանձին դեպքերում կարող են առկա լինել բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքերը, սակայն բացակայեն սահմանադրական նպատակները, և ըստ այդմ՝ նաև բնակարանում խուզարկություն կատարելու անհրաժեշտությունը, այլ կերպ ասած՝ սահմանադրորեն ամրագրված նպատակների տեսանկյունից կարող է անհրաժեշտություն չլինել որևէ անձի բնակարանում կատարելու խուզարկություն:

Այս մոտեցումը համահունչ է Եվրոպական դատարանի կողմից սահմանած չափանիշներին:

Անդրադառնալով բնակարանում խուզարկություն կատարելու իրավաչափության հարցերին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս նշել է, որ յուրաքանչյուր գործով պետք է որոշել, թե անձի իրավունքին միջամտությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից եղել է արդարացված, այսինքն՝ այն կատարվել է արդյոք «օրենքին համապատասխան», «հետապնդել է արդյոք մեկ կամ մի քանի օրինական նպատակներ», որոնք ամրագրված են 8-րդ հոդվածի 2-րդ մասում և այդ նպատակներին հասնելը արդյոք «եղել է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», իսկ 8-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը նույնական է Սահմանադրության վերևում նշված նպատակներին:

2010 թվականի հունվարի 14-ի *Մասթեփանն (mastepan) ընդդեմ Ռուսաստանի* (բողոք N 3708/03) գործով Եվրոպական դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝ միջամտությունը համարվում է կատարված «օրենքին համապատասխան» միայն այն պայմանով, որ այն նախնառաջ ունի ինչ-որ իրավական հիմքեր ազգային օրենսդրությունում (կետ 37):

«Անհրաժեշտություն» հասկացությունն, ըստ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի, ենթադրում է, որ միջամտությունը համապատասխանում է կայուն հասարակական պահանջին, որ այն համաչափ է հետապնդվող նպատակին: Այն հարցի որոշման դեպքում, թե միջամտությունը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», Եվրոպական դատարանը հիմք է ընդունում անդամ պետություններին տրված հայեցողության որոշակի ազատությունը: Սակայն 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունները թույլ չեն տալիս ընդարձակ մեկնաբանություններ, և դրանց անհրաժեշտությունը կոնկրետ գործով պետք է հաստատվի առանց որևէ կասկածի (կետ 40):

Կոլենիչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով 2009 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Եվրոպական դատարանը նշել է հետևյալը՝ դատարանը պետք է որոշի, թե անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը եղել է արդարացված Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի տեսանկյունից, այսինքն՝ այն եղել է արդյոք «օրենքով նախատեսված», «հետապնդում էր արդյոք այն այդ կետով նախատեսված օրինական նպատակներ» և եղել է արդյոք «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»՝ այդ նպատակներին կամ նպատակին հասնելու համար (կետ 30): Որոշելու համար, թե եղել են արդյոք այդ միջոցները «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», Եվրոպական դատարանը պետք է հետազոտի ներպետական օրենսդրությամբ ամրագրված կամայականության և չարաշահումների դեմ արդյունավետ երաշխիքների մատչելիությունը և ստուգել, թե դրանք ինչպես են գործել կոնկրետ քննարկվող գործով:

Քննարկվող տեսանկյունից, կարծում ենք, իրավաչափ պետք է համարել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ վերևում մեջբերած գործով դատավճռում արտահայտած այն դիրքորոշումը, որ **«...ոչ մեն ծանրության հանցագործության դեպքով հարուցված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող քրեական գործով բնակարանի խուզարկություն կատարելը, ընդ որում, իսկզբանե իմանալով, որ ձեռք է բերվելու այնպիսի ապացույց, որը վկայելու է մեկ այլ ոչ մեն ծանրության հանցագործության մասին, անհրաժեշտ և բավարար չէ ժողովրդավարական հասարակությունում բնակարանի անձեռնմխելիության իրավունքի միջամտության և հետապնդվող նպատակի համաչափության տեսանկյունից»:**

Դատարանի այս հետևությունը պայմանավորված է եղել նրանով, որ չբացահայտված գողության դեպքով հարուցված քրեական գործով ոստիկանության բաժնի պետի գրության հիման վրա դատարանը թույլատրել է կատարել խուզարկություն գողացված առարկաները հայտնաբերելու համար, մինչդեռ հետաքննության մարմնի աշխատակիցները խուզարկությամբ հայտնաբերել են թմրամիջոց, ընդ որում՝ դատարանն այն համոզման է եկել, որ ոստիկանության աշխատակիցներն ի սկզբանե տեղյակ են եղել, որ թմրամիջոց են հայտնաբերելու, ուղղակի չբացահայտված գողության դեպքը օգտագործել են և նախաքննության փուլում դատարանին զգելով բարեխիղճ մոլորության մեջ՝ ստացել են թույլտվություն և ամբաստանյալի բնակարանում կատարել են խուզարկություն: Դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալի բնակարանի խուզարկությունը եղել է անօրինական ինչպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության, այնպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից, որպիսի պայմաններում բնակարանի խուզարկության արձանագրությունը ճանաչել է անթույլատրելի և ոչ պատշաճ ապացույց ամբաստանյալի մեղադրանքը գնահատելու համար:

Անփոփելիվ վերոգրյալը՝ գալիս ենք այն եզրակացության, որ կատարվելիք քննչական գործողության հիմնավորվածության գնահատումը պահանջում է մեծածավալ և տարաբնույթ (այդ թվում՝ հա-

վանական բնույթ կրող) տեղեկատվության, ինչպես նաև քննչական իրադրության մանրագնահիմն վերլուծություն և կշռադատված գնահատում՝ բացառելով ինտուիտիվ գնահատականները, համակրանքի և հակակրանքի հիման վրա որոշումներ կայացնելու պրակտիկան:

2) Բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու հարցը քննարկելիս անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման առանցքային երաշխիքներից է դատարանի որոշմանը ներկայացվող պահանջների և դրանով պայմանավորված նաև դատական վերահսկողության առարկայի բովանդակությունը կազմող հարցերի շրջանակի հստակեցման հարցը:

Այս հարցերի պարզաբանման արդիականությունն ու հրատապությունը պայմանավորված է նախևառաջ նրանով, որ դատարանի որոշումն է հանդիսանում այն իրավական նախադրյալը, որը թույլ է տալիս քննիչին մուտք գործելու անձի բնակարան և այնտեղ կատարելու խուզարկություն: Այսինքն՝ Դատարանի որոշումն է, որ բնակարանում ապրող անձանց հիմք է տալիս համոզվելու, որ իրենց բնակարանում իրականացվող գործողություններն օրինական և իրավաչափ են, իսկ անհրաժեշտության դեպքում այդ որոշումից է կախված հետագայում դրա բողոքարկումը: Բացի այդ, Դատարանի որոշմանը ներկայացվող պահանջների պահպանված լինելուց է կախված ինչպես ապացույցի թույլատրելիության, այնպես էլ բնակարանում խուզարկություն կատարելիս համապատասխան պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափությունը գնահատելը, մասնավորապես այն, թե արդյոք նրանք պահպանել են դատարանի որոշմամբ ընդգծած սահմանները, թե դուրս են եկել դրանից, և այլ հարցեր:

Անդրադառնալով բնակարանի խուզարկություն կատարելու որոշմանը ներկայացվող պահանջների հարցին՝ հարկ է նկատել, որ այս առումով թեև գործող քրեական դատավարության օրենսգրքում առկա են որոշակի բացեր, որոնց դեռ կանդրադառնալով, սակայն դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ օրենքում ամրագրված պահանջները չեն պահ-

պանվում: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է դատարանի որոշման մեջ՝ «որոշումը կատարելու համար իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը» նշված լինելու պահանջին:

Բանն այն է, որ Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունների դեպքում օրենսդիրը սահմանել է համապատասխան քննչական և դատավարական գործողությունը կատարելու լիազորություն ունեցող պատշաճ սուբյեկտի որոշման հատուկ չափանիշ, որը սակայն քննչական և դատական պրակտիկայում չի պահպանվում կամ ուղղակի անտեսվում է:

Այսպես, Օրենսգրքի 286-րդ հոդվածից երևում է, որ քննչական գործողություններ կատարելու մասին դատարանի որոշման մեջ, ի թիվս այլ վավերապայմանների (*որոշումը կազմելու օրը, ամիսը, տարին և տեղը, դատավորի ազգանունը, միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձը, քննչական գործողություններ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու կամ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նշում՝ ցույց տալով այդ գործողությունը կամ միջոցը և ում վրա է տարածվում, որոշման գործողության ժամկետը, դատավորի կնիքով վավերացված ստորագրությունը*), պետք է հստակ նշված լինի՝ «որոշումը կատարելու համար իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը»:

Դատարանի վրա օրենքով դրված հիշյալ պարտականության կատարումն ապահովելու նպատակով օրենսդիրը, Օրենսգրքի 282-րդ հոդվածում, որպես քննչական գործողություն կատարելու միջնորդությանը ներկայացվող իմպերատիվ պահանջ, ի թիվս այլ վավերապայմանների (*տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել համապատասխան քննչական գործողություն, ինչպիսի տվյալներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված այդպիսի գործողությունների արդյունքում, համապատասխան գործողությունների կատարման ժամկետը, տեղը, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որո-*

շում ընդունելու համար), քննիչին պարտավորեցնում է միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ նշել նաև դատարանի որոշմամբ թույլատրվող քննչական կամ այլ դատավարական գործողության անմիջական կատարողներին:

Այլ կերպ ասած՝ Օրենսդիրը միջնորդություն հարուցող անձին պարտավորեցնում է միջնորդության մեջ նշել, թե ով կամ ովքեր պետք է կատարեն դատարանի որոշմամբ թույլատրված քննչական գործողությունը, իսկ դատարանին պարտավորեցնում է նշել, թե ում է հանձնարարում իր որոշման կատարումը:

Մեր կարծիքով՝ նման կանոնը հանդիսանում է դատարանի որոշման հիման վրա կատարվող քննչական և դատավարական գործողությունների օրինականության ապահովման լրացուցիչ դատավարական երաշխիք, որը չպահպանելը կամ անտեսելը հիմք է հանդիսանում հետագայում գործն ըստ էության քննելիս բնակարանի խուզարկության արձանագրությունը **պաշտաճ սուբյեկտի չափանիշով** անթույլատրելի ապացույց ճանաչելու համար: **Այլ կերպ ասած՝ ապացույցի թույլատրելիության լիազորված սուբյեկտի չափանիշը դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունների դեպքում որոշվում է բացառապես համապատասխան գործողությունը թույլատրելու մասին դատարանի որոշման հիման վրա:**

Դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անկախ նրանից, թե դատարանը բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին որոշման մեջ ո՞ր պաշտանատար անձին կամ պետական մարմին է հանձնարարել խուզարկության կատարումը, որպես կանոն, այն կատարում են այլ մարմիններ և պաշտոնատար անձինք, իսկ դատարանները քրեական գործերով չեն քննարկում այդ ապացույցի թույլատրելիության հարցը, մինչդեռ ակնհայտ է, որ այդ պայմաններում ձեռք բերված ապացույցն անթույլատրելի է:

Այս հարցը որոշակի արդիականություն ստացավ այն ժամանակ, երբ վերևում նշված հիմնավորումներով (ի թիվս այլ հիմնավորումների) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առա-

ջին ատյանի դատարանի թիվ ԱՐԱԴ1/0023/01/14 դատավճռով ամբաստանյալի բնակարանում խուզարկություն կատարելու արձանագրությունը դատարանը ճանաչեց անթույլատրելի ապացույց և կայացրեց արդարացման դատավճիռ:

Քննչական և դատախազական մարմինների աշխատակիցները կարծիք էին հայտնում այն մասին, որ օրենքով քննիչը և դատախազը իրավունք ունեն առանձին քննչական գործողություններ կատարելը հանձնարարել այլ քննիչի կամ հետաքննության մարմնի, ուստի անկախ նրանից, թե դատարանի որոշման մեջ որ պաշտոնատար անձի կամ մարմնի անունը, ազգանունը կամ անվանումն է նշված՝ քննիչը իրավասու է հանձնարարել այլ անձի կամ մարմնի դատարանի որոշման պահանջները կատարելը: Ըստ այս մոտեցման կողմնակիցների՝ դատարանի վերահսկողական գործունեության առարկան չի կազմում դատարանի որոշման հիման վրա բուն խուզարկություն կատարող սուբյեկտների հարցի որոշումը:

Չհամաձայնվելով նման մոտեցումներին՝ նշենք, որ դրանք տեսականորեն ունեն գոյության իրավունք, սակայն գործող քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումների պայմաններում անհիմն են: Այլ կերպ ասած, թեև Օրենսգրքում սահմանված է, որ քննիչը կամ հսկող դատախազն իրավունք ունեն համապատասխան քննչական գործողություն կատարելը հանձնարարելու այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, սակայն այդ կանոնը Օրենսգրքի 286-րդ հոդվածում Օրենսդրի կողմից ենթարկվել է որոշակի սահմանափակման, քանի որ նրանում ուղղակիորեն ամրագրված է, որ դատարանի որոշման հիման վրա կատարվող քննչական և այլ գործողությունների կատարման լիազորված (պատշաճ) սուբյեկտը որոշվում է դատարանի կողմից՝ այդ մասին հատուկ նշելով համապատասխան գործողությունը կատարելու որոշման մեջ: Հետևաբար, այդ նորմի ուժով, դատարանի որոշման հիման վրա կատարվող քննչական գործողությունների կատարումը վարույթն իրականացնող քննիչը և հսկող դատախազը լիազորված չեն այլ պաշտոնատար անձի կամ մարմնի հանձնարարելու, հակառակ մոտեցումը հանգեցնում է այդ

ապացույցի անթույլատրելիության: Այս մոտեցման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ վերևում նշված հիմնավորումներով կայացված արդարացման դատավճիռը վերաքննիչ բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

Այս հարցի հետ կապված՝ ուշագրավ է նաև դատարանի այն մեկնաբանությունը, որ քննիչը և դատախազը չեն գրկվում դատարանի որոշումը կատարելը այլ անձի հանձնարարելու իրավունքից, ուղղակի այդ պետք է անեն միջնորդության մեջ՝ նշելով դրա մասին: Դատավճռում մասնավորապես կարդում ենք. «...*եթե համապատասխան քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան դիմելու իրավունք ունեցող անձը (վարույթն իրականացնող քննիչը) կամ հետաքննության և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, գտնում են, որ հետագայում դատարանի որոշումը պետք է կատարի այլ պաշտոնատար անձ կամ մարմին, ապա դատարանին ուղղված միջնորդության մեջ պետք է հստակ նշեն այն անձանց և մարմիններին, ովքեր պետք է կատարեն դատարանի որոշումը, իսկ դատարանը, իր հերթին, պետք է որոշման մեջ հստակ նշի, թե ում է հանձնարարում քննչական և այլ գործողությունը թույլատրելու մասին որոշման կատարումը: Այլ կերպ՝ դատարանի որոշման հիման վրա կատարվող քննչական գործողությունների կատարումն այլ մարմինների հանձնարարելը կարող է իրականացվել բացառապես դատարանին ուղղված միջնորդության շրջանակներում, դրանից դուրս այլ կերպ չի կարող այդ հարցը լուծվել»:*

Այսպիսով, դատարանը պարտավոր է բնարականի խուզարկության թույլտվություն տալու հարցը քննարկելիս և այդ մասին որոշում կայացնելիս քննարկման առարկա դարձնել նաև այն, թե դատարանի կողմից միջնորդությունը բավարելու դեպքում ովքեր են կատարելու դատարանի որոշման պահանջները և որոշման մեջ պետք է պարտադիր նշի այդ անձանց կամ մարմիններին, իսկ քրեական գործն ըստ էության քննող դատարանը պարտավոր է անդրադառնալ և գնահատական տալ բնակարանի խուզարկության արձա-

նագրության թույլատրելիության հարցին նաև այս տեսանկյունից:

Այս ենթատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև բնակարանի խուզարկության թույլտվություն կատարելու որոշմանը ներկայացվող պահանջների հետ կապված այլ խնդիրների ևս, որոնք օրենքով կանոնակարգված չեն, իսկ դատական պրակտիկան զարգացել է այնպես, որ հաճախ դրանց բացակայության պատճառով խախտվում են անձի իրավունքները և օրինական շահերը: Խոսքը մասնավորապես վերաբերում է նրան, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում որևէ դրույթ չկա, որը կսահմանափակի խուզարկություն կատարող պաշտոնատար անձի կամ համապատասխան մարմնի՝ *որոնողական գործողությունների ծավալը ընդհանրապես, իսկ որոնողական գործողություններ կատարելը դատարանի որոշման մեջ նշված առարկաները կամովին հանձնելու դեպքում՝ մասնավորապես:*

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քննիչները միջնորդություններում, ի թիվս կոնկրետ գործով որոնվող կոնկրետ առարկաների, որոնք պետք է խուզարկությանը հայտնաբերվեն և վերցվեն, նշում են՝ *«ինչպես նաև քրեական գործի համար էական նշանակություն ունեցող այլ առարկաներ, իրեր և այլն»*, իսկ դատարանները բնակարանում խուզարկություն կատարելը թույլատրելու մասին որոշումներում նշում են՝ *« թույլատրել քննիչին ... հասցեում կատարել խուզարկություն հայտնաբերելու ... առարկաներ, ինչպես նաև քրեական գործի համար էական նշանակություն ունեցող այլ առարկաներ, իրեր և այլն»*:

Դատական պրակտիկայի նման զարգացումները, կարծում ենք, հետևանք է այն բանի, որ քրեադատավարական օրենսդրությամբ չկան սահմանված հստակ կանոններ այդ հարցերի վերաբերյալ: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնպիսի ձևակերպումները, որոնք ընդարձակ հնարավորություն են տալիս որոնողական գործողություններ կատարելու, իրենում պարունակում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման վտանգ:

Այսպես, 2010 թվականի հունվարի 14-ի **Մասթեփանն (mastepan) ընդդեմ Ռուսաստանի** (բողոք N 3708/03) գործով Եվրոպական դատարանը նշել է, որ պետությունները որոշակի իրավախախտումներով ապացույց ձեռք բերելու նպատակով կարող են խուզարկել բնակարան և առգրավել գույք, սակայն իրավական կարգավորումները և պրակտիկան պետք է խուզարկության ենթարկվող անձին ապահովեն համապատասխան և արդյունավետ պաշտպանություն հնարավոր կամայականություններից և չարաշահումներից (կետ 41):

Կոլեսնիչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով 2009 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Եվրոպական դատարանը նշել է, որ խուզարկության մասին որոշումները, որքան հնարավոր է, պետք է ապահովեն դրանց հետևանքների սահմանափակումը ողջամիտ սահմաններով (*տե՛ս նաև Iliya Stefanov v. Bulgaria, բողոք N 65755/01, § 41, Van Rossem v. Belgium, բողոք N 41872/98, § 45*):

Վան Ռոսսեմն ընդդեմ Բելգիայի (№ 41872/98) գործով Եվրոպական դատարանը նշել է, որ խուզարկության վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է պարունակի որոշակի նվազագույն թվով հստակ նշումներ, որոնք սահմանափակում են իշխանության ծավալները և հետագայում հնարավորություն են տալիս ստուգելու, թե պահպանվել են քննչական գործողության սահմանները: Այսինքն, այդ պահանջների նպատակը ժողովրդավարական հասարակությունում հանդիսանում է խուզարկություն կատարող անձանց գործողությունների օրինականության հետագա ստուգման հնարավորությունը:

Մփրնովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2007 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Եվրոպական դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է քննարկել գործի հատուկ հանգամանքները, որպեսզի կոնկրետ դեպքով հնարավոր լինի որոշել միջամտության համաչափությունը դրված նպատակներին: Չափանիշները, որոնք դատարանը հաշվի է առել վերջին հարցի հետ կապված, ի թիվս այլնի, եղել են հետևյալները՝ **խուզարկության կատարման եղանակը, ... խուզարկության որոշման ձևակերպման հանգամանքները** (կետ 44):

Անդրադառնալով խուզարկության որոշման ձևավորման հանգամանքներին՝ դատարանը մի շարք գործերով, այդ թվում ***Մմիր-նովն քնդդեմ Ռուսաստանի գործով*** նշել է, որ խուզարկության որոշումները պետք է լինեն կոնկրետ ձևակերպված, որպեսզի սահմանափակվեն խուզարկություն իրականացնող մարմինների հնարավորությունները: ... (կետ 47): Դատարանը մի շարք գործերով խախտում է արձանագրել հենց միայն ընդարձակ ձևակերպումների պատճառով, որովհետև նման ձևակերպումների պայմաններում հնարավոր չի լինում գնահատել խուզարկություն իրականացնող մարմինների գործողությունների իրավաչափությունն այն տեսանկյունից, թե նրանք արդյո՞ք գործել են կոնկրետ առարկաների որոնման շրջանակներում:

Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ ամրագրել, որ դատարանի որոշման մեջ պետք է հստակ նշվեն այն առարկաները, որոնք ենթադրվում է վերցնել և պետք է բացառել ընդարձակ այնպիսի ձևակերպումները, օրինակ՝ «ինչպես նաև այլ առարկաներ, իրեր և այլն», որոնք որոնողական գործողությունների լայն հնարավորություն են տալիս: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակարանի խուզարկությունը ենթադրում է ոչ միայն բնակարանի անձեռնմխելիության, այլև մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության և անձեռնմխելիության սկզբունքների սահմանափակում, ուստի պետք է խուսափել կամ բացառել այդ իրավունքներին առանց անհրաժեշտության միջամտությունները:

Այս հարցի հետ սերտորեն կապված են նաև երկու այլ հարցեր:

Առաջինը վերաբերում է նրան, որ օրենքում պետք է հստակ ամրագրել, որ խուզարկության կատարման եղանակը (միջոցը) պետք է համապատասխանի որոնվող առարկայի բնույթին, ծավալին և այլն:

Բանն այն է, որ դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ դատարանը որոշում է կայացնում որևէ առարկա հայտնաբերելու նպատակով խուզարկություն կատարելու համար, իսկ խուզարկություն կատարող իրավասու պաշտոնատար անձինք այդ առարկան հայտնաբերելու նպատակով որոնողական գործո-

դուրյուններ են կատարում այնպիսի վայրերում կամ տեղերում, որտեղ դրանք չեն կարող գտնվել զուտ իրենց տեխնիկական բնութագրերի պատճառով, օրինակ, մեծ չափերի առարկա հայտնաբերելու նպատակով խուզարկություն կատարելիս որոնողական գործողություններ են կատարվում կահույքի դարակներում:

Այս առումով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը վերևում նշված Դատավճռով խախտում է արձանագրել այն պատճառով, որ **բենզալցակայանի բարձր լարման հոսանքի թվով 3 փոխանցման մեկուսիչները** հայտնաբերելու և առգրավելու նպատակով որոնողական գործողություններ են կատարվել ամբաստանյալի բնակարանի հյուրասենյակի թախտի հետևամտում, որտեղից հայտնաբերվել է թմրամիջոց: Դատարանն ըստ էության հանգել է այն եզրակացության, որ նախաքննության մարմնի որոնողական գործողությունները չեն համապատասխանել որոնվող առարկաների բնույթին, ծավալին, քանի որ ըստ դատարանի՝ թմրամիջոցի հայտնաբերման տեղում օբյեկտիվորեն չէին կարող լինել **բենզալցակայանի բարձր լարման հոսանքի թվով 3 փոխանցման մեկուսիչները**:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, թեև օրենքում ուղղակիորեն ամրագրված չէ, սակայն դատարանները կարող են հստակ նշել և դրանով իսկ սահմանափակել նախաքննական մարմնի իրավասությունները, այլ հարց է, որ նպատակահարմար է այդ կանոնն օրենքով ամրագրել կամայական հայեցողության սահմանափակման համար¹:

Այս հարցի հետ կապված՝ հաջորդ խնդիրը վերաբերում է նրան, որ եթե դատարանի որոշման մեջ տրվում են այնպիսի ընդարձակ ձևակերպումներ, ինչպիսիք են «այլ առարկաները», ապա հարց է ծագում, թե ինչպես պետք է երաշխավորել օրենքի այն պահանջի կատարումը, որ խուզարկություն կատարվում է այն դեպքում, երբ անձը կամովին չի հանձնում որոշման մեջ նշված առարկաները: Բացի այդ, ինչն առավել կարևոր է, օրենքում թեև ամրագրված է, որ

¹ Նկատենք, որ նման առաջարկություններ արվում են նաև տեսության մեջ, տե՛ս օրինակ Ե. Գ. Վասիլևայի նշված աշխատությունը:

խուզարկություն կատարելուց առաջ առաջարկվում է անձին կամովին ներկայացնելու որոշման մեջ նշված առարկան կամ առարկաները, սակայն նրանում կանոն չկա այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինը, ստանալով համապատասխան առարկաները, իրավունք չունի կատարելու համապատասխան որոնողական գործողություններ: Նկատի ունենալով, որ գործնականում դատարանները որոշումներում նշում են «ինչպես նաև այլ առարկաներ» ընդարձակ ձևակերպումը, ուստի անգամ կոնկրետ նշված առարկան կամովին հանձնելու դեպքում էլ քննիչը իրավունք ունի մուտք գործելու բնակարան և նրանում կատարելու խուզարկություն:

Դրանով պայմանավորված՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենքում ամրագրել ոչ միայն կանոն այն մասին, որ դատարանը որոշման մեջ պետք է հստակ նշի, թե կոնկրետ ի՞նչ առարկաներ գտնելու և վերցնելու նպատակով է թույլատրում բնակարանի խուզարկությունը՝ բացառելով ընդարձակ և անորոշ բովանդակությամբ ձևակերպումները, այլև այն, որ եթե որոշման մեջ նշված առարկաները կամովին հանձնվում են, ապա քննիչն իրավունք չունի կատարելու որոնողական գործողություններ անձի բնակարանում, քանի որ խուզարկության նպատակները նվաճված են: Անձի կողմից որոնվող առարկաները կամովին հանձնելը պետք է դիտարկվի որպես անձի իրավունքների կարևորագույն երաշխիք և քննիչի համար դառնա պարտականություն (այլ ոչ թե իրավունք, ինչպես ներկայում է, ընդ որում՝ ենթադրական) այդ անձին «հանգիստ թողնելու» համար¹: Այլ կերպ՝ կամովին հանձնելը պետք է ծնի ոչ թե իրավունք, այլ պարտականություն որոնողական գործողություններ չկատարելու համար, իսկ հակառակը պետք է գնահատել որպես քննիչի կողմից դատարանի որոշման սահմաններից դուրս գալ:

Դատական որոշումներին ներկայացվող պահանջների տեսանկյունից կարևոր է նաև այն հարցի քննարկումը, որ դատարանը որևէ հասցեում գտնվող բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն է տալիս, երբ բացակայում է որևէ փաստական տվյալ

¹ Այս մասին նույնպես տե՛ս Ե.Գ.Վասիլևայի նշված աշխատությունը:

այն անձի և այն բնակարանի միջև կապի մասին, որտեղ կատարվելու է խուզարկությունը: Քննիչները միջնորդություններում նշում են ինչ-որ անձի տվյալներ՝ Ա.Ա.Հ և պնդում այն մասին, որ խուզարկությունը ցանկանում են կատարել այդ անձի ինչ-որ հասցեում գտնվող բնակարանում, իսկ դատարաններն առանց պարզելու, թե իրականում այդ անձի և խուզարկության ենթակա բնակարանի միջև ինչպիսի կապ կա և արդյոք որևէ կապ կա, թույլատրում են այդ բնակարանում կատարել խուզարկություն: Քիչ չեն դեպքերը, երբ հետազայում պարզվում է, որ բնակարանը, որում դատարանի որոշման հիման վրա կատարվել է խուզարկությունը, որևէ առնչություն չունի այն անձի հետ, որին վերագրվել է հանցանք կատարելը կամ ենթադրվել է, որ նրան է պատկանում այդ բնակարանը կամ այնտեղ փաստացի բնակվում է այդ անձը և այլն:

Կարծում ենք՝ այս հարցը անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի, ուստի յուրաքանչյուր դեպքում նախաքննական մարմինը պետք է հիմնավորի նաև անձի և բնակարանի միջև կապը, իսկ դատարանը առանց այդ հարցի պարզաբանման չպետք է բավարարի քննիչի միջնորդությունը: Այս առումով առանձին դատավորներ մեզ հետ գրույցներում ասում էին, որ կապված գործի առանձնահատկություններից՝ իրենք քննիչներից պահանջում են դատարան ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմնից տեղեկանք, և եթե նման տեղեկանք չի ներկայացվում, ապա միջնորդությունը մերժվում է: Իհարկե, դատավորները նաև նշում էին, որ քննիչները հաճախ դժգոհում են նման պահանջից այն պատճառաբանությամբ, որ խուզարկության օպերատիվությունը կորչում է այդ դեպքում, սակայն իրենց ձևավորած մոտեցումը գործնականում աշխատում է:

Համամիտ լինելով այս մոտեցմանը գտնում ենք, որ այն հատկապես կիրառելի է այն դեպքերում, երբ խուզարկվում է այնպիսի անձի բնակարան, որը քրեական գործով որևէ կարգավիճակ չունի, իսկ քրեական գործով չկա որևէ ապացույց այն մասին, որ բնակարանը, որում պետք է կատարել խուզարկություն, ուղղակի կապ ունի

այդ անձի կամ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք՝ գործող օրենսդրության դրույթները, թեկուզև ունեն մի շարք թերություններ, անորոշություններ, սակայն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տրամաբանությամբ մեկնաբանելու և կիրառելու դեպքում կարող են ապահովել անձի իրավունքների և օրինական շահերի անհիմն սահմանափակումները կամ խախտումները, որոնք հաճախ հանդիպում են դատական պրակտիկայում:

ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ЛИЧНОСТИ ПРИ РАЗРЕШЕНИИ ВОПРОСА О ДАЧИ РАЗРЕШЕНИЯ ПРОИЗВОДСТВА ОБЫСКА КВАРТИРЫ

Сергей Марабян

*Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук,
Судья суда первой инстанции общей юрисдикции,
РА, Регион Арагацотн*

В рамках этой статьи делается попытка на основе исследования судебной практики выявить некоторые проблемы защиты прав и законных интересов личности, предусмотренных действующим УПК РА в контексте производства обыска квартиры. Во-первых, обсуждаются основания для производства обыска квартиры. На основе регулирований действующего УПК РА, материалов судебной практики, мнений, выраженных в юридической литературе, и стандартов, установленных Европейским судом, автор делает вывод, что достаточность оснований для производства обыска квартиры решается с учетом нескольких факторов. Автор выражает свое несогласие и с мнением тех авторов, которые считают, что решение о производстве обыска должно быть принято только на основе доказательств, а также с мнением тех авторов, которые считают, что оперативные данные достаточны для принятия такого решения.

Автором также обсуждаются ряд вопросов относительно решения суда, которые непосредственно связаны с вопросом обеспечения прав и законных интересов личности при производстве обыска жилища. Эти вопросы, в особенности, относятся к тому, что только субъект, упомянутый в решении суда, имеет право проводить обыск, в противном случае он недопустим, что суд должен исключить широкие формулировки в своем решении, должен подчеркнуть границы действий органов, осуществляющих уголовное производство, чтобы исключить случаи необоснованного обыска жилища или обыска жилища без необходимости. Предметом обсуждения также являются вопросы о недопустимости производства обыска квартиры в тех случаях, когда человек добровольно сдает предметы, упомянутые в решении.

GUARANTEES OF PROTECTION OF HUMAN RIGHTS AND LEGAL INTERESTS WHILE RESOLVING THE ISSUES OF GRANTING HOME SEARCH WARRANT

Sergey Marabyan

Assistant of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,

Candidate of Legal Sciences

Judge of the Court of First Instance of Aragatsotn marz

Within the frames of the Article Author made an attempt to reveal several issues of protection of the rights and interest of the individual prescribed in the RA CCP within the context of home search. Firstly, author discusses the issue of the grounds for home search. Based on the regulations of the RA CCP, materials of judicial practice, approaches expressed in the professional literature and standards established by the European Court Author comes to the conclusion that while assessing the sufficiency of grounds to grant home search warrant several factors should be taken into account. The author expressed his disagreement both with the authors, who note that decision to grant home search must be based solely on the evidence, and those authors who think that operative information is enough to make such a decision.

Author also discusses a number of issues regarding Court's decision, which are directly related to the issues of protection of the rights and interests of the individual while conducting home search. In particular, these issues

regards to the fact that only the entity named in the Court order, has the power to conduct home search, otherwise it is impermissible. Author also notes that the Court should avoid using broad wording in its decision, should underline the borders of the activities of the investigative bodies in order to exclude cases of granting search warrants without any or necessary grounds. Author also raises the issue of impermissibility of conducting the home search in cases when person voluntarily handed the items mentioned in the decision.

Բանալի բառեր – դատական վերահսկողություն, անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքներ, բնակարանի անձեռնմխելիություն, բնակարանի խուզարկություն, բնակարանի խուզարկության հիմքեր, դատական վերահսկողության վարույթ, բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն:

Ключевые слова: судебный контроль, гарантии защиты прав и законных интересов личности, неприкосновенность жилища, обыск жилища, основы обыска жилища, производство судебного пересмотра, разрешение на производство обыска жилища.

Key words: judicial control, guarantess of the protection of the rights and interests of the individual, right to respect for home, home search, grounds for home search, proceedings of judicial control, permission for conduct of home search.

ՃԱՆԱԶՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Արթուր Զախոյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, Երևան քաղաքի
դատախազության ավագ դատախազ*

Արսեն Մարտիրոսյան

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական
դատավարության ամբիոնի դասախոս, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ*

Քննչական գործողությունների համակարգում իր կարևորությամբ և ունեցած նշանակությամբ էական դերակատարություն ունի ճանաչման ներկայացնելը: Պրակտիկան ապացուցել է հանցագործությունների բացահայտման գործում ճանաչման ներկայացնելու քննչական գործողության արդյունքների անգնահատելի ապացուցողական նշանակությունը, ինչով էլ պայմանավորված՝ այն երբեմն հանդիսանում է սկզբնական քննչական գործողություն:

Ճանաչման ներկայացնելու՝ որպես քննչական գործողության դատավարական և տակտիկական հիմնախնդիրները տարբեր ժամանակներում մշտապես գտնվել են կրիմինալիստների և դատավարագետների ուշադրության կենտրոնում: Հիշյալ քննչական գործողությանը իրենց աշխատություններում անդրադարձել են այնպիսի հայտնի գիտնականներ, ինչպիսիք են՝ Ն.Ն. Գապանովիչը, Ա.Յա. Գինզբուրգը, Ի.Ե. Բիխովսկին, Գ.Ի. Կոչարովը, Յվեոկովը, Ռ.Ս. Բելկինը, Ն.Պ. Յարլոկովը¹: Հայ իրավաբաններից հիշյալ քննչական գոր-

¹ Ст 'u Гапанович Н.Н. Оpozнание в следственной и судебной практике. Тактика - Минск: Изд-во БГУ, 19 78., Гинзбург А.Я. Оpozнание в следственной, оперативно-розыскной и экспертной практике. Учебно-практическое пособие; Под ред.: Белкин Р.С. - М., 1996., Бурданова В.С., Быховский И.Е. Предъявление для опознания на предварительном следствии. М., 1975., Кочаров Г.И. Оpozнание на предварительном следствии. М., 1955., Цветков П.П.

ծողությանը իրենց աշխատություններում անդրադարձել են Լ.Պ. Օհանյանը և Ա.Կ. Մինասյանը¹:

Ճանաչման ներկայացնելը որպես ինքնուրույն քննչական գործողություն նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետև նաև՝ ՀՀ քր. դատ. օր), սակայն դրանում բացահայտված չէ այդ քննչական գործողության էությունն ու նպատակը: Օրենսդիրը սահմանափակվել է միայն ճանաչման ներկայացնելու տեսակների, դրանց իրականացման դատավարական կարգի և արդյունքների ամրագրմանը վերաբերող նորմերի սահմանմամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 221-224 հոդվածներ):

Տեսական գրականության մեջ մի շարք գիտնականներ փորձել են տալ ճանաչման ներկայացնելու հասկացությունը: Այսպես, Պ.Պ. Յվետկովը ճանաչման ներկայացնելը բնորոշում է որպես «դատավարական գործողություն, որի ընթացքում վկային կամ այլ անձի ճանաչման է ներկայացվում ինչ-որ օբյեկտ՝ նպատակ ունենալով նույնացնել կամ պարզել դրա միևնույն խմբին պատկանելությունը, որը նախկինում ճանաչողը այդ կամ այլ հանգամանքներում տեսել է»²:

Ա.Յա. Գինզբուրգը ճանաչման ներկայացնելը դիտում է որպես «ինքնուրույն դատավարական գործողություն, որի էությունը նախկինում տեսած օբյեկտի նույնությունը կամ խմբային պատկանելությունը պարզելն է»³:

Ա.Ռ. Ռատիևովի կարծիքով, ճանաչման ներկայացնելը քննչական գործողություն է, որի ընթացքում վկան, տուժողը, կասկածյալը

Предъявление для опознания в советском уголовном процессе. Л., 1962, **Белкин Р.С.** Криминалистическая энциклопедия, 2-е издание, М., 2000, **Яблоков Н.П.** Криминалистика, издательство НОРМА, М., 2001:

¹ Տե՛ս **Օհանյան Լ.Պ.** Կրիմինալիստիկա: ԵՊՀ հրատ., Երևան, 2004, **Մինասյան Ա.Կ.** Ճանաչման ներկայացնելու դատավարական ու տակտիկական հիմքերը: Իրավ. գիտ. թեկն. ատենախոս. սեզվագիր: Եր., 2008:

² Տե՛ս **Цветков П.П.** Предъявление для опознания в советском уголовном процессе. Л., 1962. с. 10.

³ Տե՛ս **Гинзбург А.Я.** Опознание в следственной, оперативно-розыскной и экспертной практике. Учебно-практическое пособие; Под ред.: Белкин Р.С. - М., 1996. с. 11.

կամ մեղադրյալը, իրենց ներկայացված օբյեկտը մտովի համեմատելով նախկինում ընկալված անձի կամ առարկայի հետ, հանգում են հետևության դրանց նույնության, նմանության կամ տարբերության մասին¹:

Ռ.Ս. Բելկինի բնորոշմամբ ճանաչման ներկայացնելը դատավարական (քննչական կամ դատական) գործողություն է, որն իրենից ներկայացնում է դատավարության մասնակցի (հիմնականում՝ վկայի և տուժողի) գիտակցության մեջ մտավոր կերպով օբյեկտի նույնացում և հանդիսանում է կրիմինալիստիկական նույնացման տեսակներից մեկը²:

Իսկ Լ.Պ. Օհանյանի կարծիքով, ճանաչման ներկայացնելը նույնացման առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևություններ ստանալու նպատակով քննիչի կողմից իրականացվող իդենտիֆիկացման գործողություն է, որի բովանդակությունը կազմում է տարբեր օբյեկտներ բնութագրող հատկանիշների ուսումնասիրումը³:

Մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա նաև ճանաչման ներկայացնելու նպատակների հարցում, սակայն գիտնականների մեծամասնության կարծիքով այդ քննչական գործողությունն իրականացվում է՝ նպատակ ունենալով պարզելու ներկայացվող օբյեկտի նույնությունը, նմանությունը (խմբային պատկանելությունը) կամ տարբերությունը, որը նախկինում ընկալել է ճանաչողը⁴:

¹ St 'u **Рагинов А.Р.** Судебная психология для следователей. М., 2001. с. 313.

² St 'u **Белкин Р.С.** Криминалистическая энциклопедия, 2-е издание, М., 2000, с. 146:

³ Stu Օհանյան Լևոն, Կրիմինալիստիկա, 2004, էջ 91:

⁴ St 'u **Крылов В.В.** Актуальные проблемы опознания на предварительном следствии. Дисс. ... канд. юрид. наук. М., 1986. с. 44, **Крикунов А.Е., Маевский А.Ф.** Тактика и психологические основы предъявления лица для опознания на предварительном следствии: Учебное пособие. Киев, 1977. с. 6; **Шевчук И.В.** Уголовно-процессуальные, психологические и тактические аспекты предъявления для опознания лиц на предварительном следствии. Дисс. ... канд. юрид. наук. Волгоград, 2001. с. 21.

Ճանաչման ներկայացնելու¹ հասկացությունը և նպատակը բացահայտված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետև նաև՝ Նախագիծ): Նախագծի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչումը որոշակի անձի կամ օբյեկտի (առարկայի, փաստաթղթի, կենդանու, դիակի) նույնությունը պարզելու նպատակով այդ անձին կամ օբյեկտը մեղադրյալի, տուժողի կամ վկայի ընկալմանը ներկայացնելն է:

Կարծում ենք, որ Նախագծում ամբողջությամբ ներկայացված չէ ճանաչման ներկայացնելու նպատակը: Ինչպես վերը նշվեց, ճանաչման ներկայացնելու նպատակը ոչ միայն որոշակի անձի կամ օբյեկտի (առարկայի, փաստաթղթի, կենդանու, դիակի) նույնությունը, այլ նաև տարբերությունը պարզելն է: Հետևաբար, գտնում ենք, որ այն ևս պետք է իր ամրագրումը ստանա Նախագծի 236-րդ հոդվածի 1-ին մասում որպես ճանաչման ներկայացնելու նպատակ:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է սահմանել, որ ճանաչումն հանդիսանում է որպես նույնացման եղանակ, իսկ ճանաչման ներկայացնելը՝ նույնացման միջոցով օբյեկտի նույնության, խմբային պատկանելիության կամ տարբերության որոշման նպատակով իրականացվող գործողություն:

Խոսելով ճանաչման ներկայացնելու քննչական գործողության մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև տեսության

¹ Նախագծում հիշյալ քննչական գործողությունը անվանվում է ոչ թե ճանաչման ներկայացնել, այլ ճանաչում: Որոշ դատավարագետներ, անդրադառնալով «ճանաչում» և «ճանաչման ներկայացնել» հասկացությունների հարաբերակցությանը, արդարացիորեն գտնում են, որ «ճանաչում» անվանումը ամբողջությամբ չի արտացոլում հիշյալ քննչական գործողության էությունը, քանի որ ճանաչումը հանդիսանում է միայն ճանաչման ներկայացնելու քննչական գործողության կառուցվածքային մասերից մեկ և տարբերվում է դրանից սուբյեկտով և իրականացման նպատակով: Տե՛ս **Бурька Д.А., Егорова Е.В., Меркулова М.В.** Правовые и тактические особенности производства отдельных следственных действий: монография- М.: Юрлитинформ, 2015. с. 329, **Бурька Д.А., Решняк М.Г.** Предъявление для опознания: уголовно-процессуальный и криминалистический аспекты: Монография. – М.: Международный юридический институт, 2011. с 15-16.

մեջ և գործնականում վեճերի տեղիք տվող կրկնակի ճանաչման ներկայացնելու հարցին:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը այս առումով որևէ արգելք չի սահմանում: Այլ կերպ՝ քրեադատավարական գործող օրենսգրքի պայմաններում թույլատրվում է անձին կամ օբյեկտը (առարկա, փաստաթղթ, դիակ) մի քանի անգամ ճանաչման ներկայացնել: Գործնականում հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ մեղադրյալը լուսանկարով ճանաչման է ներկայացվում տուժողին, որի ընթացքում վերջինս հայտնում է, որ չի ճանաչում իրեն ճանաչման ներկայացված անձանցից ոչ մեկին: Այնուհետև, նույն օրը դիմում է հասցեագրում նախաքննության մարմնին՝ հայտնելով, որ ճանաչման ընթացքում չի ճանաչել իրեն մարմնական վնասվածք պատճառած անձին, քանի որ դեպքից հետո նա իր ծանոթի միջոցով իրեն է փոխանցել որոշակի գումար առողջությանը պատճառած վնասվածքի վերականգնման ծախսերը հոգալու համար, այդ իսկ պատճառով նշել է, որ չի ճանաչում իրեն ճանաչման ներկայացված անձին: Միաժամանակ, խնդրել է կրկին անգամ մեղադրյալի լուսանկարը ներկայացնել ճանաչման:

Հաջորդ օրը նախաքննության մարմնի կողմից մեղադրյալի լուսանկարը կրկին ճանաչման է ներկայացվել տուժողին, որի ընթացքում վերջինս հայտնել է, որ ճանաչում է իրեն ճանաչման ներկայացված ձախից 2-րդ լուսանկարում պատկերված անձին¹:

Կրկնակի ճանաչման ներկայացնելու արգելք նախատեսված է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ ***չի կարելի կրկնակի ճանաչման ներկայացնել անձին կամ առարկան այնպիսի հատկանիշներով, որով նախկինում ճանաչման է ներկայացվել***: Կրկնակի ճանաչման ներկայացնելու արգելք նախատեսող դրույթ ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծի 236-րդ հոդվածում, որի 4-րդ

¹ Ներկայացված օրինակը վերցված է պրակտիկայից, պարզապես նախաքննական տվյալները չիրապարակելու նպատակով բերված օրինակում քրեական գործի հանգամանքները շարադրված չեն:

մասը սահմանում է, որ **կրկնակի ճանաչումն արգելվում է**:

Մեջբերված դրույթների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք բովանդակային առումով տարբեր են: Մասնավորապես, ՌԴ քր. դատ. օր.-ը արգելում է անձին կամ առարկան կրկնակի ճանաչման ներկայացնել նույն հատկանիշներով, իսկ Նախագիծն ընդհանրապես արգելում է կրկնակի ճանաչման ներկայացնելը:

Պ.Պ. Ցվետկովը գտնում է, որ կրկնակի ճանաչումը կարող է իրավաչափ համարչվել, եթե.

1) առաջին ճանաչումն իրականացվել է այնպիսի պայմաններում, որոնք չեն համապատասխանում ճանաչողի կողմից դեպքն ընկալելու պահի պայմաններին, ինչն ազդել է ճանաչման ճիշտ արդյունքների վրա (այսինքն՝ խախտվել են տակտիկական պահանջները),

2) քննչական գործողության արդյունքում ճանաչողը ճանաչել է ճանաչման ներկայացված անձին, սակայն ինչ-ինչ պատճառներով ակնհայտորեն սխալ բացատրություններ է տվել¹:

Ըստ Ա.Յա. Գինզբուրգի՝ անձին կամ առարկան կրկնակի կարող է ճանաչման ներկայացվել, եթե.

1) ճանաչումը իրականացվել է ավելի վատ ընկալված պայմաններում, քան այն, երբ ճանաչողը սկզբում տեսել է,

2) սկզբում անձը ճանաչման է ներկայացվել էապես տարբեր, սակայն ժամանակի ընթացքում առանձին նշաններ փոխվել են (չսափրված դեմք, երկար մազեր և այլն),

3) ճանաչողը հետագայում փոխել է իր սկզբնական դիրքորոշումը, որն արտահայտել էր ճանաչման ներկայացնելու ընթացքում,

4) նշված քննչական գործողությունը սկզբում իրականացվել է՝ հաշվի չառնելով պատահարի կամ այլ հանգամանքի արդյունք հան-

¹ См. у Цветков П.П., Предъявление для опознания в советском уголовном процессе: Л., 1962:

դիսացող ճանաչողի տեսողության ժամանակավոր կորուստը¹:

Հայրենական իրավաբաններից Ա.Ս. Դավթյանի կարծիքով՝ կրկնակի ճանաչումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ առաջին ճանաչումը ժամանակից շուտ դադարեցվել է, կամ առաջին ճանաչման արդյունքները չեն համապատասխանում իրականությանը ոչ թե սուբյեկտիվ, այլ օբյեկտիվ պատճառներով: Օրինակ՝ ճանաչողը ֆիզիկական կամ հոգեկան ժամանակավոր բնույթի թերությունների պատճառով (մինչև ճանաչումը քննիչին անհայտ) օբյեկտիվորեն չի կարողացել կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ²:

Պրակտիկայում հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ սկզբնական հարցաքննության ընթացքում անձը այս կամ այն պատճառով չի նշում ճանաչման ենթակա օբյեկտի այնպիսի հատկանիշներ, որոնք կարող էին դրական արդյունք ապահովել, և այդ պայմաններում կատարվում է ճանաչում, սակայն հետագայում լրացուցիչ հարցաքննության ընթացքում նշում է ճանաչման ենթակա օբյեկտի այդ հատկանիշները: Կամ անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելուց հետո ճանաչման է ներկայացվում հենց անձին:

Քանի որ Նախագիծը որպես անձին ճանաչման ներկայացնելու տեսակ նախատեսում է նաև ձայնով ճանաչում, գործնականում հնարավոր է առաջանա այնպիսի իրավիճակ, երբ անձը ճանաչման ներկայացվի ձայնով, իսկ հետագայում անհրաժեշտություն առաջանա ճանաչման ներկայացնել հենց իրեն՝ անձին:

Այս առումով պետք է համաձայնվել Ա.Ա. Լևիի այն մոտեցմանը, որ բացառիկ դեպքերում արդեն իսկ կատարված ճանաչման արժանահավատությունը ստուգելու նպատակով կրկնակի ճանաչման ներկայացնելը թույլատրելի է, երբ.

1) պարզվում է, որ նախորդ ճանաչման ժամանակ ճանաչողը

¹ St 'u **Гинзбург А.Я.** Опознание в следственной, оперативно-розыскной и экспертной практике. Учебно-практическое пособие; Под ред.: Белкин Р.С. - М., 1996, էջ 37:

² St 'u **Դավթյան Ա.Ս.** Հանցագործություններ քննելիս տակտիկական հնարքների կիրառման թույլատրելիության սահմանները, Իրավ. գիտ. թեկն. ատենախոս.: Երևան, 2005, էջ 92:

գտնվել է որոշակի ժամանակավոր հոգեկան, տեսողական, լսողական խանգարման կամ ցավի ազդեցության մեջ, որի պայմաններում չէր կարող ձիշտ ընկալել,

2) պարզվում է, որ նախորդ ճանաչումն իրականացվել է առանց անհրաժեշտ նախապատրաստման, որի արդյունքում ընկալման արդյունքներն ավելի վատն էին, քան ճանաչվող անձի կամ օբյեկտի նախնական դիտարկման ժամանակ (վատ լուսավորություն, առավել հեռավոր տարածություն, ճանաչվողի արտաքինի փոփոխություն, օրինակ՝ բեղ-մորուք, աճած մազեր, դեմքի վնասվածքներ, առարկաների կեղտոտվածություն),

3) ճանաչվող անձի բացակայության կամ հիվանդ վիճակի, առարկայի բացակայության պատճառով ճանաչումը իրականացվել է նկարներով, իսկ հետո հնարավորություն է առաջացել անմիջական ներկայացնել ճանաչվող օբյեկտը¹:

Ընդ որում, կրկնակի ճանաչումը ուղղված է ավելի վաղ լուսանկարներով իրականացված ճանաչման ստուգմանը, այն թույլ է տալիս ճշտել օբյեկտի որոշ հատկանիշներ, լրացուցիչ ուշադրություն դարձնել ֆունկցիոնալ հատկանիշների վրա, որոնք նկարում արտացոլված չեն եղել (օրինակ՝ գույն, մակերեսի բնույթ, օբյեկտի հակառակ կողմ և այլն):

Կրկնակի ճանաչման դեպքում ճանաչվողը պետք է ներկայացվի այն նույն անձանց շարքում և նույն հագուստով, ինչ նախնական ճանաչման ժամանակ: Նույն առարկաների շարքում էլ պետք է ներկայացվի ճանաչվող օբյեկտը:

Կրկնակի ճանաչման ներկայացնելու տեսանկյունից Նախագծում տեղ գտած կարգավորումը գործնականում կարող է առաջացնել որոշակի խնդիրներ, քանի որ վերը նշված բոլոր իրավիճակներում երկրորդ անգամ ճանաչում չի կարող իրականացվել, քանի որ դրանք կդիտվեն կրկնակի:

¹ Տե՛ս **Левин А.А.** Справочная книга криминалиста, изд. НОРМА, М., 2000, էջ 166:

Կարծում ենք, սույն հարցի վերաբերյալ ավելի ճիշտ մոտեցում է որդեգրել ՌԴ քրեական դատավարության օրենսգրքը՝ սահմանելով, որ չի թույլատրվում կրկնակի ճանաչման ներկայացնել անձին կամ առարկան այնպիսի հատկանիշներով, որով նախկինում ճանաչման է ներկայացվել: Այսպիսի կարգավորման պարագայում վերը նշված իրավիճակների դեպքում կատարված ճանաչումը չի կարող համարվել կրկնակի, քանի որ սկզբնական ճանաչման հետ համեմատած՝ իրականացվել է այլ հատկանիշներով:

Հաշվի առնելով վերագրյալը և ապագայում պրակտիկայում խնդիրներից խուսափելու նպատակով՝ գտնում ենք, որ Նախագծի 236-րդ հոդվածի 4-րդ մասը պետք է ներկայացվի այնպիսի ձևակերպմամբ, ինչպես ամրագրված է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ճանաչման համար որևէ անձի վկային, տուժողին, կասկածյալին, մեղադրյալին ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը վերջիններիս նախապես հարցաքննում է այդ անձի արտաքին տեսքի ու նշանների և այն հանգամանքների մասին, որոնցում ճանաչողը տեսել է այդ անձին: Նույնաբովանդակ դրույթ նախատեսված է առարկան ճանաչման ներկայացնելու մասով (ՀՀ քր. դատ. օր.-ի 222-րդ հոդվածի 1-ին մաս):

Գործնականում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, երբ հարցաքննվողը նշում է, որ հիշում է քննությանը հետաքրքրող անձին, կճանաչի նրան, սակայն չի կարողանում վկայակոչել նրան ճանաչելը հնարավոր դարձնող կոնկրետ հատկանիշներ: Իրավաչափ հարց է առաջանում. հիշյալ իրավիճակում թույլատրվում է, արդյոք, անձին ճանաչման ներկայացնել, թե՛ ոչ: Նշված հարցի վերաբերյալ միասնական մոտեցում չկա ինչպես պրակտիկ աշխատակիցների, այնպես էլ գիտնականների շրջանում: Այսպես, հեղինակների մի մասը գտնում են, որ նշված իրավիճակում ճանաչման

ներկայացնելը լիովին հիմնավորված է¹, իսկ հեղինակների մյուս մասը ժխտում է հիշյալ դեպքում ճանաչման ներկայացնելը²: Այդպիսի տարբերակված մոտեցում առկա է նաև պրակտիկ աշխատողների շրջանում:

Կարծում ենք, որ նշված դեպքերում ճանաչում չպետք է իրականացվի, քանի որ անձի կողմից ճանաչվողին ճանաչելու վերաբերյալ հայտնելը կարող է տեղի ունենալ ինքնաբերաբար, իսկ հիմնական հատկանիշները նրա մոտ կարող է տպավորված լինել ենթագիտակցական մակարդակում: Միաժամանակ, արժանահավատությունը նշված ճանաչման խիստ կասկածելի է: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «ճանաչում չի կատարվում, իսկ կատարվածը չի կարող ճանաչվել հիմնավորված, եթե ճանաչողը նշել է այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց անորոշության պատճառով բավարար չեն ճանաչվողի անձի նույնացման համար»:

Միաժամանակ, պրակտիկայում տեղ գտած նշված իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է հարցաքննության ընթացքում անձին օգնել, որպեսզի նշի անձի ճանաչումը հնարավոր դարձնող բավարար հատկանիշներ: Այլ կերպ՝ ճանաչման ներկայացնելու քննչական գործողության արդյունքների հուսալիությունը մեծապես կախված է մինչև ճանաչման ներկայացնելը ճանաչողի հարցաքննության ճիշտ կազմակերպումից, քանի որ ճանաչման հիմքում ընկած են այնպիսի բարդ հոգեբանական երևույթներ, ինչպիսիք են՝ դիտելը, ընկալելը, հիշելը, վերարտադրելը: Տեսողությունը, լսողությունը, շոշափելիքը այն ուղիներն են, որոնց միջոցով ճանաչողը ըն-

¹ St 'u **Шевчук И.В.** Уголовно-процессуальные, психологические и тактические аспекты предъявления для опознания лиц на предварительном следствии: дисс. канд. юрид. наук. Волгоград, 2001, с. 71, **Левин А.А., Пичкалева Г.И., Селиванов Н.А.** Получение и проверка показаний следователем. 1987, Справочник. М. Юридическая литература. с. 42, **Ратинов А.Р.** Судебная психология для следователей. М., 2001. С. 322.

² St 'u **Исаева Л.** Предъявление лиц для опознания // Законность. - М., 2002, № 10. - с. 20, **Корухов Ю. Г.** Предъявление для опознания на предварительном следствии и в суде. М., 1968. с. 18.

դունում է օբյեկտի հատկանիշները, իսկ հիշողությունը նշվածների միջոցով ընկալվածի գիտակցման արտացոլումն է, և այն բնութագրվում է ծավալով, արագությամբ, ճշգրտությամբ և տևողությամբ: Այդ հոգեբանական երևույթների վրա դրական կամ բացասական ազդեցություն են ունենում օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններ, օրինակ՝ լուսավորությունը, տարածությունը, անձի տեսողությունը, մասնագիտությունը և այլ: Ընկալումը անձի տեսածի արտացոլումն է կոնկրետ կերպարի ձևով, իսկ հիշելը սերտորեն կապված է վերարտադրության պրոցեսի հետ: Վերարտադրությունը երևույթի կամ անձի արտաքինի վերաբերյալ տվյալների գրավոր կամ բանավոր շարադրումն է, որի միջոցով ստացվում է անձի արտաքին հատկանիշների վերաբերյալ ինֆորմացիան, իսկ այդ ինֆորմացիայի մաքրությունը կախված է ոչ միայն ընկալելու և հիշելու որակից, այլև հարցաքննվողի գրագիտությունից, ինտելեկտից, բնավորությունից, ինչպես նաև հարցաքննության վարման կարգից և տակտիկայից:

Գրականության մեջ տարբերվում է ճանաչման երկու տեսակ՝ համադրական և վերլուծական¹: Համադրական ճանաչման դեպքում անձը ճանաչում է միանգամից՝ առանց օբյեկտի հատուկ հատկանիշների վերլուծության (օրինակ՝ ծանոթ օբյեկտների ճանաչումը, որոնք ճանաչողին հաճախ են հանդիպել), իսկ վերլուծականի դեպքում ճանաչման գործընթացն անձի մոտ տեղի է ունենում օբյեկտի առանձին հատկանիշների առանձնացման ճանապարհով օբյեկտի ընդհանուր պատկերը ստեղծելով, որի արդյունքում է ձևավորվում օբյեկտի նույնության, նմանության կամ տարբերության վերաբերյալ վերջնական եզրահանգումը: Բացի այդ, ճանաչման ժամանակ ճանաչողի մոտ նախ յուրացվում է օբյեկտի տարբերիչ հատկանիշները նմանատիպ օբյեկտներից (ձևավորման փուլ), որից հետո այդ հատկանիշներն օգտագործվում է տվյալ օբյեկտը նման այլ օբյեկտներից տարբերելու համար (ճանաչողական փուլ):

Ճանաչումը մեծապես կախված է նաև ճանաչողի ամենատարբեր որակներից՝ տարիքից, սեռից, հասակից, մարմնակազմություն-

¹ Տե՛ս **Шехреп М.С.** Психологические проблемы узнавания, М., 1967, с. 47.

նից, մասնագիտությունից, կենսափորձից, գիտելիքներից: Այսպես, երեխաները չափահաս անձին կարող են բնութագրել «ծեր, հսկա, աժդահա», տարեց մարդիկ 30-40 տարեկաններին՝ «երիտասարդ», ցածրահասակը միջահասակին՝ «բարձրահասակ», նիհարը միջին մարմնակազմություն ունեցող անձին՝ «զեր», միաժամանակ երկու տարբեր տարիքի կամ հասակի անձանց բնութագրելիս անձը կարող է մեկին ներկայացնել «տարիքով կամ բարձրահասակ», իսկ մյուսին՝ «երիտասարդ կամ ցածրահասակ» այն պայմաններում, երբ նրանց տարիքի կամ հասակի տարբերությունը կարող է մեծ չլինել:

Նշվածից հետևում է, որ քննիչը ճանաչողի նախնական հարցաքննության ժամանակ պետք է հստակեցնող, ստուգող հարցերի միջոցով նրանից որքան հնարավոր է շատ հատկանիշներ պարզի և հստակեցնի, իսկ դրա համար կարևոր նշանակություն ունի հարցաքննվողին օգնելու հարցում քննիչի ակտիվ միջամտությունը: Ճանաչողի նախնական հարցաքննության ժամանակ քննիչը չպետք է բավարարվի ճանաչվողի արտաքինի վերաբերյալ ազատ, ընդհանուր «բացատրություններով», այլ պետք է հարցերի միջոցով պարզի ճանաչվողի մոտավոր տարիքը, հասակը, կեցվածքը, գլխի, դեմքի ձևը, ճակատի, հոնքերի, աչքերի, քթի, ականջների, շրթունքների, բերանի, ծնոտի, պարանոցի, ուսերի, մազերի, բեղերի, ինչպես նաև հագուստի, գլխարկի, կոշիկների, ֆիզիկական արատների, դաջվածքի և այլ առանձնահատկությունների մասին տվյալներ: Բացի այդ, քննիչը պետք է համոզվի, որ դրանք հարցաքննվողին հասկանալի են, անհրաժեշտության դեպքում դրանք պետք է ցույց տալ նկարների վրա, պարզաբանել առանձին դետալների նշանակությունը, ըստ անհրաժեշտության՝ համեմատություն անցկացնել այլ տվյալների հետ: Այլ կերպ ասած՝ հարցաքննվողին ճիշտ կողմնորոշելու և օգնելու համար պետք է ցույց տալ դիմանկարներ, ֆոտոռոբոտներ, իսկ անհրաժեշտության դեպքում հարցաքննությանը մասնակից դարձնել համապատասխան մասնագետի (զեղանկարչի, լուսանկարչի):

Կրիմինալիստիկական տակտիկայի կողմից մշակված հանձնարարականների համաձայն՝ եթե ճանաչողի նախնական հար-

ցաքննությունը կատարվել է մակերեսային, ապա մինչ ճանաչումը պետք է լրացուցիչ հարցաքննությամբ մանրակրկիտ հարցերի միջոցով հստակեցնել հնարավորինս շատ անհատական տվյալներ:

Կարևոր է նաև, որ ճանաչողին հարցաքննելիս քննիչը պարզի այն պայմանները, որոնցում նա տեսել է հանցանք կատարած անձին, իսկ հարցաքննելիս քննիչը պետք է ղեկավարվի «բանավոր պատկերի» համակարգով՝ հատկանիշների միասնականությունն ու ներկայացման մատչելիությունը պահպանելու նպատակով:

Ճանաչման ներկայացնելու քննչական գործողության հետ կապված՝ կարևոր է նաև այն անձանց ճիշտ ընտրությունը, ում հետ միասին պետք է ճանաչման ներկայացվի ճանաչվողը: Այս առումով ՀՀ քր. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի 3-րդ մասը սամանում է, որ ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին հնարավորին չափ նման առնվազն երեք այլ անձանց հետ: Եթե բացակայում է հնարավորին չափ նմանությունը, անկասկած նվազում է ճանաչման արժանահավատությունը: Ընդ որում, ինչպես նշվում է գրականության մեջ, գերակայություն պետք է տալ տարիքին, ազգությանը, նույնիսկ վնասվածքների նմանությանը¹:

Արտաքննապես նման ասելով՝ հասկացվում են մարդիկ, որոնց մոտ բացակայում է տարիքի, հասակի, կազմվածքի, դեմքի տարբերմաների ձևերի, մազերի, դեմքի գույնի, սանրվածքի զգալի տարբերությունը: Միևնույն ժամանակ, չպետք է ներկայացվեն միմյանց շատ նման անձինք, քանի որ դա ևս կարող է դժվարացնել ճանաչումը և հանգեցնել սխալների:

Անթույլատրելի է, որ անձինք, որոնց մեջ ներկայացվում է ճանաչողը, նախապես ճանաչողին ծանոթ լինի:

Ճանաչման ներկայացնելու արձանագրության մեջ պարտադիր պետք է նշվեն ոչ միայն ստատիստների անկետային տվյալները, այլ նաև նրանց ֆիզիոլոգիական և ֆունկցիոնալ հատկանիշները, որոնք

¹ St 'u **Кальницкий В.В.** Следственные действия: Учебное пособие. 2-е издание, перераб. и дополн. Омск, 2003, էջ 72:

համապատասխանում են ճանաչվողի հատկանիշներին: Ստատիստների ոչ միայն ֆիզոլոգիական և ֆունկցիոնալ նմանությունը, այլ նաև հագուստը նույնպես կարևոր նշանակություն ունի:

Գործնականում հաճախ պաշտպանության կողմը վիճարկում է ճանաչման ներկայացնելու արձանագրության թույլատրելիությունը այն հիմնավորմամբ, որ կասկածյալը կամ մեղադրյալը ճանաչման է ներկայացվել արտաքինով և հագուստով նրանից ակնհայտ տարբերվող 3 այլ անձանց շարքում:

Նմանատիպ խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է պատշաճ նախապատրաստվել հիշյալ քննչական գործողության կատարմանը և ճանաչման ներկայացնելուց առաջ ընտրել այնպիսի ստատիստներ, ովքեր իրենց արտաքին տեսքով և հագուստով նման լինեն ճանաչման ենթակա անձին, որ հետագայում չվիճարկվի այդ քննչական գործողության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալի արժանահավաստությունը:

Պրակտիկայում որոշ դեպքերում թույլ տրվող սխալներից է նաև այն, երբ տուժողին (վկային) ըստ հաջորդականության լուսանկարով ճանաչման են ներկայացվում երկու մեղադրյալներ՝ փոխելով միայն մեղադրյալների լուսանկարները: Նշված կարգով կատարված ճանաչման արձանագրությունները թիվ ԵԿԴ/0059/01/14 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը ճանաչել է անթույլատրելի ապացույց հետևյալ պատճառաբանությամբ. «Ինչ վերաբերում է լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին արձանագրություններին, ապա նախ՝ դատարանը արձանագրում է, որ դրանք կատարվել են դեպքից 11 ամիս անց, և ճանաչողներին ներկայացվել են նույն անձանց լուսանկարները, նույն հաջորդականությամբ ու դրանցում փոփոխվել է միայն մեղադրյալների լուսանկարները: Հետևաբար պարզ է, որ ճանաչողը դրանց միջից կնշի իրեն նոր ներկայացված անձի լուսանկարը¹»:

¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/0059/01/14 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավճիռը (<http://www.datalex.am/>):

Եվ վերջապես, գործնականում ոչ հաճախ, սակայն ստեղծվում են իրավիճակներ, երբ ճանաչողը նշում է այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց որոշակիության առումով բավարար են նույնացման համար, սակայն տակտիկական տեսանկյունից նպատակահարմար չէ ճանաչում կատարել: Օրինակ՝ ավագակության փաստի կապակցությամբ հարուցված քրեական գործով վարույթի ընթացքում հարցաքննվելիս տուժողը նշել է ենթադրյալ հանցանք կատարած անձի ճանաչումը հնարավոր դարձնող բավարար անհատականացնող հատկանիշներ: Հետագայում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հիշյալ հանցագործությունը կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել և «02» հաղորդման ժամանակ մի շարք այլ հանցագործությունների բացահայտման հետ միաժամանակ նշված ավագակությունը ներկայացվել է որպես բացահայտված հանցագործություն, իսկ որպես կատարող անձ ներկայացվել է բերման ենթարկվածը: Այնուհետև, հաղորդաշարի ցուցադրումից մի քանի օր անց բերման ենթարկված անձը՝ որպես ավագակություն կատարող, ճանաչման է ներկայացվել տուժողին, որին վերջինս ճանաչել է և հայտարարել, որ իրեն ճանաչման ներկայացված անձին որպես ավագակություն կատարողի տեսել է նաև «02» հաղորդման ժամանակ: Նշված քննչական գործողության արձանագրությունը հետագայում պաշտպանության կողմը վիճարկել է այն պատճառաբանությամբ, որ նկարագրված պայմաններում տուժողը ակնհայտորեն կճանաչեր ցուցադրված անձին¹:

Նշված խնդիրը բուռն քննարկումների առիթ է հանդիսացել ինչպես մասնագիտական գրականության մեջ², այնպես էլ պրակտիկ աշխատողների շրջանում:

Մեր կարծիքով, այնպիսի հանգամանքներ, որոնք բացառում են

¹ Ներկայացված օրինակը վերցված է պրակտիկայից, պարզապես նախաքննական տվյալները չիրապարակելու նպատակով բերված օրինակում քրեական գործի հանգամանքները շարադրված չեն:

² Ст'у Справочная книга криминалиста, отв. ред. **Селиванов Н.А.**, М., 2000, Руководство для следователей, под. ред. **Снеткова В.А.**, М., 1998, **Аверьянова Т.В.**, **Белкин Р.С.** и др., Криминалистика, 2-е издание, М., 2003 և այլն:

ճանաչման ներկայացնելը, և չպետք է այս քննչական գործողությունը կատարել, կարող են հանդիսանալ, եթե.

1) ճանաչողն ունի ճանաչմանը խոչընդոտող ֆիզիկական կամ հոգեկան թերություններ,

2) ճանաչվող օբյեկտը չունի որոշակի հատկանիշներ, որոնք թույլ կտան բացահայտել այն,

3) ճանաչողը մասնակցել է քննչական կամ դատավարական այնպիսի գործողությունների, որի ընթացքում նա արդեն ընկալել է համապատասխան օբյեկտի անհրաժեշտ հատկանիշներ (օրինակ՝ զննություն, առերեսում, փորձարարություն և այլն),

4) ճանաչողը մինչև քրեական գործ հարուցելը պատահաբար տեսել և ընկալել է ճանաչման ենթակա օբյեկտը,

5) ճանաչվող օբյեկտը իր անհատական հատկանիշներով եղել է հանրահայտ կամ հանրամատչելի,

6) ճանաչողը հետաքննության, նախաքննության ընթացքում կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանակ արդեն ճանաչել է ճանաչման ենթակա օբյեկտը:

Եզրափակելով անհրաժեշտ է փաստել, որ վերը նշվածը վերաբերում է ոչ բոլոր հիմնախնդիրներին, որոնք կապված են ճանաչման ներկայացնելու բարդ քննչական գործողության հետ: Միաժամանակ, սույն հոդվածի շրջանակներում արծարծված խնդիրների լուծման վերաբերյալ ներկայացված լուծումները հնարավորություն կտան խուսափել պրակտիկայում հիշյալ քննչական գործողության իրականացման ընթացքում հաճախ թույլ տրվող սխալներից:

SOME PROCEDURAL AND TACTICAL PROBLEMS OF THE IDENTIFICATION PARADE

Artur Chakhoyan

*Docent of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,
Candidate of Legal Sciences,
senior prosecutor of Yerevan Prosecutor's Office*

Arsen Martirosyan

*Senior prosecutor of Yerevan Prosecutor's Office,
Candidate of Legal Sciences*

The article is devoted to procedural and tactical problems of one type of investigative actions provided by the Criminal Procedure Code of the Republic of Armenia - identification parade. In this article, the authors present the concept of an investigative action, its purpose, the problem re-identification parade. In this aspect, not only the norms of the current Criminal Procedure Code, but as well as relevant provisions of the draft Code of Criminal Procedure have been analyzed. As part of the article the subject of a negotiated have also become common practice issues, such as: the identifier states that he can identify a person, who has potentially committed a crime, but can not designate individualizing features sufficient for the identification parade, or describes the sufficient criteria for identification, but for tactical reasons the investigative action is inappropriate. In light of these problems, the reviewers present concrete proposals aimed for improving the efficiency of the investigation and evidentiary significance derived from its holding of data, as well as contributing to the correct orientation of the practice.

НЕКОТОРЫЕ ПРОЦЕССУАЛЬНЫЕ И ТАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПРЕДЪЯВЛЕНИЯ ДЛЯ ОПОЗНАНИЯ

Артур Чахоян

*Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, кандидат
юридических наук, старший прокурор прокуратуры города Еревана*

Арсен Мартиросян

*Доцент кафедры уголовного процесса Образовательного
комплекса полиции РА, кандидат юридических наук,
старший прокурор прокуратуры города Еревана*

Статья посвящена процессуальным и тактическим проблемам одного из вида следственных действий, предусмотренных уголовно-процессуальным кодексом РА, - предъявлению для опознания. В данной статье авторы представляют понятие данного следственного действия, его цель, проблемы повторного предъявления для опознания. В данном аспекте были проанализированы нормы не только действующего УПК РА, но и соответствующие положения проекта УПК. В рамках статьи предметом обсуждения стали также часто встречающиеся на практике вопросы, например: опознающий заявляет, что может опознать лицо, потенциально совершившее преступление, однако не может обозначить индивидуализирующие признаки, достаточные для предъявления для опознания, либо описывает достаточные признаки для опознания, однако по тактическим соображениям проведение следственного действия нецелесообразно. В свете рассмотрения данных проблем авторами представлены конкретные предложения, направленные на повышение эффективности данного следственного действия и доказательственной значимости полученных в результате его проведения данных, а также способствующие правильной направленности практики.

Բանալի բաներ – քննչական գործողություն, ճանաչման ներկայացնել, կրկնակի ճանաչում, տպանցում, քննարկում, հնարավորին չափ նման:

Ключевые слова: следственное действие, предъявление для опознания, повторное опознание, идентификация, восприятие, по возможности сходный.

Key words: investigative action, identification parade, re-identification, identification, perception, possibly similar.

ԵՊՀ հրատարակչություն
0025, Ա. Մանուկյան 1

Հանձնվել է տպագրության 15.03.2016թ.

Չափսը 60x84¹/₁₆:

Ծավալը՝ 26 տպ. մամուլ:

Քանակը՝ 300 օրինակ: